



833

L. III. 5









ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1892

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1892 № 1

ԶՈՐԻՈՐԴ ՏԱՐԻ

երես

1	ԽՄԲ.	3	«Մուրճ»-ը 1889—1891 թվական.
2	ԱՐԱՍԽԱՆՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻԲ.	25	Կաթողիկոսական թեկնածուներ:
3	ՄԱՆՈՒԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	29	Հօր անէծքը (բանաստեղծութիւն):
4	ԹՈՒՄԱՆՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	32	Ազդ (բանաստեղծութիւն):
5	ՄԱՆՈՒԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	33	Տիգրանուհի (ղրամա):
6	ՍԵՆԿԵԼԻԶ, Հ.	55	Առանց դաւանանքի (վէպ):
7	ՄԽԻԹԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱԼՈՅՍ	78	Երուաղ. պատերի առաջ (բանաստեղծութիւն):
8	ՏԼԻՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	79	Նախկին քաղաքակրթ. վարչերում:
9	ԼԵՈՒՆՆՑ	91	Ամպը (բանաստեղծութիւն):
10	»	»	Մ.-ին (բանաստեղծութիւն):
11	ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ ԲԺՇԿ	93	Հիպոտոսիս I, II:
12	ՄԱԳԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	119	Բանաստեղծ-հրապարակախօս (վերջ):
13	ԱՐՍՍԻԱՆՆԵԱՆՑ, ԱԻՆՏԻԲ.	132	Երկու խօսք մի բանակուլի առիթով:
14	ՄԱԼՈՍՆԵԱՆՑ, ՍՏ.	135	«Եղիշէի պատմութիւնը»:
15	ԼՈՒՍԻՅԻ	150	Զբօրհանքի աղետը թիֆլիսում:
16	»	152	Թեմական պատգ. ընտրութիւնները:
17	Լ. Ս.	159	Բաքուի Մարդասիր. ընկերութիւնը:
18	ՆԱՀԱՊԵՏԵԱՆ ԳՐ.	163	Երաժշտական նկատողութիւններ:
19	ՂԱԶԱՐԵԱՆՑ, ԵՐՈՒԱՆԻ	171	Միտք և զգացմունք:
20	ՇՐՈՒՄՊՅ.	173	Նամակ խմբ.: Գը Լազարովի մահը:
21	ԽՄԲ.	175	Խմբագրութեան կողմից:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԵՆԵԱՆՍԻ

1892



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 1 1892

Յ Ո Ւ Ն Ի Ա Ր

1892 № 1

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ

1892

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Января 1892 г.

Типографія М. Д. Ротиніанца. На Гол. просп. соб. домъ № 41.

„ՄՈՒՐՃ“ Ա.ՄՍԱ.ԳՐԻ

1889—1891

ԵՌԱՄԵԱՅ ՇՐՋԱՆԻ

ՆԻԻԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԸՍՏ ԲԱԺԻՆՆԵՐԻ

1. Ընդհանուր (առաջնորդող) եւ հասարակական խնդիրներ:

- 1) Հասարակական օրդանները, I (Հիւսիսափայլ, «Մշակ», «Մուրճ» 1889 թ., № 1, Ա. Արասխանեանց):
- 2) Հասարակական օրդանները, II («Կառնի», «Մեղու Հայաստանի», «Նոր-Դար», 1889 № 4. Ա. Արասխանեանց):
- 3) Պանդխտութեան խնդիրը, I, II (1889 թ. № 11 և 1890 № 6. Ա. Արասխանեանց):
- 4) Հողային պայմանները և զիւղական վարկը (1889 թ., № 8 Գր. Վարդանեան):
- 5) Հողային խնդիրը Անդրկովկասում, I, II, III (1889 թ., № 9, 1890 թ., № 7 և 9. Ա. Արասխանեանց):
- 6) «Մուրճ»-ը 1889 թւականին (1889 թ., № 12. Նոյնը):
- 7) Գործերի զրութիւնը (1890 թ. № 1. Նոյնը):
- 8) Աղքատների խնամատարութիւնը, I, II (1890 թ. № 4 և 10. Գր. Վարդանեանց):
- 9) Թիւ և Ոյժ (1890 թ., № 5 Ա. Արասխանեանց):
- 10) Ժողովուրդը որդէս քաղաքակրթ. ոյժ (1890 № 11. Նոյնը)
- 11) Յառաջդիմութեան պայմանները (1891 թ., № 6. Նոյնը):
- 12) Կինը Հասարակութեան մէջ (1891 թ., № 6. Նոյնը):

2. Հետազոտութիւններ տնտեսական, սոցիալական և իրաւաբանական:

- 1) Ռուսաց գաղափարական վերանորոգութիւնը (1889 թ. № 1, 2, 3, 4. Յաղութեան):
- 2) Ոճիրները Երևանեան նահանգում (1889 թ. № 11, 12. Գաբր. Մնացականեան):
- 3) Համայնական հողատիրութիւնը Երևանեան նահանգում (1890 №№ 5 և 7 Յովհ. Սաղաթելեան):
- 4) Պանդխտութիւնը մեզանում (1890 № № 11, 12. Անուշաւան Փալանթար):
- 5) Կարսի բանւորների դրութիւնը (1890 թ. № 1. Երևանդ Ղազարեան):
- 6) Բանւորները Անդլիայում (1890 թ. № 5. Ն. Ն.):
- 7) Հայ ընտանիքը (1890 թ. № 1, 2, 3, 7. Լ. Ս.):
- 8) Զւիցցերիական պետութիւնը (1891 № № 9, 10, 11. Մ. Մանուշարեան):

3. Եկեղեցական-իրաւաբանական:

- 1) Կաթողիկոսական Տեղակալը (1891 № 6 և 7 — 8. Լուսինի):
- 2) Երզումը և ռուսաց օրէնսդրութ. (1891 թ. № 7. Լուսինի):

4. Տնտեսական:

- 1) Արդիւնահանդէսը (1889 թ. № 10. Ա. Արասխանեան):
- 2) Կովկասեան արդիւնահանդէս (1889 թ. 1, 2, 3, 4, 9. Լուսինի):
- 3) Զոր մրգերի զործը (1889 թ. № 11. Հմայեակ Սողոմոնեան):
- 4) Թիֆլիսի ընկերութիւնը կրակից փոխադարձաբար ազահովացնելու համար (1889 թ. № 9. Լուսինի):
- 5) Անդրկովկասեան երկաթուղին և երկաթուղային քաղաքականութիւնը (1889 թ. № 9. Լուսինի):
- 6) Բամբակի մշակութիւնը Անդրկովկասում (1890 թ. № 6. Տարառինով):
- 7) Դիմու բերքը Ֆրանսիայում (1890 № 1, Արտաս. Թղթ.):
- 8) Անտասները Անդրկովկասում (1890 թ. № 11. Ա. Արասխ.):

- 9) Անանապահուծիւնը Անդրկովկասում (1891 թ. № 1.
Յ. Սաղաթելեանց):
- 10) Արդիւնագործութիւնը Անդրկովկասում (1891 թ. № 4.
Գր. Վարդանեանց):
- 11) Նաւթային գործը Բաքուում (1891 թ. № 7—8, 9, 10, 11.
Գ. Կիւլպենկեան):
- 12) Տեղեկութիւններ Նաւթային գործի մասին (1891 թ. № 11.
Ա. Արասխանեանց):
- 13) Անդրկովկասեան երկաթուղին 1890 թւականին (1891 թ.
№ 10, Լուսինի):

5. Գրական-քննադատական:

- 1) Պռօշեանց և Նորա Վէպերը (1889, № 1, 2. Ն. Քարամ.):
- 2) Յ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւնը (1889, № 7
Ալ. Բալանթար):
- 3) Աղգային Վէպ. Դաւիթ և Մհեր (1889, №№ 10, 11, 1890
№№ 1, 2. Մ. Աբեղեան):
- 4) «Ամուսիններ» Սունդուկեանցի (1890 թ. № 2. Լուսինի):
- 5) «Վարժուհի» Չմշկեանի (1890 № 5. Լուսինի):
- 6) Մանկական ընթերցանութիւն և Ղ. Աղայեանց (1890 թ.
№ 3. Երուանդ Ղազարեանց):
- 7) Յ. Թումանեանցի բանաստեղծութիւնը (1891 № 1. Լուսն
Մանուէլեանց):
- 8) Վիպասան Սկտաւ Ֆէլէ (1891 № 2, Գ. Անակեան):
- 9) Իշխան Ճաւառճէի Կացիա-Աղամիա՛նի Վէպի առիթով
(1891 № 4, Տ. Փիւռումեանց):
- 10) Կոմս Լ. և Տոլստոյի սկզբունքները (1891 № 6. Յ. Սաղաթել.):
- 11) Միխայիլ Իւրեիչ Լերմոնտով (1891 № 6. Լ. Մանուէլեան):
- 12) Մոռացւած խօսքեր: Կոմս Տոլստոյ (1891 № 12, Ե. Ղա-
զարեանց):
- 13) Պետալոցցին հայ գրականութեան մէջ (1891 № 7—8,
Յ. Բարխուդարեանց):
- 14) Սիրոյ պատարանք, «Էլէկինո» Գրիգոր Արծրունու (1891 թ.
№ 12. Ե. Ղազարեանց):

- 15) Սմբատ Շահաղիզեանի բանաստեղծութիւնը (1891 թ. № 3, 5, 7—8, 12. Եղիշէ Մաղաթեան):
- 16) «Իշխանուհի» զրամա Շիրանզադէի (1891 № 12. Լուսինի):

6. Գրախօսութիւն:

1889—1891 թ. երեքամեայ շրջանում, զլիսաւոր աշխատակցութեամբ Ա. Արասխանեանցի, Ալ. Քալանթարի, Լ. Սարգսեանի, Արշ. Բարխուդարեանի և մասնակցութեամբ Յ. Տէր-Սիրաքեանի Յ. Բարխուդարեանի և այլն «Մուրճ»-ում քննել են 138 զրքեր ընթացիկ գրականութիւնից, որոնց հեղինակներն են հետևեալները.

1889.—Հանդէս Գրակ. և Պատմ., Տ. Փիրուսեան, Քամարեան, Յ. Նազարեան, Շեքսպիրից Յ. Լալայեան, Սմայլից Փ. Վարդանեան; Աբեղեան, Մեհրաբեան-Սրինդ, Փիլոյեան, Նոյնը, Յ. Նազարեան, Матеріалы по изуч. быта рос. крестьянъ въ Закавказ. краѣ; Յիսնամեակ Երևանի թեմ. դպրանոցի, Տ. Նուսասարդեան, Кавалевский и Макаровъ, Зейдлицъ, Кучаевъ; Աղբիւր ամսագիր; Տ. Կամսարական, Զուբար; Շեքսպիրից Ս. Արծրունի, Բաղմալէդ ամսագիր, Պ. Պոռնան; Սահակ քահանայ Սահակեանց, Ղազարեան, Գաբրիէլից Շահբուդադեան, Յ. Բարխուդարեան; Աբեղեան, Մ. Տէր-Սարգսեանց; Կ. Ռիտտէր, Վ. Նիւյման, Շազլէր, Տրոյբեր, Է. Շմիդտ, Յ. Մէրկէլ, Բրուսման, Ա. Անգիուլի, Գ. Կնապպ, Յ. Զիտտարդ, Գ. Մօնօ, Վ. Ռոշէր, Լեոնեպս, Ա. Գասպարի, Ի. Գո'լլցիհէր; Լէօ, Շիպպէր, Ս. Հախումեան, Յ. Մարադեան:

1890 ու Մովսէս Խորենացուց — Վ. Ստեփանէ, Ե. Մաղաթեան, Յ. Նազարեանց, Գ. քահանայ Ադսնեանց, Մ. Զմէկեան, Ադանեանց, Երիցեան; Ֆիրդուսիից Փ. Վարդանեան, Ագապեան, Շիլլերից Փ. Վարդանեան, Վ. Փափազեան, Ան. Քալանթար; Տէր-Գրիգորեանց բժշ. (Թիֆլիսեցի), Բոդենշտեյտ; Ա. Երիցեան, Խ. Մալումեան, Տէր-Ղևոնդեան, Նար-Դոս; Ս. Պետերբ. հայ ուսանողն. Յ. Հրատարակութիւնները, С. Зелинский; Ս. Մելիք-Շահնազարեանց, Սականինի, Ռէյխ, Տիկին Մարգարիտ, Ս. Կուսիկեան; Ղևոնդ Ալիշան, Ս. Պալասանեան; «Արաքս» Գիւլամիրեանցի, Описание Кавк. выставки; Լուսինի, Վ. Փափազեանց, Ղազարեանց; Մելիք-Շահնազարեան, Gelber.

1891. — Դարդելի, Լեօնց, Մէնէլիշեան, Ս. քահանայ Սահակեան, Կ. Պալապան, Ա. Պոյաճեան; Բուզգէ, Սմայլից Փ. Վարդա-

Նեան, Բիշոֆ և Կոհլեր, Հուբեր; Շեքսպիրից օր. Շ. Տէր-Նիկողոսեան, Լէօ, Կարմէն Սիլւա, Ռ. Գէօրգիւնա; Էլ. Ռէկկիւլից սարկ. Գ. Տէր-Մկրտչեան, Տոլստոյից Փ. Վարդանեան, Տոլստոյից նոյնը; Լուսկէւիչ, Կարամզինից Դ. Տէր-Դաւթեանց, Կարամզինից Մ. Բէզլարեան, Պ. Հէյզէից Փ. Վարդանեան, Ա. Մամիկոնեան; Լէօ, Շէշգրինից Խ. Մ., Մոպասանից օր. Մ. Մալուսեան, Աուէրբախից օր. Ն. Ս., Սպիրից Ի. Յ., Գր. Տէր-Գրիգորեանց բժշկ. (Թիֆլիսեցի) Ֆ. Շմիտից Փ. Վարդանեան, Թոմաս Բոցարիս, Վ. Լուսկէւիչ, Լերմոնտովից Սադաթեան; Լ. Մանուէլեանց, Պարոնեան, Վալդէրից Փ. Վարդանեան, Վ. Հիւգօից Յ. Ս., Տուրգենից Ե. Ղազարեան; Գոգոլ, Դ. Տանից Գ. Վ. Գալմբէրեան; Եղիշէից Հ. Ղուկասեան, Յ. Նազարեան; Շէշգրինից Մ. Ղազարեանց Յ. պատմաճք, Օսորոգորսկիից Յ. Խ., Կուլիկովայից Աննա Սահակեան:

7. Ժողովրդական-կրթական, մանկավարժական և դպրոցական խնդիրներ:

- 1) Հոգեբանական-մանկավարժ. խորհրդածութիւններ (1889 № 3. Տէր-Միրաքեան):
- 2) Դպրոցական դործեր (1889 № 4. Լուսինի):
- 3) Ուսումնարան. գիտելիքներ (1889 № 9, 10. Յ. Տէր-Միր.):
- 4) Դպրոցական զբոսանք (1889 № 11. Յ. Բարխուդարեան):
- 5) Պրուսիայի Ժողովրդական ուսումնարանների ներկայ դրութիւնը (1889 № 10. Արտասահմ. Թղթակց.):
- 6) Ժողովրդ. բժշկ խնդր. մասին մեր մէջ (1889 № 12):
- 7) Պարիզի քաղաքային ուսումնարանները (1890 Թ. № 1, Արտասահմ. Թղթակց.):
- 8) Կարինի դպրոց. դործերը (1890 № 3, 5. Վ. Աքանազեան):
- 9) Գերմանական դպրոցների դրութիւնը (անցեալը և ներկան, 1890 Թ. № 4, 5, 6, 8. Արշակ Տէր-միքէլեանց)
- 10) Մանկավ. բուժական վարժարան (1890 № 5. Յ. Բարխուդ.):
- 11) Գերմանական համալսարանների ոգին (1890 № 5. նոյնը):
- 12) Դաստիարակչ. մոլորութիւններ (1890 № 9. Եր. Ղազար.):
- 13) Անգլ. Ժողովրդ. դպրոցները (1890 № 3. Արտաս. Թղթ.):
- 14) Ուսուցչական ուժիկները և կաթողիկոսական կոնդալը (1890 № 6. Լուսինի և Ներքին տեսութիւն):

- 15) Ժողովրդ. ընթերց. գործը (1890 № 5. Լուսինի):
- 16) Ժողովրդական գրադարանների փորձը մեզանում (1890 թ. № 12. Լևոն Սարգսեանց):
- 17) Քիֆլ. արհեստաւոր. ուսումնարանը (1891 № 2. Լուսինի):
- 18) Ընթերցանութ. մոդական լապտերով (1891 № 4. Թարգմ. B.):

8. Ժողովրդագրական, տեղագրակ., ճանապարհորդական:

- 1) Այց Թիւրքաց-Հայաստանի (1889 № 4, 5, 7, 9, 11, 12
և 1890 №№ 1, 2. Լևոն Սարգսեանց):
- 2) Հինդ օր (Արցախում, 1889 № 1, 2. Լէօ):
- 3) Աբասթուանի և կուրօրտների գրականութիւնը (1889 թ. № 8. Լուսինի):
- 4) Ախալցխայ (1889 № 8. Լուսինի):
- 5) Ճանապարհորդի յիշատակարանից (Վենետիկ և Հ. Ալիշան.
1889 № 8. Սիրունի):
- 6) Վանայ ծովակը (1890 № 4. Տ. Փիրումեան):
- 7) Ստենլէյ և Էմին փաշա (1890 № 8. Արտասահմ. թղթ.):
- 8) Բոշաները, ըստ Կոլչիի (1890 № 10. Ա. Արասխանեանց):
- 9) Սև-Լեւնցիք (1890 № 12. Յ. Ղարաբեօղեան):
- 10) Զմիւռնիայից—Ալեքսանդրապոլ (1889 № 12. Տէր-Միրաք.):
- 11) Ապշերոնեան թերակղզին (1891 № 7—8, Գ. Կիւլպենկ.):
- 12) Ճանապարհորդական յիշողութիւններ Պարսկաստանից (1891
№ 11. Պետո):

9. Գիտնական:

- 1) Տեմպերամենտ (1889 թ. № 4. Յ. Բարխուդարեանց):
- 2) Էրնէստ Ռընանը գիտութիւն. մասին (1889 № 7, Լուսինի):
- 3) Բարակացաւ-թոքախոր (1889 թ. № 6. Բժշկ. Տէր-Գրիգորեանց, Ղլարեցի):
- 4) Բարակացաւի ծագման պատճառները (1889, № 7. Նոյնը):
- 5) Մանուկների հիւանդութիւնները (1889, № 9, 10. Նոյնը):
- 6) Հոսանքներ բնագիտ. ֆիլոսոֆայութ. մէջ (1890, № 10
Բարեկեան):
- 7) Արևի ազդեցութիւնը բուսականութեան վերայ Անդրկովկասում (1890 թ. № 11. Ալ. Քալանթար):

- 8) Կոխի գիւտը տուբերկուղղի դէմ (1890, № 12. Տէր-Գրիգորեանց Ղալարեցի):
- 9) Կոխի հրատարակութիւնը (1890, № 12. Ա. Բարեկեան):
- 10) Ռոբերտ Կոխի գիւտի մասին (1891, № 1. Գոսլէրից, Բար.):
- 11) Բոյսերի մեծարանքը (1891 № 2, 3, Ալ. Քիշմիշեանց):
- 12) Միկրոբները (1891, № 5, 6. Ա. Բալաղեան):
- 13) Երկրագնդի ապագան (1891 № 7—8. Խ. Շ.-ից թարգմ.):
- 14) Հիպնոտիսմը (1891 № 12. բժշկ. Վահան Արծրունի):

10. Հայոց լեզու եւ գրականութիւն:

- 1) Լիւն թէ վեզ (1889 № 5. Սարգիս Սարգսեանց):
- 2) Աշխարհաբառ լեզւի զարգացման մասին (1889 թ. № 4. Ա. Արասխանեանց):
- 3) Սուրբ լեզու (1890 № 11, 12. Ղազարոս Աղայեանց):
- 4) Երկբարբառները մեր լեզուում (1890 № 4. Նոյնը):
- 5) Հայոց այբուբէնը եւ թւագրութիւնը (1891 № 12. Նոյնը):
- 6) Հայկաբանութիւնը Եւրոպայում (1891 №№ 1, 3, 7—8, 9. Գ. Շուռմպֆ, թարգմ. Ա. Արասխանեանցի):

11. Կենսագրական:

- 1) Գաբր. Սունդուկեանց (1889 № 1. Գ. Չմշկեան):
- 2) Պերճ Պռօշեան (1889 № 1. Ն. Քարամեան):
- 3) Վիլիամ Գրադստին (1890 № 1):
- 4) Լուենց Շտայն (1890 № 6. Ա. Արասխանեանց):
- 5) Ժերոմ Նապոլէօն (1881 № 4, Z):
- 6) Լուզլիգ Վինտհորստ (1891 № 4, Z):
- 7) Պետրոս Աղամեան (1891 №№ 9, 10, Վրոյր):

12. Քաղաքական: (Ստորագրութիւն Z):

- 1) Եւրոպական մեծ պետութիւնների միջազգային քաղաքականութիւնը (1889 № 9):
- 2) Քաղաքական անցքերը 1888 թւականին (1889 № 2):
- 3) Բուլանժէ (1889 № 3, Z):
- 4) 1789 թ. եւ համաշխարհ. հանդէսը Պարիզում (1889 № 5):
- 5) Խալաական-գերմանական զաշնակցութիւնը (1889 № 6):

- 6) Եռապետեան դաշնակցութիւնը և քաղաքական նոր հանգամանքները (1889 № 8):
- 7) Եռապետութիւնը և մանր ազգութիւն. դատը (1889 № 9):
- 8) Ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը (1889 № 10):
- 9) Համա-ամերիկական կոնգրես
- 10) Յեղափոխութիւն Բրազիլիայում
- 11) Եւրոպան 1890 թ.-ի շէմքում (1890 № 1):
- 12) Վիլհելմ II-ի նոր հրովարտւոյնները բանւորական և դպրոցական խնդիրների առիթով (1890 № 2):
- 13) Բիսմարկի հրաժարականը (1890 № 3):
- 14) Համա-ամերիկական միութեան զործը (1890 № 4):
- 15) Բիսմարկը
- 16) Գերմանական զինուոր. օրինագիծը
- 17) Ֆրանսիայի ներքին զործերը
- 18) Եւրոպան և Աֆրիկայի բաժանումը (1890 № 7):
- 19) Աֆրիկայի բաժանումը (1890 № 9):
- 20) Առևտրական դաշինքների խնդիրը (1890 № 11):
- 21) Ընտրութիւններ Իտալիայում և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում (1890 № 12):
- 22) Կարգինալ Լաւիժըրի
- 23) Պարնէլ և Գլադստոն
- 24) Եւրոպան 1890 թւականին (1891 № 2):
- 25) Վիլհելմ II և Բիսմարկ (1891 № 3):
- 26) Ժերոմ Նապոլէօն
- 27) Լուդուիգ Վինդհորստ
- 28) Եռապետութիւնը
- 29) Իտալիան և Անգլիան
- 30) Ֆրանսիան և Ռուսիան
- 31) Մկրտիչ արքեպ. Խրիսեան՝ կաթողիկոսական թեկնածու (1891 № 9, Խմբ.):
- 32) Պետութիւնների համախմբումները (1791 № 10):

13. Ամուսյ քրոնիկ: ներքին տեսութեան բաժնում, և 1889 թ. № 6-ից սկսած Ամուսյ քրոնիկ խորագրով Լուսինի ստորագրութեամբ ղետեղւած են եղել ամուսյ խնդիր-

ների մասին կամ ամուսն կարևորագոյն դէպքերի առի-
թով մանր և ընդարձակ յօդաւածներ, որոնցից կարևորա-
գոյնները յիշատակւած են այս ցանկում՝ այլ և այլ բա-
ժիններում: Ահա լրակատարը.

- 1889 № 1. Փոխատու-խնայողական գանձարան «Մուրճ» ամսագրի:
Գաբրիէլ Սունդուկեանցի յօբելեանը:
Կովկասեան արդիւնահանդէս 1889 թ.
Տիկին Թամար Ներսիսեան (Ասիլեան):
- № 2. Կովկ. Հայոց Բարեգ. ընկ. ընդհանուր ժողովը:
Կովկաս, գիւղատնտեսական և արդիւնագ. հանդէս:
Գաբր. Սունդուկեանցի յօբելեանը (նկարագրութիւն):
- № 3. Պերճ Պռօշեանցի 30-ամեակը:
Ներսիսեան դպրոցի սլաոմութեան խնդրի առիթով:
Կովկասեան արդիւնահանդէս:
Սահլաննոս Պալասանեան:
Պետրոս Շանշեան:
- № 4. Դպրոցական զործեր:
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական ընկերութիւնը:
Կովկասեան արդիւնահանդէս:
- № 5. Թիֆլ. ընկեր. հայերէն գրքերի հրատարակութիւնը (մի
ծրագիր նորա զործունէութեան համար):
Կանոնադրութիւն ուսուցչական փոխատու-խնայողական
գանձարանի:
Ուղղագրութեան խնդիրը:
Կաթողիկոսական կանոնադրութիւն ուսուցիչների մասին:
- № 6. Հրատարակչ. ընկերութեան առիթով:
Հոգաբարձ. ընտրութ. Յովն.-Մարիամ. դպրոցի համար:
Ժորժ Օհնէի Դարբնապետը:
Հայկական թատրոնը սիրողների ձեռքում:
Բաբլի մարդաս. ընկերութեան 25-ամեակը:
Վրաց հասարակութ. և դրող իշխ. Ակակի Յերետիլի:
Կովկասեան կառավարչապետի շրջաբերականը հայոց կրօնի
դասատուութ. մասին ուսուց միջնակ. դպրոցներում:
Արձան Պետրոս Շանշեանին:

- Պռօշեանի յօբելեանի մասնաժողովը:
- № 7. Միջնակարգ դպրոցների նորաւարտները:
Մահմեդականուհիք ուսաց դպրոցներում:
- № 8. Ամուսին զրոյցներ. Աբասթուաման, Բորժոմ, Ախալցխ.
Հայոց դպրոցների կանոնները:
Իզմիրեան կապը:
- № 9. Կովկասեան արդիւնահանդէսը:
Անդրկովկասեան երկաթուղին:
Թիֆլիսի հիւրերը:
- № 10. Հայկական թատրոնը 1879-ից դէս:
- № 12. «Արձագանք»-ի մի յօդւածի առիթով:
Հրատարակչական ընկերութեան առիթով:
Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան:
Ժողովրդական բժշկութեան խնդիրը:
- 1890 № 2. «Ամուսիններ»-ի ներկայացումը:
- № 3. Գր. Արծրունու գործունէութեան 25-ամեակը:
Պատկերազարդ թերթեր:
Ներսիսեան Դպրանոցի ակտը:
Հայոց ընկերութիւնների ընդհանուր ժողովները:
- № 4. «Վարժուհի» կոմեդ. Գ. Զմշկեանի:
- № 5. Գր. Արծրունու յօբելեանը:
Ժողովրդակ. ընթերցանութեան գործը:
- № 6. Ռոսսի Թիֆլիսում:
Ուսուցչական ուժիկներ:
Կոնդակ եկեղ.-ծիսական ուսումնարան. վերաբերեալ:
- № 7. Ուսուցչական ուժիկներ:
Հայոց ուսումնարանների եկամուտները:
- № 10. Հայկական կեանքի կենտրոններ:
Խորէն-Նարբէյ Թիֆլիսում:
Պատրիարքական խնդիրը Կ. Պոլսում:
Թեմական վերատեսչութեան վերականգումը:
- № 11. Պատրիարքական խնդիրը Կ. Պոլսում:
Թիֆլիսի անատէրերը ըստ կարգերի:
Ռաուլ Կոչալսկիի կոնցերտները:

- № 12. Թիֆլիսի զուլմայի ձայնաւորները:
Հայկական թատրոնի խնդիրը:
- 1891 № 1. 1890 թւականը հայերի համար:
Թատերասերների դերը:
Մուրացանի «Խուզան» դրաման:
Կարա-Մուրզան Թիֆլիսում:
- № 2. Հայերը ուստաց թերթերում:
Հայոց բարեգործ. ընկ. ընդհ. ժողովները:
Թիֆլիսի արհեստավարաց ուսումնարանը:
Դերասան Պետրոսեան:
«Վարժուհու» երկրորդ ներկայացումը:
Աղամեանը — հիւանդ:
- № 3. Տիկին Ժիւլիկ Թիֆլիսում:
- № 4. Թիֆլիսի քաղաքացիի ընտրութիւնը:
Պօղոս Իզմայլեան և իշխ. Արզութեան:
Ներսիսեան զպր. հոգաբարձութեան ընտրութիւնները:
- № 5. Կաթողիկոս Մակար I-ի մահը:
Կուսակցոնի սեպհականութեան խնդիրը:
Հայոց հրատարակչ. ընկերութիւնը:
Շեղուհնով:
- № 6. Պետրոս Աղամեան:
Յակոբ Պարոնեան:
Կաթողիկոսական տեղակալի խնդիրը:
- № 7—8. Կոնդակը տեղակալական խնդրում:
Երզման խնդիրը:
- № 9. Աւագ-Նախաղահ Թիֆլիսի դատաստանական պալատի
Ֆոն Վենդրիխ և դատաստանակ. պահանջն. Կովկասում:
Հայկական թատրոնի մշտական խումբը:
- № 10. Անդրկովկասեան երկաթուղին 1890 թւականին:
Սովը Ռուսաստանում:
Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը:
Կառավարչական կարգադրութիւններ Էջմիածնի Սինոդի
նոր անդամների և երզման խնդրի մասին:
- № 11. Սովը Ռուսաստանում:

Մեր զիւղական խնդիրները (զիւղական արդիւնաբերութեան պահեստներ, զիւղ. բանկեր, շտեմարաններ):
 Հացահատիկների առևտուրը և արտահանման արգելքը
 № 12. Շիրականագետի «Իշխանուհի»:

14. Հաստատութիւնների մասին:

- 1) Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը 1888 և 1889 թւականներին (1889 № 2, նաև 1891 № 2):
- 2) Քիֆլիսի Բնկերութիւն Հայերէն գրքերի հրատարակութեան (1889 №№ 4, 5, 6, 12, 1891 № 5):
- 3) Բաքուի Մարգարակ. ընկերութ. (1889 № 6, 1890 № 2):
- 4) Կանոններ հայոց-եկեղեցական ծխական ուսումնարանների, Մակար կաթողիկոսից հաստատւած 1889 թ. (աշխարհ. թարգմ., 1890 № 8):
- 5) Տեղեկագիր Իլմիրեանց կոակի դործադիր մնացուն յանձնաժողովի ի հանդիսի Սահակ-Մես օպեան մրցանակաբաշխութեան 1889 թ. 1889 № 8.
- 6) Ներսիս. ազգ. հող. դպրոն. նիւթ. գրութիւնը (1890 № 3):
- 7) Մակար կաթող. կոնդակը ուսումնարան. մասին (1890 № 6):
- 8) Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների տարեկան եկամուտները 1887/88 թ. (1890 № 7):

15. Վեպեր, պօէմաներ, պատմածքներ, պատկերներ, կեանքի գծեր, ալեգորիաներ:

- 1) Յեցեր (1889 № 1—6. Պ. Պաօշեանց):
- 2) Խե կարապետ (1889 № 6—9. Ս. Արարետեան):
- 3) Կորածներ 1889 № 9, 10. Լէօ):
- 4) Բզկէ 1889 № 12, 1890 № 1—9. Պերճ Պաօշեանց):
- 5) Հեղինէ, մասն առաջին (1890 №№ 6—12 տիկին Մ. Մարիսեան):
- 6) Կացիա-Աղամիանի (1891 № 4, 5, 6. Իշխ. Իլիա ճաւաճէի թարգմ. Տ. Փիրումեանի):
- 7) Հեղինէ, մասն երկրորդ (1891 № 1—12. տ. Մ. Մարիսեան):
- 8) Եղուարդ էֆէնդու զաղանիքը (1889 № 1. Տ. Փիրումեան):
- 9) Բարի պտուղ (1889 № 11. Յ. Պաշեանցի):

- 10) Հայ գիւղացու սեօրը (1890 № 3 — 5. Ա. Մելիք-Շահնազ.):
- 11) Խաթ-Սաբա (1890 № 9, 10. Վ. Փափաղեան):
- 12) Նկարիչներ (1890 № 8. Վ. Գարշին, Թարգմ. Տ. Յ.):
- 13) Բոսֆորի ավերում (1891 № 3, 5. Վ. Փափաղեան):
- 14) Զաւարիների արշաւանքը (1891 № 6, 7—8. Լ. Մանուէլ.):
- 15) Attalea-Princeps (1891 № 11. Վ. Գարշին):
- 16) Վիթխարի ընկուզենին (1891 № 11. Ս. Մել-Շահնազ.):
Պատրիկեանի նամակները (Ա. Նամակեանի), այն է—
- 17) Օտարոտի այցելու (1889 № 2):
- 18) Երիտասարդ Հաթամեանը (1889 № 3):
- 19) Կեանքի սիւները (1889 № 5):
- 20) Օրիորդ Նւարդ (1890 № 2):
- 21) Արանեանի մօտ (1890 № 3):
- 22) Զրաղաց (1890 № 4):
- 23) Իմ ուղեկիցները (1891 № 11):
Կեանքի դժեր (Ա. Նամակեանի), այն է—
- 24) Հարեաններ
- 25) Մինասի եղը (1891 № 1):
- 26) Եզիդ աղջիկը (1891 № 2):
- 27) Նւազւած կեանքը (1891 № 3):
- 28) Ծանր քարը (1891 № 4):
- 29) Մեր ինչը կը պակսի (1891 № 9):
- 30) Ամուսինների վրդովմունքը:
- 31) Տիկին Ուիլեամս և կոյժակը:
- 32) Իմ առաջին դրական փորձը (1891 № 1):
- 33) Իմ ժամացոյցի արկածները (1891 № 1):
- 34) Փրկարար ձայնը (1891 № 2):
- 35) Սափրիչների մասին (1891 № 3):
- 36) Նոր քրէական մի բառ (1891 № 4):
- 37) Միջնադարեան վէպ (1891 № 6):
- 38) Խրատակ. առականների մասին (1891 № 7):
- 39) Ժանտախտի դիմակը (1891 № 2. Էդգար Պօէ):
- 40) Կենդանի պատկեր (1891 № 3. Էդգար Պօէ):
- 41) Դիագորոս Միլոսացին (Պոէմա, 1891 № 12, Լ. Մանուէլեանց):

Մարկ Տուէն:

16. Բանաստեղծուքիւններ:

1889—1891 եռամեայ ընթացքում գետեղել են իրանց ոտանաւոր բանաստեղծութիւնները բացառապէս «Մուրճ»-ում պ. պ. 1. Մանուէլեանց, Արշ. Մխիթարեան և Յովհաննէս Թումանեանց: Աշխատակցել են, բացի զոցանից՝ պպ. Ալեքսանդր Մատուրեան, Զաւակ Բալուշեան, Լեոնեց և ուրիշներ:

17. Ֆէյրտոն:

1) Օրէ ցօր (1801 №№ 10, 11, 12):

18. Գեղարուեստ, երաժշտութիւն:

1) Երաժշտութիւն (1889 № 1. Կարա-Մուրզա):

2) Կարա-Մուրզա և քառաձայն երգեցողութիւնը մեր մէջ (1889 № 5. Ա. Զիլիգեան):

3) Նկարչի նամակները (1889 թ. № 11 և 1890 № 11. Գ. Բաշինջաղեան):

4) Թիֆլիսի սալոն 1890 թ. (1890 № 2. Ա. Արասխան.):

5) Ռաուլ Կոչալսկի (1890 № 11, Լուսինի):

6) Նկարիչ Էրնեստ Մեսոնիէ (1881 № 2. Ա. Արասխան.):

19. Թատրոն:

1) Դարբնապետ Ժորժ Օհնէի (1889 № 6):

2) Ուղղութիւններ Հայկ. թատ. գործում (1889 № 10):

3) Ամուսիններ Սունդուկեանցի (1890 № 2):

4) Վարժուհի Զմէկեանի (1890 № 4):

5) Ռոսսին Թիֆլիսում (1890 № 6):

6) Թատերասէրների դերը (1890 № 12):

7) Ռուզան Մուրացանի (1891 № 1):

8) Դերասան Պետրոսեան (1891 № 2):

9) Տիկին Ժիւղիկ Թիֆլիսում (1891 № 3):

10) Հայկական թատրոն 1890/91 թ. (1891 № 9, 10, 11):

11) Իշխանուհի Շիրանզադէի (1891 № 12):

20. Ռուսաստանի կեանքից:

1) Նամակներ Ռուսաստանից (1890 № 11, 12, 1891 № 1. Տ. Յովհաննիսեան):

21. Արտասահմանի կեանքից:

- 1) Գաղթը դէպի Անգլիա (1889 № 11, թղթակց.):
- 2) Ֆիզիոլոգն. կոնգրես Բազելում (1889 № 11, թղթակ.):
- 3) Բրիտանական ընկեր. գիտութիւններ առաջացնելու համար (1889 № 11, թղթ.):
- 4) Պարիզի կոնգրես կիրականօրեայ հանգստութեան առթիւ (1889 № 12, թղթ.):
- 5) Պարիզի համաշխարհ. հանդէս (1889 № 12, թղթ.):
- 6) Վիլհելմ կայսրը և Պոլսում (1889 № 12, թղթ.):
- 7) Գլադստոնի 80-ամեակը (1890 № 1, թղթ.):
- 8) Ազգային կոնգրես Հնդկաստանում (1890 № 1, Ա. ստահ. թղթակցութիւն):
- 9) Համա-ամերիկական կոնգրես:
- 10) Ֆրանսիայի պետական ծախքերը (1890 № 11, թղթ.):
- 11) Կոստի գիւտի առաջին արձագանքները (1890 № 12, թղթ.):

22. Նկատողութիւններ, պատասխաններ:

Կարճօրագոյն նկատողութիւններ և պատասխաններ խմբագրութեան և այլ կողմերից:

- 1) «Մուրճ» ամս. ուղղադրութիւնը (1889 № 1, ներք. տես.):
- 2) «Մուրճ»-ի ուղղադրութեան մասին (1889 № 3, խմբ.):
- 3) «Իւերիա» վրաց լրագրի խմբագրութեանը Սուղորկեանցի առիթով (1889 № 3, խմբ.):
- 4) «Մուրճ»-ի գրախօսական բաժնի մասին (1889 № 4, խմբ.):
- 5) Պատասխ. «Մշակ»-ին, «Յեցերի» առիթով (1889 № 7, խմբ.):
- 6) Օտար գրականութիւնը «Մուրճ»-ի գրախօսութեան մէջ (1889 № 10, խմբ.):
- 7) «Մուրճ»-ի բաժինների ընդարձակումը (1889 № 11, խմբ.):
- 8) «Արձագանք»-ին (1889 № 12):
- 9) Մոսկւայի ուսանողների նամակը (1890 № 1):
- 10) Մի բացատրութիւն «Աղբիւր»-ի խմբագրութեան (1890 № 3, խմբ.):
- 11) Խրիմեան Հայրիկի 70-ամեակը (1890 № 4, խմբ.):
- 12) Ոտանաւորները «Մուրճ»-ում (1890 № 4, խմբ.):

- 13) «Քննադատներին» (1890 № 4, Եղիշէ Մաղաթեան):
- 14) Նամակ խմբագրին (Տ. Յովհաննիսեան, 1890 № 5):
- 15) Մելիք-Հայկազեանց (1890 №№ 5, 6. Խմբ.):
- 16) Արիւն Տ. Աւետիսի Տեազիր (1890 № 5, Խմբ., պատասխան № 6. Խմբ.):
- 17) Լուսնի Ծոն Նուային շնորհաւորութիւն (1890 թ., № 5. Նորա մահը 1890 № 10, Խմբ.):
- 18) «Հանդէս Ամսօրեայ» ամսաթերթին (1890 № 5. Խմբ.):
- 19) Գրականական աշխատութիւն (1890 № 6. Եղիշէ Մաղաթեանց):
- 20) «Մուրճ»-ի գրախօսութիւնը և պ. Սեդրակ Մանգինեան (1890 № 6. Խմբ.):
- 21) Հմայեակ Սողոմոնեանց (1890 № 6. Խմբ.):
- 22) Տալմուզական քննադատութիւն «Մուրճ»-ի մասին (1890 № 6. Խմբ.):
- 22) Թէ ինչպէս է պարզում «Արձագանք»-ը ճշմարտութիւնը (1890 № 8. Եղիշէ Մաղաթեանց):
- 23) Համբարութիւնների ուսումնասիրութիւնը և պ. Եղիազարեանց (1890 № 9):
- 24) Ո և Յ-ի ուղղագրութիւնը (1890 № 10. Խմբ.):
- 25) «Ծագիկ» լրագիրը (1890 № 10. Խմբ.):
- 26) Գիւղական բանկերի առիթով (1890 № 11):
- 27) Պրոֆ. Զուբինովին շնորհաւորութիւն (1890 № 5 պատասխան № 11, Խմբ.):
- 28) Լազարեան ճեմարանի յօրեղանը (1890 № 11. Խմբ.):
- 29) Ռուսաստանի կեանքը «Մուրճ»-ում (1890 № 12, Խմբ.):
- 30) Բանաստեղծութիւնը «Մուրճ»-ում (Նամակ խմբագրին, Ընթերցող: Նկատողութիւն խմբագրութեան 1890 № 12):
- 31) Մկրտիչ Էմին (1891 № 1. Խմբ.):
- 32) Ներսիս. զար. հոգար. ընտր. մասին (1891 № 2. Խմբ.):
- 33) Մինաս Զերազ (1891 № 2. Խմբ.):
- 34) Հենրիխ Շիման (1891 № 2. Խմբ.):
- 35) Երկպառակութեան ոգին զաւառներում (1891 № 2. Խմբ.):
- 36) Աղքատների խնամատարութեան խնդիրը (1891 № 2. Խմբ.):

- 37) Հայոց Բարեկ. Բնիկեր. ընտրութիւնները (1891 № 2. Խմբ.):
- 38) «Միաբան» ի քննութիւնը Մովսէս Խորենացու (1891 № 2, Խմբ.):
- 39) Ներս. դպր. տարեկան աւտը (1891 № 2. Խմբ.):
- 40) Յանձնաժողով Հայկական և Թրքական զորքերի Համար (1891 № 3. Խմբ.):
- 41) Կովկաս. գրաքննակ. կոմիտեի պերսոնալը (1891 № 3. Խմբ.):
- 42) Արձագանքի մոքերը (1891 № 3. Խմբ.):
- 43) «Տարազ» ի մաներները (1891 № 4. Խմբ.):
- 44) Հաստատութիւնների յայտարարութիւնները «Մուրճ»-ում (1891 № 5. Խմբ.):
- 45) Դրացի օտարների ուսումնասիրութիւնը «Մուրճ»-ում (1891 № 6. Խմբ.):
- 46) Յ. Բարխուդարեանցի «Մանկավարժ. զրուարանը» (1891 № 7. Խմբ.):
- 47) Փարիսեցիութիւնը քննադատութեան մէջ (1891 № 9. Ա. Արասխանեանց):
- 48) Պահպանողականները լեզու ինդրում (1891 № 9. Համբակ):
- 49) «Մուրճ»-ի հրատարակչութիւնը 1892 թվականից (1891 № 9. Խմբ.):
- 50) «Մշակ»-ի մոքերը ամուսնութեան և պսակի մասին (1891 № 9. Խմբ.):
- 51) «Մշակ»-ի հրապարակախօսական մոլորութիւնները: Հողագործութիւնը և պանդխտութիւնը (1891 № 10. Խմբ.):
- 52) Նամակ Խմբագրին (1891 № 10. Ստ. Մալխասեան):
- 53) Ատալէա-Պրինցեպսի Թարգմանութեան առիթով (1891 № 11. Ա. Ղուկեանց):
- 54) Թեմական պատգամաւորների ընտրութիւններ կաթողիկոսական ընտրութեան համար (1891 № 12, Խմբ.):

Ներկայ 1891 թականին

„ՄՈՒՐՃԸ“

ՏԻԵՅ ՀԵՏԵՒԵԱԼ ԳՐԻԱԾՔՆԵՐԸ

1. Հիմնական խնդիրներ և ժամանակակից
Հասարակական խնդիրներ:

- 1) Յոս աջադիմութեան պայմանները (№ 1, Ա. Արասխանեանց):
- 2) Կինը Հասարակութեան մէջ (№ 6, Ա. Արասխանեանց):
- 3) Տեղակալական խնդիրը (№ 6, 7—8, Լուսինի):
- 4) Երգման խնդիրը (№ 7—8, Լուսինի):

2. Վիպական:

- 1) Հեղինէ, մեծ վէպ, 2-րդ մասը (№№ 1—12, Տ.-ին Մ. Մարիսեան):
- 2) Բոսֆորի ափերու մ' (№№ 3, 5, Վ. Փափազեանց):
- 3) Զաւարիների արշաւանքը (№ 6, 7—8, Լ. Մանուէլեանց):
- 4—8) Հինդ պատմաճգ Սլ. Նամալեանի (№№ 1, 2, 3, 4, 9):
- 9) Կացիա-Աղամեանի (№№ 4, 5, 6, իշխ. Ի. Ճաւճաւաճէ, թարգմ.):
- 10—16) Եօթը պատմաճգ Մարկ Տուէնի (№№ 1, 2, 3, 4, 6, 10):
- 17) Ժանտախտի դիմակը (№ 2). { Եղգար Պօէ.
- 18) Կենդանի պատկեր (№ 3). {
- 19) Attalea-princeps (№ 11, Վ. Գարշին, թարգմ.):
- 20) Վիթխարի Ընկուզենին (№ 12, Մել.-Շահնազ.):
- 21) Դիազորոս Միլոսացին (Պօէմա, № 12, Լ. Մանուէլեանց):

3. Բանաստեղծութիւն:

- 1) Մեր նոր բանաստեղծներին (№ 1, Լևոն Մանուէլեանց):
- 2) Երեք բանաստեղծութ. (№ 1, Հէնէից՝ Բալուդեան):
- 3) *** (№ 1, Սուրէն Աթայեանց):
- 4) Երկու երգիչ (№ 2, Լևոն Մանուէլեանց):
- 5) Երգչին (№ 2, Յովհ. Թումանեանց):
- 6) *** (№ 3, Լևոն Մանուէլեանց):
- 7) Թիթեռ և Շուշան (№ 3, Լևոն Մանուէլեանց):
- 8) Ձեմ՝ նախանձում (№ 3, Ա. Մատուրեան):
- 9) *** (№ 3, Յովհ. Թումանեանց):
- 10) *** (№ 4, Լևոն Մանուէլեանց):
- 11) Թռչնիկ (№ 4, Պէշէէից՝ Կ. Կրասիլնիկեան):
- 12) Դուժանի երգ (№ 4, Յովհ. Թումանեանց):
- 13) Պանդուխտ հոգի (№ 5, Սմբատ Շահադիզեան):
- 14) Համերգ (№ 5, Յովհ. Թումանեանց):
- 15) Փոթորկի ժամին (№ 6, Լևոն Մանուէլեանց):
- 16) Իդէալ (№ 6, Լևոն Մանուէլեանց):
- 17) Անհոգ մանկութեան (№ 6, Արեքսանդր Մատուրեանց):
- 18) Երազ (Ալ. Մատուրեան):
- 19) Կուրծքս երբեմն (№ 6, Յովհ. Թումանեանց):
- 20) Հելլադացի երգիչներ (№ 7—8, Լևոն Մանուէլեանց):
- 21) Եօթը ոտանաւոր (№ 7—8, Լերմոնտովից՝ Մատուրեան):
- 22) Խորհրդածութիւն (№ 7—8, Յովհ. Թումանեանց):
- 23) Միայնակ տիւր № 7—8, Գէորգ քահ. Մկրտումեանց):
- 24) Գիշերային երգ (№ 9, Լևոն Մանուէլեանց):
- 25) Երևացի, օ, մուսա. (№ 9, Լևոն Մանուէլեանց):
- 26) Ես լալիս էի.
- 27) Ամպերում վառւեց.
- 28) Առաւօտեան աստղը.
- 29) Երկու տեսիլք
- 30) Ծիծաղեցէք, իմ ընկերներ.
- 31) Մի ջանար զնեւ սպեղանի վերքիս
- 32) Այս փողով աշխարհի արդանդից վիժւած
- 33) Երգչի վրէժը (№ 10, Յովհ. Թումանեանց):

№ 9, Լեւոնց:

№ 10, Լեւոնց:

- 34) Էյ, ասողեր, ասողեր (№ 11, Յովհ. Փռւմանեանց):
 35) Որպէս երբեմն (№ 11, Բայրընից՝ Լեռեանց):
 36) *** (№ 12, Յ. Փռւմանեանց):

4. Տեղագրական:

- 1) Մի քանի օր Խիզանում (№ 1, Տ. Փիլոսոֆան):
 2) Կախէթ և Շիրակ (№ 7—8, Երսւանդ Ղազարեան):
 3) Ասղերոնեան թերակղզին (7—8, Գալ. Կիւլպէնկեան):
 4) Ճանապարհ. յիշողութիւններ (№ 11, Պետօ):

5. Գրական-Քննադատական:

- 1) Հողի իշխանութիւնը, ըստ Գլէր Ուսպէնսկու (№ 3, Երսւանդ Ղազարեանց):
 2) Լերմոնտով, Մ. Ի. (№ 6, Լ. Մանուէլեան):
 3) Լև Տոլստոյի սկզբունքները (№ 6, Յ. Սաղաթեկեանց):
 4) Պետաւրցիին հայ գրակ. մէջ (№ 7—8 Յ. Բարխուդ.):
 5) Սմբատ Շահազիզեանի բանաստեղծութիւնը (№ № 3, 5, 7—8, 12, Ե. Մաղաթեան):
 6) Մոսացւած խօսքեր: Կոմժ Տոլստոյ (№ 12, Ե. Ղազարեան):
 7) Սիրոյ պատրանք. Էլեկինա (№ 12, Ե. Ղազարեան):
 8) Իշխանուհի, զրամա Շիրանդազէի (№ 12, Լուսինի):

6. Գրախօսութիւն:

«Մուրճ»-ը զրախօսել է ներկայ 1891 թւականին 48 նոր լոյս տեսած գրքեր:

7. Տնտեսական:

- 1) Անասնապահութիւնը Կովկասում (№ 1, Յ. Սաղաթեկեան):
 2) Արդիւնագործութիւնը Անդրկովկասում (№ 4, յօդ. Ի. Գր. Վարդանեանց):
 3) Բաքւի նաւթը (№ 7—8, 9, 10, 11, Գ. Կիւլպէնկեան):
 4) Անդրկովկասեան երկաթուղին 1890 թ. (№ 10, Լուսինի):

8. Գիտական-Բանասիրական:

- 1) Բոյսերի մեծարանքը (№ 2, 3, Ալ. Քիշմիշեան):
 2) Ռոբերտ Կոխի գիւտի մասին (№ 1, Բարեկեան):
 3) Միկրոբները (№ 5, 6, Սամուէլ Բալազեան):
 4) Երկրագնդի ապագան (№ 7—8, Խ. Շ. Թարգմ.):

- 5) Հիպոտոիսմը (№ 12, Բժշկ. Վաճան Արժրունի):
- 6) Հայկաբանութիւնը Եւրոպայում (№ 1, 3, 7 — 8, 9, պրոֆ. Գ. Ա. Շրումպֆ):
- 7) Երկբարբառները մեր լեզուում (№ 4, Դ. Աղայեանց):
- 8) Հայոց այբուբենը և թւագրութիւնը (№ 12, Դ. Աղայեանց):
- 9) Զւիցերիակ. պետութիւնը (№ 9, 10, 11, Մ. Մանուչարեան)

9. Կենսագրական:

- 1) Շարլ Մեսոնիէ, նկարիչ (№ 2, Ա. Արասխանեանց):
- 2) Օկտաւ Ֆէյլէ, վիպասան (№ 2, Դր. Անակեան):
- 3) Ժերոմ Նապոլէօն (№ 4, Շ.):
- 4) Լուզւիգ Վինդհորստ (№ 4, Շ.):
- 5) Պետրոս Ադամեան (№ 9, 10, Ա. Մ. Վրոյր):

10. Ժողովրդական Կրթութիւն:

- 1) Դպրոցական ռեֆորմը Պրուսիայում (№ 1):
- 2) Ընթերցանութիւն մոգական լապտերով (№ 4, B.):
- 3) Ժողովրդական կրթութեան դաշնակցութիւնը Ֆրանսիայում (№ 9, 10, Լ. Դ. Թարգմ. Դ. Հայրապետեանց):

11. Օտարների կեանքից:

- 1) Նամակներ Ռուսաստանից (№ 1, Տ. Յովհաննէսեան):
- 2) Շեղուկով (№ 5, Լուսինի):
- 3) Ֆրանսիական երիտասարդութիւնը (№ 11, 12, Դ-ով, Թար.):
- 4) Վրաց գրականութիւնը (№ 4, Տ. Փիրումեան):

12. Քաղաքական:

- 1) Քաղաքական անցքերից 1890 թ. (№ 2, Շ.):
- 2) Վիլհելմ II, իշխ. Բիսմարկ և Ֆրանսիան (№ 3, Շ.):
- 3) Եռապետութիւնը, Իտալիան և Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստան (№ 9, Շ.):
- 4) Պետութիւն. համախմբումներ: Պարնէլի մահը (№ 10, Շ.):

13. Հասարակական Բրոնիկ:

- | | |
|--|-------|
| 1) 1890 թւականի կերպարանքը | } № 1 |
| 2) Թատերասերների դերը | |
| 3) Կարա-Մուրզա և հայկական երգեցիկ խումբը | |

- | | |
|---|--------|
| 4) Հայերը սուսաց թերթերում | } № 2 |
| 5) Հայոց բարեգործ. ընկեր. ընդհ. ժողովները | |
| 6) Թիֆլիսի արհեստավորաց ուսումնարանը | |
| 7) Դերասան — Պետրոսեան. | |
| 8) Վարժուհու երկրորդ ներկայացումը | |
| 9) Աղա Ռանի հիւանդութիւնը | } № 3 |
| 10) Տիկին Ժուզիկ Թիֆլիսում | |
| 11) Թիֆլիսի քաղաքապետի ընտրութիւնը | } № 4 |
| 12) Պօղոս Դղմայեւեան և իշխ. Արղութեան | |
| 13) Ներսիսեան զսլրանոցի հոգաբ. ընտրութիւնը | |
| 14) Մակար կաթող. կենսւնթացքը (Արարատից). | } № 5 |
| 15) Մակար I կաթողիկոսի մահը | |
| 16) Հայոց հրատար. ընկերութեան ընդհ. ժողովը | |
| 17) Շելգանով | |
| 18) Պետրոս Աղամեան | } № 6 |
| 19) Յակոբ Պարոնեան | |
| 20) Թիֆլ. դատար. պալատի նոր աւագ-նախագահ
Ֆոն Վենդերլիսի առիթով | } № 9 |
| 21) Հայկական թատրոն | |
| 22) Անդրկ. երկաթուղին 1890 թ. | } № 10 |
| 23) Սովը Ռուսաստանում. | |
| 24) Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը | |
| 25) Թատրոն | |
| 26) Կառավ. կարգադրութիւններ | |
| 27) Սովը Ռուսաստանում. | } № 11 |
| 28) Մեր դիւղական խնդիրները | |
| 29) Հացահատիկների առևտուրը և արտահանման
արգելքը | |
| 30) Ազնականների բանկը | |
| 31) Թատրոն | |
| 32) «Իշխանուհի» Երևանդադէի | № 12 |

14. Ֆեյրտոն:

1) Օրէջօր (№ 10, 11, 12, Նսեմեան):

15. Նկատողութիւններ, պատասխաններ խմբագրութեան կողմից, համակներ խմբագրին և այլն:

16. Յայտարարութիւններ:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Կաթողիկոսական ընտրութիւնների առիթով «Մուրճ»-ը իւր 1891 թ. № 9-ում արտայայտեց այս մտքով, որ «ըրութեան բարձրութեան վերայ կանգնած նա ճանաչում է միայն մի անձն՝ անզուգական Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանին»:

Ինչ է նշանակում՝ զրութեան բարձրութեան վերայ կանգնած լինել:

Ներկայ դէպքում այդ պէտք է հասկանալ այսպէս, որ միմիայն Մկրտիչ արքեպիսկոպոս Խրիմեանն է, որի անցեալը և որի բարոյական էութիւնը, որի քարոզած դասանանքը լիապէս գրաւական են, որ նա թէ հեղինակօրէն կարող է ներկայացնել կաթողիկոսական գահի վեհութիւնը և թէ բաւարարութիւն տալ այն պահանջներին, որ կարող է անել ժամանակիս յառաջդիմական ոգին:

Միմիայն Խրիմեանն է, որ իւր բեղմնաւոր անցեալով ստացել է ընդհանուր հայկական գործողի նշանակութիւն: Նորա անունը դրոշմաւած է ամեն հայի սրտում:

Իւր հարուստ գործունէութեան մէջ նա իմացել է ղեկավարել ազգային ընդհանուր շահերի տեսակէտից այնպէս, որ նորա ձգտումների վախճանը կարող էր միայն յառաջդիմութիւն լինել: Եւ այդ պատճառով ինչ կար մեզանում յառաջդիմական — համակրելի է եղել Խրիմեանին և Խրիմեանը համակրելի է եղել յառաջդիմականներին:

Այն ոգին, որը մեծացրել է Խրիմեանի անունը և դարձրել նորան հանրահայկական, բուլկական ոգևորութեան ծնունդ չի եղել: Ներշնչւելու աղբիւրը, ինչպէս երևում է, Խրիմեանի համար անսպառ է. ահա ինչու իւր ծերութեան հասակում Խրիմեանը նոյնն է, ինչ նա էր երիտասարդ հասակում վարդապետ ժամանակ: Խրիմեանը

միշտ եղել է ինքը իրան հաւատարիմ: Նա էր զաղափարի մարդ և մնացել է զաղափարի մարդ: Խրիմեան իբր կաթողիկոս, յոյս կայ որ կարող կը լինի ներշնչել ազգին և մանաւանդ հոգեւոր դասակարգին նոյն ոգին, ինչ ինքն ունեցել է ցայժմ որպէս վարդապետ, քարոզիչ, թեմական ստաջնորդ, Կոստանտնուպոլսի պատրիարք, Կրօնական ժողովի անդամ և այլն:

1878 թւականին իբր Ներսէս Պատրիարքի թէ գործակից և թէ պատուիրակ Եւրոպայի արքունիները այցելելով, Խրիմեան խորին պատկառանք է ներշնչել ամենքին, ում հետ տեսակցել է:

Խրիմեանը խորը կրօնական անձնաւորութիւն է. այն վարդապետութիւնը, որին նա ծառայում է Քրիստոսի անունով, միշտ կ'ուզէ ունենալ այլալիսի հաւատարիմ ծառաներ: Պաշտպան թշւառների, հայրական զթուլթեամբ և սիրով վերաբերող դէպի ամենքը, հալածող կեղեքողներին և իշխանութիւնը ի չար գործածողներին—նա մի առաքեալի տպաւորութիւն է գործում, որպիսին մենք Աւետարանի մէջ կարդալ սովոր ենք:

Խրիմեանը եղել է հայ ազգի գիտակցութեան յառաջդիմութեան համար մի զօրեղ ֆակտոր. նա մեծ մասամբ գործել է բնիկ երկրում, որի կեանքին մասնակից է եղել ամեն կերպ. ուսումնարան, տպարան, ամսագիր, գրականութիւն՝ սոցիալական, ազգային և կրօնական բովանդակութեամբ, արւեստներ, քաղաքական շարժում,—այս բոլորի պատմութեան մէջ Խրիմեանի անունը անքակտելի կերպով կապւած է:

Նորանից կարելի է սպասել, որ եթէ Եկեղեցու գլուխ անցնի, մեր հոգեւորական դասակարգի շարքերը կը լքեն ևն արժանաւոր քահանաներով, վարդապետներով և եպիսկոպոսներով: Նորա հովանիի տակ լինելու միութարութեամբ՝ շատերը կը ոգևորեն հոգեւորական դասը մտնելու իսկ հոգեւորական դասակարգի քրիստոնէից կախւած է շատ և շատ բան:

Դարուս մեծ հոգեւորականը պէտք է լինի և ազգի առաջին ընտրելին:

Քայց յայտնի է, որ կաթողիկոսական ընտրութիւններին, Էջմիածնում, առաջարկւելու են չորս թեկնածուներ, որոնցից այն եր-

կուսը, որոնք ամենից շատ ձայն կ'ըստանան, պէտք է առաջարկեն թագաւոր-կայսրին, որը վերապահել է իրաւունք՝ նոցանից հաստատել մէկին կամ միւսին:

Արդ, խնդիրը այս է թէ ովքեր պէտք է լինեն առաջարկելիք չորս թեկնածուները և նոցանից որ երկուսը պէտք է լինեն առաջին և երկրորդ թեկնածուներ:

Ինչ վերաբերում է առաջին թեկնածուին, «Մուրճ»-ը իւր կարծիքը արդէն յայտնել է. բացց նա դեռ չի խօսացել երկրորդի մասին և չի խօսացել չորս առաջարկելիք ընտրելիների ցանկի մասին:

Չորս ընտրելիները անկասկած պէտք է այնպիսի անձեր լինեն, որ երեք վերջիները առաջին կաթողիկոսացուի ուղղութեանը յարմար դան: Եթէ Խրիմեանի անունի մէջ մենք գաղափար ենք պաշտօնում, անկարելի է ուրեմն որ չորս կաթողիկոսացուների ցանկի մէջ մնացնենք իրանց ուղղութիւններով, ոգով տարբեր կամ հակառակ ճանաչած հոգեւորականների անուններ: Աւրեմն ցանկի մէջ պէտք է մնցնենք անուններ երեք կարեւորագոյն եպիսկոպոսների, որոնք հակախրիմեանական չեն իրանց ոգով, ուղղութիւնով, որոնք կարող են ազդի բարոյական պաշտպանութեան վերայ յոյս դնել թէ իրանց մասնաւոր արժանաւորութիւնների պատճառով և թէ իբր ազդի առաջին ընտրելիի կողմնակիցներ:

Կաթողիկոսացուների ցուցակը կազմելու առաջին և զլիսաւոր պայմանն ենք համարում այդ:

Որպէս զի այս սկզբունքով մենք կարողանանք այժմ և եթ մի ցանկ առաջարկել, անհրաժեշտ է լաւ ճանաչել այն բոլոր անձնաւորութիւններին, որոնք առհասարակ կարող են այդ տեսակէաներից իրաւունք ունենալ ցանկի մէջ մանելու:

Թող սակայն չը մեղադրեն մեզ մեր ընթերցողները, եթէ նրանց պարզ խոստովանելու լինենք, որ ընդհանրութեան հետ և մենք այնքան չենք ճանաչում մեր բոլոր հոգեւորականներին, որ կարողանանք այժմանից վեր ջնական ապէս վճռել թէ ով ումից գերադասելի է Խրիմեանի հետ անմիջապէս չիշելու ցանկի մէջ:

Իրաւունք վերապահելով վերադառնալ այդ խնդրին, մանաւանդ որ կաթողիկոսական ընտրութիւնները մեզնից երեք ամիս հեռու են, մենք կարող ենք առայժմ միայն ընդհանրապէս չիշատակել հետեւեալ

անուանները, որոնք որոշ չափով իրաւունք ունեն ընդհանրութեան համակրութիւնը վաշխելու, ուրեմն չորս կաթողիկոսական կանդիդատների ցոնկի մէջ տեղ ունենալու:

Մեր ճանաչածով ռուսահայերից այդ համակրութեանը արժանի են այժմեայ տեղակալ գեր. Երեմիա եպիսկոպ. Գալստեան և Արիստակէս եպիսկ. Սեդրակեան. թիւրքահայերից՝ մեր, կրկնում ենք, թերի տեղեկութիւնների համեմատ՝ այդ համակրութեանը արժանի են Մատթէոս Իզմիրլեան և Գրիգորիս Ալէաթճեան եպիսկոպոսները:

Իսկ վճռել յօղուտ մէկի կամ միւսի, որ պէս երկրորդ կաթողիկոսացուի, մենք այժմեայ րոպէում չենք կարող: Գորա համար մեզ հարկաւոր են աւելի լիակատար տեղեկութիւններ, քան մենք ունենք, մանաւանդ տաճկահայ եպիսկոպոսների նկատմամբ: Մի բան միայն աւելի հաստատ կարող ենք վկայել, որ ռուսահայ եպիսկոպոսներից նա, որը, համապատասխանելով մեր վերը յիշած ծրագրի տեսակէտին, ամենից շատ ժողովրդի կողմից պաշտպանութեան վերայ յոյս դնել կարող է, Արիստակէս եպիսկ. Սեդրակեանն է:

ԱՒԵՏԻՓ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ:

ՀՅՐ ԱՆԷԾՔԸ

(ԲԱՆԱԴԱՅ)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԼԵԱՆՅԻ

Եթէ զուրո հեծցես
Յազատ ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցի՛ն Քաջք,
Տաւցին յազատ ի վեր ի Մասիս,
Անդ կացցես ե զլոյս մի՛ տեսցես:

Մովսէս Խորենացի:

Հըսկայ Մասիսի ժայռի կատարին
Արտաւազդ արքան՝ նրժոյցն հեծած
Կանգնած է մենակ՝ աղեղը ձեռին,
Եւ զոյգ բարակներն նորա մըտերիմ,
Իբրեւ պահապան, նորա մօտ կանգնած:

Հեծում է մըրրիկն, ե զանդաղելով
Քանձըր մըշու շը ձորերը պատում,
Հողմերն խաղում են պըտըտելով,
Զխնի տարափներն չորս կողմը զիզում...

Զորս կողմ—վիթխարի ժայռեր են ահեղ,
Ներքեւ—սեւ անդունդ՝ իւր վիհը բացած:

Բոլորը մըռայլ ժանա է այնտեղ,
Բոլորը վայրի և ամայացած:

Շընչում է մըրրիկն և արքայի հերն,
Նըժոյգի թաւ բաշն օգում ծածանում:
Շըներն հաջում են, և ձին սըմբակներն,
Կարծես կատաղած, ժայռին է զարկում:

«Հասէ՛ք օգնութեան, բնիկը-ծառաներ»,
Ահով ու դողով դռնում է արքան.
Սակայն նորա շուրջ հեծում են հողմեր, —
Եւ նորա ձայնին չը կայ պտտախան:

Կըրկին դռնում է, դռում վերբառին,
Սառ արցունքներ են աչքերին փայլում,
Նըժոյգը դարձեալ դոփում է գետին,
Եւ բարակներն ողբազին հաջում:

Բայց զնւթ. օգնութեան մի ձայն չէ հասնում:
Միայն արձագանքն է խուլ հեռաւոր
Նոցա ձայները ձորի խորքերում
Կըրկնում տըխրագին, որպէս սըղաւոր:

Եւ Արտաւազդըն ահաբեկ այն ժամ
Լըսում է իւր հօր անէծք դառնագին,
Որով նըզովեց մեծափառ արքան
Իւր չարանախանձ, մոլի զաւակին:

«Երբ դու նըժոյգըդ հեծած հըրեղէն,
Արտաւազդ, Մասիսը որսի երթաս,
Քաջքերըն առնեն, քեզ վեհը ձըգեն,
Եւ լոյս-արևի կարօ՛ւ դու մընաս»:

Եւ սրտաուրրովի Արտաւազդ արքան
Լքտում է յանկարծ վայրենի ձայներ.
Նայում է — այնտեղ, հեռւից խրճներամ
Վազում են ահա լերան ոգիներ:

Եւ նա շուտափոյթ ուժգին հարւածեց
Իւր ծանրը ծընկներն ըմբոստ նըժոյգին —
Նըժոյգը թըռաւ, ժայռիցը ոստնեց,
Եւ ողջ կըլանեց անդունդը մըթին:

Մըրրիկն դարձեալ մըռունչ է հանում,
Եւ թանձրը մըշուշն պատում է ձորեր.
Հողմերն խաղում են, հողմերն հեծում,
Ձորս կողմը զիզում ձիւնի տաքափներ...

Էջմիածին, 1891 թ. հոկտեմբեր:

Ա Ջ Դ

(ՊԱՅՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԻՆ)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Հեռացրէք նրան Աստծոյ սեղանից,
Որ չ'ապականէ մեր սրբութիւնը,
Ազատ կացուցէք անսուրբ բերանից
Մեր հարանց պաշտած Աստծոյ անունը:

Աւարտութեամբ զօրացած բազկով
Թող նա չը կրէ մականը Մեծի,
Եւ շահախնդիր, կաշառած խօսքով
Կանգնի քարոզիչ փրկութեան գործի:

Թող չը կատարեն հաշտ ու պատարագ
Սեղանակապուտ անարժան ձեռքեր,
Ոչ նւիրական կամարների տակ
Անդգայ սրտից վերանան երգեր:

Եւ թող քարկոծւի, ով որ անդիտակ
Մարդկային կեանքի վսեմ խորհրդին,
Կը համարձակւի հայոց յարկի տակ
Քարոզել, հովւել այս ժողովրդին:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

պատմական դրամա հինգ արարւածով

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՏԻԳՐԱՆ.	Թագաւոր Հայոց:
ՋԱՐՈՒՀԻ	Թագուհի Հայոց:
ՏԻԳՐԱՆՈՒՀԻ.	Տիգրանի քոյրը:
ԵՐՈՒԱՆԿ.	Զօրավար, Տիգրանի մերձաւորը:
ԳՈՀԱՐԻԿ	Տիգրանուհու նաժիշտը:
ԱԺԴԱՀԱԿ	Թագաւոր մարաց:
ԱՆՈՅՇ	Թագուհի մարաց:
ՎԱՐՊԱԳԷՍ.	Խորհրդական Աժդահակի: Վեց այլ խորհրդականներ:
ԿՈՒՐՈՒՇ	Թագաւոր պարսից:
ՊԱՀԱԿՆԵՐ:	
ՄԱՐԴՊԵՏ:	
Մերձաւորներ, Քրմապետ, Գանձապահ, Սուրհանդակ, Զինուորներ:	

Գործողութիւնը կատարուած է Արմաւիրում և Երասխանում:

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻԱԾ

Տիգրանի պալատը

Բեմի ետեից լսում են ձայներ՝ «կեցցէ Տիգրան թագաւոր» որ կրկնում են մի քանի անգամ: Մտնում է Տիգրանը պատերազմական զգեստով՝ չաղթութիւնից վերադարձած: Դահլիճում սպասող պալատականները նույնպէս կեցցենքով են ընդունում թագաւորին:

ԵՐԵՒՈՅԹ I

ՏԻԳՐԱՆ, ԳՐՄԱՊԵՏ, ԳԱՆՁԱՊԱՀ, ՄԵՐՁԱԽՈՐՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Ողջոյն բոլորիդ:

Ծնորհակալ եմ, կարող ատուածներ,

Ձեր օգնութեամբ միայն չաղթեցի

Ես իմ թըշնամուն: Ձեզ եմ պարտական

Իմ ժողովրդի անհուն ցրնծութիւն

Եւ զոհութիւնը, որոնց ձայներից,

Ինչպէս մրրկից, հըպարտ եւ ուրախ:

Ահա ծածանւում են չաղթանակի

Դրօշակները պալատիս առջեւ

Բազմութեան զբլխին: Ձեզ եմ պարտական

Եւ իմ սիրելի մերձաւորներիս

Համակրրական այս խրոխտ «կեցցէն»,

Որից ոչ տա՛խա հըրձւում է իմ սիրուն:

Մեծդ քրմապետ, սուրբ մահեաններում

Հայր Արամազդին թող մատուցանեն

Գերընտիր զոհեր և օրհներգութեամբ
Շընորհակալութեան մեր յայտնութիւնը
Երկինք հասցընեն, մինչև երկնացին
Հօր բնակարանը: Բարի ասուածը
Մեզ չի մոռանալ և ապագայում:

ՔՐՄԱՊԵՏ

Լրտում եմ, արքայ:

ՏԻԳՐԱՆ

Իսկ դու պատւական
Իմ գանձապահըս, թըշնամուց առատ
Բոլոր աւարի արծաթ ու ոսկուց
Բաժին կը հանես ամբոխի համար,
Անձրևի նըման կըշաղտաս նորան
Աղքատ չըքաւոր խուժանի առաջ:
Իսկ նոքա որոնց սիրելիները
Սուրբ հայրենիքին զոհաբերւելով
Արիւնաթաթախ ընկան դաշտերում,
Մըխիթարեցին արդէն արքայի
Կարեկցական ջերմ արտասուքներով
Եւ առատաձեռն խոստումներով,
Որոնց կատարելն յանձնում եմ դարձեալ
Ես քեզ, մըտերիմ իմ գանձապահիս:

ԳԱՆՁԱՊԱՀ

Պատրաստ եմ տէր:

ՊԱՆԱՏԱԿԱՆ (ցոյց տալով զկտի փողոց)

Մեծափնռ արքայ...

ՏԻԳՐԱՆ

Այս թիւ սուրհանդակ է այսպէս արադ
Կարծես բազէի թւերից կըլսած
Գէպի արքունիք ձիով սըլանում:
(մտնում է համբաւաբերը):

ՀԱՄԲԱՒԱՐԵՐ

Տէր, Մարաստանից մի շքեղազարդ
 Եւ հեծելազօր փոքրիկ զօրագունդ
 Գալով մօտենում է այս պալատին
 Մի ալևորի առաջնորդութեամբ:

ՏԻԳՐԱՆ

Ո՛հ, այդ ի՞նչ սառսուռ անցաւ ձեր միջից.
 Կարծես բոլորդ շանթահար եղաք
 Այս անակընկալ սորա համբաւից.
 Անվայել է քեզ այդպէս գունատուել.
 Թէպէտ ամենքըս մենք արդէն
 Յոգնած և ուժասպառ ենք,
 Բայց կարողութիւն մենք դեռ կունենանք
 Երկու Աժդահակ սըրի անցնելու:
 Գնացէ՛ք նոցա դիմաւորելու,
 Ինչպէս ընդունել հարկ է դաշնակցի,
 Պատգամաւորին—պատուով, յարգանքով:

(Գնում են):

ԵՐԵՒՈՅԹ II

ՏԻԳՐԱՆ (մենակ)

Ի՞նչ խորհուրդ ունի անըսպասելի
 Այս բանը — արդեօք պիտի խանդարէ
 Եւ թունաւորէ մեր ցընծութիւնը,
 Թէ բարեգուշակ մի լուր է բերել
 Կըրկնապատկելու մեր խընդութիւնը:
 Աժդահակը իմ դաշնակիցըն է,
 Թէպէտ մաղից է միայն կախած
 Մեր հին և խախուտ դաշնակցութիւնը:
 Բայց ահա նոքա:

ԵՐԵՒՈՅԹ III

ՏԻԳՐԱՆ, ՄԵՐՁԱՒՈՐՆԵՐ Լ ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ, ԱԺԴԱՀԱԿԻ ԽՈՐՀՐԴԱԿԻՅԸ

ԽՈՐՀՐԴԱԿԻՅԸ

Արքայ Տիգրանին

Իւր հաւատարիմ դաշնակցից ողջոյն:

(Տիգրանը գլխով շնորհակալութիւն է ցատնում)

Մըշտընջենաւոր երջանկութիւն է

Յանկանում Մարաց արքան դաշնակցին:

ՏԻԳՐԱՆ

Եւ մեր կողմանէ հանգիստ երկար կեանք
Ողջոյն կը մաղթէք դուք մեր թագակցին:

Բայց երկբայութիւնն ու կասկածանքը

Խիստ նեղում են ինձ և ես անհամբեր

Ըսկասում եմ: Շուտ յայտնեցէք դուք ինձ

Ի՞նչ խորհուրդ ունի այս յանկարծական

Ձեր զալուստը:

Ձը լինի դարձեալ զազանաբարոյ

Դըրացիներդ, ամենադաժան

Աւերիչ ժանդարմը Մարաստանի,

Նոր արշաւանքով ասպետակել են

Ձեր երկիրը: Եւ դուք իմ օգնութեան

Ըզգալով կարիք...

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Ըսկիւթացիներն

Եւ պատերազմը, մեծափառ արքայ,

Այդ երկուսըն էլ յիշեցնում են

Մեզ արեան զեփեր, և դոցա անունն

Անպատշաճ է աւալ այսօր մանաւանդ:

Ո՛չ, մե՛ծդ Տիգրան,

Պատերազմի բօթ չեմ բերել ինձ հետ,

Այլ մի շատ խոնարհ, նւառաւ արեւմտեք

Ես պիտ առարկեմ իմ թագաւորից:
Ընդունիր, արքայ, իմ տիրոջ նամակը,
Այստեղ է նորա սրտի փափագը:

(Տիգրանը կարդում է նամակը)

Ո՛վ զո՛ւք, երկնային հըզօր աստուածներ,
Համաձայնութեան կայծեր վառեցէք
Մեր դաշնակցի վեհ վըսեմ հոգու մէջ.
Թող չ'աղոտանայ, չը մարի երբէք
Խընկելի հուրը բարեկամութեան,
Ինչպէս անընդհատ մընում է անշէջ
Բոցավառ հուրը ձեր զոհարանի
Թող պողպատ զառնան մեր ամուր կապիրն
Եւ անընկճելի, ինչպէս երկինքը,
Եւ փայլուն ու ջերմ ինչպէս արեգը:

(Առանձին) Նա կը համաձայնէ:

ՏԻԳՐԱՆ

Բարեկամութեան

Անոյշ մի հոտ է բուրում նամակից.
Սիրելիներս, Աժդահակ արքան
Կամենալով մեր դաշըն հաստատել
Եւ հիացած քրոջ իմ Տիգրանուհու
Վայելուչ գէմքով և բարի հոգով
Թախանձանքներով խընդրում է ինձնից
Զը մերժել նորան. այլ տալ կընութեան
Բողորից սիրած պարկեշտ իմ քրոջ,
Մեծ օրիորդին: Ես իմ կողմանէ
Յօժար եմ ուրախ, մընաց նորա կամքը,
Համաձայնութիւնը: Մեր այս յարգելի
Մերունուն այստեղ դուք մեծարեցէք,
Իսկ ես — ես կ'երթամ Տիգրանուհու մօտ:

(Գնում է):

Տեսարան Բ.

Մի ալ սենեակ

ԵՐԵՒՈՅԹ IV

ՏԻԳՐԱՆ (մենակ)

Նա հասունացած է վաղուց արդէն:
Արդէն ժամանակ է ճաշակելու.
Քաղցըր պտուղներն ամուսնութեան:
Յարմար առիթըն ինքն իրան եկաւ.
Նորան զնահատել անհրաժեշտ է,
Երկպառիկ օգուտ: Ես կը զօրանամ.
Ունէի աջ թև, ձախըս էր պակաս.
Յիմայ զոյգ թևով կը թևաւորւեմ.
Թէ երկինքըն էլ ինձ ջատագովէ,
Այնժամ Հելլսնդա, մօտ է քո վախճան,
Ողբալի օրհաս: Ահա և քոյրըս
Օ', գեղեցկութեան երկնային տիպար:

ԵՐԵՒՈՅԹ V

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Եղբայրս, ինչո՞ւ այդպէս շտապով
Դու ինձ կանչեցիր:

ՏԻԳՐԱՆ

Միթէ՞ աղաւնիս

Դեռ հասած չէ քեզ ցանկալի լուրը.
Այժմ՝ երեւի նա ողջ քաղաքում
Բերանից բերան անցնում է արդէն:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Նոր համբաւ, եղբայր:

ՏԻԳՐԱՆ

Կամ ուրախալի՝

Կամ թէ վշտալի քեզ համար համբաւ.
Սակայն ինձ համար — ինձ համար անչափ
Փափագելի է:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի՞նչ օտարոտի բան է այդ, եղբայր,
Որ նա քեզ համար կարող է լինել
Անչափ ցանկալի, սակայն ինձ համար
Վըշտաբեր միայն:

ՏԻԳՐԱՆ

Սիրելի քոյրիկ,

Մարաց ալբայի այն զօրագունդը
Մի ալեորի առաջնորդութեամբ
Որ ներկայացել է այսօր այստեղ,
Քո համաձայնութեան են միայն կարօտ,
Որ քեզ իրանց մեծ թագունհի կոչեն...
Այդ արշալոյսը, որից քո դէմքը
Շառագունելով դարձաւ ծիրանի,
Գուշակում է ինձ մի պայծառ արեւ
Ապագայ կեանքիդ: Ինձ ասան, քոյրիկ,
Ձէի՞ր ցանկանալ գալիք օրերըդ
Անցընել այնպէս, ինչպէս թագունհին
Քո եղբոր հետ: Ո՛հ, ինչո՞ւ այդպէս խիստ
Դու շրվիթեցիր, սիրելի քոյրիկ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Խոստովանում եմ: Այս երկնքի տակ,
Սիրելի եղբայր, մի՞թէ մի հառ կոյս
Պատահել է քեզ, ձեր զոյգի նրման

Երջանիկ կեանքին որ նախանձացոյց
Զը լինէր երբէք, ամուսնութիւնը
Իւր նւիրական իղձը չ'համարէր:

ՏԻԳՐԱՆ

Շընորհակալ եմ, սիրելի քոյրիկ —
Այդ խելօք անկեղծ խօսքերի համար:
Պատելի հիւրը քո հաւանութեան էր միայն մնում
Իսկ այնուհետեւ երբոր դու արդէն
Համաճայեցիր...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Օ'հ. ես հեռանամ

Իմ հայրենիքից: Ո՛չ, Տիգրան, երբէ՛ք:

ՏԻԳՐԱՆ

Այդ ի՞նչ եմ լրսում:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Սիրելի եղբայր,

Ես երջանիկ եւ զոհ եմ արդէն
Այստեղ, հարազատ այս երկրնքի տակ,
Այստեղ հայրական տանիքի ներքոյ
Ազգականներիս ուրախ շըրջանում:
Այստեղ կամենում եմ միայն ապրել,
Այստեղ միմիայն կուգէի մեռնել:

ՏԻԳՐԱՆ

Տիգրանուհի —

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Օ'հ. այստեղ միմիայն

Կարող եմ տեսնել մըխիթարական
Ու պայծառ դէմքեր, միմիայն այստեղ
Կարող եմ խընդալ, այստեղ միմիայն
Լինել երջանիկ:

ՏԻԳՐԱՆ

Բայց մերժե՛լ նորան —

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Եթէ քո քրոջ բաղտաւորութիւնը
Թանկ է քեզ համար, թէ դա է միայն
Ըստիպում քեզ ինձ այդպէս յորդորել,
Օ, աղաչում եմ, մի՛ շարունակիլ,
Թող դու այդ մըտքերը...

ՏԻԳՐԱՆ

Է՛հ դու իմ հոգեակս,
Դու անփորձ ես դեռ, կարծում ես այլ ուր
Ձը կայ խընդութիւն: Եթէ տեսնէիր դու եկբաւտանը
Օ՛, նա գըրախտ է, գարնան միջոցին
Կատարեալ օրրան է վայելչութեան:
Ողջ արեւելքի թագակիրները
Միշտ աչքը տընկած այն եօթըներանդ
Եւ բըլուրադիր քաղաքի վերայ...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ես ի՛նչ եմ անում այնպիսի դըրախտ...

ՏԻԳՐԱՆ

Այնտեղ կը լինես դու մեծ թագունհի
Ամբողջ պետութեան: Եւ Աժդահակը,
Իմ դաշնակիցը զոյգ աչքի նըման,
Քեզ կը խնամէ և կը փայփայէ,
Եւ դու երջանիկ...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ո՛չ, ո՛չ, թագաւոր.

Այնտեղ յաւիտեան դըժբախտ կը լինեմ,
Ողջ կեանքըս այնտեղ կը լինի միայն
Վըշտերի մի շարք: Արեւը գըլլիս

Կերևայ խաւար: Սէր, յոյս, մըխիթար
 Օտար կը մընան տանջւած իմ հոգուն
 Կը կարճեմ օրերս ինչպէս տարազիր
 Թըշւառ և լըքեալ: Այնտեղ կը թըմրեմ,
 Ինչպէս մի ծաղիկ, պարարտ, մայրենի
 Հողիցըն հանւած: Այնտեղ կը թռչնեմ
 Եւ դեռ վաղօրօք կիջնեմ գերեզման:
 Աղաչում եմ ես...

ՏԻԳՐԱՆ

Քո մերժումը, քոյր,

Բարի հեռւանք չէ կարող բերել
 Քո հայրենիքին: Այդպէս անպայման
 Նորան պաշտելով, անգիտակցաբար դու վէրք կը բանաս
 Նորա սրբաի մէջ. մեր կապակցութիւնը
 Դու կը խորտակես, դու կը կործանես
 Բարեկամական մեր խոխուտ կապերը.
 Իսկ այնուհետեւ այս անդորրութեան
 Եւ խաղաղութեան, որ վաստակեցինք
 Մենք հազարների թափած արիւնով,
 Կը փոխարինէ ճակատամարտի
 Բուռն փոթորիկ, կըսիւ, կոտորած.
 Մեզ այնուհետեւ գուցէ այցելեն. (լուծթիւն)

(Տիգրանուհին լալիս է)

Իսկ ընդունելով՝ դու կամրապընդես
 Մեր դաշնակցութիւնը. մենք երկոքեանս
 Կը զօրեղանանք և մեր անունը
 Աշխարհի բոլոր ծայրերում կը յիշւի
 Ահով ու զոհով: Մեր գըլուխները
 Մինչև իսկ եթերք մենք կը հասցընենք,
 Ինչպէս այն Աւագ և Կըրտսեր Մատիս:
 Եւ հըսակաւոր հըպարտ Հեղաղան
 Իւր գոռոզութեան զահիցը իջած,
 Ինչպէս մի լատրուկ իւր տիրոջ առաջ

Կամ թէ կախարդած չար օձի նըման
Դողդոջուն լեզուով մեզ կը պաղատէ
Խընայել իրան: Ահա նամակը.
Լըսիր իմ հոգեակ:

«Յայտնի է քեզ, սիրելի եղբայր, որ սիրելիների բազմանալուց
աւելի շահաւէտ բան չը կայ մեր աստուծապարզ և կեանքում, նամա-
նաւանդ եթէ հօօր, քաջ և բանիմաց են բարեկամները: Այսպիսով
արտաքին խռովութիւնները անկարող են յարձակւել մեզ վերայ: Ուստի
այս բոլորը ինկատի ունենալով՝ ես կամեցայ աւելի խորագոյն և հաս-
տատուն դարձնել մեր սէրը»: (Տիգրանուհին լալիս է):

«Բայց այս կը լինի երբ ինձ կնութեան կը տաս Հայոց մեծ օրի-
որդին, քո քրոջ Տիգրանուհուն, և եթէ կը բարեհաճէք, նա կը լինի
թագուհիների թագուհի: Ո՛ղջ եղբր, մեր սիրելի եղբայր և թագակից»:
(Լուսթիւն) Ինչո՞ւ յուսահատ հեկեկում ես դու

Եթէ զըժւարին ծանր է այդքան
Թողնել հայրենիք, թող լինի այնպէս,
Ինչպէս կամքըդ է, ըստիպում չեմ քեզ:
Երթամ ես ուրեմն...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ըսպասիր եղբայր: Ասա ինձ, խընդրեմ
Միթէ մերժելով Մարաց արքային՝
Նորա զայրոյթը մենք կը յարուցանենք.
Միթէ այսպիսով ձեր բոլոր կապերը
Կը քակւեն բնաւ:

ՏԻԳՐԱՆ

Զը գիտեմ, քոյրիկ:

Իմ ասելիքը արդէն ասեցի:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Եթէ այդպէս է, եթէ մի կնոջ
Մերժումից միայն կախած է հաղար
Մարդկանց անողոք ճակատագիրը,
Ես չեմ կամենում... ես համաձայն եմ

Թող Ասուածը տայ, որ փռշմանելու
Առիթ չ'ունենանք:

ՏԻԳՐԱՆ

Շնորհակալ եմ, սիրելի քայրիկ,
Անմահները տան, որ արտառուքը,
Որ ջերմ հոսանքով երեսդ թրջեց,
Լինէր առաջին վերջին արցունքը:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Երթամ Զարուհուն իմ վիշոքը յայտնեմ:
Բայց թւում է ինձ, որ դու քըշում ես
Աքսորում հեռու ինձ օտար աշխարհ,
Որտեղից էլ դարձ չը կայ ինձ համար:
Կամ թւում է ինձ, որ հեռանալով
Իմ հայրենիքից՝ վերջին հըրածելտ
Կեանքիս եմ տալիս. կամ թւում է ինձ,
Ինչպէս բանտարկեալ պիտի տւայտեմ
Ես շըղթայախալ, անյոյս, մոռացւած:
Ո՛հ. այդ քո զէմքը թող չը մըռայլի—
Ես համաձայն եմ. ես պարտաւոր եմ
Համաձայնելու: (Գնում է):

ԵՐԵՒՈՅԹ VI

ՏԻԳՐԱՆ (մենակ)

Ո՛վ հայր Արամազդ,
Դու, որ աշաբւրջ հեռեւում ես միշտ
Իմ իւրաքանչիւր ձեռնարկութեան մէջ,
Այս անգամ քարձեալ դու բարեխընամ
Ողորմած եղիր: Քո գըթութեանը
Ապաւինում եմ ես այսուհետեւ—
Ձը լինի զըղջման մի դառն առիթ
Ինձ ներկայանայ անըստաւելի:
(Մտնում է Զարուհին Տիգրանուհու ձեռքից բռնած):

ԵՐԵՒՈՅԹ VII

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԶԱՐՈՒՀԻ

ԶԱՐՈՒՀԻ

Քարասիրտ Տիգրան, մի՞թէ չեն շարժում
Քեզ այս խրչճուկի արտասուքները
Եւ հեկեկանքը: Թւակըտուր ես
Արեւ սոխակիս—

ՏԻԳՐԱՆ

Իսկ Տիգրանուհին
Մի՞թէ նա այնքան փոփոխամիտ է:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ո՛չ, ո՛չ, Թագաւոր, այդպիսի կոչման
Արժանի չէ նա:

ԶԱՐՈՒՀԻ

Իսկ ես ասում եմ
Թէ երկու աչքով էլ սա կոյր լինի...
Մաշւած ու փրտած այն ալեւորին
Կընթեան տալու մենք աղջիկ չունինք,
Եւ թողնելու չեմ...

ՏԻԳՐԱՆ

Եթէ շոշափեն
Կընոջ պատիւը, թող նա չը թողնէ.
Եթէ իւր կըրճքից կաթնակեր մանկան
Գան, չափըշտակեն, թող նա չը թողնէ.
Բայց թէ չղացած խանդարեւ դործը
Որ պիտի աճէ մեր ամբողջ ազգի
Եւ բարդաւաճման և բաղդի համար,
Միւսնոյնը չէ՞ աճակերին ասես—
Ցըրեցէք, ամպեր, ձեր անձրևները

Պիտանի չեն մեզ, երաշտութիւնը
 Համատարած միշտ թող թագաւորէ
 Աշխարհիս վերայ, թող ամենեւին
 Զընջւենք սովամահ:
 Բայց թէ քաղցր է ձեզ համար այդքան
 Տեսնել մարդկային արեան վրտակներ—
 Արէք ինչ կուգէք, և ես այլ ևս
 Հեչ մի գործ չունեմ ձեզպէս ինքնասէր
 Եւ անհեռատես կանանց սըրտի հետ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Մի յուզւիլ այդպէս,
 Սիրելի եղբայր: Ես պատուիրել եմ
 Արդէն պատրաստուն ինձ ուղեկցելու
 Իմ նաժիշաները: Նոքա ինձանից
 Բաժանւելու չեն, ես էլ — նոցանից:
 Եւ կուղևորւենք հէնց նոյն իսկ այսօր:

ՏԻԳՐԱՆ

Ո՛չ. դեռ քանի օր մենք պիտի տօնենք...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Գալիք վիճակիս անյայտութիւնը
 Ինձ տանապատիկ ծանրը է թւում
 Քան իմ վիճակը: Ես կամենում եմ
 Շուտով հանդիպել նորան:

ՏԻԳՐԱՆ

Քոյրիկըս...

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Վրճուած եմ, այո, ես այսօր կերթամ:

ՏԻԳՐԱՆ

Բարի ճանապարհ: Ուրեմն երթամ
 Հազորդեմ այս լուրը և հրամայեմ
 Ըսկսեն խնձոյք և խրատիճանիք
 Շնորհաւորելու ձեր հարսանիքը: (Գնում է):

ԵՐԵՒՈՅԹ VIII

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԶԱՐՈՒՀԻ

ԶԱՐՈՒՀԻ

Այդ ի՞նչ ես անում դու, Տիգրանուհի.
 Երևակայիր ձվ է լինելու քո ամուսինը,
 Ծերացած, մարած այն զառամեալը.
 Խոր կրնձիւները արդէն ծաւել են
 Նորա երեսին: Նա գերեզմանի
 Մօտին է կանգնած: Միամտաբար
 Ինքը քո կեանքով դու մի աւերիւր
 Երջանկութիւնըդ: Փոխիւր վրձիւըդ,
 Ես կարծում էի հընարաւոր է
 Դարեւոր սօսին արմատով կորզել
 Իւր պարարտ հողից, բայց Տիգրանուհուն
 Անհընարին է պոկել ջրլատել
 Իւր հայրենիքից:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Բաղդի հարածը

Միշտ անտանելի, ծանր է թըւում,
 Երբ գալիս է նա անգուշակելի,
 Որքան էլ թեթեւ լինի հարածը:
 Ես արդէն հաշտում եմ վիճակիս հետ:
 Կ'երթամ:
 Կ'երթամ, բայց այնտեղ ուր ոչ մի բան
 Ինձ չէ գրաւում, ես այնտեղ կապրեմ
 Երևակայութեան մի ճոխ աշխարհում,
 Որ բնաւ ըստոր չէ այս իրական
 Առօրեայ կեանքից: Իմ հայրենիքի
 Սիրելի պատկերը կը ներկայանայ
 Առաւել շքեղ, փայլուն գոյներով.
 Յարատե կարօտը կը բազմապատկէ

Իսկական արժէքն առարկայի
 Քայց թէ անհրաժեշտ է երբեմնապէս
 Յընորքըն էլ իրականանան,
 Կը տանեմ ինձ հետ հեռու Մարաստան
 Յիշատակներ իմ հայրենիքից:

ԶԱՐՈՒՀԻ

Լըսիր ինձ, հոգիս:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Անգին Զարուհի, աղաչում եմ ես—
 Զուր մի աշխատիլ դու ինձ համոզել—
 Տիգրանին արդէն ես խօսք եմ տւել.
 Կամայ, ակամայ ես պէտք է երթամ.
 Ես չեմ կամենում
 Իմ անձնական նեղ վայելքի համար
 Սիրելի ազգըս հասցընել անկման:

ԶԱՐՈՒՀԻ

Անմեղ, միամիտ մի՛ լինիր այդքան,
 Քո մի հատ խօսքից չէ կարող կորչել
 Ամբողջ ժողովուրդ: Քեզ ինչ ասում եմ՝
 Դու նորան լըսիր -- արած խոստումըդ
 Ետ կառնես շուտով:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Երբէք, Զարուհի:
 Երթանք պատրաստենք: Այդպէս վէճերով
 Միայն իրար սիրտ մենք կը պըղտորենք:

ԶԱՐՈՒՀԻ

Քո յաճառութիւնը Տիգրանուհի,
 Նոր չէ ինձ յայտնի: Գընանք ուրեմըն:

(Գնում են):

Տեսարան Գ.

Առաջին տեսարանի պատկերը

ԵՐԵՒՈՅԹ IX

ՏԻԳՐԱՆ, ԽՈՐՀՐԳԱԿԻՑ, ՊԱՍՏԱԿԱՆՆԵՐ

ՏԻԳՐԱՆ (մտնելով)

Բոլորիդ համար թանկագին հիւրեր
Ուրախալի լուր բերում եմ ահա.
Մեր քոյրըն արդէն համաձայնել է,
Նա խելոյն և եթ կը զայ աջատեղ:

ԲՈՒՈՐԵՐԵԱՆ

Կեցցէ Տիգրանուհի:

ՏԻԳՐԱՆ

Բայց նա ինձ յայտնեց իւր ցանկութիւնը
Հենց այսօր և եթ
Ճանապարհ ընկնել գէպի Մարաստան
Էլ մինալ աջատեղ տօնախմբելու
Արքայապալել իւր հարսանիքը
Կըտրակի մերժեց: Թէ ինչու է նա
Այդպէս կամենում, իւր դադանիքն է դա —
Նորա վըճիւրը քաջ յայտնի է ինձ,
Հակառակ է ձեր և ժողովրդիս
Եւ մեր ամենիս ցանկութիւններին:
Բոլորեքեանքս
Մենք կուգենալինք զեռ. երկար խընդալ
Եւ ուրախանալ. տարաբախտաբար
Նա չէ կամենում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՅ

Հազար բերան փնտք բարձրեալներին,
Իմ ուրախութեան էլ չը կայ սահման
Եւ հաստատ զիտեմ - իմ տիրոջ համար
Աչքի ազիզ լոյս ես պիտի գտնեամ:

ՏԻՓՐԱՆ

Սենեկապետին այստեղ կոչեցէք
(մտնում է սենեկապետը)
Խընճոյքի համար պատրաստ է արդէն
Բացօդեայ, կանաչ մեր ձեմէլիքը:

ՍԵՆԵԿԱՊԵՏ

Շատ շուտով պատրաստ կը լինի արքայ:

ՏԻՓՐԱՆ

Գլխն ու բեմին: (Սենեկապետը գնում է)

ԽՈՐՀՐԴԱՅԻՅ

Կարծի թաղաւոր, ես, նստա ծառայ,
Քո սաների տակ այս չրնչին փռչին,
Դարձեալ մի խրնդրանք պիտ մատուցանեմ
Իմ թաղաւորից եւ ձեր դաշնակցից:
Նա աղաչում էր
Յանուն ձեր վրեժ՝ եղբայրսիրութեան,
Մեծ օրիորդին ուղեկցել մինչեւ
Մայրաքաղաքը, մեր Եկրատանը:
Խըստադահանջ մի հըրովարտելով
Հըրամալում է սմեն մէկի տան -
Հարուստ լինի նա թէ յեալին աղքատ -
Իւրաքանչիւրի
Տանիքից զօրգեր, կապերաներ կախել,
Եւ, քաղաքային դարպասից ըսկառծ
Մինչեւ արքունիք, բոլոր փողոցներն
Մածկել զօրգերով եւ կապերաներով

Օրինազանցը պիտի գըլխաուի
 Իսկոյն, անյապաղ: Մեր առաջ կեննեն
 Դիմաւորելու և Աժդահակը,
 Եւ աւագանին և զօրականները:
 Եւ խոնարհ ծառադ այս նըպատակով
 Արդէն բերած է երկուսիդ համար
 Քաղաւորական ասպանոցիցը
 Ամենաընտիր մի զոյգ երիվար.
 Որ «արքայական աչքեր» են կոչոււմ
 Կամ թէ հրեղէն բնաւոր ձիերո:

ՏԻԳՐԱՆ

Շնորհակալ եմ: --

Նղբայրական սէր և պարտքըն անշուշտ
 Ձեզ հետ կը տանեն ինձ մինչև Հայոց
 Մարաց սահմաններն և միայն այդքանու
 Իսկ այնուհետև «բարի ճանապարհ»
 Այնտեղ մաղթելով, ես դէպի զահըս
 Կը վերադառնամ, ուր ինձ կը կոչեն
 Բազմաթիւ հոգսերըն կառավարութեան:
 Զի լինիլ քոյրըս, որին ես վըստահ
 Ըստանձնում էի իմ երկըրների
 Ղեկավարութիւնն, չը կայ արժանի
 Իմ տեղակալըս, որ ինչպէս արթուն
 Աչքաբաց արծիւ, սիրով պահպանում
 Եւ խընամում էր իմ ժողովուրդըս,
 Երբ պատերազմի բուռն մըրըրիկը
 Յափըշտակում էր ինձ իմ զահոյքից.
 Այլ ևս չը կայ իմ Տիգրանուհին...
 Իմ հաւատարիմ աթոռակիցը:

ԵՐԵՒՈՅԹ X

ՏԻԳՐԱՆ, ՏԻԳՐԱՆՈՒՀԻ, ԶԱՐՈՒՀԻ, ՊԱԼԱՏԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՆԱԺԻՇՏՆԵՐ

ՏԻԳՐԱՆ

Ահա իմ քոյրը և քո տիրուհին

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ (դիտի ողջսն ծնկալոք)

Զեր խոնարհ ծառանս

ՏԻԳՐԱՆ

Յարգելի ծերուկ, դու, որ իմ քրոջ առաջնորդն ես,
Մինչև եկբատան ես քեզ եմ յանձնում
Սորան իմ ամբողջ եղբայրական սէրըն,
Իմ եղբայրական ամբողջ գորովը:
Անգին գոհար չեմ խըլում իմ թագից
Քո ձեռը տալիս, այլ կըրծքիս տակից
Սիրալս եմ պոկում և քեզ եմ յանձնում:
Իմ սըրտից աւելի եմ ուզում սորան...
Խընամես սորան: Որպէս սիրելի,
Պաշտելի էր սա իւր հայրենիքում,
Նոյն սէրը դարձեալ և նոյն յարգանքը
Պիտի վայելէ ձեր հայրենիքում:

ԽՈՐՀՐԴԱԿԻՅ

Մեր աստուածները մեզ լինեն վըրկաց,
Ինչպէս դիցունուն մենք պէտք է պաշտենք
Մեր մեծ Տիրունուն-նոյնպիսի խորին
Զերմեռանդութեամբ և պատկառանքով
Նորա ըզգեստի փեշից կը համբուրենք,
Ինչպիսի խորին երկիւղածութեամբ
Մենք մօտենում ենք սուրբ ասորւշանի
Վառ գոհարանին և համբուրում ենք
Նորա մի քանդակ կամ մի դրըւագը:
Մեր թագաւորի զոյգ աչքը մի կողմ

Եւ զո՛ւ, թագուհի, միւս կողմ մեզ համար:
 Մենք բոլորեքեան հըլու հըպատակ,
 Հընազանդ ենք քեզ, քո սուսերի տակ
 Մեր սրտանոցը, քո ձեռին զարձեւալ
 Մեր ողորմութիւն:

ՏԻԳՐԱՆ

Սիրելի քոյրիկ:

Օ, ի՛նչու սիրուն այդ ծագկափունջը
 Թըրջում ես այդպէս քո արտասուքով
 Վերջին անգամ՝ զու մեր շըրջանում—
 Եւ այն էլ այդպէս: Մի՛թէ, սիրելի
 Քո հայրենիքին և քո եղբորը աղի արտասուք
 Դու պիտի թողնես վերջին չիշտտակ:
 Գոնէ մի անգամ խընդադէմ նայիր
 Մեզ վերայ, քոյրիկ: Քո այդ թախիծը
 Բոլորիս վերայ թախիծ է բերում.
 Տէս բոլորեքեանըն էլ կորագըլուխ
 Մըխիթարեան ձայնիդ են կարօտ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Աղաչում եմ ես, ինձ չը մոռանաս
 Սիրելի եղբայր: Եւ զու, Զարուհի,
 Եւ զուք, յարգելի իմ ազգականներ,
 Իսկ ես բոլորիդ պատկերն այստեղ կը պահեմ
 Այստեղ իմ սրբոտում մինչև իմ մահը:

ԽՈՐՀՐԻԱԿԻՅ

Թագուհի,

Թէ իմանայիր, ի՛նչ ըսքանչելի,
 Դիւթական աշխարհ զու պիտի երթաս,
 Կամ ի՛նչ փառահեղ մի ասպարէզ է,
 Առաջիդ բացում, զու լայու տեղակ
 Թուեր կուղէիր արագ թըսիչքով
 Դէպի այն աշխարհը սըլանալու:

Կը տեսնես շուտով և ինքրիկ անձամբ
 Դու կը հաստատես այն՝ ինչ խօսքերով
 Դըժւարանում է պատկերացընել
 Քո խոնարհ ծառան:

ՍԵՆԵԿԱՊԵՏ (մտնում է)

Խընճոյքի համար արդէն պատրաստ է
 Բոլորը, արքայ:

ՏԻԳՐԱՆ

Ուրեմն երթանք,

Սիրելի հիւրեր:

(Գնում են):

(Կը շարունակւի)

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

Քարգմ. 1) Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հում, 9 յունարի 1883 թ.

Սրանից մի քանի ամիս առաջ ես պատահեցի իմ ընկեր ուրարեկամ Իւզէֆ Մենատինսկուն, որ վերջերքս աչքի ընկնող զիրք է գրաւել մեր գրողների մէջ: Մենատինսկին ինձ հետ գրականութեան մասին խօսելիս ահադին նշանակութիւն էր տալիս յիշատակարաններին: Նա ասում էր, թէ իրանից յետոյ յիշատակարան թողնող մարդը տալիս է ապագայ հոգեբաններին ու վիպագիրներին ոչ միայն իւր ժամանակակից բարքերի պատկեր, այլ և միակ մարդկային դոկումենտ, որին կարելի է հաւատ ընծայել: Նա զուշակութիւն էր անում, թէ ապագայի բեղբորիստիկական գրաւորները անպատճառ յիշատակարանի ձև կ'ընդունեն, վերջապէս նա պնդում էր, թէ ամեն մի յիշատակագիր իւր յիշատակարան գրելովը աշխատում է հասարակութեան օգտին և դրանով արժանի է պաշտօնում նրա երախտագիտութեան:

1) Քարգմանած է ռուսերէն լեհերէն բնագրի համեմատութեամբ Լեհերէնից ռուսերէն թարգմանել է „Русск. Миселъ“ ամսագրի խմբագիր Վ. Լաւրով:

Նրեսան ու հինգ տարեկան եմ, սակայն չեմ կարողանում չի-
շել անգամ մի ամենաչնչին ծառայութիւն, որ ես մատուցած լինեմ
հասարակութեանը, գուցէ այն պատճառով, որ համալսարանն աւար-
տելուց յետոյ ես շարունակ, եթէ չը հաշուենք մի քանի կարճատե-
ւր դմիջումները, հայրենիքիցս դուրս եմ ապրել: Չը նայելով իմ
սկեզարկականութեանը, որ այնպէս է ծծւել իմ մէջ ինչպէս հե-
ղուկը ծծւում է սպունդի մէջ, վճռել եմ յիշատակարան գրել: Եթէ
այդ իսկական գործ է, եթէ մէկն ու մէկին կարող եմ ծառայու-
թիւն մատուցանել, ես ուրախութեամբ կը մատուցանեմ թէկուզ
հէնց այդ ձևով: Բայց կարող եմ բոլորովին անկեղծ լինել: Նս սկսում
եմ այս յիշատակարանը ոչ միայն վերոյիշեալ նկատումներով, այլ և
այն պատճառով, որ այդ միտքը ինձ հետաքրքրեցնում է: Մեկտողին-
սկին պնդում է, թէ բաւական է որ մարդ մի անգամ սովորի իւր
մտքերն ու տպաւորութիւնները գրի անցնել, էլ այնուհետեւ այդ
գրադմունքը կը դառնայ նրա կեանքի զարձութիւններից մէկը: Եթէ
հասկառակը դուրս գայ՝ թող այն ժամանակ Աստուած ողորմի իմ յի-
շատակարանին: Նս ինքս ինձ խաբելիս կը լինէի, եթէ կատարեալ
հաւաստիութեամբ չը նախատեսէի, որ այն ժամանակ յիշատակարանս
կը կտրւի չափազանց ձգւած լարի նման: Նս շատ նեղութիւն ցանձն
կ'առնեմ հասարակութեան համար, բայց ձանձրանալ հասարակու-
թեան համար—ոչ: Այդ ես չեմ անիլ, որովհետեւ չեմ կարող անել:

Դրա փոխարէն վճռել եմ չը վհատուել սկզբի դժւարութիւննե-
րից. կ'աշխատեմ քիչ-քիչ ընտելանալ ու սիրել այդ աշխատանքը:
Մեկտողինսկին մեր խօսակցութիւնների ժամանակ շարունակ կրկնում
էր, «միայն թէ ոչ մի ոճի յեռեքից մի ընկնիլ, գրողավարի մի գրիլ»:
Կատարկ բան է: Նս շատ լաւ հասկանում եմ, որ՝ որքան մեծ է
գրողը այնքան պակաս գրողավարի է գրում նա, բայց ես
դիլլեւանտ եմ և ձեւը ինձ չի հնազանդում: Սեպհական փորձովս
գիտեմ, որ շատ մտածող ու բռն կերպով զգացող մարդու շատ
անգամ թւում է, թէ բաւական է որ մտածածն ու զգացածը գրի
անցնի և չը տեսնւած բան դուրս կը գայ... Բայց հէնց որ այդպէս
կարծող մարդը նստում է գրելու, իսկոյն մի որ և է ստիպատիական
ձեւի է ենթարկւում,—թէկուզ հէնց իւր համար գրելիս լինի,—
սկսում է զանազան արեւստական դիրքեր ընդունել, յիմար ճոռոմա-

բանութեան յետեից է ընկնում, մտքերը զլիսումը դէմ են առնում ու չեն ուզում զրի անցկենալ... և այն ժամանակ կարելի է ասել, որ ոչ թէ զլուխն է զեկավարում զրիչը, այլ զրիչը՝ զլուխը, և զեկավարում է չիմար, անշնորհք կերպով: Նս էլ հէնց դրանից եմ վախենում, և վախենում եմ գլխատրսպէս այն պատճառով, որ եթէ փորձառութիւն, ճարտար լեզու, զեղարեւոտականութիւն, բանաստեղծական պարզութիւն և այլն չ'ունեն, յամենայն դէպս զուրկ չեմ ճաշակից, և իմ ոճը կարող է այն աստիճան զզուելի դառնալ ինձ համար, որ անհնար լինի յիշատակարանս շարունակելը: Բայց այդ յետոյ կ'երևի:

Այժմ ես ուզում եմ սկսել յիշատակարանս կարճատև կենսագրական յառաջաբանով: Այդ անում եմ մասամբ նրա համար, որ ուշք ու միտքս ամփոփեմ, մասամբ էլ ուրիշ նկատումներով: Մեկտառիսկին ասում էր, որ յիշատակարանս մէկն ու մէկի ձևւքը կ'ընկնի ու մի բանի պէտք կը գա: Իսկն ասած, ես կարող էի բոլորովին անտարբեր կերպով վերաբերել այդ բանին, բայց այդ ինձ թելադրած է (ինչպէս այժմ ասում են) և ես չեմ կարողանում ազատուել այդ թելադրութիւնից ու կը գրեմ այնպէս իբր թէ միայն ինձ համար չեմ գրում: Ահա թէ ինչու ես կարճատև կերպով կը պատմեմ անցեալս, որպէսզի ներկաս ու ապագաս աւելի հասկանալի լինեն: Արդեօք այդ երբ և իցէ և ում և իցէ օգուտ կը բերի,—այդ՝ անկեղծ ասած՝ հոյ չէ ինձ:

Անունս Ահոն Պրշովսկի է. ես, ինչպէս վերեն ասացի, երեսուն ու հինգ տարեկան եմ: Մեր ընտանիքը մինչև այժմ պահպանել է իւր բաւական մեծ հարստութիւնը: Գալով ինձ, ես ստացած ժառանգութիւնս չեմ աւելցնիլ, բաց չեմ էլ վատնիլ: Եւ զրութիւնս այնպէս է, որ կարօտութիւն չունեմ ձգտել որ և է բարձր զիրք ձեռք բերել կամ ամբոխը ճղելով ճանապարհ բաց անել ինձ համար, փշարար ու ֆուսակար սովորութիւններ չունեմ,—կեանքում ես սկեպտիկ եմ և գիտեմ, թէ ինչ բան ինչ արժէք ունի կամ, ուրիշ խօսքերով ասած, գիտեմ, որ բոլոր բաներն էլ շատ չնչին արժէք ունեն:

Մայրս իմ ծնեալուց մի շաբաթ անցած մեռել է: Հայրս, որ իւր արեւի պէս սիրելիս է եղել նրան, ընկել է մեկամղձութեան մէջ: Վիէննայում մի քիչ լաւանալուց յետոյ նա այլ ևս չի ուզեցել վերա-

զատնալ իւր տոհմական կարածը (այնտեղ ամեն բան կը չլիցնէր նրան իւր կրած ծանր կորուստը), զիջել է Պլոշովը քրոջը, իսկ ինքը 1848 թ. տեղափոխել է Հոմա՝ ուր շարունակ ապրել է մինչև այժմ չ'ուզենալով հեռանալ հանգուցեալ կնոջ դերիզմանից։ Մոռացայ ասել, որ մօրս մարմինը նա տեղափոխել է և թաղել է Campo Santo-ում։

Բաբունս փողոցում՝ ամէք տուն ունենք, որ կոչւում է Casa Osoria՝ մեր տոհմանշանից առած անունով։ Այդ տունը մասամբ թանգարան է չլիցնում, — հայրս հարուստ հաւաքածու ունի զանազան հնու թիւնների՝ մանուսանդ քրիստոնէութեան առաջին զարերից մնացածների։ Այժմ այդ հնու թիւնները զարձել են նրա կեանքի ուղիցոյց ասողը։ Երիտասարդ ժամանակը նա ամեն կողմից փայլուն մարդ է եղել։ Ազնական տոհմի և հարստութեան շնորհիւ նրա առաջ բաց են եղել բոլոր ճանապարհները, ամենքն տեսիլս են եղել որ նա փայլուն ապագայ կ'ունենայ։ Եւ այդ լսել եմ՝ նրա համալսարանական (Եւրոպիի համալսարանի) նիւերներից։ Հայրս այն ժամանակ շատ պարագելիս է եղել փիլիսոփայութեամբ և ամէնքը այն կարծիքին են եղել, որ նրա անունը ժամանակով պէտք է հռչակէր այնպէս ինչպէս Յեշովսիու, Արեւելի և այլն անունները։ Բայց աշխարհային կեանքը և այն չը տեսնւած յաջողութիւնը կանանց շրջանում, որ նա ունեցել է, հեռացրել են նրա ուշք ու միտքը գիտնական զբաղմունքներից։ Դահլիճներում՝ նրան անանկիս են եղել «Léon l'invincible» (Աւանանկալի)։ Սակայն հայրս, չը նայելով իւր՝ աշխարհային շրջաններում ունեցած յաջողութեանը, շարունակել է պարսպել փիլիսոփայութեամբ, և բոլորը ապասելիս են եղել, որ նա այսօր-էգուց շարադրութիւն կը հրատարակի, որ նրա անունը կը հռչակի ամբողջ Եւրոպայում։

Այդ յոյսերը չ'արդարացան։ Հայրս արդէն ծերունի է, թէև եւ մինչև այժմ դեռ ևս տեսած չը կամ մի գլուխ, որ նրա գլխից աւելի զեղեցիկ ու փսեմ լինի։ Նկարիչներն էլ այդ կարծիքին են, իսկ նրանցից մէկը ինձ սրանից մի քանի օր առաջ ասաց, որ պատրիկի (патриіи) տիպի համար սեւիլ լաւ օրինակ (մոդել) երեւակայել չի կարելի։ Գիտութեան վերաբերմամբ հայրս եղել է, է և կը լինի շատ կրթւած ազա-գիլիտանա։ Արոշեալ չափով եւ հաւատացած եմ, որ բոլոր Պլոշովսիկների ճակատապիւրն է գիլիտանա լինել և մանրամասն

կը խօսեմ՝ այդ հարցի վերաբերմամբ երբ որ խօսքը գաց իմ մասին: Զօրս զրասեղանի արկղում ընկած է հնութիւնից զեղնած մի փիլիսոփայական շարադրութիւն «Երրորդականութեան մասին»: Ես աչքի անցրի այդ ձեռագիրը, — նա ինձ վրայ ձանձրութիւն բերեց: Այն եմ յիշում միայն, որ այդ շարադրութեան մէջ՝ չը գիտեմ ինչպէս, համեմատում են իրար հետ իրական (րէալական) երրորդութիւնը՝ թիւածինը, ջրածինն ու ազոտը՝ և տրանսցեղենապ երրորդութիւնը. բացի դրանից ուրիշ շատ համեմատական երրորդութիւններ կան՝ սկսած բարուց, զեղեցիկից ու ճշմարտից և վերջացնելով արամբանական հաւաքարանութեամբ, որ բաղկանում է առաջին ու երկրորդ յառաջադրութիւններից և եզրակացութիւնից, — խառնուրդ Հեգելիանական զաղափարների Գեօնէ — Վլոնսկու զաղափարների հետ, մտքի ջանք շատ ճարտար և բոլորովին սպարդին: Ես համոզուած եմ, որ հայրս երբէք չի տպիլ իւր շարադրութիւնը՝ թէկուզ այն պատճառով, որ սպեկուլատիւ փիլիսոփայութիւնը նրա աչքում աւելի շուտ է ծնանկացել քան ամբողջ մարդկութեան աչքում:

Այդ սնանկութեան պատճառն եղել է մօրս մահը: Հայրս, որ չը նայելով իւր «l'invincible» (անյաղթ) մականւանը և սրտերնւածողի հօշակին՝ չափից դուրս զգայուն ու քնքոյշ սրտի տէր մարդ է եղել, իւր փիլիսոփայութեանը բազմաթիւ սարսափելի հարցեր է առաջարկել և ոչ մի մխիթարանք, ոչ մի պատասխան չը ստանալով՝ եկել է այն համոզմունքին, որ այդ փիլիսոփայութիւնը ունայն ու անգոր է կենսական դժբախտութեան առաջ: Սարսափելի արագեղիա է եղել նրա կեանքում, երբ որ նա միանգամից զրկւել է երկու նեցուկից, երբ որ մի հարած կորստել է նրա սիրտը և ջախջախել՝ ուղեղը: Ինչպէս վերենն ասացի՝ հայրս ընկել է մեղամաղձութեան մէջ, իսկ մեղամաղձութիւնն անցնելուց յետոյ զիմել է կրօնին: Ինձ ասել են, որ մի ժամանակ նա գիշեր-ցերեկ աղօթելիս է եղել, ամեն մի եկեղեցու առաջ ծռնել է չորեկ և հասել է այն ատիճան կրօնական յափշտակութեան, որ Հռոմում ոմանք նրան զժի տեղ են դնելիս եղել, ոմանք՝ սրբի:

Երեւի դրանից նա աւելի է մխիթարութիւն ստացել քան իւր փիլիսոփայական երրորդութիւններից, որովհետեւ հեազհետէ հանգրստացել է ու սկսել է իսկական կեանք վարել: Նրա սիրոյ ամբողջ

ոյժը կետրոնացել է ինձ վրայ, իսկ էսթետիկական ու մտաւոր պահանջները դրդել են նրան ուսումնասիրել քրիստոնէութեան առաջին դարերը: Հօրս խելքը կայտատ, զործունեաց խելք է եղել, սնունդ է պահանջել: Հոռոմ մի տարի մնալուց յետոյ նա սկսել է պարսպել հնագիտութեամբ: Տէր Կալին, իմ առաջին դաստիարակը, որ երեւելի հոռնագէտ էր, հօրս դրդեց Յաւիտենական Քաղաքի պատմութեամբ զբաղել:

Մի քանի տարի անցնելուց յետոյ հայրս ծանօթութիւն սկսեց մեծ Բոսսիի հետ, — ծանօթութիւն, որ յետոյ փոխեց բարեկամութեան, — և նրա հետ միասին ամբողջ օրերով ման էր գալիս կատակոմքներում: Իւր արտակարգ ընդունակութիւնների շնորհիւ նա շուտով այնպէս տեղեակ դարձաւ Հռոմին, որ յաճախ զարմացնում էր նոյն իսկ Բոսսիին իւր տեղեկութիւններով: Մի քանի անգամ նա գրել է սաեւ ձեռքը, բայց չի կարողացել վերջացնել սկսածը և այդպէս չը վերջացրած էլ թողել է: Գուցէ հօրս ժամանակը ամբողջապէս կորչում էր զանազան հաւաքածուներ լրացնելու վրայ, բայց ինչ և իցէ շատ հաւանական է, որ նա իրանից յետոյ ոչինչ չի թողել բացի հաւաքածուներից, որովհետեւ նա ընդունակ չէ կանգ առնելու մի որ և է ժամանակաշրջանի վրայ, ընտրելու մի որ և է մասնագիտութիւն: Հեազհետեւ քարոնների միջնադարեան Հռոմը սկսեց գրաւել նրան նոյնքան սաստիկ որքան գրաւում էին քրիստոնէութեան առաջին դարերը: Կար ժամանակ, երբ հօրս զուլաւ ամբողջապէս զբաղւած էր Առլոններով ու Սրսինիներով, յետոյ նա մօտիկացաւ վերածնութեան դարերին ու վերջնականապէս սիրահարեց այդ ժամանակաշրջանի վրայ: Նախնական քրիստոնէական ճարտարապետութեան բեկորներից, չիշատակարաններից ու արձանագրութիւններից նա անցաւ աւելի ուշ ժամանակներին, բիւզանդական զեղարուեստից՝ Ֆիոզելլիին ու Ջոտտոին, նրանցից էլ՝ չինկէզենախաններին և այլն, գրաւեց արձաններով, պատկերներով, Հաւաքածուների համար այդ անկասկած օգտակար էր, բայց զրա շնորհիւ՝ չ'իրագործւած գիտաւորութիւնների շարքն անցաւ «Երեք Հռոմների մասին» լեհերէն մեծ շարադրութիւն գրելու ցնորքը, որ փայտացում էր հայրս:

Իւր բոլոր հաւաքածուները հայրս ուղում է կտակել Հռոմ

քաղաքին՝ այն անհրաժեշտ պայմանով, որ այդ հասարածուները գրեւն առանձին զահլիճում, իսկ զահլիճի զօան վրայ արձանագրւած լինի «Պօրի Պրոշովսկիների թանգարան»։ Երևի հէնց այդպէս էլ կը լինի, — ինձ զարմացնում է միայն այն, որ հայրս համոզւած է, թէ այդպիսով նա աւելի մեծ օգուտ կը բերի հասարակութեանը քան եթէ հասարածուները ստնէր իւր հայրենիքը։

Մօտ օրերս էր, որ նա ինձ ասաց.

— Այնտեղ ոչ ոք չի տեսնիլ այդ հասարածուները, ոչ ոք նրանցից օգուտ չի քաղիլ, իսկ այստեղ զալիս են մարդիկ աշխարհիս բոլոր ծայրերից և ամեն մարդ լինելից մէկի մասուցած ծառայութիւնը կը վերադրի ամբողջ Ահաստանին։

Հարկ չեմ համարում քննել թէ արդեօք այդ մասամբ արիստոկրատիական անախատութիւնից չի յառաջանում և թէ արդեօք այդ հարցի մէջ վճռական նշանակութիւն չի ունեցել այն միաբեր, որ Պրոշովսկիների տոհմանունը կը ֆնայ փորագրւած մարմարեան վրայ Յախտենական քաղաքում։ Անկեղծ ասած՝ ես կարծում եմ, որ հէնց այդպէս է եղել։ Իսկ առհասարակ վերցրած՝ իմ սկի հոգս չէ թէ որտեղ կը գտնուի հօրս հասարածուն։

Բացի հօրաքոյրս (ի դէպ՝ այս քանի օրս ես գնալու եմ նրա մօտ՝ Վարշաւա) գաղանթում է երբ որ լսում է հօրս մտադրութեան մասին, և քանի որ աշխարհումս չը կայ մի մարդ, որ կարողանայ արդեւիլ նրան իւր կարծիքը յայտնել, նա առանց այլեւայլութեան արտացոլում է իւր գայրոյթը ամեն անգամ՝ հօրս նամակ գրելիս։ Մի քանի տարի սրանից առաջ՝ Հռոմում եղած ժամանակը նա դրա հանար ամեն օր կուտւում էր հօրս հետ և կարգին կը խոսէր, եթէ որ ինձ անչափ սիրելիս չը լինէր։ Հօրաքոյրս իւր եղբորից մի քանի տարով մեծ է։ Հայրս մօրս մահից յետոյ արտասահման գնալիս բաժանւել է նրանից, — նրան թողել է Պրոշովսկի իրան վերցրել է փողը։ Հօրաքոյրս երեսուն տարի է, որ կտաւարում է կալածք և հիանալի է կտաւարում։ Նա աչքի ընկնող բնաւորութեան տէր կին է, ուստի ես կը նախընտրեմ նրան մի քանի խօսք։ Քանի տարեկան հասակում մահը գրկել է նրան նշանածից հէնց այն օրը, երբ նա պատրաստուել է գնալ արտասահման նրա մօտ, և այնուհետեւ նա չամառութեամբ մերժել է բոլոր փեսացուներին։ Մօրս մահից յետոյ

նա ուղեկցել է հօրս Վիէննա ու Հոմ, ուր ապրել է մի քանի տարի շրջապատելով եղբորս ամենաքնքրող հոգատարութեամբ: Հօրաքոյրս grande dame է՝ այդ բառի կատարեալ նշանակութեամբ, մի քիչ բանակալ է, զոտոյ է ու սիրում է փնփնթալ ամենքի վրայ, շատ ինքնավաստ է ինչպէս առհասարակ լինում են մեծ հարստութեան տէր ու բարձր հասարակական դիրք ունեցող մարդիկ. իսկ իսկապէս մարմնացած առաքինութիւն է: Նրա անդուր արտաքինի տակ ծածկւած է անդին, քաղցր սիրտ, որ սիրում է ոչ միայն հօրս, ինձ, տնեցոյց, այլ և ընդհանրապէս բոլոր մարդկանց: Նա այնքան առաքինի է, որ իմ կարծիքով առաքինութիւնը նրա համար արժանաւորութիւն չէ, — նա չի կարող առաքինի չլինել: Նրա բարեգործութիւնը ասկիւք է դարձել: Նա հայհոյում է ծերունիներին ու պատաններին կոնտէքլի նման և ինամք է տանում նրանց սուրբ Թրանսուա դը-Պօլի նման: Նա սաստիկ կրօնասէր է: Կատկածանքի ոչ մի նշոյլ երբէք չի թափանցել նրա հոգու մէջ. ինչ որ նա անում է՝ անկեղծ համոզմունքով է անում, ուստի երբէք չի տարակուսում ընտրութիւն անելի: Գուցէ, դրանից է, որ նա միշտ հանգիստ է ու բախտաւոր: Վարչաւայում հօրաքոյրս le bourreau bienfaisant (բարեգործ դահիճ) են անւանում նրա խստութեան պատճառով: Ամանք մանուսնդ կանայք չեն սիրում նրան, բայց առհասարակ նա մեծ ազդեցութիւն ունի:

Պոչովը Վարչաւայի կողքին է: Վարչաւայում հօրաքոյրս տուն ունի, որտեղ սովորաբար անց է կացնում ձմեռը: Ամեն աշունքաւերջ նա աշխատում է ինձ համոզել, որ գնամ խր մօտ, — միտքը ինձ պատկերն է: Ահա այժմ էլ նրանից ստացել եմ մի սաստիկ խորհրդաւոր նամակ, — շատ խնդրում է որ գնամ տեսութեանս Պէտք է գնալ. մի քանի տարի կը լինի հայրենիքումս չեմ եղել, համ էլ հօրաքոյրս գրում է թէ պատառում է ու շատ կ'ուզէր ինձ տեսնել մահից սուաջ:

Խոստովանւում եմ, շատ էլ սրտով չեմ գնում Լեհաստան: Առաջինը՝ խորթացել եմ, երկրորդը՝ զխտեմ, որ հօրաքոյրս անպատճառ ուղւում է ինձ պատկել, իսկ ես քանի անգամ հիւր գնամ նրա մօտ այնքան անգամ պէտք է հիասթափեցնեմ նրան: Սրտիս տարաւի է տիրում, երբ որ մտածում եմ այգալիսի մի վճռական քայլի մասին, որից չետոյ պէտք է սկսել մի նոր կեանք, քանի որ այս առաջին

կեանքովս էլ բաւական բեգարել եմ: Բացի այդ՝ իմ ու հօրա-
քրոջս յարաբերութիւնները մի քիչ փափուկ են զոնէ ինձ
համար: Ինչ կարծիք որ մի ժամանակ հօրս մասին են ունեցել նրա
մօտիկ ծանօթները, նոյն կարծիքն էլ հօրաքոյրս ունի այժմ իմ
մասին՝ այսինքն ինձ համարում է չափազանց մեծ ընդունակութիւն-
ների տէր մարդ, այնպիսի մարդ, որից սպազայում կարելի է մեծ
գործեր սպասել: Թողնել որ նա մնայ այդ կարծիքին — կը նշանակի
ի չարը գործ դնել նրա վտանգութիւնը. ասել որ ինձնից չի կարելի
սպասել ոչ միայն մեծ գործեր, այլ և առհասարակ որ և է գործ, —
այդ էլ անյարմար է: Այն ժամանակ ես կ'ընկնէի հակառակ ծայրայեղու-
թեան մէջ և բացի այդ սաստիկ կը վշտացնէի խեղճ պատուի
սիրտը:

Գուցէ՛ ի մեծ զժբախտութիւն իմ՝ մօտիկ ծանօթներիցս շատ
շատերը նոյն կարծիքն ունեն ինձ վրայ ինչ որ հօրաքոյրս Քանի որ
խօսքն եկաւ իմ մասին ես թոյլ կը տամ ինձ նկարագրել իմ պատ-
կերը, որ շատ էլ հեշտ չի լինիլ, որովհետեւ ես չափազանց բարդ
արարած եմ:

Ես աշխարհ եմ եկել սաստիկ տպաւորւող, ամբողջ մի շարք
սերունդների կուրտուրացից նրբացած ջղերով: Ակզբում հօրաքրոջս
իննամատարութեան տակ եմ եղել, յետոյ անցել եմ զանազան դա-
յեակների ձեռք: Մենք ապրում էինք Հռոմում, օտար ժո-
ղովրդի մէջ, բայց հայրս ուզում էր, որ ես լաւ իմանամ մեր մայ-
րենի լեզուն և այդ պատճառով իմ դայեակներից մէկը լեհուհի էր:
Նա մինչև այժմ էլ ապրում է Բաբուլինօ փողոցում զանազ մեր
տանը իբրեւ տնտես: Հայրս էլ ինձ հետ շատ էր պարտաւում՝ մանա-
ւանդ հինգ տարիս լրանալուց յետոյ, իսկ վերջը, երբ որ նա սկսեց
հաւարեա իւր բոլոր ժամանակը նւիրել հնագիտական հետազոտու-
թիւններին և հաւաքածոները լրացնելուն, ինձ համար ուսուցիչ
վարձեց Կալւի քահանային: Այդ քահանան հասաին առած մարդ էր՝
չափից զուրս մաքուր ու պարզ հաւատով և հոգով: Նա ինձ շատ
էր սիրում՝ աւելի քան բոլոր զեղարուեստները: Ես կարծում եմ՝
նա մինչև անգամ կրօնն էլ ըմբռնում էր միմիայն նրա զեղեղիու-
թեան շնորհիւ: Թանգարաններում՝ մեծ արեստագէտների վճինի
կամ քանդակագրչի արտադրութիւնների առաջ, Ալբտեան մտոու-

առում ¹⁾ երաժշտութեան հնչիւնների ազդեցութեան տակ՝ տէր Կալ-
ւին ընկնում էր կատարեալ ինքնամոռացութեան մէջ: Սակայն հե-
թանոտական ոչինչ բան չը կար այն խոր սիրոյ մէջ, որ նա տածում
էր դէպի գեղարեւտը. այլ սէրը հիմնում էր ոչ թէ սիրարկու-
թեան, զգացասիրութեան վրայ, այլ մաքուր զգացմունքի վրայ: Տէր
Կալին սիրում էր գեղարեւտը այն մաքուր ու պարզ սիրով, որով
կարող էին սիրել Գիօգէլին, Չիմաբուէն կամ Ջոտտոն, ու մինչև ան-
դամ աւելի էլ — սիրում էր ողջախոհութեամբ, որովհետև ոչ մի
ձիրք չ'ուներ: Նա քիչ էր խօսում, բայց խոր էր զգում: Նա մինչև
անգամ չը գիտեմ՝ գեղարեւտի ո՞ր ճիւղն էր աւելի նրա սրտովը,
ինձ թւում է, բոլոր գեղարեւտների մէջ նա ամենից աւելի սիրում
էր ներդաշնակութիւնը, որ համապատասխանում էր նրա ներքին
ներդաշնակութեանը:

Ձը գիտեմ ինչու, բայց հէնց որ ես սկսում եմ՝ մտածել տէր
Կալի մասին, միտքս է գալիս՝ Բա՛խայէլի սուրբ Յեցիլիայի կողքին
կանգնած ու երկնային երաժշտութեան ականջ դնող ծերունին:

Հօրս ու տէր Կալի բարեկամութիւնը տեւեց մինչև վերջինի
մահը: Նա էր, որ հօրս սէր ներշնչեց դէպի հնագիտական հետազո-
տութիւնները և մասնաւորապէս դէպի Յաւիտեական քաղաքը:
Նրանք երկուսով էլ ինձ համարում էին արտակարգ երեխայ, որին
շատ նշանաւոր ազդեց է սպասում: Եւ մտքովս յաճախ անցնում է,
որ ես էլ նրանց համար մի տեսակ՝ նրանց արտաքին աշխարհի հետ
կապող՝ ներդաշնակցութիւն էի և որ նրանք ինձ էլ նոյն սիրով
էին սիրում, ինչ սիրով որ սիրում էին Հոռմն ու նրա յիշատակարան-
ները:

Այդ տեսակ միջնորդող, այդպիսի պայմանները չէին կարող չ'ազ-
դել ինձ վրայ: Ինձ դաստիարակում էին բաւական տարօրինակ կեր-
պով: Նա՛ տէր Կալի, երբեմն էլ հօրս հետ գնում էի ման գալու
քաղաքամէջի գեղարեւտական գալլերէյները, թանգարանները ու քա-
ղաքից դուրս գտնող ամարանոցները, աւերակները, կատակոմբները:
Տէր Կալին, որ հաւասարապէս նուրբ կերպով ըմբռնում էր թէ գե-
ղարեւտի և թէ բնութեան գեղեցկութիւնները, ինձ էլ սովորեցրեց

¹⁾ Վատիկանեան պալատում:

Ծանօթ. Թարգմ.

հասկանալ Հռոմի Կաթոլիկացի մեկամաղձիկ հրապոյրները, — այն ներ-
նաշնակութիւնը, որով աւերած ջրանցքների կամարներն ու գծերը
նկարուում են երկնքի վրայ, և հին գծերի կոնտուրների մաքրութիւնը:
Ես այն ժամանակ, երբ դեռ լաւ չը գիտէի Թաթարական չորս գոր-
ծողութիւնները, շատ անգամ ուղղում էի անդլիացիների սխալը,
որոնք միշտ Կարրաշիին խառնում էին Կարաւաջօի հետ: Լատիններէնը
ես վաղ սովորեցի ու առանց դժարութեան. լատիններէնը սովորելու
օդնեց խաղերէն իմանալս, իսկ խաղերէն՝ իբրեւ Հռոմի բնակիչ՝ ես
բոլորովին ազատ խօսում էի: Տասնըմէկ տարեկան ժամանակս ես կար-
ծիք էի յայտնում խաղացի ու օտարազգի նկարիչների մասին և
հայրս ու տէր Կալէին լսելով իմ յայտնած կարծիքները իրար էին
նայում զարմացած հայեացքով: Ես չէի սիրում Ռեֆէրային, — ես
ինձ մի քիչ ահռելի էր երևում, որովհետեւ նրա նկարներում չափա-
զանց շատ կան սև ու սպիտակ ներկեր, — և շատ սիրում էի Կարլօ
Դոլէիին:

Այդ տեսակ միջնորդաւոր ջղերս վաղ զարգացան և տպաւորող
դարձան ու ալիպէս էլ մնացին ընդ միշտ: Զարմանալի է սակայն, որ
վերոյիշեալ ազդեցութիւնները ոչ այնքան խոր էին, ոչ էլ վճռողա-
կան, որքան կարելի էր սպասել: Արեւս արեւատագէտ չը դարձայ, այդ
ես բացառում եմ նրանով, որ ոչ մի ձիւք չ'ունէի, Թէպէտեւ երա-
ժշտութեան ու նկարչութեան ուսուցիչներս հակառակ կարծիքին
էին. բայց ես յաճախ մտածում եմ, Թէ ինչո՞ւ ոչ հայրս, ոչ էլ
տէր Կալէին չը կարողացան ներշնչել ինձ իրանց սաստիկ զեղարուես-
տասիրութիւնը այն չափով որ իրանց մէջ կար: Աիրում եմ ես ար-
դեօք զեղարուեստը, — այո, հարկաւոր է ինձ զեղարուեստը, — այո, հար-
կաւոր է: Բայց նրանք աշխարհ էին սիրում զեղարուեստը, ինչպէս
պէտքն է, իսկ ես իբրեւ գիլլետանտ եմ վերաբերում նրան. զե-
ղարուեստը ինձ պէտք է իբրեւ՝ կենսական ուրիշ տպաւորութիւնները
լրացնող բան: Նա ինձ համար դուրեկան բաների թւին է պատկա-
նում, բայց ոչ այն բաների, որ ես մոլի կերպով սիրում եմ: Աս չեմ
կարող ապրել առանց զեղարուեստի, բայց և չեմ էլ փոխիլ կեանքս
նրա հետ:

Արովհետեւ խաղական ուսումնարանները բաւական անմխիթար վի-
ճակի մէջ էին, հայրս ինձ տւեց Մեց. քաղաքի կոլլեժը (գիմնազիա): Այնտեղ

ուսումն եւ շուտ աւարտեցի ու առանց մեծ դժարութեան, բայց շատ փառաւոր կերպով և այն բոլոր պարգևներով, որ կարելի էր ստանալ: Ճիշտ է՝ այն էլ պէտք է ասել, որ ուսումն աւարտելուց մի տարի առաջ ես փախայ Դոն-Կարլոսի մօտ և երկու ամիս Տրիստանի զօրավմբի հետ քաշ էի դալիս Պիրենէյեան սարերում: Կնձ դռան Բուրգոսի Ֆրանսիական հիւպատոսի օգնութեամբ և ուղարկեցին Մեց՝ սպաշխարելու: Սակայն պէտք է ասեմ, որ սպաշխարանքը այնքան էլ ծանր չէր և հայրս ու զարոցի վարչութիւնը սրտանց պարծենում էին իմ արշաւանքով, իսկ հարցաքննութիւններէս յաջողութիւնը բոլորովին մոռացնել աւեց նրանց իմ արած յանցանքս:

Մեցի կոլլեժում, որտեղի բոլոր աշակերտները Դոն-Կարլոսի թունդ համակրողներին էին, ես ի հարկէ հերոս էի համարւում: Ես սոն էի տալիս ամբողջ զարոցին և ոչ ոք չէր համարձակւում ինձ հետ մրցել առաջին աշակերտի տեղը բռնելու համար: Ես մեծանում էի ակամայից այն համոզմունքով, որ յետոյ էլ, աւելի ընդարձակ ասպարէզում, նոյնը կը լինի: Այդ համոզմունքին էին նոյնպէս և իմ ուսուցիչներն ու բնկերները: Բնկերներէս սկի մաքոյն էլ չէր անց կենում, որ իրանք երբ և իցէ կը կարողանան մրցել ինձ հետ, մինչ սակայն նրանցից շատերը այժմ Ֆրանսիայում բարձր դիրք ունին զրականական, հասարակական ու քաղաքական ասպարէզում, երբ ես գեռ ևս ոչ մի մասնաղիտութիւն չեմ ընտրել ինձ համար և սաստիկ կը դժարանայի, եթէ, ինձ հրամայէին ընտրել: Հասարակական դիրքս փայլուն է, — մայրս ինձ ժառանգութիւն է թողել, երբ և իցէ հայրս էլ կը թողնի, խիրութիւն կ'անեմ Պրոշովին, բաւ ու վատ կը կառավարեմ իմ բոլոր կալւածները, — բայց արդէն այդ սրապամունքների ուղղութիւնը ինձ համար անհնար է դարձնում՝ կեանքում երբ և իցէ որ և է գեր խաղալու յոյսը:

Որ ես երբէք լաւ տնտես ու զործնական մարդ չեմ լինիլ, այդ ես շատ լաւ գիտեմ, — ես ամենևին չեմ ուզում ձեռք քաշել իմ զործերից, բայց միևնոյն ժամանակ չեմ ցանկանում նրանց նւիրել իմ ամբողջ կեանքս, — իմ ձգտումները շատ աւելի բացն են:

Նրբեմն-երբեմն ես ինքս ինձ հարց եմ տալիս, — արդեօք մենք՝ Պրոշովսկիներս չենք չափազանցացնում մեր ընդունակութիւնները: Բայց եթէ այդ ճիշտ լինէր, այն ժամանակ միմիայն մենք կը սխալ-

էինք, իսկ կողմնակի մարդիկ, օտարները այդ սխալը չէին անիլ: Բացի այդ՝ հայրս էր և է իսկապէս սովորականից վեր ընդունակութիւնների տէր մարդ: Գալով ինձ, ես չեմ ուզում խօսել այդ հարցի մասին իմ վերաբերմամբ, որպէս զի իմ դատողութիւնները չիմար անապարծութիւն չը թւան. բացի այդ՝ ես անկեղծ համոզւած եմ, որ անշափ աւելի մեծ բան կարող էի լինել քան եմ այժմ:

Սրինոսկ՝ Վարչաւացի համալսարանում (հայրս ու հօրաքոյրս ուզում էին, որ ես կրթութիւնս աւարտեմ հայրենիքում) ես սովորում էի Մեհաօինսկու հետ: Երկուսս էլ կոչումն էինք զգում դէպի գրականութիւնը և փորձում էինք ոյժերս այդ ասպարէզում: Ե՛լ չեմ ասում այն, որ ես Մեհաօինսկուց շատ աւելի ընդունակ ուսանող էի համարում, բայց, խաչը վկայ, իմ գրածներս էլ շատ աւելի բան էին խոստանում ապագայի համար քան Մեհաօինսկու գրածները: Իսկ ասե՛մ,—Մեհաօինսկին ամեն կողմից բարձր դիրք է զբաղել, իսկ ես քնացել եմ նոյն շատ բան խոստացող պան՝ Պրոշչակին, որի մասին բարի մարդիկ ասում են գլուխները թափ տալով, ճիշտ, եթէ որ մի բանի կաշէր:

Բարի մարդիկը ինկատի չեն առնում, որ պէտք է կամ երևալ կարողանալ: Ես յաճախ մտածում եմ, որ եթէ հարստութիւն չ'ունենայի, պէտք է մի բանի կաշէր: Ի հարկէ՛ս ես պէտք է մի կերպ ինձ համար հաց վաստակէի, բայց ներքուստ հաւատացած եմ, որ այդ սրայմաններումն էլ գործ չէի դնիլ ունեցած ընդունակութիւններիս մինչև անգամ մի քսաներորդ մասը: Բացի այդ՝ այնպիսի մարդիկ ինչպէս Բոկլը, Դարւինը—հարուստ մարդիկ են, սեր Զոն Լեօբքոկը՝ բանկիր է, Ֆրանսիացի յայտնի քաղաքական գործիչներից մեծ մասը կարողութեան տէր մարդիկ են: Դուրս է գալիս, որ հարստութիւնը ոչ միայն չի խանգարում, այլ ընդհակառակը՝ նպաստում է որ մարդ բարձր դիրք զբաղի հասարակութեան մէջ: Ես մինչև անգամ ենթադրում եմ, որ ինձ, անձամբ ինձ՝ հարստութիւնը մեծ օգուտ է տւել—պահպանել է բնաւորութիւնս այն բոլոր աղաւաղումներից, որոնց կ'ենթարկւէր նա, եթէ աղքատ լինէի: Ես դժանով չեմ ուզում ասել, իբր թէ բնաւորութիւնս թոյլ է եղել. ոչ, ուրիշ պայ-

1) Պան՝ տխրոտն է լինական ազնւականների: Ծանօթ. Խմբ.

մաննեղում կռիւը դուցէ մինչև անգամ աւելի ամրապնդէր իմ բնաւորութիւնը... Բայց չէ՞ որ ճանապարհին քիչ քարի հանդիպողը աւելի քիչ է սայթաքելու ու ընկնելու վտանգին ենթարկուում:

Մուլութեամբ էլ չեմ կարող բացատրել իմ անդործութիւնը: Ես հաւատարաշափ թէ գիտութիւններ իւրացնելու ընդունակութիւն ունեմ՝ թէ հարցասիրութիւն: Ես շատ եմ կարդում, մտքումս էլ շատ բան է մնում: Գուցէ ես երկաթի սոկունութիւն չ'ունեմ, դուցէ ես չեմ զիմանալ երկարատեւ, սոլիդ աշխատանքի, բայց ինձ հօ ստիպող չ'ը կայ, որ բառարաններ կազմեմ Վիտորէի պէս: Այլ որ կարողութիւն չ'ունի արեղակի պէս շարունակ լոյս տալ, կարող է մի բոպէով փայլել մետէօրի նման: Բայց աննշան, չնչին արարած լինել ապագայում, որ համարեա անկասկածելի է... Սիրտս ճնշուում է, տաղտկութիւնը սկսում է տանջել ինձ... Այսօր՝ էլ չեմ գրիլ, յետոյ կը շարունակեմ յիշատակարանս:

Հում, 10 յունւարի:

Երէկ իշխան Մալտոետի երեկոյթում ես խեցի մի Ֆրագա՝ „l'improductivité slave“ (սլաւոնական անարդիւնութիւն) և խեթութեութիւն զգացի, ինչպէս ջղային հիւանդը մխիթարուում է երբ որ բժշկից իմանում է, որ իւր հիւանդութեան նշանները յայտնի են, որ այդ հիւանդութիւնը այժմ ամեն տեղ տարածւած է: Ճիշտ է, ճիշտ, որքան ընկերներ ունեմ հիւանդութեանս կողմից... Ձեմ իմանում ամբողջ սլաւոնական աշխարհում ինչպէս է, — այդ աշխարհը ինձ անձանօթ է, — բայց մեզնում, մեզնում: Ամբողջ գիշերը մտածում էի այդ „l'improductivité slave“-ի մասին: Յիմար մարդ չի եղել այդ զաղափարը ամփոփաբանողը: Մեր մէջ մի տեսակ բան կայ. մի տեսակ կենսական անընդունակութիւն կայ դուրս բերել մեր մէջից այն բոլորը, որ մեր մէջ պարունակուում է: Կարելի է ասել, որ Աստուած տւել է մեզ նեւ ու աղեղ, բայց չի տւել մեզ այդ աղեղը լարելու ու այդ նետերը արձակելու շնորհ: Ես կը խօսէի այդ բանի մասին հօրս հետ, մաւանդ որ՝ նա սիրում է այդ տեսակ խօսակցութիւններ, բայց վախճանում եմ զիսկ չեմ նրա ցաւոտ դամարին: Կարծում եմ, որ դրա փոխարէն ես կը լցնեմ յիշատակարանս այդ հարցի լուծմամբ: Գուցէ այդ բանը չի-

շատակարանիս ամենագլխաւոր արժանաւորութիւնը լինի: Վերջապէս շատ բնական է, որ ես կը գրեմ այն բանի մասին, որ ինձ աւելի է վերաբերուում: Ամեն մարդ կրում է իւր մէջ մի որ և է սեփական տրագեդիա: Իմ տրագեդիան՝ Պրոշովսկիների «l'improductivité»-ն է: Կողմնակի մարդկանց ներկայութեամբ այժմ չի կարելի պարծենալ այդպիսի բաներով: Գեւ մօտիկ անցեալներս, երբ որ բռնանալով շքեղագարդ փթթում էր մարդկանց սրտերում ու բանաստեղծութեան մէջ, մարդիկ իրանց տրագեդիաները կրում էին ի ցոյց՝ գեղեցիկ նստող վերարկուի նման, իսկ այժմ կրում են Նգերեան բրդէ ֆուֆայալի պէս՝ շապկի տակից: Բայց յիշատակարանը բոլորովին ուրիշ բան է, — յիշատակարանում կարելի է և մինչև անգամ պէտք է անկեղծ լինել:

Հոտմ, 11 յունւարի:

Ես այստեղ մի քանի օր էլ կը մնամ, ուստի օգուում եմ ժամանակից, որ մի անգամ ընդ միշտ պրծնեմ անցեալը ու յետոյ սկսեմ զէպքերը օրէցօր գրի անցնել: Արդէն ասել եմ, որ միտ չունիմ երկար ու բարակ ինքնակենսագրութիւն գրել, — ով եմ ես և ինչ տեսակ մարդ եմ՝ բաւականաչափ ցոյց կը տայ իմ ապագան: Անցեալի մանրակրկիտ հետազօտութիւնը բնութեանս հակառակ է: Գումարման տեսակ մի բան է գուրս դալիս, — մարդ արտագրում է մի քանի թիւ մէկ-մէկի տակ, տակը զիծ է քաշում ու հաշւում է: Ես սկի չէի սիրում թւաբանութեան չորս զործողութիւնները, իսկ նրանից՝ մանաւանդ ատելի էր ինձ առաջինը:

Բայց այնու ամենայնիւ ես կ'ուզէի թէկուզ ամենաընդհանուր զաղափար ունենալ գումարի մասին, որպէս զի ինքս ինձ համար փոքր ի շատէ հասկանալի դառնամ, ուստի ես շարունակում եմ:

Համալսարանից յետոյ ես մտայ Ծրանսիայում մի երկրագործական դպրոց և աւարտեցի առանց Վժարութեան, բայց և բոլորովին անսիրտ կերպով, իբրեւ մի մարդ, որ շատ քիչ է հետաքրքրւում այն տաւրակայով, որ սովորում է և որ չի համապատասխանում ոչ նրա ընդունակութիւններին, ոչ էլ փառասիրութեանը: Բայց ինչ և իցէ դպրոցը ինձ անկասկած օգուտ տուեց, — առաջինը՝ այնուհետեւ երկրագործութիւնը իմ խելքին մատչելի բան դարձաւ (այժմ ինձ չի

կարող խտբել առաջին պատահած կառավարիչը)։ երկրորդ՝ դաշտում, մաքուր օդում աշխատելը այնքան կազդուրեց ոյժերս ու առողջութիւնս, որ Պարիզի կեանքը ինձ վրայ ոչինչ նկատելի ազդեցութիւն չարեց։

Կեանքիս հետեւեալ տարիները անցկացրեցի երբեմն Հռոմում, երբեմն Պարիզում, չը հաշւելով կարճատև ուղևորութիւններս Վարշաւա, երբ որ հօրաքոյրս զանազան պատրասկներով կանչում էր ինձ իւր մօտ։ Պարիզն ու այնտեղի կեանքը սաստիկ զրաւում էին ինձ։ Չը նայելով իմ ունեցած ինքնավստահութեանն ու հաստատակամութեանը, որ մարդուս ներշնչում է հաստատ հասարակական գրութիւնը, պէտք է խոստովանեմ, որ սկզբում բաւական միամիտ դեր էի խաղում ամբողջ աշխարհի այդ մեծ բեմի վրայ։ Ամենից առաջ ես թունդ սիրահարուցի Comédie Française-ի դերասանուհի m—lle Ռիշենբերգի վրայ և ուզում էի անպատճառ պսակել նրա հետ։ Թէ յարազի-կոմիկական հանգամանքների մէջ զցեց ինձ այդ սիրահարութիւնը՝ ես չեմ պատմիլ,—ամաչում եմ, իսկ երբեմն իմ ծիծաղս էլ է գալիս ինձ վրայ։ Յետոյ ինձ մի քանի անգամ խտբեցին և, բացի այդ, մի քանի դէպքեր էլ եղան, երբ ես իմ յօժար կամքովս կեղծ դրամէլ իսկականի տեղ էի ընդունում։ Ֆրանսուհին, ինչպէս և լեհուհին, թէկուզ հասարակական ամենաբարձր շրջանին պատկանողը, թէկուզ ամենաառաքինին, ինձ սրախաղութեան ուսուցիչ (ֆետմէյստէր) է յիշեցնում։ Ինչպէս որ սրախաղութեան ուսուցչին անհրաժեշտ է, ձեռքը չը խամանալու համար ամեն օր «վարժութեան ժամ» ունենալ, այնպէս էլ կանայք իրանց զգացմունքներով սրախաղութիւն են անում միմիայն վարժութեան համար։ Երբեւ լաւ հասարակութեան պատկանող ու ոչ-անճուռնի երիտասարդ ես շուտ-շուտ հրաւերներ էի ստանում գնալու «վարժութեան ժամերին» և, որովհետև միամտաբար սկզբումը լուրջ կերպով էի վերաբերում այդ վարժութիւններին, յաճախ վերքեր էի ստանում։ Սակե՛ք՝ այդ վերքերը մահացու վերքեր չէին, աւելի՛ ցաւ ուող ծակոցների էին նման։ Վերջապէս՝ ես համոզուած եմ, որ մեր կեանքը վարող ու մեր հասարակութեան մէջ զանազան ամեն մի մարդ պէտք է իւր առաքել տայ միամտութեանը։ Իմ չարչարանքներս համեմատաբար կարճ տևեցին։ Յետոյ սկսեց մի ուրիշ շրջան, որ ես կարող եմ բնութարկել

«la revanche» բառով: Ես վճարում էի պարտքերս և, եթէ հնարաւորութիւն էի տալիս ինձ ասպարէզ կանչելու, — միայն այն պատճառով որ ես ինքս ուզում էի ասպարէզ դուրս դալ:

Իմ առաջ բաց էին բոլոր դռները և ես շուտով ծանօթացայ հասարակութեան բոլոր խաւերի հետ՝ սկսած լեզիտիսիւսներէից, որոնց դահլիճներում սիրաս ստատիկ նեղանում էր, և վերջացնելով Բժնապարտների ու Սրէանների թաղի տիտղոսաւոր արխատոկրատիայով, — արխատոկրատիայով, որ կազմում էր բարձր աշխարհը... զուցէ և ոչ Պարիզի, բայց յամենայն դէպս Նիցցայի Ղիւմա-որդին, Սարգուն և ուրիշները իրանց կոմսերին, մարքիզներին ու իշխաններին օրինակում են հէնց այդ տեսակ մարդկանցից, որոնք անցեալից մնացած ոչինչ պատմական տրագիքիաներ չ'ունին և, իրանց տիտղոսների ու եկամուտների շնորհիւ, միմիայն կենսական վայելքների յետեւից են ընկած: Այդ հասարակութեան անդամների թւին կարելի է աւելցնել և խոշոր դրամատէրերին: Իմ՝ դրանց մօտ յաճախելու զլիսաւոր պատճառն էին կանայք, շքեղ, նրբալար ջղերի տէր, նոր տպաւորութիւնների ծարաւ և... համարեա ոչ մի իդէալ չ'ունեցող կանայք: Յաճախ նրանք իրանք էլ այնպէս անբարոյական են ինչպէս իրանց կարգացած վէպերը, որովհետեւ նրանց բարոյականութիւնը չի յենւում ոչ կրօնական հիմքի վրայ, ոչ էլ որ և է՝ մարդու վրայ պարտականութիւն դնող՝ աւանդութեան վրայ: Բայց այսպէս թէ այնպէս՝ այդ շրջանը փայլի աշխարհ է: «Վարժութեան ժամերը» այդտեղ այնքան երկարատեւ են, որ շատ անգամ հաւատարում են օր ու գիշերի և երբեմն շատ տրագիկական կերպով են վերջանում, — այդտեղ սովորութիւնն չը կայ բութ սրերով (բայիր) մենամարտել: Ինձ էլ մի քանի բաւական ծանր հարամճներ հասան մինչև որ կարգին խրատուցի ու ինչպէս պէտքն է վարժեցի: Իմ կողմից շատ մնապարծութեան կամ, որ աւելի վատ է, վատ ճաշակի նշան կը լինէր, եթէ ես սկսէի երկար ու բարակ պատմել արած քաջագործութիւններս, այնքանը միայն կ'ասեմ, որ ես աշխատում էի որքան կարելի է չը թողնել որ հօրս երխտասարդութեան փառաս որ չիշատակը մոռացւի:

Այդ հասարակութեան ստորին խաւերը երբեմն ընդհատուում են կիսաշխարհի (demi-monde) վերին շերտերի հետ: Այդ կիսաշխարհը աւելի

վտանգաւոր է քան երեւում է առաջին անգամից, — նրանում գոեհականութեան (trivialité) ոչ մի նշոյլ չը կայ: Կիսաշխարհի ցինիզմը արտիստականութեան կերպարանք ունի: Նթէ ինձ այնտեղ չափազանց սաստիկ փետրահան չ'արեցին, — միմիայն այն պատճառով, որ ես այնտեղ մտայ արդէն բաւական սրած կտուցով ու սուր ճանկերով:

Աւհասարակ Պարիզի կեանքի մասին կարելի է ասել, որ այդ ջաղացաբարի տակից դուրս եկող ամեն մի մարդ իրան անշուշտ մի քիչ չարհարւած կը զգայ, իսկ այն մարդկանց մասին, որոնք դուրս են գալիս այնտեղից միայն նրա համար, որ շուտով էլի վերադառնան, — հօ էլ ասել չի ուզիր: Մարդ միայն բաւական ժամանակ անցնելուց յետոյ է սկսում հասկանալ, որ իւր յաղթութիւնները հաւասար են Պիւռլոսի յաղթանակին: Իմ՝ ի բնէ ուժեղ կազմածքս զիմացաւ այդ կեանքի հարւածներին, բայց ջղերս կարգին քայքայւեցին:

Այսպէս թէ այնպէս, Պարիզը մի առաւելութիւն ունի մոտաւոր կեանքի բոլոր միւս կենտրոններից: Ես ոչ մի ուրիշ քաղաք չը գիտեմ աշխարհում, որտեղ գիտութեան, գեղարւեստի, ամեն տեսակ հանրամարդկային գաղափարների սաղմերը այնպէս սփռւած լինեն միթնորորտում, այնպէս թափանցեն մարդու գլխի մէջ՝ ինչպէս Պարիզում: Ոչ միայն մարդս ակամայից իւրացնում է յաւաքափմութեան բովում երեւան եկող նոր բաները, այլ և զրա հետ միասին մարդու խելքը կորցնում է իւր միակողմանիութիւնը, աւելի սրանում է ու քաղաքակրթւում է: Ես շեշտում եմ՝ քաղաքակրթւում է, որովհետեւ Խալիլայում, Գերմանիայում ու Լեհաստանում ես պատահել եմ այնպիսի մարդկանց, որոնք գուցէ և շատ խելօք են, բայց չեն ուզում ընդունել, որ իրանց խարոյկի լուսաւոր բակի շրջապատից զէնը կարող է որ և է բան գոյութիւն ունենալ, — այնպիսի մարդկանց, որոնք այն աստիճան բարբարոսավարի յամառ են, որ իւր համոզմունքները պահպանել ցանկացող համարեալ ոչ մի մարդ չի կարող հետները յարարերութիւն ունենալ:

Ֆրանսիայում կամ, աւելի ճիշտ ասած, Պարիզում այդ տեսակ երեւոյթներ չը կան: Ինչպէս որ սրընթաց գիտակը շարունակ շփահարելով կոկում, կլորացնում է մէջի քարերը, այնպէս էլ Պարիզի կեանքի հոսանքը կոկում ու մարդաբարոյ է դարձնում:

մարդկանց խելքերը: Անշուշտ այդ ազդեցութիւնից իմ գլուխն էլ քաղաքակրթւած մարդու գլուխ է դարձել: Ես կարողանում եմ նուրբ կերպով ըմբռնել, ես սիրամարգի աղաղակ չեմ արձակում իմ կարծիքիս հակառակ կարծիք լսելիս կամ ինձ համար մի բոլորովին նոր բան տեսնելիս: Գուցէ ամեն տեսակ կարծիքների այդպէս յարգանքով վերաբերւելը մարդուս բոլորովին անտարբեր է դարձնում, բոլորովին զրկում է եռանդից, բաց ես, եթէ ուզեմ էլ, չեմ կարող ուրիշ տեսակ մարդ գտնալ:

Մտաւոր հոսանքը ինձ առաջ էր մղում, և ես լող էի տալիս: Հասարակութիւնը, սաղոնները, բուդուարները, կլուբները խլում էին իմ ժամանակս: Ես բազմաթիւ ծանօթութիւններ ձեռք բերեցի գիտնական ու արտիստական աշխարհում և ապրում էի այդ հասարակութեան կեանքով կամ, աւելի ճիշտ ասած, ապրում եմ մինչև այժմ էլ: Առհասարակ ես շատ—շատ էի կարդում և կարդացածս հեշտութեամբ իւրացնում էի, այնպէս որ իմ կրթութիւնս շատ առաջ գնաց: Այժմ ես առաջ եմ գնում զուգընթաց իմ դարի մտաւոր ընթացքին:

Ես՝ ինքն իրան չափից դուրս լաւ ճանաչող արարած եմ: Յաճախ իմ ես-ը ջհաննամն է ուղարկում միւս ես-ին, որ հետազօտում ու քննում է նրան և չի թողնում, որ նա անձնատուր լինի ոչ մի տպաւորութեան, ոչ մի գործի, ոչ մի զգացմունքի, ցանկութեան, կրքի: Գուցէ ինքնաճանաչութիւնը մտաւոր բարձր զարգացման նշան է, բաց միեւնոյն ժամանակ՝ սարսափելի ազդում է զգացմունքի վրայ: Կրել իւր մէջ անընդհատ ինքնաքննութիւն—կը նշանակի բաժանել ամբողջութիւնից հոգու՝ այդ քննադատութեան համար հարկաւոր՝ մասը և ապրել ու զգալ ոչ ամբողջ էութեամբ, այլ նրա մնացեալ մասովը:

Այդ այնպէս է տանջում մարդու, ինչպէս կը տանջւի մի թեւով թռչող թռչունը: Բացի այդ՝ չափից դուրս զարգացած ինքնաճանաչութիւնը զրկում է մարդուս որ և է բան անելու ընդունակութիւնից: Եթէ այդ չը լինէր, Համլետը առաջին գործողութեան մէջ՝ կը շամփրէր հօրեղբօրը և հանգիստ կերպով նրանից յետոյ կը ժառանգէր զահը:

Գալով անձամբ ինձ՝ պէտք է ասեմ, որ ինքնաճանաչութիւնը,

եթէ երբեմն—երբեմն թոյլ չի տալիս այս կամ այն անմիա քայլն անել, միւս կողմից էլ ուսրափելի զգեցնում է ինձ, չի թողնում կեսորոնանամ ու որ և է մի գործի ամբողջապէս անձնատուր լինեմ։ Նս մէջս կրում եմ երկու մարդ, որոնցից մէկը անդադար ամեն բան չափում—կշռում ու քննադատում է, իսկ միւսը՝ ապրում է կիսատ կեանքով և բոլորովին զրկում է վճռողականութիւնից։ Նս զիտեմ (որ շատ ցաւալի է ինձ համար), որ այդ լծից ես երբեք չեմ ազատուիլ—ընդհակառակը՝ որքան խելքս ընդլայնանայ այնքան ինքնաճանաչութիւնս կը պարզւի,—և որ մինչև անդամ մեռնելուս բոլէին ես չեմ դադարիլ մեռնող Պրշովսկուն քննադատելուց, եթէ միայն տենդը չը պղտորեցնի խելքս։

Նրեի ես հօրիցս սինթետիկական խելք եմ ժառանգել, որովհետեւ ես աշխատում եմ միացնել բոլոր երեւոյթները, իսկ զիտութիւններից ոչ մէկը ինձ այնքան աստիկ չի գրաւել որքան փիլիսոփայութիւնը։

Բայց հօրս երիտասարդ եղած ժամանակը փիլիսոփայութիւնը բովանդակում էր ամբողջ աշխարհը, ուստի և պատրաստ պատասխան ունէր բոլոր հարցերին։ Այժմ փիլիսոփայութիւնը խեղճացել է, այժմ ընդունում է, որ ինքը առաջւան ընդհանուր նշանակութիւնը չ'ունի և միմիայն զիտութեան տանձին ճիւղերի փիլիսոփայութիւն է։ Ճիշտն ասած, երբ որ այդ բանի մասին մտածում եմ, քիչ է մնում ասեմ, որ մարդկային բանականութիւնն էլ իւր տրագիդիան է կրում և որ այդ տրագիդիան սկսել է այն ժամանակ, երբ մարդկային բանականութիւնը զիտակցել է իւր անզօրութիւնը։ Քանի որ ես իմ յիշատակարանն եմ գրում, ես այդպիսի բաների մասին իմ անձնական տեսակէտից կը խօսեմ։ Նս ինձ մասնազէտ փիլիսոփայ չեմ համարում (իմ մասնազիտութիւնը, ինչպէս ասել եմ արդէն, ոչինչ լինելն է), բայց՝ փիլիսոփայութեան նորագոյն ընթացքով հետաքրքրւող բոլոր մտածող մարդկանց նման՝ ես ընդ միշտ կը ֆիսմ փիլիսոփայութեան ազդեցութեան տակ և կ'առարեալ իրաւունք ունեմ խօսելու այն հարցի մասին, թէ ինչն է իմ բարոյական էութեան կազմակերպութեան վրայ ազդել ու բազմաբարձրութեան մէջ մտել։

Ամենից տուժ ես պէտք է չաչանեմ, որ Մեցի դպրոցում ան-

Ձևառ քնացած կրօնական դաւանանքներս յետոյ չը դիմացան բնագիտական-փիլիսոփայական գրքերի ազդեցութեանը: Այդ չի նշանակում, թէ ես տեսաւա՞ծ եմ: Ոչ: Առաջ, շնոր առաջ, մէկը չէր ընդունում որոշ գոյութիւնը, ինքն իրան ասում էր՝ Նիւթ—եւ այդ խօսքով հանգստացնում էր իրան: Այժմ միայն ամենաշեղծաբանաց փիլիսոփաներն են պաշտպանում այդ յետաձգող տեսակէտը: Այժմ փիլիսոփայութիւնը այդպիսի բաներ չի քննում: ամենահետաքրքրական հարցերին պատասխանում է «չը դիտեմ—ով եւ այդ «չը դիտեմ—ը արմատ է գցում մարդուս հոգու մէջ: Այժմ հոգեբանութիւնը զբաղւում է ամեն տեսակ հոգեկան երեւոյթների չափազանց նեղ անալիզով, հոգու անմահութեան մասին հարցնողին պատասխանում է նոյնպէս «չը դիտեմ, եւ իսկապէս՝ ոչ միայն չը գիտէ այլ չի էլ կարող իմանալ:

Այ հիմա հեշտ կը լինի որոշել իմ մտաւոր դրութիւնս: Ահա այդ դրութիւնը — չը դիտեմ, չը գիտեմ, չը դիտեմ: Հէնց մարդկային բանականութեան այդ գիտնական ակարութեան մէջն է կայանում տրագիդիան: Ել չեմ ասում այն, որ մեր հոգեկան բնութիւնը միշտ յամառ կերպով եւ բարձրաձայն պատասխան է պահանջում այդ հարցերին, որովհետեւ այդ հարցերը ահադին իրական նշանակութիւն ունեն մարդուս համար: Եթէ հանդերձեալում կայ մի բան, մի յաւիտենական բան, այն ժամանակ աշտուղի դժբախտութիւնների ու զրկանքների նշանակութիւնը այնքան է քչանում, որ զրօի է հաւատարում: Այն ժամանակ կարելի կը լինէր դրա վերաբերմամբ կրկնել Համլետի խօսքերը, «Թող սատանան սուգ պահի. ես սամոյրի վերաբերում կը հագնեմ: Ես համաձայնում եմ մեռնել,—ասում է Ռքնանը,—բայց Թող ասեն ինձ, թէ ինչին պէտք կը զայ մահը: Իսկ փիլիսոփայութիւնը պատասխանում է՝ «չը դիտեմ:

Մարդ չարչարւում է այդ մեծ անգիտութեան մէջ, զգալով, որ եթէ կարողանար այս կամ այն կողմն անցնել՝ թեթեւութիւն կը ստանար ու կը հանգստանար: Բայց ի՞նչ անի մարդ: Պէտք է արդեօք մեղադրել փիլիսոփայութիւնը, որ նա փոխանակ սխտեմներ յօրինելու, որոնք ամեն օր փլում են խաղաթղթերից շինած տնակների նման, ըմբռնել է խր սկարութիւնը եւ սկսել է զբաղւել մեր խելքին մատչելի սահմաններում տեղի ունեցող երեւոյթների հետա-

աջօտութեամբ ու դատաւորութեամբ: Այն Կարծում եմ, որ ոչ միայն
ես, այլ ուրիշ ամեն մարդ էլ կարող է զիմեւ փիլիսոփայութեանն ու
տեսել, — ես զարմանում եմ քո լրջութեան վրայ, խոնարհւում եմ քո
անալիզի ճշտութեան առաջ, բայց այնու ամենայնիւ դու ինձ անբախ-
տացրել ես: Դու կարողութիւն չունես, ինչպէս ինքզի էլ խոստովանւում
ես, պատասխանելու ինձ համար չափից դուրս կարեւոր հարցերի, մինչ
ռակայն այնքան զօրութիւն կայ մէջդ, որ կարողացել ես խախտել իմ
ունեցած հաւատը զէպի գիտութիւնը, որ ինձ վճռողաբար էր պա-
տասխանում ու իւր տւած պատասխաններով հանգստացնում հան-
դարտացնում էր ինձ: Մի ասիլ թէ՛ քանի որ ոչինչ չես դատապար-
տում՝ կընշանակի թոյլ ես տալիս ամեն բանի հաւատալ: Սուտ է:
Քա մեթոդը, քո ոգին, քո էութիւնը՝ երկբայութիւն ու կրիտիկան
են: Թէ այդ մեթոդը, թէ այդ սկեպտիկականութիւնդ, թէ այդ
կրիտիկադ դու այնպէս ես պատւաստել իմ հոգուն, որ մոեւ են
մարմնիս ու արիւնիս մէջ: Դու կարծես հրաշէկ երկաթով այրել —
ռչնչացրել եւ իմ ողու այն նեարդերը, որոնց միջոցով աննենդ ու
պարզասիրտ հաւատում է, և այժմ, եթէ ես ուզենամ էլ հաւատալ,
չեմ կարող, — հաւատալու ընդունակ նեարդեր չը կան հոգուս մէջ:
Դու թոյլ ես տալիս ինձ զնալ պատարագ լսելու, եթէ ցանկութիւն
ծաղի մէջս, բայց դու ինձ այն սատիճան թունաւորել ես սկեպտի-
կականութեամբ, որ այսօր ես սկեպտիկաբար եմ վերաբերում ոչ
միայն ինքս ինձ, այլ և իմ սկեպտիկականութեանս, ու չը գիտեմ
չը գիտեմ, չը գիտեմ... և ստանջւում ու շշմում եմ այս խաւարի
մէջ...

(Կը չարունակուի)

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՊԱՏԵՐԻ ԱՌԱՋ

(ՆԲՐԱՅԱԿԱՆ ՄԵՂԵԿԻ)

ԱՐՇԱԼՈՅՍ ՄԻԻԹԱՐԵԱՆԻ

Լանց, կոծիր, ով ազգ, որ լըքեալ թողիր
Դրախտանըման հայրենի երկիր,
Ուր կաթն է ազրիւր, դաշտեր պըտղալից,
Ուր մեղր է կաթում ծառի ճիւղերից:
Աւերած պարիսպն Երուսաղէմի
Դեռ քեզ է ողբում, ապերախո որդի,
Դեռ քեզ է լալիս աբխուր Յորդանան,
Քեզ է շըշընջում հոգն առաւօտեան:
Ո՛ւր ես թափառում... Փորձը դարերի
Բաւական չէ քեզ, ով անմիտ դերի,
Բաւան չե՞ն քեզ ապտակ, հայհոյանք,
Թուք, մուր, անարդանք, շըղթայ ու կապանք,
Հերիք չողողե՞ց քս անմեղ արիւն
Դիւղ ու քաղաքներ. քո լաց ու վայիւն
Հերիք չը խեղդե՞ց մըթին բանդերում,
Աւեր տանըդ մէջ, անձայն տնտառում:
Ն'կ, էկ, հընտ թեան ոնե՛ծք—առապել
Վաղուց անցածի հետ օրն է ցընդուկ
Եւ Երուսաղէմն հիմա ողբաձայն
Քեզ, քեզ է կանչում, ով տառանդական:

ՄԻ ՊՏՈՅՑ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՎՐԹՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Զմիւռնիայի և նորա ծովային ու ցամաքային շրջակայքի անցեալից
ու ներկայից):

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆԻ

Ես դիտաւորութիւն ունէի այս ամառ վերջապէս ըղձալի Աթէնքը
տեսնելու և այս ուղևորութեան նկարագիրը «Մուրճ»-ին ուղարկելու:

Քսան և չորս ժամ հեռու լինել հին աշխարհի պանծալի կենտրոնից
և չը տեսնել նրան, մանաւանդ որ նա առանձին իմի ազդեցութիւն էր ու-
նեցել մեր անցեալ մտաւոր ու գործնական կեանքի համարեա ըստ ճիւ-
ղերի վերաջ, ազդեցութիւն, որի ներքոյ մենք դեռ ապրում ենք և տակա-
ւին շատ պէտք է ապրենք: Սակաջ վերոյիշեալ դիտաւորութիւնս ես հար-
կադրեցի առժամանակ՝ մինչև առաջիկայ Զատիկ՝ չետաձգելու, որովհետև
ամառը, բացի այն որ Յունաստանի մալրաքաղաքում սաստիկ տաքութիւն
կայ, անտանելի է փոշին և միւս կողմից ես այն ժամանակ պէտք է չը կա-
լողանալի տունել իմ ուսանողական կեանքի աթենացի ընկերներին ու
ծանօթներին: Այսպէս՝ հելլենական կեանքի լուսաւորութեան կենտրոնից
սառժամանակ խոյս տալով ես ընտրեցի այն վայրերը, ուր անցեալում
սփռել էին այդ լուսոյ ճաճանչները: Խմ հաջ բարեկամն ու ես Զմիւռնիայից
մեկնելով ուղևորեցինք նախ դէպի Քիոս կղզին, աչտեղից ես գնացի
հռչակատար Զէչմէն (Փոքր-Ասիայի թերակղզու վերայ), ապա Բլըջա ջրմուղ-
ները, Ելեթրէ՝ աւերակները, Սամոս կղզին, Գուշարուաի (Սկալա-Նովա),
Փոքր-Ասիայի քաղաքը և Եփեսոս: Բաց մեր ուղևորութեան այս շրջանի
նկարագրութիւնը սկսելուց առաջ հարկ եմ համարում նորա սկզբնակէտի և
վերջնակէտի, աշխիւքն՝ Զմիւռնիայի՝ անցեալից և ներկայից սկսել, որի
մասին ես այլ առթիւ խոստացել էի «Մուրճ»-ի ընթերցողներին և չը պէտք
է մոռանամ գոնէ հարեանցի լինել իմ տեսած ցամաքային այն վայրերը,

որոնք թէ անցեալում մեծ դեր են խաղացել Փոքր-Ասիայի կեանքում և թէ ներկայումս մասամբ շարունակում են այդ՝ չը նախելով ժամանակակից կենտրոնացման դրութեանը, որ շնորհիւ շողեցանքի և երկաթուղիների՝ նաև այս երկրներում շատ զգալի է լինում:

Ինչպէս չափանի է, Փոքր-Ասիան և մասնատրապէս Իօնիան ¹⁾ Աթէնքից լուսոյ ճառագայթներ ընդունելով ոչ թէ կրաւորական դեր է կատարել իւր ցեղակիցների հրաշալի քաղաքակրթութեան պատմութեան մէջ, այլ ալն ժամանակների գիտական աշխարհին տալ է ամեն մասնագիտութեանց մէջ լուսատու գլուխներ և մի երկու բանում՝ նաև ազդուական անհատներ: Նախնի հայերն աւելի մօտ լինելով Փոքր-Ասիայի ձալներին՝ ի հարկէ աւելի սրանց միջոցով պէտք է ժամանակակից քաղաքակրթութեանը մասնակից եղած լինէին: Նոյն իսկ «լոյն» բառը ցոյց է տալիս, որ մեր Նախնիքը Նախ և աւելի այս ցեղն էին ճանաչելիս եղել, թէև մեր պատմութեան մէջ աւելի Աթէնքի ուսանողների մասին փշատակութիւններ կան: Ուստի մենք այս նկարագրութիւնն անելով՝ լիապէս ենք, որ հարցասէր հայն առանց հետաքրքրութեան չը պէտք է կարդալ իւր Նախնեաց դրացի այս երկիրների անցեալից ու ներկայից ինչ ինչ փշատակութիւններ, որ մենք իբրև ուղևոր՝ լարած ուշադրութեամբ որոնում էինք:

ԶՄԻՌՆԻԱՅԻ ԱՆՅԵԱԼԻՅ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՅ

Նբանք որոնք պէտք է բնակին Պատմութիւն ²⁾ (լեռ) վերայ՝ ներկայիս Մեքէի հանդէպ, երեք և չորս տեղամ երջանիկ պէտք է լինին:

Կլասիկ պատմագրութիւն:

Իմ վերջին ուղևորութիւնն անցեալ տարւալ «Մուրճ»-ի մէջ նկարագրելիս՝ ես խոստացել էի՝ այլ առթիւ գաղափար տալ նաև Չմիւտնիայի միւս բնակիչների մասին և մասնատրապէս խօսել այս նահանգի սոստիսական դրութեան վերաբերութեամբ, մի նահանգի, որ Օսմանեան պետութեան թագն ու պսակն են անւանել: Եւ անս աչսօր ցանկանում եմ խոստումն կատարել, միևնոյն ժամանակ այս շատ հետաքրքրական պատմական քաղաքի անցեալից ևս մի քանի շահագրգիռ տեղեկութիւններ տալով: Այս քաղաքի անցեալի մասին նիւթեր ձեռք բերի մի լուսարէն երկրի «Etude sur Smyrne» թարգմանութիւնից, որի հեղինակն գրել էր 1817 թ. Կոստանդին իկոնոմոս Այս հեղինակը հաւաքել էր իւր հայրենի քաղաքի վերաբերեալ հարուստ նիւթեր հին ու նոր պատմագրերից և ճանապարհ-

1) Որի քաղաքներէն է Զմիւտնիան: 2) Բաբոսի տնունով էլ:

հորդներէց: Յետոյ 1868-ին ալս դիրքը թարգմանել էր Բ. Ֆ. Սլաարս (B. F. Slaars), որ կցեւ էր նրան մի բնդարձակ չափւած:

Սակայն ներշնչման ուսումնասիրութեան փառքը ամեն իրատունքով Նանսիի պրոֆեսորներին է պատկանում. Լիեբոն 1866 թ., վեստ Բերնհայմ (Bernheim), Բօնիս, և Լիեժուան (Liègeois): Նանսիի հետազոտութիւններից վետոյ, ներշնչումն սկսեց ուսումնասիրուել և ամբողջ աշխարհում:

Մենք արդէն այս դէպի սկզբին ծանօթացանք ներշնչման մի քանի երևոյթներին հետ: Երբ մենք քնադածին մը առարկալ մի ուրիշի տեղ ենք ընդունել տալիս, երբ մի խօսքով գրչակոթը հրացանի ենք փոխում, կամ առակի ենք երեցնում նրան աչնտեղ, որտեղ առակի չը կալ, կամ երբ նրան ստիպում ենք պրոֆեսոր Լիւիս գառնալ ու սրա նման դատախօսութիւն անել, — մենք այս բոլորը անում ենք ներշնչման օրէնքով:

Այսպէս, ներշնչումն քնածի աչն ուղեղալին գրութիւնն է, որով նա ընդունակ է լինում կամ, աւելի ձիւղ ասենք, ստիպւած է լինում հաւատալ հիպնոսողի հայրարած մտքերին, որքան էլ անհիմն, անհաւատալի ու ցնորական լինին սրանք: Բայց հաւատալը բաւական չէ. ներշնչման հենթարկածը, իւր ամբողջ մտաւոր ու ֆիզիքական աշխարով, անձնատուր է լինում ներշնչած դաղափարին:

Երեւակալական աչդ ի: Ես ասում եմ քնադածին այս երկու բառը միայն. «դուք այդիտմն էք» և խորոն նա իրան աչդու մէջ է տեսնում: Նրա աչքին տարածւում է մի իրդէալական պարտէզ, իւր ծառերով ու ծաղիկներով, ալլէներով ու շատրւաններով. նրա աչքերը տեսնում են աչդին, նրա հոտտուլիքը զրում է ծաղիկների բուրմունքները, նրա ականջը լսում է թռչունների երգը կամ շատրւանի խշտը... Եւ այդ զգացողութիւնը աչքան վառ է, աչն աստիճան խարտալի, որ քնադածը վեր է կենում տեղից, դրօնում է երեսկայական ալլէներում, լաացում է ցնորական ջրով, քաղում է և փռնել կապում միայն իրան տեսանելի ծաղիկներին: Իսկ այս

միջոցին նրա դեմքը անսահման երջանկութիւն է արտապայտում, երբ նա հաստատում է մի վարդ, կամ ունկնդիր է լինում թուչունների երգերին: Բայց ահա նա լացւում է ջրի մէջ, ջուրը սառն է, մի քիչ անախտո՞ւ ու նա սրտիակալ սրբում է երեսը իւր գոգնոցով: Ահա նա մի վարդ է ուղում քաղել ու լանկարծ մի փուշ ծակում է նրա ձեռքը. նա զանգատւում է, երեսը ցաւ է արտապայտում ու նա լանում է մաաի արիւնը և ալլն և ալլն: Պէտք է ականատես լինել այս հրաշալի փորձերին, որ մարդ հասկանալ, թէ մինչև որ ատիժան կարող է քնաչածր լախտակել երեսակալութիւնով...

Պօլ Ժանէին հետեւելով մենք ներշնչումն կը բաժանենք երեք կարգի. Շարժումն երի ներշնչում, զգացողական ներշնչում և գործողութիւնն երի ներշնչում:

1. ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Նթէ հիպնոսողը ասի ենթակալին. «պատէք ձեր ձեռները իրար քամակից», նա կսկսի շարժել իւր ձեռները և կը շարունակի: Կամ ընդհակառակը ասէք նրան. «ձեր աջ թիւը, կամ ձախ ոտը, կամ երկու թեւերն էլ, և ալլն կաթածահարած են, դուք չէք կարող շարժել ձեր ձեռները, չէք կարող ոտի կանգնել» և հիպնոսածը անկարող է մի որ և է շարժում տալ իւր անդամներին: Ասեցէք նրան, թէ նրա ոտը միտած է լատակին, նրա ձեռը կպած է սեղանին, կամ նա ինքը ձուլւել է աթոռին, և դուք մի ծիծաղաշարժ տեսարանին կը հանդիսանաք. — քնաչածր իւր բոլոր ձիւղը կը թափի ոտը գետնից կտրել, կամ ձեռը սեղանից պոկել, կամ նստած տեղից վերկենալ, նա լուսահատական ցնցումներ կանի, բայց միտած կը մնալ իւր տեղը... Մենք կարող ենք միեւնոյն կերպով նրա «լեզուն կապել», կակաղել տալ: Այս դէպքում խղճալի է այն արեւատական համբը, որը բերանը լալն բացած, կոխողալին հնչիւններ է արձակում և ձեռը լուսահատութեան մէջ լեզւին ու չրթունքներին տանում, կարծես, աշխատելով արգելքը հեռացնել:

Ներշնչման այս օրէնքի վրա են հիմնւած այն «հրաշքները», որոնց կատարելու համար հարկաւոր չէ ուրիշ լինել:

Կան ալնպիսի նեարդալին արարածներ, որոնք լանկարծ կաթածահարում են մի ոտից, մի թիւից, կամ երկու ոտերից, երկու թեւերից էլ, կամ մարմնի կէսից և թող անդամաւոր՞ են գառնում: Նթէ մենք ալնպիսի հիւանդին տնամբուլիտմի մէջ դրենք և ներշնչենք նրան, թէ նրա թուլացած անդամը առողջ է, հիւանդը կ'սկսի շարժել ալն անդամը: Բայց այս մասին մանրամասն կը խօսենք երբ կ'ուսումնասիրենք հիպնոսիտմը, իրրե բուժական միջոց:

II. ԶԳԱՅՈՂԱԿԱՆ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐ

Պատրանք կամ Իլլուզիա (Illusion) — Յնորքներ կամ Հուլիւզինացիա (hallucination). —
 Իրական և բացասական յնորքներ — Սքինկներ:

Ներշնչման միջոցով մենք կարող ենք զարմանալի փոփոխութիւններ մտցնել տնամբուլի զգացողութեան մէջ: Մենք կարող ենք ներշնչել նրան, թէ նրա մարմնի մի մասը ոչինչ էլ չկա՛նք, ինչ որ մէջ կամ արթնանալուց չեստէ և ալ մասը մենք կը ծածկենք, կը կտրենք, կ'ալունք ու ճշմարիտ որ ենթակաւն աշինչ էլ զգալ: Նոյն կերպով մենք կարող ենք ազդել նրա տեսողութեան, լսողութեան, հոտոտելիքի ու ճաշակի վրա:

Հասկանալի է, որ ներշնչումները պէտք է չտալազանց բարձր լինեն: Քանի որ հիպնոսողը կարող է ներշնչել ենթակաւին ամեն ինչ, ինչ որ նրա ֆանտազիան ընդունակ է թելադրելու:

Զգացողական ներշնչումների միջոցով, մենք տնամբուլին զգում ենք պատրանքներ ինչ ու ցնորքներ մէջ, որոնց մասին անհրաժեշտ է մի պարզ գաղափար տեսնալ, որովհետեւ առանց նրանց ներշնչում չկալ:

ա. Պատրանք — Իլլուզիա (illusion, иллюзия):

Երբեմն մեր տեսած առարկաները կերպարանափոխում են ու ուրիշ առարկայի նմանութիւն տալով մեզ համար:—Ապոլիսի զգացողութիւնը պատրանք է կոչում:

Ապոլիս, մի լուսնակ գիշեր անտառի ծառերը մեր աչքին ձիաւորներ են երևում, աւազակներ, հրացանը ձիւններին և մեր հատից ընկած: Կիսաքնի մէջ պատրանքները աւելի լաճախ են պատահում, աչքովս որ «մի լուսի կծկել կիսաքնածին զանակի հարած է թւում, իսկ ճանձի լողալը—ամպի գոտայ»: Իսկ հիպնոսի մէջ մենք հեշտութիւնով կարող ենք իլլուզիաներ ներշնչել, և քանի որ իւրաքանչիւր զգալորանք կարող է համապատասխան պատրանքներ տեսնալ, սրանք լինում են տեսողական, լսողական, և ալլն:

Ապոլիս, Բիշէի մի հիւանդը գեղաշիշը զանակի տեղ էր ընդունում ու աշխատում էր փակել, որ չը վնասի իրան (տեսողական պատրանք), մի ուրիշը նաչատիր հոտոտելիս կարծում էր թէ օդը լի չորի հոտ է առնում (հոտոտելիքի պատրանք), երրորդը հատարակ ջուրը—լաւ բոլորովի գինու տեղ է լսում ու հարբում է, կամ խինան—շաքարի տեղ (ճաշակի պատրանք), չորրորդը մի որ և է թղկթղկոց լսելիս կարծում է թէ կրած շաւութիւն է լսում (լսողական պատրանք) և ալլն և ալլն: Հետաքրքրական են գէմքի փոփոխման ներշնչումները: Քնած ենթակաւի ներշնչումին, որ նա զարթնելիս տեսնի ալ ինչ անձին արծաթէ քթով, կամ սակէ աստամբուլով, կամ ալլանդակած գէմքով, տնամբուլը երկար միջոց զարթնելուց չեստէ կը տեսնի նոյն անձին ապոլիսի օտարտաքիթով ու աստամբուլով...

Այսին հետաքրքրական են ցնորքները:

բ. Ցնորք, — հալլուցինացիա — (hallucination — галлюцинация).

Պատրանքներ ներշնչելու համար հարկաւոր է, որ մի առարկայ ներկայ լինի, իսկ ցնորք լարուցանելու համար հարկ չկայ առարկայի օգնութեան դիմել, այլ ուղղակի մենք ներշնչում ենք քնադածին իւր հինգ զգարանքների միջոցով էլ զգալ բացարկ բաների ներկայութիւնը, կամ չը զգալ իւր առաջին զանազ իրերի ներկայութիւնը:

Այս հիման վրայ ներշնչած ցնորքները լինում են զրական և բացատարան:

Կրական — երբ քնադածը թէ քնի մէջ, թէ քնից արթնանալիս, տեսնում է, լսում է և աչլն. աչնպիսի իրեր, պատկերներ, գործողութիւններ, որոնք նրա առաջ չը կան: Բացատարան, երբ նա չի տեսնում, չի լսում և աչլն աչն իրերը, պատկերները և գործողութիւնները, որոնք նրա առաջն են:

Ցնորքները ստատիստիքելիս միշտ պիտի աչքի առնենալ հետեւեալ սկզբունքը:

Ցնորական առարկաները հիպնոսածի համար նույնպէս չոչափելի են և նույն պատկութիւններն ունին, ինչ որ իրական առարկաները արթուն մարդու համար:

Հիպնոսածի տեսած մարդը կենդանի, չարժաւոր, խօսող մարդ է, նրա տեսած ծաղիկը զոնաւոր, հոտալից ծաղիկ է և աչլն: Այլընայն քնադածը ոչ միայն համուած է թէ տեսնում է ցնորական առարկան, այլ և համուած է, որ չօչափում է, հոտոտում է, ճաշակում է նրան: Մի խօսքով ներշնչածը խաբւում է իւր բոլոր զգացմունքներով, իւր ամբողջ նկարագրին զօրութիւնով:

ա) Օրինական եր զրական ցնորքներ (hallucination positive):

Մեր առաջ բերած օրինակը (քնադածը երևակալական ապրում) բաւական էր ցոյց տալու, թէ մինչև որ աստիճան կարող է հասնել զրական ցնորքը, մինչդեռ մենք ենթակալին կարողանում ենք տեսնել, հոտոտել, լսել առ երևակալելի բաներ: Այն կերպով մենք ներշնչում ենք քնադածին, որ նա քնի մէջ, կամ զարթնելիս, առ ինչ տեղ աչ: Ինչ առարկան տեսնի, կամ աչ ինչ անձն գտնի և աչլն: Մենք ամեն օր քնադածների ձեռք տալիս էինք երևակալական թռչուններ, կամ շնիկներ, որոնց նրանք վազկալում էին, կամ ծաղիկներ, որոնց հոտից զմալում էին, կամ տեսնակը լցնում էինք երևակալական զաղաններով, որոնք սարսափ էին լարուցանում ենթակաների մէջ. Պ. Նիստուան մէկին տեսնել տեղ երեք տարի առաջ մեռած հօբը, մի տղայի — իւր եղբոր, որը ուրիշ քաղաքումն էր:

Շարք Միշեն հետևալն է պատմում. «մի օր հիւանդ կանանցից մէկը զանկանում է քնադածութեան մէջ մի գերեզմանատուն տեսնել: Երեւակաւ կան գերեզմանատան դռանը մօտենալով, նա անվճռադարար կանդ է տանում և լսումնում է, որ անկախօղ է ներս մտնել: Այս հրամարում եմ ստաջ դնալ, բանալ վանդակադուռն, մտնել գերեզմանի մէջ ու բարձրացնել խոտիւր: Այս վալքիւնին ալլ կինը աչնալիս իտրմունքի մէջ ընկաւ, աչնալիս մի տարտափ ու զալքով զգաց, որ ընկաւ հնցումնիւրի մէջ»: Մի խօսքով կան ենթականեր, որոնց մէնք, տաանց խտրութեան, ամեն տեսակ դրական զնորմունքներ կարող ենք ներշնչել:

բ) Օրինակներ բացասական զնորքներ (hallucination négative): Մենք կարող ենք ներշնչել ենթակալին, որ կարգալիս չը տեսնի որչեալ տատեր, կամ ձաշնաւորները, կամ ալս ինչ բարձաշները և նա զուրս կը թողնի ալլ տատերը իւր ընթերցանութեան միջից: Ալլիսը ալսալիս ներշնչում է անուս. «Ալտուղ ութ կին ու վից տղամարդիկ կան, երբ դուք կ'արթնանաք, ինձ միաշնակ կը տեսնէք»: Այս ձաշարիտ որ ենթական զարթնելիս պրոթի. Ալլիսին է միաշն տեսնում, նրա հարցերին միաշն պատախանում, նրա շաշալմունքը զգում, աչն ինչ միաշն անձերը նրա համար զուլթիւն չունին, նրանց ձաշն չի լսում ու միշն անգամ չի զգում, եթէ նրանցից մէկը ծակտալի նրան տակտով, կամ մի ուրիշ կերպ զրգուի: Մենք կարող ենք նաև տալիւ հիւանդատան արթնանալիս չը տեսնել շրջապատող անձերին, ալլ տեսնել նրանց կրած առալթները և աչն ժամանակ տարտափ է տեսնել ալլ խեղճերին, որոնց թւում է թէ գտակները ու տանամանները օլի մէջ կանգնած են ու լողում:

Մի տանտրուլի Ֆերեն ներշնչում է, որ զարթնելուց զետոլ ալլ ևս չը տեսնի նրան: Վից օր շարունակ Ֆերեն ալլ կնոջ համար զուլթիւն չունէր և աչն ամենք, ինչ որ կարող էր լիշեցնել նրան ալլ ընկին, մոտացւած էր:

III. ԱՆՁՆԱԻՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒՄՆ (CHANGEMENT DE LA PERSONNALITÉ).

Պատրանքների և զնորքների տաանմաալրութիւնը միգ մի շարք լարւածոլ վատտեր է տալիս:

Բաւական չէ, որ ներշնչումն վալթիտում է շրջապատող առալթաներից տաալած աղաւորութիւնները, բաւական չէ, որ ներշնչումն տեսնել, շաշալիւ և հինգ զգալարանքներով զգալ է տալիս բաշալալ առալթաներ և մալրիլի, կամ ընդհալաւալր անգալ է զարձնում ենթակալին զէպի ներկալ զանալ իրերը ու տնձերը, — բաւական չեն ալս միանգումաշն զարմանալի երեւթները, ներշնչումն միգ աւալի մեծ սիւրալրիլ է պատրատում. — ալս տանտրուլի անձնաւորութեան, նրա ևսի ներշնչական վալթիտութիւններն են:

Ստեամբուլին կարելի է քնի մէջ ներշնչել, որ նա զարթնելիս, կամ արթնանալուց մի որոշեալ միջոց վտուր, քաղցած կամ ծաւաւ կը լինի և նշանակած ժամին նա սաստիկ կը քաղցի ու կը ծաւաւի: Արեւի է նմանապէս նրան ցաւեր զգալ ստլ, կամ լուծել ստլ, կամ, ինչպէս կը տեսնենք մի քիչ վտուր, մինչև անգամ արիւնհոտութիւններ չարուցանել:

Այս դեռ բոլորը չէ: Ներշնչման ազդեցութեան տակ ստեամբուլը կը համոզի, որ ինքը մեղրամոմից, կամ ապակիից է չինած ու սաստիկ զրոյշ կը լինի, որ չը հաշի կամ չը փշրել:

Այս եռամսացութիւնը, ինչպէս ցոյց տուց Քիչէն, կարող է անձնաւորութեան փոփոխման հասնել: Այս գիտնականը ցոյց տուց, որ կարելի է ներշնչումով փոխել քնաչածի հատակը, սիւր և ամբողջ անձնաւորութիւնը: Քիչէն մի կնոջ ներշնչում է, որ նա զորապետ է, Հռոմի Պապն է, որ նա գերատան է, երեխա է, կամ քաղաղիչ է, կամ չուն է և ներշնչման ազդեցութեան տակ Լեյթական կերպարանափոխում է, աշխատելով զննելով նման պատերազմական հրամաններ ստլ, գերատանի նման ըստ վրա դեր կատարել, երեխայի նման խօսել ու խաղալ, կամ չան նման չորս ոտերի վրա մանկալ ու հաշալ և ավել:

IV. ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՅՆՈՐՔՆԵՐ

Մինչև արժամ մեր քննած ցնորքները երկու կողմանի էին:—Ներշնչածը երկու աչքով էր տեսնում, երկու ականջով լսում, երկու ձեռով շոշափում ցնորական պատկերները:

Բայց մենք կարող ենք մէկ աչքի, մէկ ականջի վրա միայն ազդել, աչն ժամանակ ցնորքը միակողմանի կը լինի: Այս ուղղութիւնով բաղմաթիւ փորձեր արեցան Գիւմինպալիէի ձեռով:

Այս բժիշկը բացում է ստեամբուլի աջ աչքը ու մի կտոր ոսկրտակ թուղթ ցոյց տալիս, ներշնչելով, թէ այս մի պատկեր է, վտուր փակելով աջը, բացում է ձախ աչքը և ատում է.—«դուք ոչինչ չէք տեսնում»:—Չարթնելուց վտուր նկատում է, որ ցնորական պատկերը երևում է միայն աջ աչքին, իսկ ձախը ոսկրտակ թուղթն է միայն տեսնում: Ահա մի ուրիշ աւելի զարմանալի փորձ:

Գիւմինպալիէն ստեամբուլի աջ ականջին ատում է «ինչ հիանալի եղանակ է».—իսկ ձախ ականջին՝ «անձրև է գալիս»: Աչն ժամանակ գէմքի աջ կողմը ուրախանում է ու ժպտում, իսկ ձախը ընդհակառակը սախտակալ է և տխուր:

Յիշած գիտնականը չի բաւականում սրանով:—Նա ավելի բարդ փորձեր է անում, միևնույն ժամանակ տեսողական և լսողական միակողմանի չուլմունքներ չարուցանելով: Քնաչածի աջ կողմին (աջ աչքին և աջ ականջին) ներշնչում են մի խնջուքի տեսողական ու լսողական ցնորքներ, աչն ինչ

ձախ աչքին տեսնել են տալիս մի շուն և ձախ ականջին լսել տալիս աղջան հաչը: Այն ժամանակ գէպրի երկու կողմը երկու հակառակ չուղմունքներ են ներկայացնում:

Յերեն լազմաթիւ փորձեր է արել գողներին ներշնչման մատնել: Օրինակ, նա ներշնչում է քնալածին թէ աչս սպիտակ կարտոնը կարմիր կ'երևի նրա աջ աչքին, իսկ ձախին—սպիտակ: Երբ ներշնչածը մէկ աչքով է նայում կարտոնին, կարտոնը կամ կարմիր է երևում կամ սպիտակ, իսկ երբ նա երկու աչքն էլ է բանում, աչն ժամանակ կարմիր ու սպիտակ գողները խառնում են և կարտոնը ներկւում է վարդագույն գողնով...

V. ՅԵՏԱԶԻԵՅԻ Կ ՅՆՈՐԱԿԱՆ ՆԵՇՆՁՈՒՄՆԵՐ

Մինչև այժմ նկարագրած ցնորական ներշնչումները կատարւում էին ներկայի կամ ապագայի համար: Ուրիշ խօսքերով, մենք ներշնչում էինք ենթակալին ցնորքների ունենալ քնած գրութեան մէջ, կամ դարձնելուց շատ թէ քիչ փտույ:

Փորձերից երևում է, որ կարելի է և անցեալի համար ներշնչումներ տեսել, առինքն կարելի է համոզել, որ նա մի օր, մի շաբաթ առաջ, մի խօսքով, անցեալում աչս ինչ բանը տեսել է:

Այսպիսի ներշնչումները չափանի են չեւ աղգիցիկ ներշնչումներ անունով:

Այս հանդամանքը, ինչպէս կը տեսնենք փտույ մի՞նք կարեւորութիւն ունի իրաւաբանական տեսակետաւորից, քանի որ կարելի է (առում են) աղբ միջոցով վկային կեղծ վկայութիւն անել տալ, ներշնչելով նրան, թէ նա աչս ինչ օրը ականատես է եղել աչս ինչ անցքին, օրինակ, մարդասպանութեան: Այս կեղծ վկան ներշնչման ազդեցութեան ներքոյ, ինքն էլ համոզւած լինելով, որ ականատես է եղել աչս երեսպաշտական մարդասպանութեանը, ամենահաստատու կերպով կը վկայի չը տեսած բանին:

Ե) Ներշնչաչին արիւնհոսութիւններ և վիրակէտեր կամ արնազրոյմներ, — Ֆոկաշոնի, Բոլորիւ և Բիւրօի, Մարիւի փորձերը, — Արնատառեր, — Նուրիզա Նատօն և վիրակէտեր, — Բացատրութիւն, ինքնաներշնչումներ:

Որքան աւելի խոր թափանցում ենք հիպնոտիսմի երևութները աչքան աւելի չիտթւում ենք մարդկային մտաւոր ու զգացական աշխարհի ընդարձակութեան առաջ...

Ո՛վ դիտէ, զեռ որչափ անտպասելի չափոնութիւններ պէտք է տալ մեզ հիպնոտի ուսումնասիրութիւնը և որքան զեռ անպատ աշխարհներ պիտի հետազոտի նա մարդկային հոգու խորքերում!...

Մեր մինչև այժմ պատմածը գրեթէ անհաւատալի էր, իսկ այժմ մենք պիտի մանենք մի նոր, անտպասելիքներով լի աշխարհ:

Շատ փորձեր ցուց են տալիս, որ ներշնչումն միջոցով կարելի է լինում մարմնի մի որոշեալ մասից արին հոսեցնել:

Ֆալտնի է, որ մարդ, երբ առանձին ուշադրութիւն է դարձնում իւր մարմնի մի մասի վրա, սկսում է ծախոցներ, տաքութիւն, մանր ցաւեր զգալ աչք մարմնամասի մէջ: Բժշկական ուսանողները, սառտիկ կտակածոտ լինելով, ամեն տեսակ հիւանդութիւններն, երեակաւում ու ամեն տեսակ ցաւեր զգում: Գիւմոնպալիէն ցուց տւեց, որ կարելի է ներշնչումով մարմնի մի որ և է մասի տաքութիւնը ավելացնել:

Բաց ամենից դարմանալին ներշնչական արիւն հոսութիւնն է:

1885 թ. մի ֆրանսիացի ղեղապորձ, ֆոպաչոն (Focachon) անունով, որը ծանօթ էր հիպնոտիսմին, հետեւեալ դարմանալի փորձն է անում մի հիպոտիքի կնոջ, Նլիզա Ֆ...-ի վրա: Պրոֆ. Լիւբօի, Բերնհարթի և ուրիշների ներկայութեամբ նա քնացնում է Նլիզային ու մէջքին կայցնում է ութ հատ պոստալին մարկաներ, ներշնչելով, թէ աչք մի մուշկալ է: Միւս օր առաւոտ բոլորի ներկայութիւնով արձակում են կապերը, պոկում են մարկաները ու տեսնում են, որ սրանց տեղը աչքան նշաններն երևում, իսկ երեկոցան, իրաւ որ, փամբուշտներ երեկցան, աչքինք՝ մարկաները ձիւղ մուշկալի դեր էին խաղացել:

Միւսնոյն աղջկալ վրա հետեւեալ տարին հակափորձ են անում, աչքինք՝ ուսիրն իտական մուշկաներ են կայցնում ու ներշնչում են նրան, թէ աչք մուշկաները ոչինչ ազդեցութիւն չեն ունենալ նրա կաշու վրա: Աւ իրօք, մի քանի ժամից վտոյ կաշին դեռ ոչինչ փոփոխութիւն չէր տալի:

Նոյն 1885 թ. պ.պ. Բուրրիւ (Bourru) և Բիւրօ (Burot) քնապածում են մի տղամարդի ու աչք ներշնչումն են անում: «Այս երեկոյ քնի՝ մէջ կը գատ իմ առանձնաբանը, կը նստիս բազկաթուռի վրա, կը խաչես ձեռներդ կրծքիդ ու աչք ժամանակ քո քթից արին կը վազի»: Նշանակած ժամին ներշնչածը գալիս է նստում ու բազմաթիւ բժիշկների առաջ նրա քթից արին է սկսում կաթիլ:

Նոյն գիտնականները աչք մարդու երկու թեւերի վրալ մի գուլ շուղի ծաղով զծում են: Ենթակալի անունը և ներշնչում են նրան, «Այս երեկոյ ժամի 4-ին, դու կ'ընկնիս քնի մէջ ու այս զծած խաղերով արին կը հոսալ ու անունդ արեան տառերով կը դրւի թեւիդ վրա»: Նշանակած ժամին ենթական ընկնում է քնապածութեան մէջ ու, ճշմարիտ որ, զծած տառերի տեղերը արինով լցում են, կարծրում ու մի քանի կաթիլար լին է կաթում շատ զծերից: Արեք ամից վտոյ տառերը դեռ նշմարւում էին:

Նոյնանման և դուշ, աւելի դարմանալի փորձեր արեց և բժիշկ Մարիլը

Լիւէիզա Լատօի (Louise Lateau) գէպք. վիրակէտեր

Այս փորձերը ներշնչալին արեանառութեան վրա մօտենում են աչք, միանգամայն անհաւատալի կարծւած, երեւթին, որը նկարագրեց Լիւտիլի պրոֆ. Դելբուֆը (Delboeuf):

Ապրիլի 24-ին 1868 թ. Զատիկից 12 օր անցած, իւր ամուսնութեան հինգերորդ օրը, մի 18 տարեկան կին, Լուիզա Լատո (Louise Lateau) անունով, որը մի տարի հիւանդ էր, ձախ ոտի վրա մի կարմրութիւն է նկատում և մի քիչ ցետոյ ալլ կէտից սկսում է արիւն կաթել: Հետեւալ ուրբաթ օր արիւնը կաթում է աջ ոտից, ցետոյ նոյնանման վերքեր չալսնւում են ձեռների վրա էլ, իսկ հինգ ամսից ցետոյ ճակատից էլ սկսում է արիւն կաթել:

Այդ դէպքը ահա ատիճան նորօրինակ էր, որ Ֆիրլուպի նման խոհեմ գիտնականն անգամ կարողալիս բացականչեց՝ «այդ կամ հրաշք է, կամ խաբէութիւն»: Այսօր, քանի որ կարողանում ենք փորձնական կերպով միևնոյնն անել, մենք ալ ևս չենք զարմանում Լուիզա Լատոի դէպքին, որովհետեւ նրա մէջ (ոչ հրաշք կա և ոչ խաբէութիւն):

Այլ կնոջ կեանքի ստատիստիքութիւնը ցոյց տւեց, որ նա մի սատարկ կրօնական մուսուանդ կին էր և գիշեր ցերեկ չէր մոռանում Քրիստոսի կրած տանջանքները: Նրա ուշք ու միտքը, նրա ամբողջ բանական աշխարհը լախտակաւ էր Փրկչի խաչի վրայ կրած ցաւերով: Հասնում է Քրիստոսի տանջանքի շարաթը, նա տեսնում է եկեղեցում բոլոր ծիսակատարութիւնները, Յիսուսի խաչելութիւնը, մահը, ցետոյ թաղման: Այս նեարդալին արարածը իւրացնում է Փրկչի տանջանքները, և նրա լարւած երեակալութիւնը նրան զգալ է տալիս նոյնալիսի տանջանքներ: Բայց ահա Յիսուսի տանջանքի շարաթը: Լուիզան ներկայ է եկեղեցական արարողութիւններին, նա տեսնում է Փրկչի խաչելութեան ու թաղման ծէսերը և այս նեարդալին կնոջ երեակալութիւնը ահա ատիճան լարման մէջ է ընկնում, որ Զատիկի առաջի ուրբաթ օրը նրա ձախ ոտի վրա խաչելութեան մեխի տեղը վերք է գոլանում, իսկ միւս ուրբաթ օրեր նոյնանման վերքեր բացւում են աջ ոտի, ցետոյ ձեռների վրա ու վերջի վերջոյ նրա ճակատից էլ արիւն է հոսում, ինչպէս հոսեց Յիսուսի ճակատից, երբ նրա գլխին փշեալ պսակ դրեցին... Չը մոռանանք, որ այս վերքերը երեւան էին գալիս ուրբաթ օրերը, այսինքն Քրիստոսի խաչելութեան օրը...

Այս աշխատանքի երկրորդ մասում, երբ կը խօսենք հիպնոտիսմի կրօնական նշանակութեան մասին, մենք ուրիշ օրինակներ առաջ կը բերենք կաթողիկէ եկեղեցական պատմութիւնից: Այս վերքերը չալսնիւ են ստիգմատ (stigmata) անունով, որը մենք վերաբերեալ կամ արեւոյն ազդած բան և բոլոր թարգմանեցինք:

Ուշագրութեան կենսորոնացման թէօրիան և ինքնա-նկերչնչումն (Autosuggestion).

Ներշնչման ալլ զարմանալի երեւոյթների ծագումն բացատրելու համար մենք ոտիպւած ենք ենթադրութիւնների գիմել: Ամենից հասարակը և իրողութեանը մօտ հիպոթեզն ահա է, որ այս բոլոր երեւոյթները առաջ են գալիս ուշադրութեան կենտրոնացումից, որը աւելի սատարիկ է քնալածու-

թեան, քան թէ արթնութեան մէջ: Մեր ներշնչումը լարում է սոնամբուլի ուշադրութիւնը դէպի նրա տեսութիւնը, լսողութիւնը ու արդարեւ ցնորական առարկաներ չարացանում:

Երբ որ ես ներշնչում եմ սոնամբուլին, թէ նրա առաջ առիւծ է կանգնած, ես դրանով տախտակ եմ նրան լարել իւր տեսութիւնը, իսկ որովհետեւ նա ամեն բանի հաւատում է, կը համոզւի, թէ զազանը աշտոն է ու արդ ժամանակ նրա բոլոր նկարողային զսանքը կենտրոնանալով տեսողութեան վրա, իրաւ որ ցնորական առիւծ կը տեսդի: Աւաջ ուշադրութեան կենտրոնացումն հաստատում է նրանով, որ մի քանի զարգացած անձեր պատմում էին, թէ երբ նրանք քնադածութեան մէջ մի ցնորքահար ներշնչում էին ստանում, անկարող էին լինում գիմարել ու տեսնում էին առաջներին ներշնչած առարկան, թէ եւ համոզւած էին, որ արդ պատկերը ցնորական է:

Առօրեայ կեանքի մէջ էլ մենք կարողանում ենք պարզ տեսնել մի տան, մի մարդու կերպարանք, մի անձ — հարկաւոր է միայն, որ մենք մեր բոլոր ուշադրութիւնը արդ առարկայի վրա դարձնենք:

Ինչպէս մենք տեսանք, զգաւան էակները աւելի լաւ կարող են խորասուզւել և այդ է պատճառը, որ Նուիլա Վասոն երեակակութիւնով խաչում է, որ խուլ Բեթհովենը երեակակութիւնով լսում է իւր զրած մեղոյիաները և կուր Միլտոնը տեսնում է գրախորի շրջութիւնը:

Այս խորասուզումն է, որ տախտակ է ծնողական ցածր զգալ մի կնոջ, որը մի ծննդականի երկունքի ճիշ է լսում, կամ ցաւ զգալ իւր աստմներում, երբ աստմաբույժը մի ուրիշի աստմն է քաշում: Մի աղջիկ, որը իւր սնդամալով հօրը խնամում էր, ինքն էլ սնդամալով դարձաւ: Այսպիսի օրինակները բազմաթիւ են: Միայն այն դէպքում, երբ այս երեկոթները նկատում են առանց հիպնոսոպի ներշնչման, ուշադրութեան կենտրոնացումն ինքն դառնում է ներշնչում և այն ժամանակ կենթական ընկնում է ինքն ա՛ն եւ ի՛նչ չմասն արդեցութեան ներքոյ: Այսպէս է բացատրւում Նուիլա Վասոնի դէպքը:

III. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԵՐՇՆՁՈՒՄՆԵՐԸ, (Suggestion d'aetes)

Անմեղ և քրէական ներշնչումներ. — Ներշնչումն 63 օր, 172 օր և մի տարի ժամանակամիջոցով:

Ներշնչողը կատարում է ամեն տեսած ներշնչած գործողութիւններ կամ քնի մէջ, կամ դարթնելուց վտայ:

Պարզիկ հիւանդանոցներում մենք ամեն օր ներշնչում էինք հիւանդներին, որ դարթնելուց մի շաբաթ, կամ երկու շաբաթ վտայ զնան, որ ինչ տեղ, այս ինչ բանը վերցնեն, տանեն այս ինչ տեղ և տան այս

ինչ մարդուն, ճանապարհին մտնեն ճաշարան, ուտեն այս ինչ կերակուրները, այս ինչ գինին խմեն և ալին:

Այս և սրանմանները անմեղ ներշնչումներ են: Բայց քանի որ քնադածը կամք չունի, ոչինչ չի արդելում մեղ նրան և լանցանքներ զործել սուր: Նստախի համալսարանում մեծ քանակությամբ ժողովներն արեւել, որոնցից հետեւում է, որ ներշնչումով կարելի է ենթակային գողութիւն, սուս վկայութիւն, և մինչև անգամ մարդապանութիւն, թռնաւարութիւն զործել սուր: Քնադածի ձեռքը սուլիս են մի որ և է, աւարկալ, օրինակ, մի քանոն, հաւատացնելով, որ այդ մի գաշտն է ու ներշնչում են նրան, թէ արկիւնաւարի նա կը տեսնի այս ինչ մարդուն դաւանաւոր կանգնած ու կը սպանի նրան: Հիպոթոսածը զարկնում է, ու սրտեալ լապէին իլլիւլիտայ (պատւանք) օրէնքին համեմատ, ձեռք քանոնը գաշտն կը դաւնայ, իսկ ցնորքի օրէնքին համաձայն, անւանած անձն կ'երեւէ նրա աչքին նշանակած տեղը ու այդ արթուն մարդը մի լապէ կը կարցնի իրան, խեղադարի նման վրա կը հասնի ուրախանի վրա և իւր երեսակապանը գանալը նրա կրօնքը կը խրի: Յետոյ կը սեննի, որ այդ մարդը բնկաւ, արկնչապաղ եղած ու ինքր, կարծես սխալեալով, կը սարսափի իւր եղեռնապարծութեան առաջ...

Քանի ժամանակ կարող է անցնել ներշնչման լապէից մինչև իրազործումն?

Ահա մի քանի ներշնչումներ երկար ժամանակամիջոցով:

Ն ե ր շ ն չ ու մ ն 63 օ ր ժ ա մ ա ն ա կ ա մ ի ջ ո յ ո վ:

Պ ր ո ֆ. Բերնհարթը պատմում է հետեւեալ ներշնչումը, որը կատարում է 63 օրից վառ: «1883 թ. օգոստոս ամսին ես առում եմ Ա.-ին, որը անասնորդական քնի մէջն է.—Նաւ լսեցէք. հոկտեմբերի առաջինը չարքաշարթի օրը գուր կը գնաք բժիշկ Լիւթօի տուն ու աշտեղ կը անանէք Հանրապետութեան Նախարարին, որը ձեզ մի մեղալ կ'ընծալի ու թոշակ կը կապի.—Կ'երթանք, պատասխանում է հիւանդը: Զարկելիս նա ոչինչ չի վերջում, ես նրան ուրիշ ներշնչումներ եմ անում և երբէք չեմ վերջնում նրան առաջինը: Հոկտեմբերի 3-ին (ներշնչումից 63 օր անց) առնում եմ բժիշկ Լիւթօյից հետեւեալ ստանք: «Անտոմբուլ Ա.-ն այսօր ժամը 10-ին եկաւ ինձ մօտ, մօտեցաւ գրադարանին և խոնարհ գլուխ տալով արտասանեց «Excellence!» (Չեղ պաշտօնաւորացութիւն) (գրական ցնորք) և ուրիշ անհամբերանքի խօսքեր: Յետոյ ձեռք պարզեց, ստեց. «Merci, Excellence!» (շնորհակալ եմ) և ալին:

Ն ե ր շ ն չ ու մ, որը կատարւում է 172 օրից վետք:

1884 թ. օրէնքի 14-ին, պատմում է Բոնիար, ես առում եմ օրիւրդ Ա.-ին, որը քնադածութեան մէջ է, թէ լանցարի 1-ին ես կը գնամ նրա մօտ Նոր-Տարին շնորհաւորելու: Յունւարի 1-ին այդ օրիւրդը հետեւեալն է պատմում իւր բնական: «Անտոմբուլն նստած էի, երբ մէկը գոտի թիկնի խեղցիկից և երբ ես ձայն տեղի. «համէցէք», գոտը բացեց ու ներս մտաւ սրբան Բոնիար,

որը մի թույլից չհատչեալ անհետացաւ ևս բացեցի լուսամուտը, նայեցի փողոցը, բաց նրան ալ ևս չը տեսայի:

Ներշնչում մի տարբի ժամանակով:

Եթէ չեմ սխալուած, ամենաերկար ժամանակամիջոցով արած հերշնչումն Վիեթնամի դէպքն է:

Հիմնականում երիտասարդ Պ. Նի-ին, Վիեթնամն ասում է նրան. «Մի տարուց չհասց դուք կը գնաք բժիշկ Վիեթի մօտ ու ջնդակաւորութիւն կը բաղնէք նրան ձեր վրա ունեցած խնամքի համար: Ահաեղ կը գան նոյնպէս մի շուն ու մի վարժած կապիկ, որոնք զանազան խողեր ցոյց կ'տան: Հինգ թույլից չհատչեալ ներս կը մտնի մի գնչու (ցիգան) իւր հետ մի ռուսալ արջ բերելով և կ'ուրախանալ իւր կորցրած շուն ու կապիկը վրաներով: Գնչուի գնալու ժամանակ դուք կը խնդրէք ու Վիեթից 10 տանտիւմ ու կը բաժնէք ալը գնչուին»: Մի խօսքով, Վիեթնամն ներշնչում է մի շարք ցնորքներ: Այս ներշնչման մեծ մասը ճշտութիւնով կատարուած է ուղիղ մի տարուց չհատչեալ, ներշնչած ժամին:

Մինչև անժամ անաջ բերած օրինակներից երևում է, որ թէ շարժումն երկի, թէ զգացողութիւնն երկի և թէ գործողութիւնն երկի: Ներշնչումն երբ կարող են կատարուել (աչդ ներշնչողի կամքից է կախած) կամ քնաչածութեան մէջ, կամ հիպնոսական քնից զարթնելու, կամ զարթնելուց մի քանի միջոց չհասց (մինչև մի տարի):

Ասկաքն բոլոր ներշնչումները անում են քնաչածութեան մէջ: Մենք կը տեսնենք որ կարելի է երբեմն արթնութեան մէջ էլ անել: Այս տեսակ ներշնչումն մենք կ'առանձնանք արանձնապէս Հմաչումն (Fascination) անունով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՅՔ

Մենք կ'ամենում ենք վերջացնել արժատուական քնաչածութեան հաստատ պատմութիւնը, մի ակնարկ գցելով հիպնոտի ապա չըջանի բնաորոշ լոտկութիւններէ վրա:

Քնաչածը կորցրել է կամքը, մոտաւոր արգելադրը կամ կոնտրոլը և այս հանգամանքից հետեւում է ալն զարմանալի անոլոպման գիւրահաւատութիւնը, որը քնաչածական օտարութիւններէ հիմն է:

Քնաչածի զգացարանքները, փշուղութիւնը ու մոտաբերումն համարեալ անհաւատալի բարման են համեմատ և այս է սրտաւոր (ինչպէս կը տեսնենք աշխատանքիս երկրորդ մասում), որ քնաչածութիւնը աչնչափ մեծ դեր է խողացիկ մարդկութեան կեանքի մէջ:

Զգալարանքի փշուղութեան ու մոտաբերման այս արտատուութիւնը լաւումն Վիեթնամ բացատրում է ուշագրւութեան կենտրոնացման

օրէնքով, որը կարողանում է պատրանքներ (ελλοβία) և ցնորքներ (καταπονηαία), իսկ երբեմն կարող է մինչև անգամ արնագրոշմներ ու վերքեր առաջացնել (stygmates):

Ներշնչման միջոցով հիպնոտողը փոխում է քնազածի զգացումները ու նրան ամեն տեսակ գործողութիւններ կատարել տալիս ոչ միայն քնի մէջ, ոչ միայն արթնանալիս, այլ և 6 ամիս, մի տարի ևս, — ոչ միայն անմեղ գործեր, այլ և ամենաանխիղճ չարագործութիւններ, ինչպէս պնդում է Նանսիի զպրօքը:

Սոնամբուէլիսմի ամենադարմանալի նշաններէց մէկն էլ աչն է, որ աչդ ննջի մէջ կատարւածը բոլորը մոռացւած է, երբ ես թաղան աւրթնանում է: Այս սոնամբուէլը, որի զգալարանքները աչքան լարած էին, որի վիշտութիւնը աչքանի վառ էր, որը գնում էր, գալիս, խօսում էր, որը աչքան ցնորքներ էր անեցել, վերջապէս նա, որը աչքան լիակատար կերպով ապրում էր և հիպնոտողի ներշնչումով ամենաբարդ գործողութիւններ էր կատարում և մինչև անգամ լանցանքներ, ոճիրներ էր գործում — այդ մարդը, հիպնոտական քնից զարթնելով, ամեն ինչ մոռանում է: Բոլոր զգացած, մտածած, կատարածը մի անկենթարթում անհետանում է նրա վիշտութիւնի միջից... Եւ դրա համար բաւական է միայն, որ հիպնոտողը վիշի նրա աչքերին... Հիմի, մի քանի ժամանակից ևս, քնեցրէք նրան կրկին ու այդ մարդը, որը արթնութեան մէջ ոչինչ չէր վիշտ, այժմ կր մտաբերի նախնիքաց քնազածութեան մէջ տեսած, տեսած ներշնչումը...

Իսկ եթէ ներշնչումն արթուն ժամանակ մոռացել է, ինչպէս է պատահում, որ չանկարծ նշանակած բոլորն ներշնչածը կատարում է տեսած թելադրութիւնը?

Հեղինակները աշխատում են այդ դժար խնդիրը մեկնել նրանով, որ մարդու միտքը ընդունակ է ժամանակի ընթացքը զգալ: Այսպէս, եթէ մենք գիշերը պարկելիս, մտադրենք առաւօտ, օրինակ, ժամը 6-ին զարթնել, շատ հաւանական է, որ նշանակած ժամին վեր կենանք: Ամենքին պատահել է մտադրել այս ինչ ժամին մի տեղ գնալ, կամ մի բան անել: Մինչև այդ ժամը մենք մոռացել ենք մեր գիտաւորութիւնը, իսկ այդ ժամին մի ինչ որ պահանջ ենք զգում, մի բան պահատում է մեզ ու մենք զգում ենք, որ մի բան պիտի անելինք:

Հիմի քնազածի վերաբերութիւնով գուցէ նոյն պիտի ենթադրել, միայն հիպնոտի մէջ առ «ժամանակի զգացում», ինչպէս և նրա բոլոր հոգեկան գործունէութիւնը չափադանդութեան է համեմատ և այս է պատճառը, որ նրանք կարող են աւելի երկար ժամանակամիջոցից ևս զգալ ներշնչումն կատարելու պահանջը:

Մենք վերը տեսանք, որ ոչ մի տպաւորութիւն անգամ չի մնում մեր վիշտութեան վրա և երկի ներշնչումներն էլ չենք կրնալ թողնում:

քննադատի ուղեգրում, փառքեր, սրտնք սրտնք ժամին կենդանութիւնն են տառնում ա. ապա ժամանակ ներշնչածը մի օտարտուր անգլիմագրելի պահանջ է զգում տաղած հրամանը կատարելու: Երբ հասնում է ներշնչածը կատարելու, ժամը, հենթաւան, որը մինչև աշտմար թուէն էր, բնկնում է կրկին քնաւածութեան մէջ, աչտինքն աչտը դրութեան, որի մէջ նա ստացել էր աչտը ներշնչումը: Այս է պատճառը, որ նա դիմում է գէղի ներշնչած հպատակը, առանց կշռելու, առանց գտնելու, — կողք մեքենայի նման առաջ է մղում, փակ դռները խորտակելով, գլխադրող մարդկանց հետ զարմանալով ուժով կռուելով, հաշտանալով, բաց անգլիմագրելի պիտի... Ներշնչումն նրա համար մի *idée* — *fixe* է, որին նա պետք է հասնի, թէկուզ ամբողջ աշխարհը գլխադրելով, թէկուզ կատարելուց փառք օրինակ, գոյութիւն կամ երևակաւորաւ մարդաստղանութիւն դրծելուց փառք նա կը խոտաւանի իւր մեղքը ա. կ'ափ, որ ինքն էլ չի հասկանում, թէ ինչի ազդարեց, որ մի ինչ որ անգլիմագրելի պիտի զգում էր նրան, «նա չէր կարող աչտը չ'աչտել»:

Ապազն չը պետք է կարծել, որ բոլոր հիպոթոզներին կարելի է ներշնչումներ սնել և որ ամեն տեսակ ներշնչումներ սնշուշտ կատարւում են:

Պարբերի տառնութիւն համաձայն, 100 հիպոթոզներից 15-ը միայն կարող են տառնութեամբ համարել իսկ այս 15-ից հինգը միայն ընդունակ են չարժանիքի և զգացողութիւնների ներշնչումներ տառնուել և միայն 2-ը (ապինքն 20%) — բարդ ներշնչումներ ընդունելու և իրադրծելու!!

Իսկ ինչ կը մեղադրի այն հարցին, թէ արդեօք ամեն տեսակ ներշնչումներ իրադրծւում են, պետք է պատասխանել. — «Այ»:

Բաղմաթիւ փորձեր ցուց են տալիս (ինչպէս կը տեսնենք այս աշխատութեան երկրորդ մասում, երբ կը խօսենք հիպոթոզմի մասին իրաւարանական տեսակետից), որ լաճախ ենթակա ընդգլխանում է, և թէ, թէկադրած գործարութիւնը նրա գառախարակութեան, համալմունքին ընդգլխմ է: Պրոֆ. Բրաւարդէլը (Brouardel) ասում է.

«Եթէ քննադատին զուրալի մի անձն նրան հաճելի կամ սնտարքեր ներշնչումներ սնի, նա կը հպտտակի, իսկ եթէ, ներշնչումը հակառակ է նրա անձնական զգացմունքներին կամ ընադրումներին, տառնուելու համարեա անգլիմակի գլխադրութիւն ցուց կը տալ»:

(Կը չարանտրի)

ՄՄԲԱՏ ԶԱՅԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

ԵՂԻՇԷՆ ՄԱԴԱԹԵԱՆԻ

(Նարունակութիւն և վերջ ¹⁾)

IV

Հիմք կայ ենթադրելու, որ Վեռնը եթէ ոչ մարմնով, բայց անգամ հոգով ու մտքով Շահազիզեան ինքն է։ Արդարեւ, իւր պօէմի առաջին զլխում չիշելով որ իւր սէրն էլ Վեռնի սիրոյ պէս անցածող փախճան ունեցաւ, հեղինակը նախազգուշացնում է ընթերցողին այդ տեսակ ենթադրութիւնից, բայց հէնց այդ անտեղի նախազգուշացումը աւելի ևս սաստկացնում է մեր կասկածը, մանաւանդ որ դորա համար չին պահասում և ուրիշ փաստեր։ Ինչո՞ւ Վեռնը «մի հին հայ տանից» է ծագում—որովհետեւ ըստ աւանդութեան մի այդ տեսակ տանից (Վամսարականներից) են սիրւած Շահազիզեանները։ Ինչո՞ւ Վեռնի ուսումնալացըրը Մոսկւան է և ոչ թէ մի ուրիշ քաղաք—որովհետեւ այդտեղ է ուսում առել Շահազիզեանը։ Ինչո՞ւ է հեղինակը բանաստեղծական ձիրք վերադրում իւր հերոսին—որովհետեւ նա ինքն ունէր այդ ձիրքը։ Ինչո՞ւ Վեռնը օտարութեան մէջ կարոտում է իւր պառաւ մօր տեսութեան, այն ինչ հօր մասին խօսք անդամ չը կայ—որովհետեւ այն ժամանակ, երբ հանդէս է գալիս Վեռնը, հե-

¹⁾ Տե՛ս «Մուրճ», № 3, 6 և 7—8.

զինակի հայրը արդէն մեռած էր և նա ինքը իւր մանր բանաստեղծութիւնների մէջ նոյնպէս միայն իւր «անգիտ» մօրն է յիշում: Ապա նկատեցէք, ինչպիսի հոգեզմայլութեամբ է Շահազիզեանը առաջնորդում իւր երևակայական հերոսին պօէմի առաջին երեսից սկսած մինչև վերջինը, ամեն քայլում բուռն համակրութեան ցոյցեր Վեռնի վերաբերմամբ, ամեն քայլում կայծակ ու որոտ Վեռնի հակառակորդների ու հարածիչների դիմին: Նա նրա հետ միասին ճանապարհորդում է, միասին ուրախանում, տխրում, ծիծաղում, լալիս, օրհնում, անիծում, դատում, խօսում, մի խօսքով միասին ապրում, միասին շնչում: Իսկ անջատման ժամից յետոյ ահա նա ինչպիսի խոստովանութիւն է դուրս թողնում բերանից.

Երբէք չը զգացի այնքան տրտմութիւն,

Երբ Վեռնի՝ հեռ ես բաժանեցայ...

Ա՛հ, մի կապարից, ճշող ծանրութիւն

Եկաւ և նստեց իմ կուրծքի վրայ...

Եթէ այսքան փաստերից յետոյ պարզ չէ որ Վեռնի տնւան տակ ինքը հեղինակն է թագնւած, զոնէ այնքանն անվիճելի է որ Շահազիզեանի ձեռին Վեռնը մի պործի է միայն՝ ազգային յառաջագիմութեան պայմանների մասին սեղհական կարծիքները յայտնելու: Բաժանել Վեռնից՝ Շահազիզեանի համար նոյնն էր թէ տեսնել սեպհական յոյսերը փշրած, օդի մէջ ցնդած, իրէալները ոտնակոխ եղած, ջախջախւած: Բայց որովհետև այդ յոյսերն ու իրէալները միևնոյն ժամանակ ժամանակակից հայ ինտելիգենցիայինն էին, այստեղից հասկանալի է «Վեռնի վշտի» հասարակական նշանակութիւնը. այդ պօէմը պատկերացնում է հին և նոր գաղափարների ու ձգտումների կռիւը այն անցողական շրջանում, երբ հնադարեան ասիական կարգերի ու ասանդութիւնների դերիշխանութիւնը մեղանում զեռ չէր խախտել հիմնովին և մեր հասարակութեան մի մասն էր միայն գիտակցական պահանջ զգում եւրոպական քաղաքակրթութիւնը իւրացնելու, բայց այդ մասն էլ դարձեալ անկարող լինելով վերջնականապէս թողնել հնաւանդ հակումներն ու սովորութիւնները, օտար քաղաքակրթութեան արտաքին ձևերն էր աւելի փոխ առնում, քան ներքին բովանդակութիւնը: Յանձին Վեռնի Շահազիզեանը մի կողմից մարմնացնում է իւր ժամանակի փոքրածիւ հայ յառաջադիմական-

ների՝ մասնաւորապէս «Հիւսիսափայլի» կուսակցութեան վերաբերութիւնը դէպի հին սերունդը և դէպի նորամուտ կեղծ լուսաւորութեան ներկայացուցիչները, միւս կողմից՝ այն փրկարար զաղափարները՝ որոնց իրագործումը անհրաժեշտ պայման է համարուում ամենայն, ապա ուրեմն և հայ հասարակութեան զարգացման: Աւոնը որքան դժական, նոյնքան էլ բացասական տիպ է: Նորա ոյժը իւր համոզմունքների անկեղծութեան և անկաշառութեան մէջ է, իսկ թուրութիւնը՝ իրական կեանքին անձանթ լինելու, կամքի անզօրութեան և անզործունէութեան մէջ: Յամենայն դէպս, նա աւելի համակրելի է քան հակակրելի, նորա թերութիւնների մի նշանաւոր մասը կարելի է արդարացնել զանազան պատմական հանգամանքներով, այն ինչ նորա արժանաւորութիւնները նրան մի ամբողջ զլխով բարձրացնում են իւր ժամանակակիցների խաւար բազմութեան միջից: Ուղիղ է, մեզանում այժմ ոչ ոք չի ծափահարիլ այն մարդուն, որ իւր ամբողջ գործունէութեան ընթացքում միայն այնպիսի այբբութեան հնչմարտութիւններ յայտնագործէ, որպիսի են նիւթալաշտութեան, եսամոլութեան, ստրկութեան, տղիտութեան... վնասակարութիւնը կամ խղճի և մտքի ազատութեան, մամուլի, դպրոցի, թատրոնի, բարեգործական և այլ ընկերութիւնների օգտակարութիւնը հասարակաց յառաջադիմութեան՝ և բարոյականութեան համար. այժմ այդ ճշմարտութիւնները ապացուցանելու հարկ չը կայ, բոլորովին այնպէս, ինչպէս Ալեքսանդր Մակեդոնացու մեծութիւնը հաստատելու համար աթոռները կոտրատելու հարկ չը կայ... Բաց այն, ինչ որ պարզ է մեր ժամանակ, մեծամասնութեան համար խնդիր էր մի քսան-երեսուն տարի առաջ, հետեւաբար Աւոնները իրանց շրջանում ոչ միայն աւելորդ մարդիկ չէին, այլ անհրաժեշտ էին, որպէս լուսաւոր և մարդասիրական մտքերի սերմնողներ: Ինչ վերաբերում է նրանց գործած սխալներին, այդ սխալների լուսւոյն արդարացումը մենք զանում ենք նոյն իսկ Շահազիզիանի խօսքերի մէջ. «Ժայռայեղութիւնը անմեկին ընկեր է ամենայն վերանորոգութեան (աւելի լաւ կը լինէր ասել՝ չեղափոխութեան). դորա բերած օգուտը այն է, որ դա դառն փորձերով և սխալներով քրքւրում է ներկայ կեանքի պայմանները և դոյն իսկ փորձերի շնորհով թողնում է ուրիշներին կանոնաւորել ապագայ կեանքը»:

Ի պատիւ մեր բանաստեղծին՝ պէտք է յիշել որ նա միայն ուրիշներին չը թողեց «կանոնաւորել կեանքը», այլ և ինքը յայտնի մասնակցութիւն ունեցաւ այդ կանոնաւորման գործում. ի զուր չէ որ իւր հերոսի բերանը նա այս խօսքերն է գնում.

Մեծ օգուտ ունիս և մեծ հետեանք,
 Եթէ, ասածիդ զործը յատաջէ
 Գործ այսուհետեւ, գործ և աշխատանք,
 Ասածիդ զործը թող վարձատրէ:

Արեւիկ է ենթադրել որ մեր հեղինակի կեանքի Ալեոնեան մոմենտը այն մտաւոր ժամանակն էր, երբ նա արդէն «հասուն երիտասարդ» եկաւ հայրենիք և անձամբ տեղն ու տեղը ականատես եղաւ իւր հայրենակիցներին տնուր վիճակին: Այդտեղից առաջած անմխիթար ապստորութիւններն էր երեւի՝ որ նա վերաբոսողեց «Ալեոնի վշտի» մէջ: Բայց հայրենասիրական թախծի և սրամտութեան առաջին ծանր բոլէնները անցնելուց յետոյ՝ Նահապիղեանը հասկացաւ՝ որ «գործը տառել է քան թէ խօսքը» և ահա նա ամբողջապէս նախընտրեց մանուկ սերնդի կրթութեան: Թէ ինչ արդիւնքներ է տւել մեր բանաստեղծը այդ ասպարիզում, այդ մենք ճշտիւ որոշել չենք կարող. թող խօսեն նրա բազմաթիւ աշակերտները, որոնցից շատերը այժմ՝ յայտնի դպրոցական և զրական գործիչներ են: Բայց և այնպէս մի առանձին հաճութեամբ ենք տեղ տալիս այստեղ մեր բանաստեղծի մի քանի մանկավարժական մտքերին, մտքեր որոնք անշուշտ չեն մնացել լոկ մեռեալ տառ, այլ քիչ թէ շատ կենդանի գործադրութիւն են դոնել Նահապիղեանի դաստանդութեան մէջ:

Նահապիղեանը պահանջում է կրթութեան զործը դնել զիտական հիմունքների վրայ. «մարմին, հոգի, միտք» — ահա այն երեք անկիւնաքարը, որոնց վերայ տրամադրում է այն բանը, որ ասում ենք մարդ: Նւ այս երեք անկիւնաքարը այնպէս են պնդացած միմեանց հետ, որ մինը առանց միւսի անընդունակ է կառարելութեան: Քաջառողջ մարմինը կրում է իւր մէջ և քաջառողջ հոգի. այս երեք բանը պահանջում են համապատշաճ անունդ և կերակուր: Ամենայն անձ ու անհատ ունի և անձնական ունակութիւն (որպիսութիւն). այդ ունակութիւնից առաջանում է և

դանազան խառնեած, որ են՝ արիւնացին, բարկացիտ, մեղամաղձոտ և մաղաւային: Սոցանից ծնւում են մանուկի մէջ և պէս պէս հոգու կարողութիւններ, որպէս տաղանդ, հանճար և ամենայն մարդկային հակամիտութիւն գէպի այս և այն առարկան: Բայց որքան արատաւութիւն և խորագիտութիւն պահանջելի է մանկավարժից, որ գոյն իսկ յատկութիւնները լինեն առանձին նիւթ նորա մտադրութեան. մի մազաչափ սխալը կարող էր խախտել և ներքին մարդու զեղեցկացարմարութիւնը: Հարկաւոր են հիտութիւն և խնամք, սէր գէպի մանուկը, որ ազագագում՝ պոպոտիք լինի այդ բանասոր ծառը: Այն, այս է հասաւտ ճանապարհը մանկավարժութեան. այս է, որ այսօրեան մանուկը, էգուց հասնելով անձնիշխանութեան, կարողանայ բարի քաղաքացի լինել, ներքին և արտաքին օրէնքներին հնազանդ:

Ասանկի առարկաների շարքում Շահապիգեանը առաջնակարգ տեղ է տալիս կրօնին, մայրենի լեզւին և ազգային պատմութեանը: Կրօնի փսեմ նշանակութեանը շատ ոգևորւած էջեր են նւիրւած «Առնի վշտում», իսկ մայրենի լեզու և պատմութեան զաստաւութեան մասին ահա նա ինչ է ասում՝ «մեր առօրեական չարն ու բարին» յօդւածում:

«Ամենայն աշակերտ, կարելի է ասել, մի բարոյական և մտաւոր ծնունդ է այն զրբերի, որ նա ուսել էր իւր մանկութեան օրերում. որպէս մի սրբազան չիշատակարան և աւանդ այդ աշակերտը զիտէ պահպանել դրանց երկար ու ձիգ ժամանակ մինչդեռ կենդանութեան շունչը խաղում էր իրանց երակներում: Ահա ինչու համար, եթէ մենք կամենում ենք որ մեր որդիքը իմաստասիրեն մայրենի լեզուն որպէս մի խորհրդաւոր նշանակ անձնապահութեան, զաստաւան սեղանի վերայ, գպրոցի հովանաւորութեան տակ պիտի սերմանենք շինութեան և բարօրութեան սերմը... «Եթէ լուսաւորեալ ազգերը ընդհանրաբար և իւրաքանչիւր մարդ առանձին, սովոր են պատուել մի շնչին նշխարք հնութեան, մի նշանախեց անցած դնացած օրերի, մենք ինչպէս մոռանանք մի լեզու որ երբեմն խօսել է և խօսում է մի ազգ, որը ունի իւր պատմական չիշատակարանները և բոլոր իւր մարդկային իրաւունքը. մեր հայրերը կրակից, արիւնից, երկաթից փրկելով տւել են մեզ այդ լեզուն, իսկ մենք, որպէս երախտապարտ որդիք, պիտի կապենք դրան մեր թոռներին»:

Բայց ով ուզում է գէթ մօտաւոր զաղափար կազմել թէ ինչ քնքոյշ սիրով է վառւած այդ մարդու սիրտը դէպի իւր սանիկները, թող կարդայ նոյն յօդւածի այս ծանօթութիւնը.

«Անմահ է մարդկեղէն սրտի զաստիարակ Արովեանը, որովհետեւ նա իւր աշակերտների համար կարող էր ասել. «էլի իմ, իմ ազիզ, իմ սիրելի աշակերտներն էին ընկել ետեւից՝ որ բալքի մէկ բան էլայ իմանան: Մէկ առաւօտ փանջարումը նստած՝ էլի մտքիս հետ էի ընկել՝ որ նրանք առաջովս անց կացան: Որ չը տեսայ նրանց, հօգիս տեղըհան էլաւ. իմ ու նրանց էն օրւան իրար տեսնելը՝ մի կարաց պատմիլ, որ սիրտ ունի, ինքը կ'իմանայ: Բալքի թէ զերեզմանում էս ձեր սէրը մտքիցս գնաց՝ այ իմ սիրելի, իմ ազիզ բարեկամք, թէ չէ, որքան էս կապուտ երկինքը գլխիս ա, շունչս բերանումս, ձեզ, ձեզ սուրբ պէտք է համարիմ՝ ինձ համար, ձեր արեւին մեռնիմ:—Նիթէ կամենալ՝ չոր ռացիօնալիստական տեսակէտից, այստեղ լողիկա էլ չը կայ. հարց՝ ինչու է Աբովեանը անմահ:—Պատասխան՝ որովհետեւ նա իւր աշակերտներին կարող էր ասել. բալքի թէ զերեզմանում էս ձեր սէրը մտքիցս գնաց՝ այ իմ սիրելի, իմ ազիզ բարեկամք... բայց ինչ ուզեն՝ թող ասեն տառակերները, ոչ մէկը մեր մանկավարժներից և բանաստեղծներից չէ ցոյց տւել այնպիսի մտքուր և սրտաշարժ սէր դէպի մանուկները, ինչպէս Շահաղիզեանը իւր այս երկառոյ «հակաորամաբանական» ծանօթութիւնով և կ'ասենք Աբովեանի խօսքերով—ով սիրտ ունի՝ ինքը կ'իմանայ, որովհետեւ, այո՛, սիրտն էլ իւր տրամաբանութիւնն ունի...

V

Ինչպէս «Լեռնի վիշալը» հեղինակի անձնական մտքերի և տպաւորութիւնների արտայայտութիւն լինելով հանդերձ՝ ունի և իւր հասարակական նշանակութիւնը, այդպէս էլ Շահաղիզեանի մանր բանաստեղծութիւնները իրանց սուբյեկտի բնաւորութեամբ հանդերձ՝ ունեն որոշ հասարակական տենդենցիա: Վաթսունից աւելի են մեր հեղինակի այդ մանր երգերը և նրանցից հալիւ մի քանիսը կարելի է մասնանիշ անել, որոնց մէջ արձագանք չը լինի գառած այս կամ այն հասարական երևոյթը կամ հրապարակաստական տրամադրութիւնը:

Չի կարելի սակայն ասել, որ հրապարակախօսական խնդիրները կենտրոնական դիրք լինեն բռնու՜մ Նահազիզեանի քնարերգութեան մէջ. և իսկապէս այդ անբնական կը լինէր, որովհետեւ աներեւակայելի է որ մի մարդ որ ծնւել է շքեղ այգիներու՝ թաղւած վեհափառ Մասիս և Արաղած լեռներին նայող մի գիւղում, Հայաստանի ամենանւիրական պատմական և եկեղեցական յիշատակարանների միջավայրում, մի մարդ որ իւր սկզբնական ուսումը ստացել է մի ամենատանում, որ պատանի հասակից կրել է կրծքի մէջ պանդխտութեան ծանր քարը, որ ճաշակել է սիրոց քաղցրութիւնն ու դառնութիւնը, — աներեւակայելի է, ասում ենք, որ այդպիսի մէկը սրտու՜մ դէժ մի հատիկ բանաստեղծական ձայն ունենայ ու չը ոգևորի հայրենիքի քաղցր յիշատակով, Արարչի մեծութեամբ, բնութեան զեղեցիկութիւններով կամ կուսի սիրով: Բայց հետաքրքրականն այն է, որ, բղխելով հեղինակի բարոյական էութիւնից, Նահազիզեանի քնարի այդ մոտիւններն էլ վերջ ի վերջոյ ձուլւում միանում են այդ քնարի հիմնական եղանակի հետ, և ամենից բարձր, ամենից ազդու հրապարակախօսական բարն է էլի որ հնչում է: Վերջնական տպաւորութիւնը որ դուք դուրս էք բերում Նահազիզեանի պօէզիայից, զուտ էսթետիկական վայելչութիւն չէ, այլ մի վայելչութիւն որ պատճառում են մարդկային պրոգրէսին անկեղծ հաւատացող մտածողի զաղափարները, հայրենիքի շահերին նւիրւած հասարակական գործիչի ազնիւ ձգտումները: Մենչպէս է փառաբանում Նահազիզեանը Աստուծոյ անունը: Նա նրա համար ոչ այնքան անճառելի էակ է, որ «ստեղծական մտք ոչ բնաւ չափի» որքան «Սէր և յաւերժ կարգ» իրրեւ փիլիսոփայ՝ նա ազատ է պահում իւր անձը ծիսական և դաստաբանական նախապաշարմունքներից («ճշմարիտ կրօն»), բայց իբրեւ հրապարակախօս լաւ է հասկանում՝ ազդային եկեղեցու նշանակութիւնը («Նզուխաներ և Ձէյթուն»), աշխարհիս վայելչութիւններից հրաժարւած միացնակեացին նա յորդորում է թողնել «միջին ալքերը» և նորից մտնել աշխարհ՝ հասարակաց օդտին սրբութեամբ զործելու («Առ հրաժարւածը»): Իւր հայրենիքն ու ծննդավայրը նա չէ սիրում այն տարօրինակ սիրով, որ ոչինչ չէ ուզում տեսնել բացի լուսաւոր կողմերից, այլ այն ճշմարիտ սիրով, որ չէ տալիս իրան խաբել թերութիւնների սուտ իդէալացմամբ («Աշտարակ», «Այն երազ

էր»): Գեղեցիկ գիշերը լոկ հաթեփկական զարծութիւնների աղբււր
է՛ք զառնում բանաստեղծի համար, այլ զրդում է նրան երգել «հա-
րենիքի պարծանք և սէր» («Գիշեր»): Վերջապէս, կուսի խանդակաթ
սէրն անգամ է՛ք իշխում երիտասարդ պոէտի վրայ, և սիրունու-
աղաչանքին նա պատասխանում է համարձակ.

Խաւար եմ ես, որպէս գիշեր,
Իմ չորս կողմին փոթորիկ.
Ձունի՛մ քեզ սէր, չ'ունի՛մ քեզ սէր
Նա սիրում է՛մ հայրենիք...

(«Ենձ մի սիրիր»):

Այսպիսով, կրօն, բնութիւն, սէր, ծննդափայր, հայրենիք, մի
խօսքով՝ այն ամենը, ինչից սնունդ է առնում Շահաղիղեանի լիրի-
կան, մոտում է մի ընդհանուր յայտարարի տակ, ստանում է մի ընդ-
հանուր բնորոշ լուսաւորութիւն ու գունաւորութիւն: Այդ ընդհանուր
յայտարարը Շահաղիղեանի աշալուրջ օգտախնդրական աշխարհահա-
յեցողութիւնն է. այդ լուսաւորութիւնն ու գունաւորութիւնը հայրե-
նասէր-հրապարակախօսի ակնոցներից են...

Այժմ եթէ քննենք Շահաղիղեանի բանաստեղծութիւնների
զրական-գեղարւեստական ձևերը, մենք կը տեսնենք որ նրա տաղանդի
միւլնոյն էական՝ հրապարակախօսական տարրը թափանցում է նաև
այտուղ: Ի՞նչ է Շահաղիղեանի լեզուն, ի՞նչ գեղարւեստական ձևերի
մէջ են ամփոփւած նորա ոգևորութեան մոտիւնները: Եթէ ուշադրու-
թեամբ հետեւի էք պարբերական հրատարակութիւնների լեզւին ու
ոճին, անկարելի է որ նկատած չը լինէք հետեւեալ երեւոյթը. լրա-
դիրներն ու ամսագիրները պարբերաբար կրկնում են միւլնոյն պատ-
րաստ, ատերէօտիպ խօսքերը, դարձւածները, նոյն խալ ամբողջ ան-
փոփոխ նախադասութիւններ: Ինչից է այդ: Դժուար է՛ հասկանալ.
հրապարակախօսը շտապում է արձանագրել եղիւթութիւնը կամ հա-
ղորդել իւր կարծիքը ընթացիկ հասարակական կեանքի երևոյթների
մասին. նա ոչ միջոց, ոչ էլ տաղանդ ունի գեղարւեստական պա-
հանջներին չարմարելու, ուստի նա զո՛հ է որ իրան ուղիղ են հա-
կանում: Եւ ու՛մ գլուխը կը զայ պահանջել՝ որ մի որ և է լրա-
զրական ուշադրութեօր, զաւտական թղթակից կամ նոյն խալ «տու՛ջ-

նորոգող» յօղաճներ զրոգ խմբազիր Ապոլլոնին զոհեր մատուցանել,
 թէ ինչ է մնի և ալիւրի զների մասին տեղեկութիւններ պիտի ստաց,
 կամ տեղական երեցիովսի զործունէութիւնը պիտի քննադատէ, կամ
 վերջապէս՝ պիտի հաշերին հասկացնէ որ Ներսիսեան դպրոցում՝
 horrible dictu! Մաշտոց չը կայ... Այդ և այդ տեսակ բաների
 մասին կարելի է գրել՝ ինչքան ուզենաք՝ աւանց վրդովելու Ապոլլոնի
 և մուգաների հանգիստը, հասարակ մահկանացուներին յատուկ լիզ-
 ւով: Սակայն նոյն իսկ աւելի բարձր նիւթը հրապարակախօսին չի
 կաշխանդում՝ զեղարւեստի պահանջներով, այն ինչ բանաստեղծին
 անխուսափելի կերպով կաշխանդում է: Հարց՝ ինչ պիտի անէ, տուգ-
 ծադործական խանապաղիւսից զուրկ հրապարակախօսը՝ պատահաբար
 դառնալով բանաստեղծ: Պարզ է որ նա ակամայ պիտի դիմէ կամ
 բանաստեղծութեան այն տեսակներին, որոնց կարելի է սպասուորել
 և աղքատ երեւակայութեամբ, որպիսի է գիլակաթիկական պօէզիան
 կամ՝ եթէ ունի ճշմարիտ բանաստեղծական ճաշակ (ո՛չ տաղանդ) և
 հաշուում է ինքնուրոյնութիւնից հրաժարւելու մոքի հետ՝ պիտի
 դիմէ փոխառութեան: Շահագիլղեանը, որին մենք այդպիսի ճաշակ
 ունեցող հրապարակախօսներից ենք համարում՝ այդ երկու սխառմին
 էլ հետևում է, ուստի աւանց ճշմարտութեան դէմ մեղանշած լինե-
 լով՝ կարող ենք ասել՝ որ այնտեղ, որտեղ նա ինքնուրոյն է, նա եր-
 դիծաբան է կամ ճարտասան (հրապարակախօս), իսկ որտեղ նա
 նմանող է կամ թարգմանիչ՝ այնտեղ է նա առաւել բանաստեղծ:
 Այդ է պատճառը որ թէ Շահագիլղեանի պօէմի և թէ նրա մանր
 բանաստեղծութիւնների մէջ կան բազմաթիւ ճշմարիտ բանաստեղ-
 ծական կաորներ, բաց ոչ «Աւոնի վիշաք», ոչ էլ այդ քնարերգա-
 կան բանաստեղծութիւնները ինքնուրոյն զեղարւեստական ամբող-
 ջութիւն չեն ներկայացնում: Աւոնը կենդանի զեղարւեստական
 տիպ չէ, նա պատկերանում է մեր առաջ ոչ թէ իրական յարաբե-
 րութիւնների ու ընդհարումների մէջ, այլ ճառերի ու դատողու-
 թիւնների մէջ: Աւոնին մենք չենք տեսնում, մենք նրան յտնում ենք
 միայն, այն էլ խիստպէս՝ ոչ թէ նրան, այլ նորա առջիւր կամ ետեւը
 կանգնած Շահագիլղեանին, որ Աւոնի մէջ իւր զաղափարներն է
 մարմնացնում: Նոյնը պէտք է ասել և վէպի մէջ զործող միւս ան-
 ձերի մասին, նրանք չեն երևում մեզ, նրանք ներկայացրած են զու-

նառ, անկենդան և հանդէս են դալիս միայն մտքեր յայտնելու, ճառեր ասելու և իսկոյն անհետ չքանալու համար. նրանք տխուր չեն, բնաւորութիւններ չեն, այլ այս կամ այն վերացական իդէալի մարմնացումն: Գուք վերջացնում էք «Աւոնի վշտի» ընթերցանութիւնը, ծալում էք զիրքը, և նոյն րոպէին մոռանում էք Աւոնին էլ, իւր սիրահուն էլ, հաչ վաճառականին էլ, հոգեւորականին էլ և ամբողջ չորս հագներգութիւնից բաղկացած վէպից ձեր գլխում մնում են միայն հեղինակի մի քանի մտքերը հաշոց կեանքը բարենորոգելու միջոցների մասին: Երբ մի գրեւծ ընթերցողի սրտում չէ տպււնւում ոչ անձեր, ոչ գէպքեր, ոչ զգացմունքներ, ոչ պատկերներ, այլ այդ ամենի փոխարէն տալիս է նրան չոր ու ցամաք մտքեր, — դա լաւագոյն նշանն է այդ գրեւծի ղեղարկատական թուլութեան, այդ տեսակ գրեւծը ստեղծագործական արդիւնք չէ, այլ շարադրութիւն, գրեւծ որոշ բնաբանի համաձայն: Այսպիսով բանաստեղծը ինչ բարոյական սկզբունքներ կամ քաղաքական համոզմունքներ էլ ունենայ, դիտմամբ ընթերցողի վզին չը պիտի փաթաթէ այդ սկզբունքներն ու համոզմունքները. նրանք կարող են բանաստեղծի ցանկութեան հակառակ՝ արտափայլել դրածում, բայց բանաստեղծի ստեղծագործութեան միակ նպատակը պիտի լինի՝ վերարտադրել, պատկերացնել այն երևոյթներն ու բնաւորութիւնները, որոնք այս կամ այն սրտածառով զրաւել են նրա լուրջ ուշադրութիւնը, յուզել են նրա սիրտը, ներգործել են նրա երեւակայութեան վրայ, նա պիտի վերարտադրէ, պատկերացնէ և դրանով իւր գործը վերջացած համարի, կրիտիկոսին, հրապարակախօսին կամ բարոյագէտին թողնելով այս կամ այն խրատը դուրս բերել գրեւծից: Գեղարեստի այդ հիմնական պայմանին «Աւոնի վշտը» չէ համապատասխանում. նա մեզ չէ ցոյց տալիս, չէ պատկերացնում իրերը, այլ ձգտում է մեզ մի բան ապացուցանել, հաստատել, համոզել մեզ, հետևաբար դա ճշմարիտ բանաստեղծական արտադրութիւն չէ, այլ դիւրակտիկական գրեւծ: Դիպակտիզմին յատուկ են ճարտասանական ձևերը, այդ է պատճառը, որ «Աւոնի վշտի» ինքնուրոյն ձևերը ճարտասանական են աւելի՛ քան գեղարեստական. նրանք եթէ աղբււմ են, աղբււմ են մեր մտքի կամ ջգերի վրայ, բայց մեր երեւակայութեանը գրեթէ ոչինչ չեն ասում:

Հնչ ազգ, ինձ ասան, ի՞նչ վարժապետներ
 Ունիս դու քո մէջ պատարաւիչ,
 Որ հատանէին խաւարի սերմեր
 Քո բարօրութեան այնքան խափանիչ:

Հնչ, ազգ, ինձ ասան, ի՞նչ ես ինձ տանջում:—
 Եւ լռում է ազգ, չունի պատասխան:
 Նոյ իւր արատաւքն է միայն սրբում,
 Եւ ցոյց է տալիս վէրքը խեղճութեան:

Նա կամի ասել, որ անսպասու եմ,
 Ուր շատ վարժապետ մտաւ և ելաւ:
 Շատ բաներ խօսեց լոկ և անխոհեմ—
 Եւ դորանով ցաւս չը թիթեացաւ:

Շահազիզեանի բանաստեղծութիւնները՝ շատ սակաւ բացառու-
 թեամբ, ասանոտեան են կամ ութոտեան, ուր սակայն ջանգերի
 և շեշտերի մէջ պատահում են շատ անկանոնութիւններ:

Օրինակ, նորա ամենաժողովրդական և գեղեցիկ «Երազ» ոտա-
 նաւորի մէջ պատահում են այսպիսի անկանոն կամ սխալ ջանգեր,
 որպիսի են մօտ էր—երազ էր, օրեր—երազ էր, թաց էր
 ձայն — ուրախութեան, մայրենի—զգացի կամ շեշտադ-
 րութեան սխալներ՝ կարկաչահոս—նա յստակ էր, կարօտա-
 գին — դնում էին և այլն:

Այժմ խնդիրը աս է թէ արդեօք իւր այդ պոետութիւն-
 ներով հանդերձ ինչ տեղ է բռնում «Առնի վշտի» հեղինակը հայոց
 դրականութեան պատմութեան մէջ: Շահազիզեանը իւր տեղն
 ունի մեր գրականութեան պատմութեան մէջ և պատճառն տեղ:
 Շահազիզեանը հանդէս եկաւ մի այնպիսի ժամանակ, երբ ռուսա-
 հայոց աշխարհիկ դրականութիւնը դեռ նոր էր ծնունդ առնում:
 Դրականութիւն, բառիս ճիշդ նշանակութեամբ, դեռ չը կար. Աբո-
 վեանի «Վերք Հայաստանին» և Պետրեանի «Սօս և Վարդիթերը» կազ-
 մում էին ամբողջ հայոց «փկազրութիւնը»: Գէորգ Բարխուդա-
 ղեանը դեռ չէր ներկացացրել եւրոպական կրթիչների թարգմանու-

թիւները, Բաֆֆին՝ իւր վէպերն ու պատկերները, Սունդուկեանը՝ իւր դրամատիքական գրածները: Գամառ-Քաթիպայի և Միքայէլ Նալբանդեանի մի քանի երգերով գրեթէ սպառուած էր մեր ամբողջ աշխարհիկ պօէզիայի բովանդակութիւնը:

Գրականութեան ամենաանհրաժեշտ գործին, գրական լեզուն, կատարեալ քառու էր ներկայացնում. պարբերական հրատարակութիւններից իւրաքանչիւրը իւր ուրոյն լեզուն ունէր. բառերի, ոճերի և վերջաւորութիւնների գործածութեան մէջ անխորութիւն էր տիրում: զրաբառը, դասաւարտաբանները և օտարաբանութիւնները մրցում էին իրաւունքների համար: Փոքր ի շատէ խիստ հետեւողութիւն մի անգամ ընդունեաժ կանոններին՝ էլի «Հիւսիսափայլ» և առհասարակ Նազարեանցի գրածների մէջ էր նկատուում Այդ լեզուն իւր համար օրինակ ընտրեց Շահաղիգեանը: Բայց ինչ կրթիչ բան էր ներկայացնում մեր հեղինակի համար հայոց «պօէզիան», ուրիշ խօսքով ասած՝ Նալբանդեանի և Պատկանեանի մի քանի երգերը: Արդարութիւնը պահանջում է խոստովանել որ այս երկուն էլ շատ աննշան ազդեցութիւն կարող էին ունենալ մեր բանաստեղծի վրայ, որ զարգացրել էր իւր տաղանդը ռուսաց և եւրոպացոյ ընտիր գրածների ուսումնասիրութեամբ: Եւ իրօք այդ ազդեցութիւնը մանաւանդ Պատկանեանի ազդեցութիւնը մենք չենք էլ նկատում ¹⁾ Շահաղիգեանի բանաստեղծութիւններում: Նալբանդեանը գոյց էլ ի կարողանար մեր բանաստեղծի նախորդը համարել. նա էր որ ձեռք քաշեց կեղծ-կլասիկական և՛ կեղծ-ժողովրդական ուղղութիւնից և ջանք արաւ իրական հողի վրայ դնել մեր բանաստեղծութիւնը: Բայց Նալբանդեանը շատ քիչ զրեց այդ ուղղութեամբ. նա ցրում էր իւր ոցները, միաժամանակ պարտալիւով և գիտութեամբ, և հրապարակախօսութեամբ, և հասարակական գործերով: Նոյա սակաւութիւ երգերում կայ՝ ճշմարիտ է, և անկեղծ զգացմունք և համակրելի միաք, բայց նորա բանաստեղծութիւնների տեխնիկական թույլ է. լեզուն աղքատ, ոճը զուրկ պատկերաւորութիւնից, ոտանաւորը շատ տեղ անկանոն և աններգաչնակ: Մօտաւորապէս միւլենոյնը պէտք է

¹⁾ «Ազատութեան ժամերի» մէջ միայն կայ մի երկ լոտ եղանակին «Մայր Արաքսի»:

ասել Վամառ-Քաթիլայի՝ այդ ժամանակամիջոցում՝ հրատարակած երգերի մասին: Որքան և զօրեղ է սորա բանաստեղծական տաղանդը՝ Նալբանդեանի տաղանդի համեմատութեամբ, այնու ամենայնիւ նորա երգերից և բանաստեղծութիւններից փշոջ մերթ ուռնատիկական, մերթ կեղծ-ժողովրդական հովերը չէին կարող դուր գալ Շահազիզեանին, ինչպէս որ չէին կարող օրինակ ծառայել նրան այդ երգերը իրանց թոյլ զեղարեւոտական ձևերով: Շահազիզեանը ուշ հանդէս եկաւ՝ քան Վամառ-Քաթիլայան և Նալբանդեանը, բայց նա նրանց աշակերտ չը դրւեց, այլ զսասկից: Նրանց հետ միասին և եթէ կամենաք՝ նրանցից աւելի՝ նա սեպհականեց մեր զրականութեան համար եւրոսկրան պօէզիայի մոտիւն երբ և բանաստեղծական ձևերը: Նա մշակեց մեր բանաստեղծութեան համար մի հարուստ և ազնիւ լեզու, որ թէև ազատ չէ հնարանութիւններից, բայց որից լաւ մենք մինչև օրս չ'ունենք: Նա առաջինը եղաւ որ տւեց մեզ հայկական իրական պօետի օրինակը և առաջիններից մէկն եղաւ որ տւեց մեզ աշխարհիկ լիրիկական բանաստեղծութիւնների նմուշներ: Թող նա թոյլ ինքնուրոյնութիւն ունենայ, բայց որքան էլ նորա «Լեռնի վիշտը» նման է Բայուրի «Չայրդ Հարովդին», նա էլի քնում է ճշմարիտ հայ բանաստեղծ, և Լեռնի հայրենասիրական թախիծը ոչինչ նմանութիւն չ'ունի Բայուրին համաշխարհային թախիծի հետ: Թող նոյն իսկ «Մեռնող հայրենասէրի երգը» որ մինչև օրս երգւում է թէ հայ մեծառան ապարանքում, թէ հայ շինականի խրճիթում, — թող նոյն իսկ այդ «Ազնիւ ընկերը» արձագանք լինի Վոբրովիւբովի մի երկտուն ոտանաւորի, բայց որ հայի ականջին են խորթ հնչում այս սիրուն տողերը.

Ազնիւ ընկեր, չը մոռանաս,

Անդաւաճան ջերմ սիրով

Ես «իբեղ եմ իմ» հայրենիք,

Գնաւ և դու նոյն շաւղով...

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ

(Ս. Շահաղիղեանին քննադատելու առիթով)

Պր. Սմբատ Շահաղիղեանի բանաստեղծութեան մասին պ. Մադաթեանի «Մուրճ»-ում տպւած քննադատական ջօղւածի առիթով, որը ֆիւրջանում է միայն ներկայ համարում, մամուլի մէջ շտապեցին կարծիք ապրնել: Մանր թւաց մի ամիս էլ սպասել մի դատ պաշտպանելու համար, որը, մի սմբողջ քառորդ դար ամենայն սառնասրտութեամբ մոռացութեան էր արւած: Մեզանում գրականութիւնը սպրում է առանց քննադատութեան: Ան դերը, որ կատարում է կրիտիկան գրականութեան զարգացման համար, աչդ կրիտիկան դեռ նոր նոր փորձերով սկսում է միայն ստեղծել: Շնորհիւ կրիտիկայի բացակայութեան, գրականութիւնը մնում է չը դնահատւած իւր ոչ լաւ և ոչ վատ կողմերից: Նոյն աչդ կրիտիկայի բացակայութեանն ենք պարտական, որ աչսօրւաչ օրս մի որ և իցէ քառորդ դար առաջ եղածը մեզ թւում է արդէն մեծ հնութիւն, որի հետ իբր թէ լետադաչ գրականութիւնը ոչինչ կապ չունի, ոչ լեզւի, ոչ բովանդակութեան, ոչ մտքերի, ոչ ոգու ու տեղեկնցլաների կողմից: Աչպէս է պատահել որ մեր նոր գրականութեան ամենաքնաորոչ գործքերից մէկը՝ «Աննի վիշտը» Սմբատ Շահաղիղի, ամենաքնաորոչը թէ լեզւի թէ գաղափարների և թէ ձգտումների կողմից՝ մնացել է բոլորովին չգնահատւած մեր կրիտիկայի կողմից և նոր սերնդի համար նա կարծես թէ գոլութիւն չունէր: Պր. Մադաթեանը իւր ջօղւածով ընդհանց աչդ ընդհանուր լուութիւնը և ցոյց տւեց, որ ան, ինչ աչդքան «մեծահոգութեամբ» լուութեան են տւել, տեղ է բռնում մեր թէ գրականութեան և թէ առհասարակ մտաւոր ու քաղաքակրթական զարդացման նորապոյն պատմութեան մէջ, և որ աչդ տեղը նա բռնում է ոչ իւր լացատական, աչ գրական կողմերով: Աչ է ընդհանուր տպաւորութիւնը, որ ստացւում է պ. Մադաթեանի ընդարձակ ջօղւածից: Նորա աչդ ընդհանուր մտքին համակարծիք լինելով, մենք ուրախութեամբ աչեցինք պ. Մադաթեանի ջօղւածը («Մուրճ»-ում), առանց որ մենք մեղ կապւած համարելինք ջօղւածի մէջ արտապաւած ամեն մի սողի, ամեն մի հայեալքի հետ և ոչ էլ պ. Շահաղիղեանի գրական գործունէութեան, նորա բանաստեղծական քանքարի և նորա պօէմի ու աչդ երգերի գեղարուտական և աչդ արժա-

նաւորութիւնների մասին «Մուրճ»-ը, իբրեւ օրդան, իւր վերջին խօսքը արտայայտած համարի պ. Մաղաթեանի լօղածով: Ընդհակառակը, մենք դեռ բաց ենք համարում աղ խնդիրներից մի քանիքը և ցանկալի ենք համարում որ կատարւեն ուսումնասիրութիւններ, որոնք ցոյց կը տան պ. Շահապլիի գրածների լեզւի կորովը և բանաստեղծական աւելներ, որոնք բաւ մեզ բուականապէս պնդաստութիւն չեն գտած պ Մաղաթեանի լօղածում:

Մենք սակայն չորհաւորում ենք պ. Մաղաթեանին որ նա նոցանիցն է, որոնք փորձում են զրական քննադատութիւն բոլորովին անկախ որեւէ անդիշական մանաւանդ թէ անձնական նպատակից:

Մեզ թւում է թէ պ. Մաղաթեանը իւր աղ ստաջին փորձը արել է իրան համակրելի մի բանաստեղծի վերաբերմամբ, և լատկապէս ի նկատի ունենալով պ. Շահապլիի բարձր նշանակութիւնը, որ ընդհանուր լուսթեան մէջ մոռացութեան էր արւած, բաց որը նա ուղեցել է հրապարակ հանել: Նորա աղ ցանկութիւնը համակրութիւն և խրախօս է գտել մեր կողմից. և, իրօք, մեր առաջադրած նպատակի մի մասին՝ մեր ժամանակակիցների համար վերակենդանացնել իւր հասարակական մօտիւներով համակրելի մի բանաստեղծութիւն, նպատակի աղ մասին մի լայնի չափով մենք հասած ենք համարում: Թողնենք թէ պ. Մաղաթեանի լօղածի աշն երեաները («Մուրճ» 1891 թ. № 12, երես 1562 և այլն), որ քննադատութեան է առնում պ. Տ. Յովհաննիսեանը, (տես «Մշակ» 1892 թ. №№ 12, 13) ինչ տպաւորութիւն կարող են թողնել շատերի վերաջ: Բաց մենք, որ չաւ մեծ հիւք ունենք չը կաւածելու: Պ. Մաղաթեանի զիտոււորութիւնը, նորա վերաբերմունքը դէպի Նազարեանցի, «Հիւսիսափայլ»-ի տահասարակ, Նալբանդեանի, Շահապլիեանի ուղղութիւնը (տես «Մուրճ» 1891 թ. № 3, 6, 7—8), մենք նաեւ բոլորովին ալ մտքով ենք ըմբռնում պ. Մաղաթեանի ալ խօսքերը, թէ «Անկեղծութիւնը պահանջում է խոտովանել, որ Վեոնը հէնց աղ տեսակ ֆրագեօրի տպաւորութիւն է անում»: Վեոնը, պ. Մաղաթեանի ասածով, մեր հայրենիքի մէջ պորտող ու գործող մարդ է և ոչ թէ մի խմբակիր, բանաստեղծ: Եւ նա գտնում է որ Վեոնը, որ իւր հայրենիքի գիւղերն է պորտում, աշնպէս է գործում կամ խօսում, որ ժողովրդի աչքում նա ֆրագեօրի տպաւորութիւն է անում: Իսկ պ. Յովհաննիսեանը զրանից եզրակացնում է թէ իւր պ. Մաղաթեանի աչքում Նազարեան, Նալբանդեան, Շահապլիեան ֆրագեօրներ են: Զօտով դուրս բերւած եզրակացութիւն չէ աղ արդեօք? Այո, մեզ թւում է թէ աղ եզրակացութիւնը զօտով է դուրս բերւած:

Պ. Մաղաթեանը պակասութիւն է գտնում Վեոնի մէջ որ նա իւր հայրենիքում չ'ընելով չ'իտմն չի ունենում իւր ժամանակաւ գործողների հետ և որ Վեոնը, բացի լոկ խօսքից, գործ չի կատարում: Գուցէ, աղպէս և կը նաղէր խնդրի վերաջ նաեւ Բաֆֆին, որը իւր բոմաններում չի բուական

նանում միայն քարոզիկ տալով իւր հերոսներին, այլ նրանց կատարել է տալիս գործեր, դուրս կորցելով խաւար ամբոխի միջից ժողովրդական մարդիկ, որոնց նա գործակից է դարձնում հերոսների ժողովրդական գործունէութեան: Արդ, եթէ դուք ժողովրդական գործունէութեան այլ նոր ձևի մէջըր համաձայնէք մեզ հետ չառաջադիմութիւն տեսնել, հապա ինչու դուք այդքան զայրանում էք պ. Մազաթեանի դէմ, որը Վեռնի գործերու եղանակի մէջ մի պակասութիւն է տեսնում: Ընդհակառակը, մենք պ. Մազաթեանի այդ հաշիւայքի մէջ նկատել ենք ոչ միայն բարի գիտաւորութիւն, այլ և ցանկութիւն, որ ժողովրդի մէջ գործող անձինք, ամենեւին չը մոռանալով իրանց իդէալները, իւրացնեն նաև ժողովրդական գործունէութեան գործնական եղանակները և չը խորչեն ամբոխից, այլ մտնեն նորա խորքը, չը վախենալով տիրապետող խաւարից և հէնց այդ խաւարի մէջ աչք ունենան տեսնելու ժողովրդական շարժնացած բոլոր շատ գործերի ընդունակ ուժերը:

Ա. ԱՐԱՅԻԱՆԵԱՆՅ:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ Վարդանի և Հայրց պատերազմի համար»
Թարգմանեց Հ. ՂՈՒԿԱՍԵԱՆՑ Թիֆլիս, 1891 թ.:

Այս գրքի մասին թէպէտ գրական քննութիւններ մեր պարբերական մամուլի մէջ ¹⁾, բայց մենք աւելորդ չենք համարում մի քանի խօսքնս ներքի նրան, որի կարևոր նշանակութիւնն ամեն մի հալ ըմբռնում է, ուրեմն և աւելի պէտք է հետաքրքրէ բանասէրներին նորա աւելի կամ պակաս ըմբռնութիւնը:

Գրաւարից մի ընտիր մատենագիր աշխարհարար թարգմանելը ներկայումս աւելի դժուար է, քան սորանից 30—40 տարի առաջ, չր նախելով որ գրաւարի գիտութիւնը անհամեմատ զարգացել է այս ժամանակաւի ընդունում, ուղեւ հն բաւական թւով հետազոտութիւններ, ձեռնարկներ, բառարաններ, որոնք նորաստում են աղ լեզուն լաւ ուսումնասիրելու, ուրեմն և լաւ հասկանալու և թարգմանելու: Բայց նորանում է, որ առաջ գրաւարի ուսումնասիրութիւնը գիտական ճիշդ հիմքի վերայ գրւած

չէր, ճիշդ որչաժ չէին բառերի սկզբնական նշանակութիւնները, բայց ստորաժ չէին լեզուի գրութիւնն ու լատկութիւնները իւրաքանչիւր դարում և տաճնձին՝ իւրաքանչիւր մատենագրի մէջ, գիտական քննութիւն չէր ենթարկւած լեզուն իւր բաղմատեսակ երկայնիւրով, մատենագիրն իւր բովանդակութեան, լեզուի ու ոճի կազմից, ամեն մի խօսք անսխալ էր համարւում, ամեն մի լեզուային երևոյթ պատգամ, որ պէտք էր ընդունել և գործածել: Այս գրութեան մէջ տաճմանտակ էր գրաւար լեզուն ուսումնասիրողի հարկանք, և վերի վերոց և կրտակատար՝ աղ լեզուի հասկացութիւնը: Այն ժամանակ գիւրին էր թարգմանել, որովհետեւ բաւականում էին թարգմանութիւնն աւատաքուստ նման և համապատասխան անելու բնագրին, իսկ թէ նեւ քուստ քննչիւսի մեծ տարբերութիւններ կային երկուսի մէջ՝ աղ ոչ թարգմանիչը կարող էր հասկանալ և ոչ ընթերցողը, որովհետեւ գրաւարի ուսումնասիրութիւնը լեզուի

¹⁾ «Մարտ» 1891 թ. նոյեմբեր, «Նոր-Դար» 1891 թ. № 2

արտաքին ձևերից առաջ չէր գնացել, այն էլ սահմանափակ, երկիւղած բարեպաշտութեամբ — անխորի, առանց քննութեան իւրացնելով եղածը և դործածելով:

Այժմ գրաբարի ուսումնասիրութիւնը շատ աւելի առաջ է գնացել. քննական ոգին, որ ամեն լատաջագիմութեան պարմանն է՝ մտել է ազգի լեզու մէջ. համեմատական լեզուալիստութիւնն ու բանասիրութիւնը մի կողմից, մատենագիրների լուրջ ու գիտական ոճով ուսումնասիրութիւնը միւս կողմից՝ շատ նոր երևոյթներ բաց արին ազգի լեզու մէջ. շատ բան, որ առաջ չէր նկատուում՝ սկսաւ հետզհետէ երևան գալ, ընդհակառակն՝ շատ նշանաւոր երևոյթներ, որ կոթողի նման հաստատ և անխախտա էին համարուում՝ կործանւեցան: Ընդարձակւեց մեր հալեացքը ազգի լեզուի վերաջ. մենք համոզւեցանք, որ մինչև այժմ շատ թերի էր մեր գիտութիւնն ու հասկացողութիւնը, և թէ ազգի լեզուն կատարելագոյնս գիտնալու և հասկանալու համար հարկաւոր է նոր ի նորոյ սկսել սովորել:

Մենք այժմ աչն դրութեան ենք, որ կարող ենք ասել՝ «զայս գիտեմ զի ոչինչ գիտեմ»: Ուստի այժմ անհամեմատ զգուշ է գրաբարից թարգմանել, քան առաջ. առաջ չէին էլ տարակրում, թէ իրանց հասկացածից տարբեր բան կարելի է հասկանալ մի խօսքից. այժմ հասկանում ենք, թէ ինչ-որ ուրիշ բան է պարունակում ազգի խօսքի տակ և ձը գտում ենք հասկանալու:

Այս կարճառոտ ակնարկը գրաբարի ուսումնասիրութեան հին և նոր

գրութեան վերաջ կարծու էր պ. Ղաւկասեանցի թարգմանութեան պարզ և ուղիղ գնահատութեան համար: Այս թարգմանութիւնը եթէ 30 տարի առաջ գուրա եկած լինէր՝ շատ չաջող պիտի համարէր, որովհետեւ աւելի քան համապատասխանում է լեզուի գիտութեան աչն ժամանակաւ դրութեան, իսկ ներկայումս՝ հազիւ մամուլի տակից գուրա եկած՝ նա հին է, չէ համապատասխանում աչն պայմաններին, որ մենք իրաւունք ունինք պահանջել Նղիշէի աշգման թարգմանութիւնից, մէկ խօսքով՝ գոհացել չէ: Յիրաւի թարգմանիչը, մի քանի պարակերէն բառեր և զենդական կրօնի վերաբերեալ տեղեր պարզաբանելու համար օգտուել է գիտական ազդիւրներից, մասնաւորապէս՝ հանգուցեալ Ք. Պատկանեանի «Հայոց բառարանի նիւթերից». բայց աչ ամենաքիչն է միայն արել թարգմանիչը: Ամենագլխաւորները — ուսումնասիրել հայերէն բազմաթիւ բառերի նշանակութիւնն և, զարում, ուսումնասիրել մատենագիրը մանրամասնաբար և պարզ ըմբռնել նորա լիմասուն — դժբաղդաբար աչ չէ արել նա. և աչ պատճառով շատ անգամ տնտեղի, անխնայ, հակասական մինչև իսկ անհասկանալի խօսքեր են պատահում աչ թարգմանութեան մէջ:

Իբրեւ ապացոյց մեր ասածին քննենք գրքի հէնց սկզբից մի քանի կտորներ (երես 9):

Բնագիր. «Նղիշէի պատմութիւն վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»:

Թարգմանութիւն. «Նղիշէի պատ-

մութիւնը Վարդանի և Հսոյց պատերազմի համար»։

Մէկի կամ մի բանի համար պատմութիւն գրել՝ նշանակում է գրել պատմութիւնը այդ անձի կամ առարկայի օղտին, նպատակ ունենալ, որ պատմութիւնը այդ անձը կարգաւ կամ որ ինքն իւր պատմութեամբ հասնի այդ բանին։ Եղիշէն պատմութիւնը գրել է Մամիկոնեան Գաւիթ երէցի համար, բայց ոչ մնւած Վարդանի. նա գրել է Վարդանի և Հսոյց պատերազմի մասին։

Բնագիր. «Բանն զոր պատմիրեցիր՝ արարի, ովք քաջ»։

Թարգմ. «Ինչ որ պատմիրեցիր՝ կատարեցի, ովք քաջ»։

Ըստ երևութին ճիշտ, մինչև իսկ լաւ թարգմանութիւն է, բայց իրապէս շատ և շատ թու ու պակասութիւններ կան բառը և. դարձում երբէք չէ նշանակում բան ագթմեան նշանակութեամբ—ինչ բան որ պատմիրեցիր, ինչ որ պատմիրեցիր։ Բան հին լեզուում նշանակում է բանակաճոռութիւն և բառերով արտայայտւած միտք, մի խօսքից սկսեալ մինչև մի ամբողջ շարադրութիւն։

Արիշ տեղեր թարգմանիչը ուղիղ է հասկացել այս բառը, իսկ աղտեղ մոլորակ է աշխարհաբարի և դրաբարի «բանն զոր» և «այն բանը որ» դարձւած քննելի արտաքին նմանութեան պատճառով։ Բայց բաւական է փնել «Զբանն առաջին (զոր) արարի վտան ամենայնի» նախադասութիւնը (Գործք. Ա. 1), — առաջին շարադրութիւնը (այսինքն Վովստու Աւսարանը) ևս գրեցի այն ամենանի մասին — համոզւելու համար, որ

ներկալ գէպքում ևս բան պէտք է վերցնել իւր սկզբնական նշանակութեամբ, որ միակ ուղիղն է։

Քաջ բառը թարգմանութեան մէջ տարօրինակ է։ Ընթերցողը կարծում է, թէ Եղիշէն ուրիշ որ և է կոչում չէ գտել Մամիկոնեան Գաւիթ երէցի, հոգևորական մի անձի համար, բայց քաջ բառից, որ մարմնի ուժ և սրտի անվնասութիւն է նշանակում, որոնք զարմար չեն հոգևորական անձին ավագոս լինելու, այն էլ ճարտասան Եղիշէի բերանում։ Քաջ բառը դրաբարում, բայց ագթմեան նշանակութիւնից՝ ունի և մի ուրիշ նշանակութիւն — զիւցաղնական ծագում ունեցող, ուրիշ Անշուշտ այս նշանակութիւնը հարկաւոր է վերցնել վերոյիշեալ խօսքում և այն ժամանակ կը տեսնենք, որ հանձարեղ մատենագիրը քաղաքավարութեամբ ակնարկում է Գաւիթ երէցի իշխանական (Մամիկոնեան) ծագումին։ Ուրեմն մեր բերած հաստատը պէտք է մօտաւորապէս թարգմանւած լինէր աղտակս։

Ես պատրաստեցի այն շարադրութիւնը, որ դու ինձ պատմիրեցիր, ով աղնւական (կամ իշխանագն)։

Բնագիր. «Կրում բազումք առաքինացան քան զոսկաւս»։

Թարգմ. «որի մէջ շատ շատերն առաքինացան»։

«Շատ շատերն» ասելու համար Եղիշէն կը գործածէր՝ բազումք լոյժ, կարի բողոմք, լոյտք, լորդալոյժք և այլն, և վերջապէս՝ չէր ստի բազումք առաքինացան քան զոսկաւս, այլ զոնէ՝ բազումք առաքի-

Նացան քան (թէ) սակաւք: Արտեղ ուրեմն մատենագիրն ուրիշ բան է ուզում տեսլ, կամ ալն, թէ շատերը (Հայտատանի հաւատացեալ ժողովուրդը) քչերից (ուրացեալներից) առաքինի հանդիսացան, ուրեմն՝ մի ծառանութիւնը փոքրամասնութիւնից առաքինի դուրս եկաւ—կամ թէ՛ սակաւք բաւի տակ հասկոնալով ալն սակաւութիւն հաճատալներին, որոնք հաւատքի համար մեռնելով կատարեալ լաղթանակ են տանում՝ մատենագիրն ուզում է տեսլ, թէ աղպիտի սակաւատրոններից աւելի առաքինացաւ մի՞ ըզմութիւն, ուրեմն՝ թէ Հայոց պատերազմում բազմութիւն մարդիկ աւելի առաքինի հանդիսացան քան սակաւութիւն ընտիր հաճատակները: Գուցէ այս խօսքն ուրիշ տեսակ էլ բացատրելի, չամենայն զէպս ալն չէ նշանակում, ինչպէս որ թարգմանել է պ. Ղուկասեանցը:

Բնագիր. «Նշանագրի չափս հեթն չեղանակիս»:

Թարգմ. «Նշանագրի չափս հեթն չեղանակիս մէջ»:

Նշանագիր գրաբարում լոկ նշանակում է գիր, ուրեմն նշանագրեւ պէտք է նշանակել գրեւ ոչ նշանագրեւ, որովհետեւ այս վերջին բառն աշխարհարարում ուրիշ նշանակութիւն ունի—ողտմանական նշաններով նշանակել:

Բնագիր. «Ղիրոցն պատու հուսն չիշխանէն արեւելից»:

Թարգմ. «Արեւելեան իշխանից պատու հաճ գործերը»:

Արեւելեան իշխան խիտ թալ է, արեւելեան իշխան կարող է նշանակել համարեւելի իշխան կամ Ա-

րեւելքում իշխանութիւն ունեցող, երկու դէպքում եւ կարող էին շատ ուրեւելեան իշխաններ լինել. մատենագիրն ստում է՝ Արեւելքի իշխան, ալսինքն Արեւելքի վերալ իշխող, որ ի հարկէ շատ տալի ուղի է եւ լարմարում է, աշխարհատասան Յաղկերտ արքայից-արքային, որի առաջ գործում էր՝ նոյն իսկ Բիւզանդիոնը:

Արտեղ եւ թարգմանելն հետեւ է սովորական ձեւին—գրաբարի լատկացուցին աշխարհարարում սոճակում է արտադրել, որ ուրիշ տեղ թէպէտ կարելի է, բայց սպտեղ ալլալում է մատենագրի միտքը:

«Պատահած գործերը» թարգմանելով մենք մատենագրին հակասութեան մէջ կը ձգենք, միթէ միայն երկրորդ գլխում է նա պատմում Արեւելքի իշխանից պատահած դէպքերը, ապա հինգերորդ գլխում պատմած «արեւելոց չարձակումը», եթէ ներթափում նկարագրում «խռովութեան գործերի շարունակութիւնը», վիցիրալի վերջում՝ թագաւորի հրատարակած ճերտմը—միթէ սոքա եւ նալն իշխանից պատահած գործեր չեն: Պատահումն բաւը թարգմանիչը վերցրել է արձման նշանակութեամբ, մինչդեռ գրաբարում նա խիտ ոտմանակակ նշանակութիւն ունի—լանկարձակութեան եւ միտնազոլութեան գողափար պարունակելով: Վերալիչեալ խօսքն ուրեմն պէտք էր թարգմանել դոնէ ալալէս:

Գործի սկզբն աւարութիւնը Արեւելքի իշխանի կողմից:

Յաջորդ երեսում (10) ալքի է ընկնում մանուտնի մի նախադասութիւն, որ սխալ թարգմանած լինե-

լով՝ կորցւում է ոչ միայն ամբողջ պարիսրութեան, բայց և գրեթէ ամբողջ բնծայականի խնամքը թաղամանութեան մէջ. որովհետեւ այդ նախադասութիւնը, որ ծառայում է իրական կոպ նախընթաց և հետեւող խօսքերի մէջ՝ խլում է, որով և խանգարում է խնամող արամաբանական հետեւողականութիւնը:

Բնագիրն ունի. «Այլ դու, ով մեծ ի գիտութեանն Աստուծոյ, առ թնչ արդեւք հրամայեցես, քան և թէ հրամայեցես սոյն լաւագոյն տղան: Արդեւք երեւ ինձ... երկնաւոր սիրտ է ի քեզ այս նշանակ, և ոչ երկրաւոր փառասիրութեան»:

Մատենագիրն հարցնում է Կաթիկէ՝ երկցին, թէ դու որ մեծ ես աստուծային գիտութեան մէջ՝ ինչո՞ւ համար արդեւք ինձ հրամայեցիր այս գիրքը շարադրել, քանի որ ինչպէս այնքան հմուտ ես, որ կարող ես հրամաններ ընդունել՝ լաւագոյն երկասիրութիւններ անելու¹⁾: Իւր ասած հարցմունքին պատասխանում է ինքը մատենագիրը. — սո նշան է, քս մէջ եղած երկնային սիրուն և ոչ թէ երկրաւոր փառասիրութեան: Որից փառք սիրտ մեծ նշանակութիւնը բացատրելով՝ մատենագիրն չափում է թէ

1) Բնագրի այս հատւածը քերականորէն պարզ է. բացի վերջ բերած ազատ թարգմանութիւնից նա կարող է և այդպէս համարուել. «Ինչո՞ւ համար արդեւք ինձ հրամայեցիր, եթէ ոչ որովհետեւ դու հրաման ես ոտադել լաւագոյնների մասին, (այսինքն սիրեցաւ ընդերքի խնամքը քննելու և այլն): Եւ ինձ երևում է, որ սո, յերաւել, նշան է երկնային սիրուն, որ պանուս է քս մէջ, և ոչ թէ երկրաւոր փառասիրութեան»:

այլ երկնային սէրից քաջութիւնով ինքը մոռանում է իւր տկարութիւնը և չանձն է ասե՛նում արած պատւերը:

Այս հատւածը պ. Աւետիսեան թարգմանել է.

«Բայց դու, ով մեծ գիտութեան մէջ, ինչ պատու է քեզ արդեւք, որ տալիս ես ինձ կատարելու անշուշտ լաւագոյն պատու է (?)» Եւ ինչպէս երևում է ինձ... ոչ թէ երկրաւոր փառասիրութիւն, այլ երկնաւոր սիրտ նշան է այս քեզանում»:

Հարկ չը կալ բացատրելու, որ թարգմանութեան մէջ նօտրադրաւոր հատւածը չէ կապում լոջորդ մասին հետ. «երկնաւոր սէրը» մէջ է ընկնում լանպատրաստից, չինովի կերպով, մինչդեռ բնագրի մէջ նա բնականաբար պալիս է: Բնագիրը պեղեցիկ խնամ է պարունակում, որի մէջ միտք մտքի հետ շղթայած են բնական կերպով, իսկ թարգմանութեան մէջ մտքերը կապած չեն և ամբողջ հատւածն տնձառակ և անխմտ է դուրս պալիս:

Անողիսի տնձառակիւններ պատահում են շատ տեղերում: Մենք կը բուռնութեամբ մէջ բերելով մի երկու հոտ ես, որոնք լոտնպարում կամ տնհատիւնովի են դարձնում իմաստը:

Եղիշէն գրում է. «Հաճախ թւի քանն ասաջի թագաւորին և ամեհալն մեծամեծացն, մեծաւանդ որ էին ասաջա կալք օրինացն: Թորաւրդ ի մէջ ասեալ՝ չաղթէր ի քստուն» (երեւ 24):

Պր. Աւետիսեանց թարգմանել է.

«Նաո հաւանեցին այս թոսքը թէ թագաւորը թէ ամենայն մեծամեծ»:

ները, մանաւանդ ներկայ եղող
կրօնականները, մէջները խորհուրդ
արին՝ և այս խրատը չաղթեց»։
Նրկու. խոշոր սխալ կա՞յ այս խոս-
քում. նախ՝ առաջակապ օրի-
նացն չէ՝ նշանակում ներկայ եղող
կրօնականները (և քերականօրէն ևս
չէ կարող նշանակել), այլ կրօնի
առաջնորդները, այսինքն մոգ-
պետները։

Իսկ երկրորդ սխալը, որ առաջ
է եկել խրատ բառն աշխարհարարի
նշանակութեամբ հասկանալուց՝ բոլոր-
ովին ազաւագում է միտքը և ան-
հասկանալի է զարճումս զնստապալ
զէպքերը։

Խրատ բառը ընտիր մատենագիր-
ների մէջ մեծ մասամբ նշանակում է
պատիժ, հարւած, չարչա-
րանք, և այս նշանակութեամբ դարձ
է անել և Նղիշէն։

Թագաւորն ու մեծամեծները խոր-
հուրդ են անում, թէ ինչպէս իրա-
գործեն մոգերի առաջարկութիւնը,
այսինքն կրակապաշտութեան դարձ-
նեն քրիստոնեաներին, և վճռում են
խստութիւն դարձնել (որով-
հետեւ միւս բոլոր միջոցներն արդէն
փորձել էին սողարդիւն կերպով)։ Աւ-
գիրաւի այս վճռից անմիջապէս վտաղ
սկսում են չարչարանքները, որոնց
նկարագրութեան նւիրում են Նղիշէի
չաջորդ երեսները։ Ուրեմն վերոյիշեալ
հասկածը պէտք է թարգմանել. «Այս
խոսքին հաւանեցան թագաւորն ու
բոլոր մեծամեծները, մանաւանդ նոցա
կրօնի առաջնորդները։ Խոր-
հուրդ անելով՝ աւելի չարժաւ
գտան խստութիւնն ու պա-
տիժները։

Գեհնապուհ շաղատան զարու-
տում է Նղիշէն, «չաղատութիւն
եկեղեցւոյ արկանէր թա-
ռաւութիւն» (երես 29), որ պ-
Ղովատեանցը բառացի թարգմանել
է «եկեղեցու աղատութիւնը ծառա-
լութեան տակ դրաւ» (երես 33)։ Չենք
կարծում, որ կարգացողը դարանից
հասկանալ, թէ իսկապէս ինչ է արել
Գեհնապուհ։ Թարգմանիչը Նղիշէի
գործածած աղատութիւն և ծառայու-
թիւն բառերը պահել է անփոփոխ,
սակալն դարս փոխել են իրանց նշա-
նակութիւնը։ Այս դարում ազատ (ի-
րաւարանական տեսակետից) կոչում
էր ազնական գաղտնագիրը, որ ազատ
էր հարկից, իսկ ծառաւ՝ հատարակ
ժողովուրդը, որ հարկ էր վճարում։
Ուրեմն վիշեալ հասկածը նշանակում
է, թէ Գեհնապուհ հարկի դրեց եկե-
ղեցու (եկեղեցական պաշտօնեաների
և կալածների) վերայ, որ առաջ ա-
զատ էր հարկից։ Մենք ալժամ կը հա-
կանանք՝ որ տատիճան պէտք է տա
գրողէր ամբողջ ժողովուրդը։ Հէնց
նախարարները Յաղկերտի առաջ ևս
վիշում են այս մեծ արտօնութեան
բռնարարումը. «Նա և ի սուրբ եկե-
ղեցւոյն, որ էր ազատ ի Քրիստոս
ըստ կարգի նախնեացն մերոց ի սկզ-
բանէ, և դու ընդ հարկաւ եղիր».
(երես 63)։

Պարտից նամակը Նղիշէի մէջ
սկսում է այս բառերով.

«Մի հրեա և իսկ հիւսիսի, հրա-
ման տաւար Նրան և Անիւսան,
Հալոց մեծաց սղջոյն շատ» (եր. 34),
որ թարգմանիչը առաւ-առ-տառ բա-
ւականացել է արտադրելով. բաց
պարզ է, որ դուրս գնել առաջին հինգ

բաւր—ծալրէ ի ծալր հին պարտերէն լեզուով—հասկանալի չեն լինիլ ալժմ հալ ընթերցողներին: Նշելէն եթէ զործածել է ալք և դորա նման ուրիշ պարտերէն պաշտօնական խօսքեր՝ նորա ժամանակակիցները կը հասկանային ալք, ինչպէս մինք ալժմ հասկանում ենք՝ երբ հալերէն լեզուով կարդում ենք—ֆինանսների միջնորդ, գեներալ-մայոր և ալն—ֆիշեալ խօսք, որ Միհրներուհի տխուրոսն է՝ հալոց պատասխանում ճիշդ թարգմանութեամբ դուած է «Միհրներուհի մեծի (վոլերի) հազարապետից (հրամանատար, կամ հրամատար) Արեայ և Անարեայ»:

Նշելէն ասում է, թէ Յազկերտ հրովարտակով Հալոց նախարարներին Պարսկաստան իւր մօտ կանչեց, բերում է 10 նախարարի անուն և լետոյ շարունակում է.

«Ձալս նախարարքս լախանէ լանուանէ կոչեցին ի դուռն. և կէսքն առ նմա ի սկէին ի կարաւանին, և ալքն ի կողմանց հիւսիսոյ ի լուանաց պահակին. թշրդեալ էր զոմանս ի նախարարացն արդէն լաշխարին Հալոց» (Էր. 58—9):

Թարգմանիչը գրում է. «Այս նախարարներին ահա անուն անուն կանչեցին թագաւորի դուռն: Սոցանից ոմանք հէնց ալնտեղ էին՝ զօրքի մէջ. ոմանք էլ հիւսիսային կողմերում Հոնաց պահակի մէջ էին, իսկ միւսները թողնւած էին Հալոց աշխարհում» (Էրեա 57):

Թողնելով ապտեղ մանր անձնորութիւնները՝ մի քանի անհիթեթեան ենք հանգլարում, զուրս է գալիս նախ, որ Յազկերտ հրովարտա-

կով իւր մօտ է կանչում արդէն իսկ իւր մօտ եղած մի քանի նախարարներին. երկրորդ, (ինչպէս գրած է շարունակութեան մէջ) «ամեն մէկն իւր սեղից», ապինքն որը Հոնաց աշխարհից, որ Յազկերտի մօտից, որն էլ Հալատտանից՝ գնում են Յազկերտի մօտ՝ «Յովսէփ մեծ եպիսկոպոսի ձեռքով միմեռն ուխտի վերաջ հաստատւած»: Երրորդ՝ նախարարներին թիւը, զոնէ նոցանք, որոնք Հալատտանում էին մնացել՝ խիստ նւազում է 2—3 մարդի չափ և ալն: Պարզ է, Յազկերտ ալք տան նախարարները կանչում է Հալատտանից—սուքա էին ալն «ոմանք», որոնցից թողել էին հալրինիքում, և որոնց լախանէ անուանէ ճանաչում էր թագաւորը. իսկ միւս հալ նախարարներից կէսն արդէն իսկ գտնւում էին Պարսկաստանում, ուրեմն կանչել հարկ չը կար, մի մասն էլ գտնւում էր Հոնաց պահակում:

Նշելէն պատմում է, թէ ինչպէս մոգպետը Հալատտանում Ղևոնդ երէցից փառաւոր ծեծ ուտիւրց լետոյ Վասակին գանդատում է եղածի վերաջ և հալերին կրակապաշտ դարձնելուց լուսահատւած՝ ստում է ի միջի ալոց:

«Ձի թէ էին զօրք աշխարհիս մոգք՝ ոչ ինչ խնալէին սուքա ի նոսա սատակմամբ» (Էր. 83), որ պ. Ղևոնդի անուն թարգմանել է՝

«Եթէ մեր աշխարհի զօրքերն անդամ մոլեր դառնալին, սուքա—(ապինքն հալերը) չլին խնալի նոցա էլ սատակեցնելու» (Էր. 77): Գուրտ է գալիս, որ մոգպետը մի շատ անմիտ բան է ասում, վերաւի հալերն

ինչո՞ւ պիտի խնայէ ինկոտորել մոգերին, եթէ պարսից զօրքերն անգամ մօղիս դառնալին. կարելի է կարծել, թէ ամէլի մեծ ակտորժակով կը կոտորէին, որովհետեւ մի հարածով թէ մոգ և թէ զինուոր սպանած կը լինէին: Թարգմանիչը սխալմել է մոգ բառից, կարծելով թէ դա գործ է անում միայն կրօնի պաշտօնեաների համար միայն, և աշխարհիս լառի « չօքը աշխարհաբարի նշանակութեամբ է վերցրել, որից պարսէնկէն լիչիալ անտեղութիւնը: Մինչդեռ մոգպետի խօսքը պարզ է. եթէ աչս աշխարհի (այսինքն Հայաստանի, որտեղ ինքը գտնուում էր խօսելիս) զօրքերն անգամ մոգ (կրակապաշտ) լինէին՝ սոքա (հայերը կամ հոգևորականները) նոցա էլ չէին խնայի ու կը կոտորէին: Մոգպետը չարտնում է իւր կարծիքը, թէ հայերը աչքան ջերմեանդ են քրիստոնէութեան մէջ, որ մինչև իսկ իրանց պահպանող զօրքերին էլ կը կոտորէին, եթէ սոքա հաւատալիս լինէին. ուր մնաց թէ Պարսկաստանից եկած օտարացի զօրքերին և մոգերին:

Նոյն մոգպետը չանդամանում է վատակին, որ սա դիմաւորով հանդերձ հայերի ջերմեանդութիւնը՝ չէ զգուշացրել թաղաւորին և պարտադանց է գտնել. զետոյ ասում է «Զի Կալ ժամս խմաստուն է իր՝ և ևս դիտէի. զաչս ոչ խմաստութեամբ գործեցիր: Ապա թէ ոչ չարտ է եթէ և զու ի նոցա բանի և» (Երես 88), որ աշխարհաբար թարգմանած է այսպէս. «Ուրիշ ժամանակ միշտ իմաստուն է իր, զիտեմ, բայց այս գործն իմաստութեամբ չը գործեցիր: Յայտ-

նի է, որ զու էլ նոցա հետ խօսք մէկ ևս արել» (Երես 81): Մոգպետի խօսքն անկապ և անխմատ է զուրս գալիս, որովհետեւ ամենին պարզ չէ. թէ հրեղից նա մակարեւում է վատակի դառնանութիւնը պարսից գէմնա առաջ մեղադրում է վատակին, որ անխելք է վարել, զգուշութիւն գործ չէ դրել, և զետոյ չանկարծ՝ ակտաղանցութիւն: Բնագրի մէջ մոգպետը շատ խելացի երկսպարարանութիւն է անում. — կամ, ասում է, զու անխելք ևս, կամ («ապա թէ ոչ», որ չէ թարգմանել պ. Ղուկասեանցը) ուխտադրում ևս:

Յագիկոտ, նախարարների կեղծ ուրացութեան վերայ ուրախացած՝ նոցա Հայաստան է ուղարկում, որ աշխարհի կրակապաշտ դարձնեն, «բազում ալրուձի գումարէր ընդ նոսա, և ի մոգոցն ոչ սակաւս, ամէլիքան զեւթն հարիւր վարդապետս չղէր ընդ նոսա» (Երես 71): Պր. Ղուկասեան այստեղը թարգմանել է. «շատ ալրուձի գումարեց, բազմաթիւ մոգեր և եօթն հարիւրից աւելի ուսուցիչներ զրեց հետները» (Երես 67): Գուրս է գալիս, որ բացի մոգերից պարսիկները կրօնի ուրիշ ստուցիչներ էլ են ունեցել, որոնցից 700 հոգի էլ Հայաստան են ուղարկել: Բայց մատենագիրը ըստ լրովն ուրիշ բան է ասում — «բազմաթիւ հեծեալգոր գումարեց նոցա հետ, նոյնպէս և ոչ սակաւ մոգեր, ամէլիքան եօթն հարիւր մարդ, ուղարկեց նոցա հետ իրեն ուսուցիչ, ուրմնաց 700 մարդը նոյն մոգերն էին, որոնք գալիս էին Հայաստան՝ մողական կրօնը սովորեցնելու:

Օրինակներ կարելի էր գեռ շատ բերել, բայց այսքանն էլ, կարծենք, բավական է ապացուցանելու համար, թե գրաբարի և մատենագրի ոչ լիովին ուսումնասիրութեան պատճառով, որչափ որ այժմս կարելի է — թարգմանութեան մէջ չաճախ պատահում են անտրամաբան, անհասկանալի և հակասական մոքեր:

Կառնանք ուրիշ կէտի, թե սրչափ չափող է թարգմանած գիրքն ընդհանրապէս, մի կողմ թողնելով վերոյիշեալ և նոցա նման անճշտութիւններ ու սխալները, արդեօք ոճի կողմից թարգմանութիւնն համապատասխանո՞ւմ է բնագրին, արտայայտւո՞ւմ է նորա գեղեցկութիւնը, կրտվը, նրբութիւնը:

Այս հարցմունքին պատասխանելու աւելի դժար է, քան անճիշտ թարգմանութեան օրինակներ բերելը: Մի կողմից չափնի է գրաբարի անհամեմատ հարստութիւնը և ոճը գեղեցկացնելու և նրբացնելու բազմաթիւ միջոցները, որոնցից այժմեան գրականական լեզուն բոլորովին կամ մասամբ զուրկ է. ուստի և անկարելի է աշխարհարար թարգմանս միւսից պահանջել այն ուժը, նրբութիւնն ու գեղեցկութիւնը, որ ունի գրաբար, այն էլ Նդիշէի նման ճարտարախօս մատենագրի բնագիրը, ու էլ որ լինի թարգմանիչը: Միւս կողմից՝ որովհետև թարգմանիչը նպատակ է ունեցել «ընթերցող հասարակութեան և ուսանող դասին» բաւականութիւն տալ և ոչ զիտնականներին՝ ուստի ընդգրկին աւելի մօտ թարգմանութիւնը թէև կարող էր մասամբ արտայայտել նորա նրբութիւնները՝ բայց

թարգմանութեան լեզուն աւելի ևս կը ծանրանար և դժարամտացելի կը լինէր ընթերցող հասարակութեան: Վերջապէս պէտք է ի նկատի ունենալ և անհատական ճաշակը, որի գոյութիւնը և իրաւունքը չէ կարելի ուրանալ. իսկ անհատական ճաշակը բաց է անուամ կամադականութեան դուռը, որ և ուրեմն անխտաափելի երեոյթ է ամեն մի թարգմանութեան մէջ: Այս պատճառով թէև կարելի է մեր քննած գրքից հարկւրաւոր օրինակներ բերել, որտեղ թարգմանութիւնն ասոր է բնագրից գեղեցկութեամբ, նրբութեամբ և կրտվով՝ բայց ամեն անգամ չենք կարող մեղադրել թարգմանչին: Միայն իրաւունք ունենք մեղադրելու նրան, որ նա չափ անգամ, աւանց հարկի, հեռացել է բնագրից, աւելցրել է բառեր ու նախադասութիւններ, որոնք ոչ միայն չեն ծառայում խոստով պարզելու, այլ ընդհակառակը հակասում են հեղինակի ոճին և մտադրութեան, չաճախ դուրս է թողել խօսքեր, որոնք երբեմն չափ կարեւոր են:

Այսպիսի օրինակներ բաւականաչափ մէջ է բերել պ. Մ. Ղազարեան «Մուրճ»-ի անցեալ տարւոյ նոյեմբերի դրքում. մեր կողմից աւելացնում ենք նոցա վերաջ մի քանի հատ ետ:

«Գործը գլուխ բերելու ժամանակը վեցերորդ ամիսը որոշեցին» (երես 68):

Նօտադրւած բառերը թարգմանչի աւելցրածներն են, և չափ կասկածելի է նոցա ճշգրտութիւնը. աւելի հաւանական է կարծել, թէ պարսկերէնը վեցերորդ ամիսը որոշել են:

գործն ու կուսակցական համար, որ մի տարւան մէջ պիտի վերջանար («ի նաւատարղէ մինչև ի նաւատարղ»)։ Այսպիսի կասկածելի, մինչև իսկ սխալ լսուած բնազդի մէջ անեւն անկարելի է։

«Ամբաստանութիւն վեր կացրեց մեր աշխարհի հազարապետի՝ Վահան Ամատունի ու գէմ» (Եր. 33)։

«Ապրտամբեց Աղւանից Վահէթ սպառնալուն» (Երեմ 251)։

Ենթադրենք, որ այդ հազարապետը Վահան Ամատունին էր և այդ թաղաւորը՝ Վահէն, բաց թաղամանին ազդ անուաները պէտք է զնէր ծանօթութեան մէջ և ոչ բնագրի։ Նզիշէն ազդ անունն չէ տալիս և թարգմանիչն իրաւունք չունի նորան ասել տալ ինչ որ նա չէ կամեցել ասել։ «Նրբ տեսան որ աշխատանքնդ նիւ չը կարողացան ձանձրացնել մեզ» (Երեմ 34)։ Նզիշէն առաջին գէմքն գործածում է միայն ինքն իւր մասին և ոչ հաղ ժողովրդի կամ նախարարների կողմից։ Թարգմանչի աւելցրած մեզ բառն ուրեմն սխալ է կամ հեղինակի ոճի տեսակէտից կամ իմաստով։

«Իմացած լինիք, որ այս ամեն ատածներս կը կատարեմ» (Եր. 63)։ Բողոքովն աւելորդ լսուած։

«Թէպէտ մենք հրաման չունենք բամբասելու մեր իշխանին»։ Նախպէս զուր և սխալ աւելադրութիւն։ Մեր բառը չէր կարող գործածել Նզիշէն, որովհետեւ այդ իշխանը (Յաղկերտ) Նզիշէն իշխանը չէր, և արդէն մնում էր, երբ նա գրում էր իւր պատմութիւնը Բնագրին տնի «զիշխան» — աւել իշխանին, — որ անհամեմատ

լաւ է քան «մեր իշխանին»։ Մենք կարծում ենք սակաւն, որ ազատեղ ընտրիքը խանգարած պէտք է լինի, և զիշխանն ձեռն փոխանակ պէտք է լինի զիշխանն (Ձիշխանն ժողովրդեան քո մի անարգեցեալ)։ և այս դէպքում մատենագրի խօսքը մի նոր նշանակութիւն է ստանում. «Թէպէտ մենք հրաման չենք ստացել, իրաւունք չունինք իշխաններին բամբասելու՝ բայց...»։

«Իրանց գերեզմանները կարծես իրանք էին փորում» (Եր. 88)։ Աւելացրած բառը դարձեալ հակառակ է մատենագրի ստանդին. նա պարզապէս ստում է «զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին» — ամեն մէկն իւր ձեռքով փորում էր իւր գերեզմանը։ Փոխանակ նաղեցնելու և կատկածի ենթարկելու մեր նախնաց առաքինութիւնը՝ լաւ է ամբողջապէս բմբռնենք և հասկանանք այն։ Դորան մենք չառ պէտք ունենք։

«Իրկեցողց զբաղումս ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր զոր բանիւք սպառնալեօք, էր զոր կապանօք և տանջանօք և էր զոր չարաչար մահաւմբ վախճանէր» (Եր. 8)։ Նօտապրած բառերը զուր են թողած թարգմանութեան մէջ։

«Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան տէրութեանն. եթէ հարկանին» չը զղան, և եթէ հարկանին չիմանան» (Երեմ 8—9)։ Թարգմանած է՝ «Մի ապալիսի կիրարկ եկել հասել է այդ տէրութեան վախճանը, ոչ ջարդակը» են զղում, ոչ ջարդակը (Եր. 16)։ Աւելի կենդանի, և որ զլիսաւորն է՝ ընտրելն հաւատարմ կը լինէր թարգմանել՝ «Չէնց աղապիսի մի վախճան է

ձեկը հասել ալլ տէրութեանը. եթէ աշխարհում տասն հազար հեծեալզօր զարկում են՝ չեն զգում, եթէ զարկում են՝ չեն հասկանում:

«Հրապարակ ուղարկիր դուսն, որ Ազոսանից աշխարհում գտնւած ալրուծին Հալստոսն դալ ձմերկու» (Եր. 82): Գուր է ձգտած ալրուծի քանակութիւնը—տասն հազար, որ տւելոյդ մանրամասնութիւն չէ՝ հատկաւալու համար Սասանեանների զինւարտութեան ուժը և մոկարեկեալ համար, թէ արշափ պարսիկ զօրք պէտք է գտնւեն Վրաստանում ու Հաղաւտանում, երբ Արտանքում ալլ փոքր

Խրեւ ազաւցոյց, թէ կարելի էր համեմատորար աւելի հաւատարիմ մնալ բնադրին, և նորա մանր նրբութիւններն արտաշարել փոքր ի շատ, առանց մնասելու աշխարհարարի պարզութեան՝ թարգմանում ենք բնադրից մի փոքրիկ հատւած և դէմը գնում ենք համեմատութեան համար Պ. Վուկասանցի թարգմանութիւնը: Մենք չենք սարակուտում, թէ ալս հատւածը կարելի է աւելի զաջող և բնադրին աւելի մօտիկ թարգմանել:

«Արշակունեաց ցեղի վերանալուց քնտոյ մեր Հալոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ցեղը, որ իւր իշխանութիւնը վարում էր մագական կրօնով և շատ անգամ կուտւում էր նոցա հետ, որոնք ալլ կրօնը չէին բնուանում. սկսելով Տիրանի սրբու Արշակ թագաւորի ժամանակից շարունակում էր այս կուր մինչև Վրամշապուհի սրբու Հալոց Արտաշէս թագաւորի վեցերորդ տարին: Այս երբ որոնք ևս թագաւորութիւնից հեռացրեց՝ հալ նախարարներին մնաց թագաւորութիւնը. որովհետեւ թէպէտ գանձը (հարկը) սրարից արքունիքն էր գնում՝ րալց հալոց ամբողջ հեծելազօրքը պատերազմում առաջնորդւում էր նախարարների ձեռքով: Այս պատճառով աստուածապաշտութիւնը Հալստոսանում պաժառանում էր արծակ-համարձակ, Դապուն արքայից արքայի իշխանութեան սկզբից մինչև Վրամի սրբու Յագեկրտ արքայից արքայի երկրորդ տարին, որին սասանան իրան գործակից գտաւ և իւր

Արշակունեաց ազգի թագաւորութիւնը վերջանալուց քնտոյ մեր հալոց աշխարհին տիրեց պարսիկ Սասանի ազգը, որ իւր իշխանութիւնն կառավարում էր մագերի օրէնքով և շատ անգամ կուտւում էր տալիս նոցա հետ, որոնք չէին մոռնում նոցն օրէնքների տակ. ապալէս կուտւում էր Տիրանի սրբի Արշակի օրերից սկսած մինչև Վրամշապուհի սրբու՝ հալոց Արտաշէս թագաւորի վեցերորդ տարին: Այս երբ որոնք էլ թագաւորութիւնից զրկեցին, ալս ժամանակ թագաւորութիւնն բնկաւ հալոց նախարարների ձեռքն, որովհետեւ թէպէտ հարկը պարսից արքունիքն էր գնում, տակաջ հալոց ալրուծին (զօրքը) ամբողջապէս նախարարների ձեռքովն էր ստաջնորդւում պատերազմի ժամանակ: Այսպատճառով էլ աստուածապաշտութիւնն ազատ համարձակ կատարում էր հալոց աշխարհում՝ արքայից արքայ Դապունի օրերից սկսած մինչև Վրամի սրբի արքայ Յագեկրտի երկրորդ տարին, որին

հաւաքած բոլոր թոնները դուրս թափեց և նրան լցրեց, ինչպէս մի կապարճ թունաւորած նետերով: Եւ (թագաւորն) սկսեց անօրէնութեամբ և զջիւրները չարմել, փրշում էր և կռակով փռել էր բարձրացնում աշխարհի չորս կողմը, Քրիստոսի հաւատացողներն՝ իրան թշնամի և հակառակորդ էր երեցնում և նեղւում, տանջւում էր անխաղաղասէր կեանքով:

Որովհետեւ նորան շատ սիրելի էին խռովութիւնն ու արիւնհեղութիւնը՝ ուստի ինքն իւր մէջ տարուբերւում էր, թէ որտեղ դուրս թափեմ իմ դառն թոններս, կամ որտեղ հանդէս հանեմ նետերիս բազմութիւնը: Եւ սաստիկ լիմարութիւնից՝ կատաղի գաղանի նման լարձակեց փռնայ աշխարհին վերայ:

ստտանան իրան գործակից շինեց, բոլոր հաւաքած թոնը թափեց նորա մէջ ¹⁾ և լցրեց նորան ինչպէս մի արժանաւոր կապարճ ²⁾ թունաւորած նետերով: Ակաւս գոռողանալ, անօրինութեամբ և զջիւրահարում էր և դուռնով ³⁾ հող էր հանում պէպի երկրի չորս կողմերը, աչնպէս էր ցոլց տալիս իբր թէ մենք Քրիստոսին հաւատացողներս, թշնամի ու հակառակորդ ենք իրան, և նեղանում արտօրում էր անխաղաղասէր կեանքով:

Եւ լատ ուրում նորա համար շատ սիրելի բաներ էին խռովութիւնն ու արիւնհեղութիւնն՝ ալս պատճառով ինքն իրան մոտատանջւում էր, թէ ում վերայ թափեմ արդեօք դառն թոնը, կամ ում վերայ արձակեմ ⁴⁾

¹⁾ «Ի՞նչ անեցի բաց» չէ կարող նշանակել թափեց նորա մէջ, այլ թէ ինչ որ առաջ հաւաքել պահել էր՝ այժմ դուրս հանեց:

²⁾ «Պատկերաբար» պարսկերէն բարբառ է նետերի պահարան, ուրեմն չէ կարող թարգմանել արժանաւոր կապարճ:

³⁾ «Իսկուով դուռն է փռել բարձրացնել, զբարբառ դուռն նշանակում է նաեւ կռակ, կռիւ պատրաստել: Այստեղ մատենագիրը փաղկերսին նմանեցնում է կատաղած ցուլի, որ եղջիւրները փրնուռում է կռակուհամար, փքւում է (դռու զանայր) և ամբակներով գետինը ծեծելով փռել է բարձրացնում (դուռնով հող հանել): Պ. Ղուկասեանցի թարգմանութիւնից չէ հատկացում մատենագրի այս նմանարանութիւնը: Մեր դրած «կռակութիւն» բառն էլ անյաջող է:

⁴⁾ «Ո՞ւր անցնուիցի» խօսքը չէ կարող նշանակել՝ ո՞ւմ վերայ արձակեմ:

բաղմաթիւ նետերը: Աւ անշտի շատ
լինարացաւ, որ հասաղի դազանի
նման չարձակուցաւ լունաց երկրի
մերտը:

Վախատանց, եր. 13--14):

Այս երկու թարգմանութեան մէջ,
մի կողմ թողնելով ալ, Վախատանցի
թարգմանութեան ալն տեղերը, որոնք
ձիշց չեն՝ մնացած տարբերութիւն-
ներն ինքն ըստ ինքեան մեծ բաներ
չեն. բալց զոքա նշանակութիւն ու-
նին: Որովհետեւ եթէ բնագրին հա-
րաւոր եղածին չափ հաւատարիմ լի-
նելը որ եւ է թարգմանութեան գըլ-
խաւոր արժանաւորութիւնն է՝ դա
անհրաժեշտ պայման է գառնում՝ երբ
թարգմանում է մի գառնական (clas-
sique) մատենագիր: Սոցա լեզւի
մաքրութիւնը, ոճի գեղեցկութիւնը,
մտքերի փոփոխութիւնը իղէալներ են,
որոց ձգտում են հասնել ալժման
գրագէտները: Աւ եթէ այս կարիքն
զգացում է ալն լուստարած ազգե-
րին մէջ, որոնք պարծենում են ի-
րանց ներկալ փառասոր գրականու-
թեամբ, կանոնաւոր լիւրով ու մշակ-
ւած, չլիւած ոճով՝ ուրչտի աւելի կա-
րուր է դա մեզ համար, որ զժրարս
ժամանակակիցներ ենք լեզւի բարե-
լոնեան խառնակութեան, որ արհա-
մարհում ենք ոճը, որ եթէ մտածում
ենք ինչ միտք արտադրուելու մա-
սին՝ երբեք չենք հոգում, թէ ինչ
կերպով արտադրուենք ազգ միտքը,
— կը հասկանան — ազգ բաւական է մեզ
համար: Իսկ մի գիրք, որ իւր հե-
տաքրքրական լուսնակութեան
պատճառով ծաղկէ ի ծաղր ազահա-
լար պիտի կարդացւի ընթերցողնե-

րից՝ անշտալ զգալի չափով օգտա-
կար ազգեցութիւն կունենալ նոցա
լեզւի ու ոճի վրայ, եթէ նորա ոճն
ու լեզուն մի-երկու ատարիճանով բարձր
լինեն: Այս պատճառով վերոլիւնալ
մանր տարբերութիւնները մի երեսի
մէջ՝ ամբողջ գրքում տաւարանում են
եւ մեծ նշանակութիւն են տաւանում
գեղարւոտական լեզւի ու ոճի տե-
տակէտից:

Որովհետեւ խօսքը լեզւին եկաւ՝
չենք կարող աշակրտութիւն չը դարձ-
նել ալ. Վախատանցի գործածած փե-
րականական մի ձևի վերայ, որ խիստ
անախորժ սպաւորտութիւն է թողնում:
Խօսքս ալն ն գրի մտալն է, որ թարգ-
մանիչը գործ է ածում միալանկ բա-
սերի լոյնակի եւ ը վերջաւորութիւ-
նից առաջ, փոխանակ գործածելու
մե ի, ձ ե ի, ի բ ա ն յ գ երանումը —
մ է ջ ն եր ն առան (իրանց մէջ, կամ
մէջներն առան), շատ կոտրել էին
մո յ ն եր ու մը (իրանց մտքում,
մտքերում), ձ ա ճ ն եր ը բարձրաց-
րին (իրանց ձայնը, կամ ձայները)
եւ ալն: Այս շատկութիւնն ունի ա-
րեւմտեան լեզուն, միայն այս ստորե-
րութեամբ, որ ն-ի տեղ գործածւում
է նի-ս, նի-դ, նի-ն որ գրւում է միա-
լանկ բառերի եղակի ուղղականի
վերջը — մտքեր-նին, ձայներ-նին, քա-

Բացառել կամ բացաղբել նշանակում է
զուրս գնել, զուրս հանել, հանդէս հա-
նել, ախպէս եւ գէն գնել, հեռացնել:

դուք-նին, թագաւոր-նիս, ձեռքեր-
նէս, մտքեր-նէդ: Բայց մեր արեւ-
ելեան զրոսեան լիզւում դա աննպա-
տակալարմար է, որովհետեւ բազմա-
վանկ բառերի վերաջ, որոնք մեր
լիզւում անհամեմատ շատ են միա-
վանկներից՝ չէ կարելի այդ գործա-
ծել, ճիշդ չէ, որովհետեւ երրորդ դէմ-
քին լողը չէ կարող ծագակել առա-
ջին և երկրորդ դէմքի համար ևս —
մէջնի րս առանք, մտքն երդ
դրեր: Անտոնատոր չէ, որովհետեւ լողը
չէ կարող զրուլ բառի արմատի և
հալոթական մասի մէջ, ալ միաջն
վերջը: Այդպիսի գործածութիւնը մի-
աջն մի հետեանք կունենալ — միա-
վանկ բառերի չորհակին էլ ներ
մատնիկով կազմել, որ ամենեւին ցան-
կալի չէ, ի նկատի ունենալով մեր
լիզւի մէջ բաղաձայնների կտտա-
կութիւնը, որոնցից հնար եղածին
չափ պէտք է խոյս տալ և ոչ թէ
բաղմայնել նոյա թիւը արեւատական
կերպով, ինչ-որ երեւակալական նրբու-
թեան համար:

Բացի այ. Մ. Ղազարեանի նկա-
տած լիզւակին սլակատութիւններից,
որոնց մենք համաձայն ենք՝ ուրիշ
չափ նկատելու արժանի կէտեր կան
այ. Ղուկասեանի թարգմանութեան
լիզւի մէջ: Բայց դոյա մասին մենք
առիթ կունենանք խօսելու ուրիշ
տեղ, մահաւանդ որ այս լողածը մեր
կարծածից աւելի երկարացաւ:

Մինչև այժմ մեր ասածներից և-
րիւում է, դոնէ մենք տրոպէս համոզ-
ւած ենք, որ այ. Ղուկասեանցի

թարգմանութիւնը դժայցուցիչ չէ ոչ
իմաստի ճշդութեան և ոչ լիզւի ու
ռճի կողմից: Մենք իրատեք ունէինք
լուսալու, որ այ. Ղուկասեանցի նման
փորձած աշխատատիրի ձեռքից ելած
թարգմանութիւնն անթերի ու ան-
պարտաւ կը լինի, որ նորա մէջ մին-
չև իսկ ուղղած կը լինին Յղիչէի բնա-
գրում (գրաբարում) սղղած մի
քանի աղաւաղութիւնները, որոնք
մինչև այժմ թողած են անուշաղիր:
Ահա այս խոյս չէ արդարանում ներ-
կալ թարգմանութեամբ:

Վակա՞ն անիրաւութիւն արած
կը լինէինք՝ եթէ տրանսով վերջաց-
նէինք մեր խօսքը: Մենք բոլոր մա-
մանակ քննում էինք զիրքն աջ սե-
ռակէտից, թէ ինչ կարելի էր անել,
իսկ երբ եղածը կարդում ենք, առանց
բնաղբի հետ համեմատութեան, ա-
ռանց մանրակրկիտ քննութեան՝ ընդ-
հանրապէս դժայցուցիչ սղաւորու-
թիւն ենք ստանում, իսկ համեմատու-
լով նրան մեր գրականութեան հրա-
սլարակում երեցող միւս գրածքնե-
րին հետ՝ գտնում ենք նոյն իսկ շատ
լաւ, շնորհակալութեան արժանի գործ,
թէ նիւթի ընտրութեան և թէ կա-
տարումի կողմից, որի ընթերցումը
ցանկալի և օգտակար ենք համարում
հատարակութեան համար:

Ի դէպէ կարեւոր է ուղղել 222-րդ
երեսում պատահած սղաղբական խո-
շոր սխալը — «քո սլատի բաղմակից
մարդկանց ուղղում ես կոտորել», պէտք
է լինի՝ սլատի երեսից:

Սփ. Մալխոնեցի:

Նոր առաջած գրքեր

1. ԳԱԼՍՏԵԱՆՅ, Ա. — «Պատմական համառոտ տեսութիւն Բաքւոյ հալոց մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան» Բաքու տպարան Ս. Տէր-Յովհաննիսեանցի, 1891 թ.:

2. ԳԱԼՍՏԵԱՆՅ, Ա., ատենապետ ընկերութեան. — «1864—1889 թ. Նկարագրութիւն հանդիսի Բաքւոյ հալոց մարդասիրական ընկերութեան» յտան և հինգ ամեայ ջօրէկեանի: Մոսկւա, տպարան Մ. Բարխուդարեանի, 1891 թ.:

3. ԼՈՆԳՖԵԼԼՕ. — «Եւանդելինա». թարգմ. Ն. Տէր-Աւետիքեան: Թիֆլիս, տպարան Արօր, 1892 թ. «Աղբիւր»-ի 1892 թ. VП ընծան:

4. ՇԻԼԼԵՐ. — «Ֆրիդոլին», զրաբառ թարգմ. Բաֆֆի, Թիֆլիս, տպարար, 1891 թ. «Աղբիւր»-ի V ընծան:

5. ՄԻՍՈՆԵԱ. — «Կոչումքոս և Ամերիկայի գիւտը» թարգմ. Ն. Տ.-Ա. Թիֆլիս, տպ. Արօր, «Աղբիւր»-ի VI ընծան:

6. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «Արմատ», զէպ. Մոսկւա, տպար. Մ. Բարխուդարեանի, գինն է 2 րուբլի:

7. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «Պատրիկեանի նամակները» Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1892 թ. գինն է 60 կոպ.

8. МАКСЪ МЮЛЕРЪ — «Наука о Мысли» Переводъ В. В. Чуйко. Изданіе А. С. Семенова. С.-Петербургъ, типогр. Лебедева, 1892 г. գինն 2 ր. 50 կոպէկ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Ջրօրհնէքի օրւայ աղէտը թիֆլիսում:—Թեմական պատգամաւորների ընտրութիւնները:

Աչն զորհուրեկի աղէտը որ պատահեց թիֆլիսում Ջրօրհնէքի հանդէսի ժամանակ, արդէն ծանօթ է ոչ միայն ամբողջ հաջ հասարակութեանը, այլ հեռագրական սղութեամբ նաև ամբողջ աշխարհին: Վառքի մալը եկեղեցու բակից դէպի Ասողակեան կոչւած կղզին Քուռ գետի մի ճիւղի վերայ չատակ ալը օրւայ համար շինւած ժամանակաւոր կամուրջը կտարեց մի քանի սածէն երկարութեամբ աչն ժամանակ, երբ Քուռի ամիս վերայ շինւած «պրդանան»-ից պրոցեսսիան վերադառնում էր վառքի գաւիթը: Կամուրջը կտարեց հէնց որ հողերսկան դտար չաջոյութեամբ անցաւ կամուրջից դէպի գաւիթը: Կամուրջը չը գիմարաւ աչն խուռը բազմութեան ճնշմանը, որ ալը դէպքերում միշտ լինում է, քանի որ մեծ թւով ոտսիկաններ չեն կարողանում բազմութեան հոտանքի դէմն առնել, ամբողջ փոքր առ փոքր կամուրջի վրայից անցկացնել սաւառ համար:

Խորատկւած կամուրջից ալը օրը սովորականից շատ չորդացած և մինչ 2¹/₂ սածէն խորութիւն տաացած ջուրը թափածնելի թիւը կարող էր լինել մինչ երկու հարիւր հոգի, որոնցից շատերը կարողացան ազատւել ճնորհիւ կտրիճ լըորդների, ձիաւորների և վրա հասած ազատող նաւակների օյնութեան: Բաց ջրի մէջ խեղդածների թիւը շատ մեծ էր — օրքան մինչ ալժմ չալանի է՝ 13 հոգի, որոնց ահապին մեծամասնութիւնը պատկանում է գաւառացիներին: Խեղդւածները բոլորն էլ պատկանում են արհեստաւոր, մանրավաճառ կամ գիւղական դասակարգին:

Անհկարապրեկի է աչն իրարանցումը որ տեղի ունեցաւ ալէսի ժամանակ և դորանից անմըճապէս վտույ, երբ ամեն ոք բնապրմամբ որոնում էր իւր մերձաւորներին, աղեկտուր էր աչն տեսարանը, որ ներկայացնում էր

խեղդածների ջրի տիր դուրս բերելը կամ ահա անպատող փորձերը, որ անուամ էին նոցա ուշքի բերելու՝ ուշ վրա հասած տառնեակ բժիշկների օգնութեամբ: Ճնշող էր ահա տպաւորութիւնը, որ առաւ պատահած աղէտի լուրը, որ կաթմախի տրապութեամբ տարածուեց քաղաքում և որի մասին հեռագրական լուրը նոյն օրը տարածուեց բոլոր գոտատները: Ապէ և հետեան օրերը հեռագրատուէր արտասալար զործունէութեան մէջ էր, գաւառներից հարցեր ընդունելու և պատասխաններ տեղ հասցնելու համար:

Ճնշող էր, վերին ստափճածի ճնշող էր աղէտի տպաւորութիւնը, գերեզման էր դառել տծախմբութեան տեղը մի աշնալիսի օր, երբ կրօնական ջերմոտանդութիւնը, խաւը աղցալին և տծալին զգացմունքների հետ, իւր ներթափան հարկին էր մատուցանում: Աղէտի տպաւորութիւնը լռեցնել տեց ամեն ուրիշ լսան քաղաքիս աղցարեակութեան և վարչութեան բոլոր տարրերի մէջ առանց խորութեան աղցերի և կրօնների: Յաջորդ օրերը բոլոր աղցերի լրագիրները լիքն էին մանրամասնութիւններով աղէտի և նորա զոհերի վերաբերեալ, տեղեկութիւններ, որ շարունակուում են մինչ այսօր:

Առաջին հարցը որ ակամա՞ղ դուրս էր պրծնում ամեն մէկի բերանից, սա էր թէ ով է մեղաւորը, պատասխանատուը ապ զարհուրելի աղէտի համար: Յեւ ահա շարէ շար տրւում էին սնունդների թիֆլիսի կոնտիստորիան, որ կապալով էր տւել կամուրջ շինելը, տէր-պատանդին Արարատեան, որը կապալով էր վերցրել կամուրջ շինելը, թէև ուրիշի անունով, ոտախկանութիւնը, որը իւր պարտքը չէր կատարել քանի որ թողաւ թեան թուղթ չը կար քաղաքալին վարչութիւնից: վերջապէս քաղաքալին վարչութիւնը, որը չէր հետաքրքրուել զործով:

Բայց միաժամանակ զորա հետ օրտերի չուրմունքը չանցաւորների դէմ՝ տեղի տեց լարեկործութեան զգացմունքին: սկուեցին ժողովարարութիւններ ջողուտ միաուածների և խեղդածների ընտանիքներին: Թողովարարութիւնը սկսեցին միաժամանակ ալ և ալ տեղերում՝ քաղաքալին վարչութեան մէջ, հաջոց հոգևորականութեան մէջ և լրագիրներում: Թիֆլիսում գոչութիւն ունեցող լարեկործական ընկերութիւնները միանալով գումարներ տւեցին, և ալժմ ահա ժողոված գումարները թերեւ հասնում էինն մինչ տասն հազար ուսուր, որ թեթև չափով կը սփռվեն ահա ընտանիքներին, որոնց համար խեղդածները կեանքի միակ նեցուկներն են եղել:

Շատ աչքի ընկաւ և շատ մեծ խօսակցութիւնների տարակազ եղաւ հաջոց հոգևորականութեան բռնած գիրքը՝ Նա, ալը հոգևորականութիւնը, ոչնչով չցոյց տւեց իւր կարեկցութիւնը դէպի տառապեալները: Աղէտի ժամանակ քահանաները շտապեցին քաղաքացիների աները տնօրհնէրի, կարծես նոքա կը զրկէին իրանց հասցիներից, եթէ ամենքը միասին մեռէին մի երկու օրով լիտածիկ իրանց ծխականներին ալցելիլը: Բնաորոշ է, որ երբ ամեն տեղերից ներստուութիւններ էին հաւաքւում ջողուտ զոհերի

ընտանիքների, Թիֆլիսի հայոց հոգևորականութեան ընդհանուր ժողովման ամենափոքր ձախերի առաւելութեամբ միայն վճույքին հոգևորականութեան ապահովութեան պահձանակից 500 ռուբլի նւիրել աղէտից վնասւած ընտանիքներին:

Տարակուսութեան մէջ ընկած հալ ժողովրդի վերայ հասկանալի է թէ որքան բարերար ազդեցութիւն կարող էր անել Եջմիածնի Արնոյի ահն կարգադրութիւնը, որով Թիֆլիս ուղարկւեց զերապ. Գրիգորիս եպ. Ազւանեան, որը, օգնականութեամբ Նիրիմ վարդապետ Սուքիասեանի և պ. Յովհ. Սաղաթեղեանի պէտք է քննէր գործը և ապա մասին ղեկուցում տար բարձր հոգևոր իշխանութեան:

Եթէ չունար ամսի առաջին կէսը ամբողջապէս պատկանում էր Ջորջնէքի օրւալ աղէտին, նոյն ամսի երկրորդ կէսը լիապէս պատկանում էր ծխական պատգամաւորների ընտրութեան գործին: Ընտրութիւնների օրերը, որպէս և ցանկալի էր, նշանակւեցին թեմական առաջնորդից վաղօրօք, որի մասին պաշտօնապէս չապարարւեց լրացիւններում: Այսպէս էլ հարկաւոր էր Յապոնի է սակա՞ն, որ ընտրութիւնների մասին կաթողիկոսից հաստատւած որոշ կանոնադրութիւն չկալ և որ ամեն անգամ թեմական առաջնորդը նոր հրահանգներ է պատրաստում: Այդպէս էլ եղաւ նաև այս անգամ. բաց մի բան որ վարմանալի է, ապա ուն է, որ ընտրող և ընտրուող մարդկանց և առհասարակ ընտրութեան գործին վերաբերեալ սղջքան կարեւոր մի հրահանգ չհրատարակւեց ընդհանուրի պիտութեան համար, ապա որւեց միայն ահն քահանաներին, որոնք պէտք է նախադա՛նէին ընտրութիւններին Թիֆլիսի 23 եկեղեցիներում: Դա հաւանելի բան չէ. հրահանգը պէտք է հրապարակօրէն չափարարւած լինէր, որովհետև նա վերաբերում է ընտրող և ընտրւող անձերի իրաւունքներին, և ոչ միայն ընտրութիւնները նախադա՛նողներին:

Ընտրութեան համար որոշւած օրերն էին՝ չունարի 26 և փետրւարի 2, առաջինը Քուռ գետի աջ կողմի 13 եկեղեցիների, երկրորդը Քուռ գետի ձախ կողմի 10 եկեղեցիների համար:

Յիշատակենք սակա՞ն կարեւոր կէտերը հրահանգի, որը կարգացւեց ընտրութիւնների օրը նիստը բացելուց անմիջապէս լեռու:

Ամեն մի եկեղեցում ընտրութեանը նախադա՛նում է թեմական առաջնորդից նշանակւած մի քահանայ, մեծ մասամբ նոյն եկեղեցու աւագ քահանան: Նախադա՛նական սեղանի շուրջը նստած են նոյն եկեղեցու ծխատէր քահանաները, ձեռքում բռնած ամեն մէկը իւր ծխականների ցուցակը: Ամեն մի քահանայ կարգում է իւր ծխականների անունազգանունները և ապափառով ստուգւում է թէ ներկալ եղողները ապա եկեղեցու ծուխին են պատկանում թէ ոչ: Նոքա որոնք կոնսիստորիալի ցուցակն-

րում պաշտօնապէս չարտնի չեն որպէս այդ եկեղեցու քահանայի ծախ, հաշւից դուրս են տնւում: Չեն հաշւում նաև նոյա, որոնք իրանց աչքինչ քահանայի և եկեղեցու ծախ գտնաւու մասին խնդիրք են մատուցել ընտրութեան օրից քիչ ժամանակ առաջ: Չափ տալը կատարում է միանգամից, տպինքն առանց կանխօրէն կանգնուածներ առաջարկելու: Ընտրելիների անունները պրում են եկեղեցու կնիքը կամ նախապահող քահանայի տորադրութիւնը կրող և թահամարած թերթիկների վերայ, որոնք, ծխականներին բաժանելուց առաջ, խառնում են և ոչ թէ Ռէնիերի կարգով բաժանւում: Ընտրել կարող են նաև ոչ ծխականներից: Ընտրւած են համարւում ոմին եկեղեցում աչի երեք անձերը, որոնք տմինից շատ ձաջ ունեն ստացած, միւնեղնն է թէ ժողովականների թւի կէսից աւելի թէ պակաս ձաջներով: Անգրազէտներին օգնելու համար նշանակւում են ժողովից ընտրւած գրագէտ մարդիկ: Չաջները հաշւելու համար նշանակւում են երկու անձ նախապահի կողմից և երկու անձ ժողովականների կողմից:

Ընտրութիւնների հետեանքները ընթերցողը կը գանի ներքեւում: Բայց կարեւոր է խմանալ որ այդ հետեանքները արդիւնք են ղէպի նպատակը ուղղած ազիտացիալի ալ և ալ կուսակցութիւնների կողմից: Թող ընթերցողը չկարծէ, թէ խօսքերը «ազիտացիա», «կուսակցութիւններ» եւ պործ եմ ուծում որ և իցէ կերպով նսեմայնելու համար ներկալ ընտրութիւնների նշանակութիւնը: Բողորովին ընդհակառակը, ինձ թւում է թէ նպատակաւորմար ընտրութիւններ կարելի է կատարել մի մի աչի ազիտացիալով և աչի էլ կուսակցական ազիտացիալով: Գորանով եւ չեմ ուղում պնդել թէ ազիտացիալով ընտրւած մարդիկ անպատճառ խելօքներ են, բայց եւ պնդում եմ որ որոշ նպատակով կատարւած ազիտացիան տրտապրում է հետեանքներ, որոնք աւելի նշանակութիւն ունին, քան երբ ժողովուրդը ընտրութիւններ է կատարում: առանց պրղւած լինելու աչի գլխաւոր գաղափարից, որի համար եւ կատարւում են այդ ընտրութիւնները: Խնդիրը սա է, թէ ովքեր պէաք է լինեն կաթողիկոսացուներ: Ալք է գլխաւոր հարցը: Արդ, քանի որ կաթողիկոսի անձնաւորութիւնից կտիւտծ է մեր եկեղեցական-ժողովրդական գործերին ալ կամ աչի ընթացք տալը, որի մասին ալ և ալ սւղղու թեան մարդիկ շատ սարքեր կարծիքներ ունեն, ուրեմն և միտնգումաչի բնական է և իսկ ալ է, որ բալբ շատ թէ քիչ ինտելիգենտ և շատ թէ քիչ գաղափարակից մարդիկ աղպիսի գործերում գործեն ձեռք ձեռքի առած, որպէս զի ծխական պատգամաւորներ ընտրեն աչիպիսի մարդիկ, որոնք իրանց ձաջով թեմական պատգամաւոր ընտրելու ժամանակ նոյն կաթողիկոսացուներին համակիր թեմական պատգամաւոր ընտրելու պործին կը նպատեն:

Խոյ եթէ, ալ պարպէս է, հետեալէս ազիտացիան, ալիւնքն Զանքեր

անեւել ընտրողներին աչա կամ աչն կողմի, աչա ու աչն ծխական ընտրելի-
ների օգտին արամադրելու համար, ինքն ըստ ինքեան բղխում է գործի
էութիւնից: Ազխոացիան ենթադրում է որոշ նպատակ, և երբ աչք որոշ
նպատակը աշխիւ է, ազխոացիան էլ աչք նպատակը իրագործելու համար՝
արդարացի է և գովելի: Ազխոացիա անողները աջնպիսի մարդիկ կարող
են լինել, որոնք համոզւած են, որ լատականքէ միաչն շարժը վարդա-
պետելը, աչ որ քարոզը ժողովրդի համար լինելով նաև ժողովրդի հա-
խօսել և նորա հետ գործել է հարկաւոր:

Աս հարկ համարեցի ազխոացիայի և կուսակցական գործունէութեան
մասին աչքան երկար խօսել, ի նկատելի ունենալով աչն արհամա-
րանքը, որ ունին շատերը գէպի աչք խօսքերը: Մեր մէջ՝ հասարակա-
կան գործերում աչ վերջին տարիներս զգալի իերպով աճել են ազխոա-
ցիական շարժումները, գոնէ Թիֆլիսում: Աչք բանի համար միաչն հնոր-
հաւորել կարիքի է հաշիական կեանքը և ոչ խղճալ սորա վերաջ: Գորա
մէջ նշմարւում են չառաջադիմութեան քաղեր և ոչ քտադիմութեան:

Ներկա ընտրութիւններին երկու զլիաւոր հոսանքներ կարելի էր
նշմարել. մէկ կողմում նոքա էին, որոնք գործում էին ա. Գր. Արծրու-
նուն թեմական պատգամաւոր ընտրելու համար, իսկ միւս կողմում նոքա,
որոնք գործում էին զորա գէմ: Պր. Արծրունու թեմական պատգամաւո-
րութեան հետ կապւած է կաթողիկոսական ընտրելիների ցուցակը՝ Խրի-
մեան և Արիստակէս եպ. Սեդրակեան, հետևապէս աչք ընտրողական կու-
սակցութիւնը գործում էր ընդունելով իբր իւր գեւիլ՝ Խրիմեան, Սեդրա-
կեան որպէս առաջին և երկրորդ կաթողիկոսացուներ և Արծրունի որպէս
Թիֆլիսի թեմի պատգամաւոր: Աչք ծրագիրը կարողացաւ միացնել գործող
ոչների մեծ բազմութիւն, որը գործեց որոշ ուղղութեամբ, և ինչպէս հե-
տեանքները ցոյց տւին՝ չաջողութեամբ: Յունւարի 26-ի ընտրութիւնները
12 եկեղեցիներում տեցին միաչն կիսով չափ Արծրունու պատգամաւոր-
ութեան պաշտպան ընտրւածներ, իսկ փետրւարի 2-ին իննը եկեղեցիներում
կատարւած ընտրութիւնները տեցին մեծամասնաբար աչք ուղղութեան
ընտրւածներ: Ընտրութիւններ չկապացան Մէլքանի Ա. Գէորգ և Նաւթ-
լուդի Ս. Գէորգեկեղեցիներում աջնպիսի պատճառներով, որոնց մասին
ընդարձակել չեմ կարող:

Մնում է սպասել թեմի միւս տեղերի ընտրութիւններին: Աչ տարի
թեմի վիճակներից ընտրւելու են 34 հոգի, և ոչ թէ, որպէս անցեալ կա-
թողիկոսական ընտրութիւններին, միաչն 13 հոգի: Աչ անգամ շատ աւելի
արդարութիւն է պահանջւած Թիֆլիսի և թեմի միւս վիճակների նկատ-
մամբ, քան անցեալ անգամին, 1885 թւին: Աչք 1885 թւականին Թիֆ-
լիսի Եսկէն մի եկեղեցին ընտրեց չորս-չորս ծխական երեսօխոսաններ, մինչ-
դեռ Եսկէն միաչն երեք-երեք հոգի ընտրեց, աչնպէս որ անցեալ անգամ
թեմական պատգամաւոր ընտրելու համար՝ Թիֆլիս քաղաքը իւր 23 եկե-

դիցինքրով ունէր 92, իսկ ալժմ միայն 69 ներկայացուցիչներ պէտք է ունենայր Դորա հետ միասին գաւառները ունեցան 13 ներկայացուցիչներ, ալժմ նոքա կ'ունենան 34, Դա արդարութեան աւելի մօտ կարգադրութիւն է:

Հետաքրքրական էր խմանալ թէ միւս կուսակցութիւնը կամ կուսակցութիւնները ինչ դիւրով էին գործում: Եւ ահա զարմացմամբ պէտք է վկայեմ, որ այդ միւս կուսակցութիւնները ոչ մի ծրագիր չունէին հրատարակած, ոչ մի կաթողիկոսացուի անուն չէին տւած: Այդ կուսակցութիւնները կարծես իրանց բոլոր ուժը որոնում էին անորոշութեան և միջոցութեան մէջ:

Եւ ստացի վերը որ մի որոշ խումբ գործեց չօգուտ Արծրունու թեմական պատգամաւորութեան, որի ցուցակում Խրիմեանի հետ անխզելի կերպով կապւած է Արիստակէս եպ. Անդրապետի անունը, որպէս երկրորդ կաթողիկոսացուի: Եւ իստացի նաև, որ Թիֆլիսի ընտրութիւններ մեծամասնաբար չօգուտ Արծրունու պատգամաւորութեան հետեանքներ աւելին, քանի որ ալն 21 հեղեցիներում, ուր կատարւած են ընտրութիւններ, ընտրւած են Քուլչեկտի աջ ափում մօտ 18, ձախ ափում 16 արծրունական ծխական երեսօրեաներ, ուրիմն միտաին՝ ընտրւած երեսօրեաների թւի կէսից աւելին:

Ընդունելով հետեանքը որպէս անկասկած, Թիֆլիս քաղաքի նկատմամբ, կարեոր է խմանալ ժողովրդի վերաբերութիւնը դէպի կաթողիկոսացուները: Ըստ երեւութին, վերը առաջ բերած ընտրողական հետեանքները իրաւունք են տալիս պնդելու թէ Թիֆլիսի ժողովրդի մեծամասնութիւնը վճռել է Խրիմեանին և Արիստակէսին առաջին և երկրորդ կաթողիկոսացուներ ճանաչել Բալց ժողովրդի հետ մօտիկ շփումը ինձ համոզելից, որ այդ ցուցակը շատ նկատողութիւնների է ենթարկւում: Յօգուտ Խրիմեանի ձախը ընդհանուր է, չօգուտ Արիստակէսի, իբր հերկորդ կաթողիկոսացուի՝ ձախը ընդհանուր չէ: Կան բազմաթիւ մարդիկ, որոնք երկրորդ կաթողիկոսացուի խնդիրը այս բազէին դեռ բաւականաչափ հաստատացած չեն համարում: Դորա զլիսաւոր պատճառը պէտք է որոնել ալն քանի մէջ, որ կաթողիկոսացուների խնդրով մամուլը ուշ անեց պաղւել:

Ահա 21 հեղեցիներում կատարւած ընտրութիւնների հետեանքները:

I Վանայ Մայր Եկեղեցի՝

Ալեքսանդր Մանթաշեան,

Դրբգոր Արծրունի,

Իսահակ Բաղդասարեան:

II Մոզնու ս. Գէորգ Եկեղեցի՝

Աբգար Յովհաննիսեան,

Գաբրիէլ Սուհողեան,
Բժ. Յովաննէս Գասպարեան:

III Նորաշէն ս. Ասուածածնոյ եկեղեցի՝

Խ. Արզումանեան,
Մ. Թամադեան,
Ա. Բարխուդարեան:

IV Ս. Նշան եկեղեցի՝

Յովհաննէս Տէր-Կարապետեան,
Բարսեղ Ղանդաբաբեան,
Գաբրիէլ Միրզոյեան:

V Բեթղէհեմի ս. Ասուածածնայ եկեղեցի՝

Կոստանդին Ալիխանեան,
Նիկողայոս Խօսրովեան,
Յ. Խուզապեան:

VI Քարափի ս. Գէորգ եկեղեցի՝

Խաչակ Բաբախանեան,
Ստեփան Լիսիցեան,
Խաչակ Յարութիւնեան,

IIV Սուրբ Սարգիս եկեղեցի՝

Ղ. Փիրումեան,
Վ. Սուքիասեան,
Բժ. Գ. Տէր-Գրիգորեան:

VIII Հրեշտակապետաց եկեղեցի՝

Արամ Չերքէզեան,
Ս. Տէր-Մովսիսեան,
Բաղրատ Միրիմանեան:

IX Քամոյենց ս. Գէորգ եկեղեցի՝

Ալեքսանդր Մէլիք-Աղաբեան,
Բժ. Աւետիք Բաբաբեան,
Բ. Մելիք-Ղարապետեան:

X Զրկինենց Սուրբ Կարապետ եկեղեցի՝

Խլխ. Արզութեան (քաղաքագլուխ),

ԲԺ. Միք. Աւթանդիլեան,
Մինալ Միրզալեան:

XI Զգրաչէնու Աւետեաց Ասուածածնայ եկեղեցի՝

Անտօն Ղարդանեան,
Իշխ. Նապ. Ամասուանի,
Աւետիք Եղեկեան:

XII Վերայի ս. Խաչ եկեղեցի՝

Մանուկ Աբեղեան,
Ս. Տէր-Գրիգորեան,
Ս. Մովսիսեան:

XIII Թանդուղեանց եկեղեցի՝

Գրիգոր Տէր-Յովնանիսեան,
Աղասի Տէր-Ասուածատրեան,
Գարսօ Առաքելեան:

XIV Կուզիոյ Նորաշէն եկեղեցի՝

Նիկողայոս Գրիգորեան,
Նսալի Աբրահամեան,
Գէորգ Աբրահամեան:

XV Զուղուրէթի եկեղեցի՝

Գէորգ Եւանգուլեան,
Իշխ. Ասատուղին Բէհբուլթեան,
Դանիէլ Տէր-Զաքարեան:

XVI Սրբ. Կարապետ եկեղեցի՝

Կարապետ Քոչարեան,
Սարգիս Ղաւաղեան,
Ներսէս Աթարէկեան:

XVII Սուրբ Մինաս եկեղեցի՝

Նազար Ղալարեան,
Նազար Ափեան,
Սահփան Մալխասեան:

XVIII Էջմիածնեցոց եկեղեցի՝

Սահփան Մասուրեան,

Բժշ. Լ. Աղամբաբեան,
Կալուսկեան Վաղանձեան:

XIX Շամբուեցոց եկեղեցի՝

Յովհաննէս Թալիրեան,
Գրիգոր Ղարապետեան,
Արշակ Ղանդախտապեան:

XX Զորաբաշի եկեղեցի՝

Նիկողոս Նիկողոսեան,
Աղեքսանդր Աբաղեան,
Գէորգ Թարխանեան:

XXI Սուրբ Լուսաւորի եկեղեցի՝

Գարրիէլ Իշխանեան,
Սարգիս Մանուէլեան,
Աղասի Մելիք-Ալվազեան:

Նրիւն մնացած եկեղեցիներում՝ Մէլքանի Ս. Գէորգ և Նաթլուզի
Ս. Գէորգ եկեղեցիներում ընտրութիւնները նշանակւած են կառարեւելու
փետրուարի 23-ին, կիրակի օր:

25-ԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ (1864 – 1889) ԲԱԳՈՒԻ «ՄԱՐԴԱ-
ՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՅԱՆՈՒՆ Ս. ԳՐԻԴՈՐ ԼՈՒՍԱԻՈՐՁԻՆ ՀԱՅ-
ԱՍՏԱՆԻ»

Ռուսահայերի ինքնաձայնագրական զարթոնքը սկսում է ուսումնա-
րանիւր հիմնելուց զետ. 20-ական թւականներին (Ներսիսեան դպր. և Վա-
ղարեան ճեմարան): Ժամանակի ընթացքում առաջանում է ինտելլիգեն-
ցիան և մամուլը: Ինտելլիգենցիան զխեղով կեանքը և շփելով ժողովրդի
հետ չէր կարող չը տեսնել իւր չուրջը ժողովրդի աղքատութիւնը, ստրկաբն-
այրութիւնը և մտաւոր—բարոյական անկումը պարսկական տիրա-
պետական չնորհիւ: Շատ տեղերում հայերը խզում ձուլւել էին մահմե-
դականների հետ կամ մոռացել էին իրանց լեզուն և խօսում էին թուր-
քերէն, թաթերէն, վրացերէն, չապսձ լինչ ազգի մէջ էին բնակւում:

Այն ժամանակաւ ինտելլիգենցիայի լաւագոյն մասի ձգտումների ներ-
կացուցուցին էր Ս. Նազարեանը—հայերի մէջ եւրոպական գիտական
և մարդասիրական բարձր սկզբունքների ազդ. քարոյիչը, իւր օրդան «Հիւ-
սիսապոստոլ»: Նա առաջինն էր որ մտնում էր հասարակական գիտակ-
ցութեան մէջ ինչ հարկաւոր է հաւաքական ուժերով և ինքնօգնութեամբ
բարեփոխել ազգի դրութիւնը: Վաղաւոր հարկաւոր էին բաւական
հաճող ու նախաձեռնող ուղի ունեցող մարդիկ, որոնք իրականացնէին,
արիւն և մարմին տալին գեղեցիկ ուսման մարերին: Այդպիսիներէն էր
Մոսկւայի համալսարանի բժշկական ֆակուլտետում աւարտած թիֆլիսցի
Գաւիթ Ռոստոմանցը: 1842 թւին, 22 տարեկան հասակում աւարտելով
իւր ուսումը՝ երիտասարդ բժիշկը, այն ժամանակաւ տակաւաթիւ ինտելլի-
գենցիայի ազդ. հոռնդոս ներկայացուցիչը, խոյնն ժանտում է ժողովրդի մէջ,
ուր սեփական աչքով ականատես է լինում նրա ապիտակեան: Արիւր
տարիների ընթացքում նա գաւառական բժշկի պաշտօնով պրտում է
Նուխու, Շամսխու և Բաքուի կողմերում սւր տեսնում է որ ժողովուրդը
սաւնջւում է ոչ միայն ֆիզիքական ցաւերով, այլ և խարխալում է սարսա-
փելի խաւարի և ինքնամոռացութեան մէջ: Խնչ կարող էր տեսնել նա իւր

1) Տես «Պատմ. Համառօտութիւն Բ. Հ. Մ. Բ. 2-ամեայ գործունէութեան»,
աշխատանքից ատենադպիր ընկերութեան Ա. Գալստեանց: Բաքու, 1891 թ.:

անհատական ուժերով. միթէ շատերին կարող էր գտնել կարեկից իւր հասարակական վշտերին. բայց տհա հնչում է հետու հիւսիսա-
փալը՝ թրթնեցնող ձայնը, որ սթափեցնում է հասարակութիւնը իւր հա-
կան, անտանական դրութիւնից. Ռոստամեանը ալժամ մենակ չէ. մամուլը
նրոն օգնում է. հասարակութեան մէջ ալժամ նա աւելի համակրողներ
կարող է գտնել. և գտնում է 12 հոգի, որոնք և գնում են Մարդասիրական
ընկերութեան հիմքը. 1864 թւի մայիսի 21-ին բարձրագոյն հաստատում է
Բաքուի «Մարդասիրական ընկերութեան» կոնսնսլիտիւնը և ալ օրից
սկսում է նորա գործունէութիւնը, նախագահութեամբ ընկերութեան հիմ-
նադիր Գաւիթ Ռոստինեանցի, մինչև նորա վտխճանելը ալաինքն՝ 1864 թւա-
կանի հոկտեմբերի 16-ը:

Մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան հետ ծա-
նօթանալով չի կարելի չը համուրել որ նա աւարէ ցտարի աւելի է ընդար-
ձակել և միշտ հաւատարիմ է եղել իւր նպատակին. տարածել լուսաւո-
րութիւն և բարեգործութիւն ուսանալերի մէջ, օտանց դասակարգողին և
դաւանութեան խտրութեան, օգնել սովորողներին, նպաստ առ չքաւոր
ուսումնարաններին, հիմնել սեպհական ուսումնարաններ, գրամական նպաստ
հասցնել աղքատներին և չքաւորներին, ձրի քրճկութիւն հիւանդներին
և օղն:

Ընկերութեան 13 հիմնադիր անդամներ հիմնական գրամագլուխը
25 տարուց զատու գտնում է 62,392 ռ. 70 կ., բայց կազմերից, որոնց
արժողութիւնը հաշւում է 87,384 ռ. 22 կ.: Իւր 25-ամեայ գործունէութեան
ընթացքում ընկերութիւնը ստացել է ալ և ալ աղբւրներից եկամուտ
ընդամենը 185,285 ռ. 20 կ.: Գլխաւոր աղբւրները, բայց զրամագլխի
սովորաբար 54,111 ռ. 74 կ., նոր ուսումնարանական շինութեան համար
հանգանակած 29,636 ռ. 99 կ., Բաքուի երկու եկեղեցիներից տղաւոց ծխա-
կան ուսումնարանի պահպանութեան համար 13,341 ռ. 65 կ. և ստացած
անդամական վճարները:

Մարդասիրական ընկերութիւնը ունի հիմնադիր, պատուաւոր, անփո-
փոխ և տարեկան անդամներ. ալ կոչումներից «Ժառանգական» է առաջինը:

Իւր 25-ամեայ գոյութեան ժամանակ ընկերութիւնը ունեցել է 4
պատուաւոր անդամներ, 317 անփոփոխ և 869 տարեկան: «Պատուաւոր» կոչ-
ւում են ալն անդամները, որոնք միանգամից նւիրում են ամեն ժամա-
նակի համար ոչ պակաս քան 1000 ռ., իսկ «անփոփոխ» — ոչ պակաս քան
100 ռ.: «Տարեկան» անդամները նրանք են, որոնք իւրաքանչիւր տարի
նւիրում են 5 ռուբլի:

Ուրեմն Մարդասիրական ընկերութիւնը անդամներից ստացել է.

15 հիմնադիր անդամներից	12.650 ռուբլի
4 պատուաւոր »	400 »
317 անփոփոխ »	32.625 »

869 տարեկան անդամներից	4.345	»
Ընկերութիւնը «կտակած» գումարներով բաւականին աղքատ է.		
Պօղոս Ալեքսանեանցի կտակ	2.000	բոբլի
Լարապետ Միրանցեանցի կտակ	1.000	»
Թաղէտ ըն. Բուդաղեանի »	1.000	»
Հ. Հախումեանի »	250	»

Մարդասիրական ընկերութիւնը իւր 25-ամեայ գործունէութեան ժամանակ ծախսել է 122,892 ռ. 50 կոպէկ: Որովհետեւ ծախսերից կարելի է լաւ բնորոշել ընկերութեան կառարած գործը, այդ պատճառով մենք չառաջ ենք բերում այդ ծախսերի տնօրէնները առանձին առանձին:

- 1) Բարութի հաշոյց ծխական երկսեռ ուսումնարանների վրայ 48.147 ռ. 33 կ.
- 2) Օժանդակութիւն գիւղական և քաղաքային հաշոյց ուսումնարաններին 7.642 » — »
- 3) Օժանդակութիւն 20 որդեգիրներին 14.645 » — »
- 4) Տան վարձ՝ զարդոյների, տպարանի և գրատարանի համար 1.635 » — »
- 5) Տպարանի վրայ և ուղ ծախքեր 7.447 » 49 »
- 6) Գրատարանի » » 5.947 » 74 »
- 7) Ուսումն. հին շինութեան վրայ ծախք 12.403 » 89 »
- 8) Նոր շինութեան » » 15.380 » 53 »
- 9) Ազդերութիւն աղքատներ, և հիւանդներին 1.938 » 14 »
- 10) Բանկին վճարած 0/0 2.321 » 10 »
- 11) Մատաներին և գրագրին 428 » 48 »
- 12) Դատաւարների 152 » 80 »

Այդ ծախսերից ամենամեծը ընդհանուր ապարանի վրայ արածը, որի բացման նպատակն էլ ընկերութեան ընդհանուր ուղղութեան համապատասխան է եղած. նորա վրայ նախելիս են եղել ոչ միայն խորհրդի միջոցով, որի ղեկավարներն ընկերութեան ղեկավարներն, այլ նաև որ մասնաւոր գնումներ և աղքատներին հաշոյց ուսումնարաններին համար. սակայն ոչ մէկը այս աղատածներից չիրականացաւ և տպարանը միայնով ծախսել է 1883 թւին: Աչքի տեսնելով ծախքերի բոլոր տեսակները չի կարելի չը համոզուել, որ Մարդասիրական ընկերութիւնը իւր միջոցների ահալին մասը, 92⁰/₁₀, ծախսել է մարդասիրական նպատակներից դերադրելի և արդիւնաւորագոյնի վրայ՝ ժողովրդի բաւարարութեան վրայ:

Մենք համոզուած ենք, որ այդ նպատակին կարելի կը լինի ծառայել աւելի ևս մեծ ծաւալով, եթէ 1888 թւից Բաքուում կառուցուող ընկերութեան հոգաբարձ շինութիւնը դառնալ թեմական զարդոյ, որի կարեւորութիւնը նամախոս թեմում մեծապէս զգացուած է: Բաքուի թեմական

դպրոցը կը գրաւի ոչ միայն Շամախու, Ղուբալի, Գերբեքտի, Սալեանի և Նուխաւ կողմերից ուսման կարօտ երեխաներ, այլ և Անդրկասպեան հազերը կ'ուղարկեն արտեղ իրանց զաւակները: Բաքւի նահանգում մօտ 60 հազար հաշ կարելի է համարել, Արեշի և Նուխու գոտւոներում և Գաղստանում՝ մօտ 37 հազար, Անդրկասպեան երկրում էլ եթէ հաշմենք մօտ 10 հազար հաշ կը ստանանք 98 հազար աղաքնակութիւն: Վիճակագրութիւնից չափնի է, որ ամեն 10 հազար բնակչից 8—19 տարեկան հասակին պատկանում են մօտ 2000 հոգի, ուրեմն վերոյիշեալ կողմերում կը գտնւին մօտ 19 հազար հաշ որ գտնուում են ուսումնարանական հասակում, որոնցից maximum 3000 են այժմ սովորում ամեն կարգի թէ պետական, թէ հաշոց և թէ մասնաւոր ուսումնարաններում, իսկ մնացածը՝ ոչ մի տեղ, էլ չենք ասում թէ որչափ թեմական դպրոցը կ'օգնի այլ կողմերի ծխական ուսումնարաններին, տալով նրան պատրաստած ուսուցիչներ և թեմին ընդհանրապէս՝ փոքր ի շատ, կրթւած քահանաներ:

Պահելով մի թեմական դպրոց, մի երկդասեան օրիորդաց ծխական ուսումնարան Բաքուի մէջ և թեմի աղքատ զիւղերում ծխական ուսումնարաններին փոքով օգնելով՝ Մարդասիրական ընկերութիւնը կարող է իւր գլխաւոր նպատակներից մէկի գաղաթնակաւորն հասած համարել: Բաւց զրկել գիւղական աղքատ ծխական ուսումնարաններին մի որդեգիր պահելու համար, ցանկալի չենք գտնում, ուստի որդեգիրների նկատմամբ 1885 թ. ընդհանուր ժողովի վճիռը մեղ թւում է շատ նպատակաւորմար: Առհասարակ օգնել մարդկանց միջնակարգ կամ բարձրագոյն ուսում առնել ի հարկէ շատ լաւ բան է, բայց լաւագոյն է, երբ այլ օժանդակութիւնը միացնում է օժանդակողի կողմից փոխարինարար չափնի հասարակական պարտականութիւն կատարելու հետ: 1885 թ. ընդհանուր ժողովը վճռում է, որ աջուհետեւ ընկերութիւնը գլխաւորապէս աշխատի ապահովացնել ծխական ուսումնարաններէ: Գոյութիւնը՝ բաւց որովհետեւ ուսումնարանական դործի չաջողութիւնը կախած է պատրաստուած ուսուցիչներից, ուստի պիտի աշխատե՛լ խնդրատու երիտասարդների մէջ ընտրել և զերադասել նրանց, որոնք կը կամենան ուսանել ուսուցչական խնտիտւոներում և փտող ծառաւել ուժկով ազգային ուսումնարաններում աշնքան սարի, որքան սարի օժանդակութիւն է ստացած: Նոյնը կարելի կը լինէր ստել և նրանց մասին, որոնք համալսարանում և այլ բարձրագոյն ուսումնարաններում կ'ուսանէին ընկերութեան հաշով, որպէս զի փտող ծառաւեն Բաքւի թեմական դպրոցում, եթէ աղապիսին բացէր:

Ղուսաւորէք ազգը, իսկական գիտութեամբ՝ կը փարատւին նրա բարոյական ցաւերը: Մարդասիրական ընկերութիւնը իւր 25 ամեալ գործունէութեան ժամանակ ղեկավարել է այս սկզբունքով և լոյս կալ որ նա ապագայում կը լաւնացնի իւր անելիքը աղ ուղղութեամբ:

ԵՐԱԺՅԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳՐ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

Թիֆլիսը երաժշտական քաղաք է համարուում: Արդեօք այդ ճշմարիտ է: Իմ կարծիքով ոչ կատարելապես: Ի հարկէ, եթէ դաստիարակներ, որ համարեա ամեն մի տան մէջ կայ մի որ և իցէ երաժշտական գործիք, մանաւանդ դաշնամուր, այն ժամանակ կարելի է դալ այն եզրակացութեան, որ իբրեւ թէ թիֆլիսցիք սաստիկ երաժշտասէր են: Ես խորհուրդ կը տայի հետաքրքիր ընթերցողին անցնել գոնէ մի երկու շաբաթ ամեն երեկոյ այն տների մօտով, ուր զանաւում են տարաբախտ երաժշտական գործիքներ: Ես խորհուրդ կը տայի մինչեւ անգամ՝ աւելի համարձակ մանել այդ տների մէջ այն ժամին, երբ դաշնամուրի ծածկոցը բարձրացւում է, ջութակները և փէյտանները հանուում են իրանց խուփերից և երբ սենեակի մթնոլորտը կամայականաց ստիպւած է ընդունել ալէձև շարժումներ՝ իբր երաժշտական հնչիւններ: Ես միայն կը հարցնեմ՝ նրան երկու շաբաթից յետոյ, թէ նա այդ ժամանակամիջոցում ի՞նչ է լսել:

Պատրաստ եմ գրազ գալ, որ նա կը պատասխանի ինձ այսպէս.

«Ես այնքան բաներ եմ լսել որ մինչեւ անգամ՝ չեմ էլ յիշում: Հարիւրաւոր վալսեր և պոլկաներ, թշտաւ Բեթհովենի գրեթէ բոլոր սոնատները, և Մոցարտին և Մենդելսոնի զանազան «անբառ երգերը», և Շոպենի մազուրիկաները և տեսակ-տեսակ դուէտներ ջութակի և դաշնամուրի համար, նման Բեթհովենի «Արեւցերովա սոնատային», և տրիօներ վիոլոնչելի համար և ուրիշ շատ ու շատ բաներ:

—Արդեօք այդ ամենը լսւ էր կատարում, կարե՞րի էր հաճութեամբ լսել, կը հարցնէք դուք:

—Համարեա ամեն տեղ վատ, պարզասրտութեամբ կը պատասխանի նա:

Ճշմարիտ ասած, ես չար մարդ չեմ և չը կարծեք, թէ ես որ եւ է բանով ուզում եմ վերաւորել հետաքրքիր և համարձակ ընթերցողի երաժշտական զգացումները՝ որը անզգուշութիւն ունեցաւ հետեւել խորհրդիս. ոչ, եթէ ես սկսեցի խօսել մեր քաղաքի երաժշտականութեան մասին, այդ այն պատճառով էր, որ չորս կողմից ձեզ ուզում են համոզել իբր թէ Թիֆլիսը երաժշտական քաղաք է։ Թիֆլիսում երաժշտութիւնը այն չափով են սիրում, որ չափով որ անկարելի է նրան չը սիրել. ոչ աւել և ոչ պակաս։ Շտապում եմ աւելացնել, որ երաժշտութեան սիրոյ անւան տակ ես հասկանում եմ բացառապէս սէրը դէպի օպերան, որովհետեւ երաժշտութեան միւս ճիւղերը՝ ինչպէս են սիմֆոնիա, օրատորիա և առհասարակ կամեր-երաժշտութիւնը թիֆլիսցիներին ամենեւին գուրալի չէ։ Ահա ձեզ սրա ապացոյցը. Թիֆլիսի երաժշտական ուսումնարանը տալիս է տարեկան երեք-չորսից ոչ աւելի քառաձայն երեկոներ, բաւական հետաքրքիր կազմած՝ մասնակցութեամբ տեղական ամենալաւ ոյժերի։ Եւ ձի է նրանց յաճախում։ Ներկայ են գտնում միայն նրանք, որոնք իարժես ստիպւած են լինել. այսինքն ուսումնարանի աշակերտներ և աշակերտուհիներ, վարժապետներ և երկու-երեք կողմնակի անձինք։ Միւսնոյն ուսումնարանը տարեկան երկու անգամ տալիս է համերգական (симфоническіе) երեկոներ չափազանց էժան զինքով, ուր կատարում են կրտսիկների ամենալաւ զբաժները. Բեթովէնի, Մենդելսոնի, Շումանի սիմֆոնիաները, Բիզէյի սիւլխաները և ուրիշ նւագախմբական (оркестровые) զբաժքներ զաշնամուրի կոնցերտներ երաժշտական համերգի հետ և այլն։ Նւ դուք կարծում էք հասարակութիւնը ժողովւում է այդ երեկոյթներին։ Ամենեւին. հասարակութիւնը բաւական ստոնասիրտ է դէպի Բեթովէնի և ուրիշ հուշակաւ երաժիշտների հեղինակութիւնները։ Բայց ահա, երբ թատրոնական յայտարարութիւնների վրայ երևում էր «Նորմա», այդ մաշւած և կարելի է ասել երաժշտական տեսակէտից այդ անպատշաճ օպերան՝ թիֆլիսցիք՝ իրարից խլելով էին առնում տոմսակները։

Ինչո՞ւ. համար։

Դուք կարծում էք նորա համար, որ այդ օպերան սիմֆոնիաներից աւելի մտաւելի է։ Ի հարկէ, մասամբ և զորա համար, բայց զլիսաւորը նորանից էր որ Նորմայում մասնակցում էր

Ֆլաշան: Հասարակութիւնը նմանապէս բաւական եռանդով էր յաճախում Երնանի, նմանապէս հին և անկարելի մի օպերա, ոչ այնքան հէնց իրա օպերայի համար, որքան Ռուբիոնատայի, որը այդ ժամանակ վերցնում է ահռելի նոտաներ:

Ես սկզբում ասացի, որ մեր հասարակութիւնը սիրում է բացառապէս օպերաներ: Այո, բայց դուք արդէն նկատեցիք, թէ ինչպէս է սիրում նա օպերան. նա ոչ իսկական երաժշտութիւնն է սիրում օպերայի մէջ, կամ թէ նւագախմբի մասը օպերայի, այլ միայն երգեցողութիւնը, մինչև անգամ, եթէ ուզում էք, երգիչներին և երգչուհիներին:

Դուք կարծում էք ես ճշմանիտը չեմ ասում: Վերցրէք Լօէնգրին օպերան. ինչ հիւանալի ներածութիւն (prologue) ունի նա. դա մի ամբողջ սիմֆոնիա է, դորա մէջ լսում է ամբողջ օպերայի հոգին!

Բայց նորան ոչ ոք չէ լսում: Մեզանում՝ թատրոնում լռութիւնը տիրում է վարազոյրի բարձրանալու ընդմէջ: Այդ պէպում էլ ինչի համար են օպերաների ներածութիւնները. գուցէ հարցնէք դուք: Ահա ինչու համար. խօս չի կարելի միանգամից նստել տեղումը և սկսել լսել. թողէք մարդս առաջ իւր ծանօթների հետ մէկ բարեւի և իւր հարեաններից առողջութեան մասին տեղեկանայ: Կամ երբ նա ազատիտը կը նստի իւր տեղումը և դուք կորիզորում զրօնելիս նորա աջ ձեռքի չափաւոր շարժումներից կը հասկանաք, որ օպերան սկսեց, այն ժամանակ ամենահանգիստ կերպով կանցնէք դէպի ձեր տեղը և հէնց այդ ընդմէջ վարազոյրը կը բարձրանայ: Ահա ինչ առիթի համար են գրում օպերաների ներածութիւնները: Ել չեմ խօսում այն արիստոկրատների մասին, որոնք ընտրում են իրանց համար օպերայի մի որ և իցէ գործողութիւնը, զորօրինակ ինչ պատճառով որ լինի՝ երրորդը. քալիս են ու զգալի այդ գործողութեան սկզբին և մնացածը թողնում են լսել պլեբէյներին: Միտ է եօթանասնական թւականներին այստեղ կար մի երգչուհի Լուէ (Lue) անունով: Չեմ կարող ասել, որ նա երաժշտականութեան մի որ և է մասում աչքի ընկնող լինէր, դորա վտխարէն սիրուն էր. ստիպն այդ՝ փակագծի մէջ: Եւ ահա, չը պիտեմ ինչու, թիֆլիսցիք վճռեցին, որ նա ամենից լաւ է լինում Բիզոնատո (արդէն բաւական հնացած) օպերայում: Եւ երբ ներկայացնում

էին Ռիզոլեւոսո Առէի մասնակցութեամբ, արդէն առաջուց կարելի էր իմանալ, որ կասալում ոչ մի տոնակ չի մնալ: Ամբողջ թաւրոնը ծախահարում էր. բաց աչդ զեռ բոլորը չէ: Կային այն ժամանակ երկու-երեք առանձին դնահատողներ, որոնք երևում էին նորա համար միայն, որ լսեն օրիորդի ձայնի կլկլոցը երկրորդ դործողութիւնում: Այդ կլկլոցը տեսնէ մէկ բոսկից ոչ աւելի և աչդ ժամանակ նազախումբը լսում է: Ամենքը զարմանում էին աչդ առանձին դնահատողների ահագին երաժշտականութեան վրայ: Կային ի հարկէ և սկեսրակներ:

Ես միշտ վշտանում և նեղանում եմ երբ Զառաարի, Աօհնդրինի, Արգայի, Տանհեղերի և ուրիշ լաւ օպերաների ներածութիւնները բոլորովին իզուր են անցնում հասարակութեան համար: Բաց ինչ որ աւելի վառն է, աչդ նա է, որ և մենք, ներածութիւն լսել ցանկացողներս, չենք կարողանում լսել, որովհետեւ բարձրաձայն խօսակցութիւնները դաշլիծում և մանասանդ օթեակներում ամենեւին թոյլ չեն տալիս լսելու օպերայի նազախումբային մասերը:

Օպերայի ներածութիւնը և նազախումբային կտորներ չը լսելը՝ հաւասար է դնալ մի անձանթ դրամայի, բաց թողած լինելով առաջի գործողութիւնից 10 բոսկէ, պարտաւորեալ պայմանով չը հետեւել դրամային նաեւ միւս գործողութիւններում՝ նոյնքան ժամանակամիջոց և ոչ աւելի: Զէ որ աչդ փայրենի կը թռչէր, Բաց ինչ է օպերան եթէ ոչ երաժշտութեան փոխադրած դրամա, կամ այլապէս առած՝ երաժշտական դրամա: Եթէ դրամայում ոչ մի տեղ չի կարելի բաց թողնել, որովհետեւ աչապէս չես ունենալ մի ամբողջ գաղափար նորա գործողութեան մասին, ապա ինչպէս բաց թողնել օպերայի ներածութեան հետ նաեւ մի քանի ուրիշ մասեր: Բանն էլ հէնց դորանում է, որ մեղանում Թիֆլիսում՝ սովոր չեն օպերայում տեսնել մի ամբողջութիւն: Մեծամասնութիւնը մեղանից նայում է օպերային իբրեւ մի շարք բոհանների, իբար մէջ բացի հեղինակից ոչինչ կալ չունեցողներին: Եւ զորա համար շատ հաւկանայի է, որ մենք կարող ենք մէկ եղանակին առաւելութիւն տալ միւսի առաջ և լսել միայն մեր սիրած արիանները, բոլոր մնացածները բաց թողնելով:

Ասիացի եւ ղլխաւոր նպատակից մի քիչ հեռացա՛յ: Ես ու գում

էի խօսել երաժշտութեան մասին Թիֆլիսում և թէ ինչպէս է նա գնահատուում մեզ մօտ: Ես արդէն խօսեցի Թիֆլիսցիների սիրոյ մասին դէպի երաժշտութիւնը. ինձ մնում է ասել, թէ մենք ներկայ սեզոնում ինչ երաժշտութիւն ունէինք:

Այս ճեմարանական տարում Թիֆլիսում եղել են երկու քառերգ երեկոներ երաժշտական ուսումնարանում և մէկ համերգ երեկոյթ արքունական թատրոնում: Բայց ես արդէն վերը ասացի, որ Թիֆլիսում երաժշտութիւն ասելով մեծ մասամբ հասկացւում է օպերա: Դժբախտաբար, մենք այս սեզոնում օպերա ամենեւին չունէինք: Այսինք, ոչ իսպառ, որովհետեւ օպերա յիշեցնող մի բան եղել է... Բանը նրանումն է, որ Արախտական ընկերութիւնը կապալով վերցնելով արքունական թատրոնը չորս տարով յայտնի օժանդակութեամբ, վերջումը (այս վերջի սեզոնումը) այլ ևս ոյժ չունեցաւ օպերային ներկայումներ տալու և այդ պատճառով վճռեց ներկայացնել ուսուցիչներ, բայց այն պայմանով, որ եթէ ով և իցէ կամենայ մասնաւոր կերպով օպերաներ տալ՝ քաջալերել նրանց և օգնել այսինքն աւելորդ ծախսեր չանել տալ:

Ներկայ սեզոնի սկզբում Թիֆլիս եկան երեք հայ երգիչներ. Աֆրիկեան, Նդիազարեան և Մադաթեան, երկու առաջինները մի կոնցերտ տալու և այնուհետեւ գնալու նպատակով: Այնպէս պատահեց, որ հասարակութեանը դուր եկաւ նրանց երգեցողութիւնը և ահա երաժշտական ուսումնարանի վերատեսչի և Թիֆլիսի օպերային մշտական նւագապետի պ. Իսպողիտով-Իվանովի գլխումը միտք ծագեց նրանց մասնակցութեամբ տալ մի քանի օպերաներ, ի հարկէ պատշաճ կրճատումներով մի ամբողջ նւագախումբ և երգեցիկ խումբ չունենալու պատճառով: Ներկայացուեց «Պաուստ» օպերան. հասարակութիւնը շտապեց այդ ներկայացումին: Ի հարկէ ներածութիւնը սովորութեան համեմատ համարեա ոչով չը լսեց. չորրորդ գործողութեան առաջի պատկերի սկիզբը, որտեղ եկեղեցում, բեմի ետեւից երգեհոն է նւագում, նմանապէս անուշադիր էր թողւած, մի խօսքով դէպի ոչ ձայնաւոր մասերը հասարակութիւնը վերաբերեց իւր սովորութեան համեմատ բաւական անգթաբար, բայց զորա փոխարէն հափըշտալութեամբ էր լսում երգիչներին և երգչուհիներին: Վերջութեամբ դատելով ինչ ասել կուզի, որ միայն տիկին Չարուխնայա —

Մարգարիտայի դերում—արժանի էր կատարեալ համակրութեան. մնացածները՝ Մալաթեանը—Ֆաուստի դերում, Նշիազարեանը—Մէֆիստֆէլի դերում, յայտնի տեղակ ան անշնորհք երգիչ Ֆրանկովսկին—Վալէնտինի, ոչ անյայտ Ամագովան—Զիբէլի դերում զուր եկան հասարակութեանը միայն այն պատճառով, որ նա (հասարակութիւնը) վաղուց է որ ոչ մի օպերա չէր լսել: Եթէ այդպիսի զիրքով և նոյնպիսի կրճատումներով ներկայացուէր «Ֆաուստ» թէկուզ հէնց անցեալ տարի, չնայած որ անցեալ տարւոյ օպերային խումբն էլ մի շատ հիանալին չէր, մեր հասարակութիւնը ոչ թէ կը սկսէր շլացնել. բայց շատ աւելի մեծ ստանադարութեամբ կը վերաբերէր: Բայց Թիֆլիսը սովորած լինելով—ծարաւել էր օպերային և դորա համար շատ ներողամիտ էր:

«Ֆաուստ»-ից յետոյ ներկայացուեց «Ռիգոլէտտո» Աֆրիկեանի և Ռչեուլովայի մասնակցութեամբ, յետոյ Նիզինից Մնէզին: Այդ երկու օպերաներն էլ կատարւեցան բաւական ներողամտաբար, այսինքն, ներողութիւն, եւ ուզում էի ասել, որ հասարակութիւնը բոլոր ժամանակ ներողամիտ էր մնում: Բայց մեր հասարակութեան աւելի երաժշտական մասի մէջ սկսում էր կամաց-կամաց բողոք բարձրանալ: Հասարակութիւնը աւելի պահանջող կը դառնար, ինչ անցեալ տարիներին: Բայց բարեբախտաբար այնպէս պատահեց, որ այդ օպերաներին կառավարող պ. Խալոլիտով Իվանովը ստիպւած եղաւ միառժամանակ հեռանալ Թիֆլիսից և օպերաներն էլ իրանք իրանց դադարեցին: Զոմարիտ է մի ժամանակ խօսում էին որ այդ ներկայացումները չեն դադարելու և պիտի կառավարւեն կամ նորեկ պ. Եգմալեան կամ պարոն Ենգէլ որը՝ օպերէտների կառուարողն էր անցեալ ամառ Պուշկինեան Այգում կազմակերպւած: Բայց այդ լուրը չ'արդարացաւ, և օպերային ներկայացումներն դադարեցան: Յանկարծ առաջ ընկաւ ամենքին յայտնի պարոն Վանդերիկ, առաջարկելով օպերաներ կազմել մասնակցութեամբ տիկ. Ֆլաշա-Վանդերիկի: Դա դեկտեմբերի կէսին էր: Առաջին ներկայացում օպերան էր «Արդան» պարոն Ենգելի կառավարութեամբ և մասնակցութեամբ Ֆրանկովսկու, Արմագովի, Կորինէի, պարոն և տիկին Վանդերիկների: Իւր ժամանակին տեղական լրագիրներում այդ «Արդայի» քննութիւնը երեւաց: Ել ինչ ասել կուզի, որ ներկայացումը շատ վատ էր, այնքան վատ, ինչքան թիֆլիսցիները Տուրովի և

Սիէնի արտօնատէրութիւնից յետոյ առիթ չեն ունեցել տեսնելու: Աւերորդ չեմ համարում՝ այստեղ մի քանի խօսք ասել հէնց իրա Վանդերիկի՝ մեր հասարակութեան սիրելիի մասին: Ճշմարիտ, զարմանալի է մեր հասարակութիւնը: Դուք գիտէք, թէ ինչով է նա դուր զայլիս հասարակութեանը. նրա համար որ կարողանում է բարձր նոտաներ վերցնել, զօրօրինակ՝ դօ կամ դօդիէզ: Բայց իսկապէս, երաժշտական տեսակետից ինչէ՞ ներկայացնում պարոն Վանդերիկը: Կա ամենաանշնորհ երաժիշտն է, այսինքն երաժշտական ընդունակութիւններից բոլորովին զուրկ մի մարդ: Քանի տարի է արգէն, որ նա մասնակցում է մեր օպերայում և երբէք ես չեմ լսել նորա երգեցողութիւնը, նա չը գիտէ երգել, նա չը գիտէ թէ ինչ բան է երգեցողութիւնը, ներդաշնակութիւնը: Երբ նա ստիպւած է միջակ, ոչ բարձր նոտաներ վերցնել, նորա ձայնը ամենեւին չի լսում: Նա կարծում է, որ օպերաները գրւում են միայն բարձր նոտաների համար, որտեղ կարելի է մի լաւ բղաւել: Այժմ տեսնեմք, թէ ի՞նչպէս է նա վերցնում նոյն իսկ բարձր նոտաները:

Նորա վերցրած բարձր նոտաները բաւական դուրեկան են, թէև մի քիչ աղաղակող բնաւորութիւն ունին: Բայց նա զրեթէ երբէք չի տիրապետում իւր ձայնին, նա միշտ խռպում է, այո, միշտ՝ նա կոկորդացաւ ունի: Այժմ հարցնող լինի, թէ նրա ո՞ր լաւ և զբաւիչ կողմերի համար սիրում է նրան թիֆլիսի հասարակութիւնը: Միմիայն նրա համար, որ երբ պատահմամբ նա իւր ձայնի տէրն է լինում և կարողանում է մաքուր կերպով վերցնել բարձր նոտաներ՝ հասարակութեան հրճանքը հաւնում է իւր զազաթիակէտին: Ակներև է, որ Վանդերիկի գնահատութեան մէջ տեղ չէ բռնում երաժշտութիւնը, նա շլացնում է միայն իւր արտակարգ բնածին կոկորդի հիւանդոտ ձայնով: Այսպիսի վերաբերմունք դէպի երաժշտութիւնը և մասնաւորապէս դէպի երգչի ձայնը, նշանակում է երգեցողութիւնը համարել ֆոկլոր:

Այդպիսի վերաբերմունք կարելի է թոյլ տալ միայն դէպի կրկէսի մարմնամարզները: Աիդայի վերջին ներկայացման ժամանակ Վանդերիկի ձայնը Ռադամեսի զերում, ըստ սովորականին, տեղումը չէր. նա խռպում էր և մեծ մասամբ լռում: Պարոն Կորիձէն, այդ հակաերաժշտական պարոնը, յետ չը մնալու համար, խռպում էր նմա-

սկէս: Բայց այս բոլորը տանելի կը լինէր, եթէ չը գտնուէին մարդիկ, որոնք յափշտակութեամբ ծափահարում էին Վանդերիկին, և նա զուրս էր զալիս, գլուխ տալիս իւր շնորհակալութիւնը յայտնելով հասարակութեան՝ իրա ձայնի և տաղանդի արժանաւոր գնահատութեան համար: Ֆլաշան լաւ էր Արիւայի դերում: Ամագովան շատերին զարմացրեց Ամներիսի դերը բաւականի յաջող կատարելով, իսկ մի քանի կողմերում մինչև անգամ բաւականի երաժշտական կերպով: Բայց այդ երկու տիկիներն էլ տեղ-տեղ սխալ էին երգում:

Այնուհետև մեր օպերան միանգամայն լւեց. տեսնենք՝ ի՞նչ կու-նենանք գալ սեղոնը: Ասուած մի արասցէ որ այս գործին գլուխ անցնի նորից մեր Արախտիկական ընկերութիւնը:

ՄԻՏՔ ԵՒ ԶԳԱՑՄՈՒՆՔ

ԵՐՈՒԱՆԴԻ ՂԱԶԱՐԵԱՆՅԻ

«Մշակ»-ի № 13-ի բանասիրական լուսածուռ, պ. Տ. Յովհաննիսյան, վերջացնելով իւր խօսքը՝ պ. Ե. Մաղաթեանի վերաբերութեամբ, — գէպքից օգուտ է քաղում՝ մի երկու խօսքով «քննադատել» և իմ լուսածր, որ սպեկ «Մուրճ»-ի անցնող տարւոյ № 12-ի մէջ՝ «Մոռացած խօսքեր» վերնագրով։ Այլ լուսածուռ՝ եթէ քննիրցողը վիշում է, ևս աշխատել էի ծանօթացնել մեր հասարակութեանը՝ ռուսաց երկու նշանաւոր գրողների Լ. Տոլստոյի և Շէկզրինի ունեցած հաջնացքի հետ՝ «ժամանակի տիրապետող ոգու» վերաբերութեամբ։ Թէև կարճ, բայց, ևս կարծեմ՝ բաւական որոշ կերպով՝ իմ վերոյիշեալ լուսածուռ արտայայտում է այն միտքը թէ՛ Շէկզրին և Տոլստոյ, չը նշանակուի իրանց գաղափարների և կարծիքների տարբերութեանը՝ երկուսն էլ միեւնոյն հաջնացքով են վերաբերում գէպի մեր «ժամանակի ոգին» որ մեր ժամանակի մարդիկ, ընկած կուրտւորական շտապըրմութեան հոտից՝ բոլորովին մոռացել են իրանց մարդկային բարձր արժանաւորութեան շտապըրմութեան, մոռացել են, որ աշխարհիս երեսին խիղճ կալ, մարդասիրութիւն, հալսնասիրութիւն, ազնուութիւն և այլ զուտ հոգեկան վսեմ արժանաւորութիւններ կան, որոնք իսկապէս կեանքի ծուծն են կազմում, սուանց որոնց՝ ամենեկին ոչինչ բաներ են մարդոց մոտաւոր ահապին սուաշտախմութեան սրտաւորները։ Այս է եղել իմ լուսածի բովանդակութիւնը և միտքը։

Կամենալով ցոյց տալ մեր հասարակութեանը թէ՛ որպիսի խորը մոտաւոր և հոգեկան տանջանքներ է պատճառում Լ. Տոլստոյին «մեր ժամանակի ոգին», թէ ինչպէս զբաղւած է այլ հանճարեղ մարդը «խղճի», «խիղճ» և այլ մարդկային զգայմունքների խնդրով — ևս իմ լուսածուռն ստաջ իմ բերել «Для чего люди одурманиваются?» զբաղքի ամբողջ միտքը, որի մէջ ցոյննում է Տոլստոյի մարդասիրական ոգին՝ իւր բոլոր

ուժով և անկեղծութեամբ: Այս լօղւածը նշանաւոր է՝ ոչ թէ լողիկապի ճշգրտութեամբ և կանոնաւորութեամբ, այլ իւր խորը բարոյական տենդին-ցիտով, նշանաւոր է ան լեւեմ մարդասիրական զգացմունքի ուժով, որ տաքացնում է ամբողջ լօղւածը, որ ընթերցողին կենթարկում է իւր ազգեցութեանը, որ մարդու անամոլ ստիպում է զգալ և ոգևորւել անքան խոր, անքան տգնիւ կերպով, ինչպէս որ ոգևորւած է ինքը, այլ լօղւածի անմահ հեղինակը:

Այսպիսի տպւորութիւն է արել ինձ վրայ՝ Для чего люди одурманиваются? գրածքը և նոյն տպւորութիւնը եւ արտայայտել եմ իմ լօղւածի մէջ:

Պր. Տ. Յովհաննիսեան ասում է, որ Տաթաւի այլ գրածքը մի նշանաւոր բան համարելու համար, պէտք է **упорное холопство передъ имеемъ**. Պարտիւր ասում է, որ այդ կարծիքը մի ուսու կրիտիկոսի կարծիք է... Եւ որովհետեւ ուսու կրիտիկոսը ապաւին է կարծում, ուստի պ. Տ. Յովհաննիսեանն էլ «կարծում է» որ «Արած»-ը իզուր է ծանոթացնում իւր ընթերցողներին Տաթաւի գրածքի հետ: Չը գիտեմ՝ ում են սագում այստեղ **упорное холопство** խօսքերը. ինձ, թէ՛ պ. Տ. Յովհաննիսեանին, որ ուսու կրիտիկոսի կարծիքով միայն ուզում է առաջնորդւել և ուրիշներին էլ դեռ խրատներ կարգար:

Տաթաւի վերաբերեալ գրածքի մէջ եւ նկատել և զանազանել իմ երկու բան. միտք և զգացմունք: Որքան որ ստորոբնակ, անհաւատալի են Տաթաւի դուռ լողիկական գրութիւնները և եզրակացութիւնները, նոյնքան էլ տգնիւ, բարձր և կրթիչ են նրա զգացմունքները: Այդ զգացմունքները առաջնորդել են Տաթաւին գրել իւր շարադրութիւնը, այդ զգացմունքները շունչ և կենդանութիւն են տալիս նրա խրատանչիւր խօսքին: Պէտք է միանգամայն չոր փաշտ լինել՝ այդ չը զգալու համար, խոյ ոգևորւել, զգացել մի մեծ մարդու մեծ զգացմունքներով — չի նշանակում **упорное холопство**. — անկեղծ զգացմունքը մարդու մէկ միակ շտակութիւնն է, որ անպայման է՝ թէ, ճշմարիտ, բարձր ոգևորութեանց և թէ մոլորութիւնների ժամանակ:

ԼՈՒՐԵՐ ՀԱՅՈՅ ՌԻՍՍՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՒՐՈՊԱՑՈՒՄ

Լանդոնի University College-դպրոցի պրոֆեսոր պ. Գ. Շուռմպֆի մեզ ուղղած մի նամակին քաղում ենք հետևալը:

Ան ալժմ ես կարող եմ հաղորդել ձեզ մահը պրոֆեսոր Պ. Ա. զը Լադարդի, Գեոմոսիպենի համալսարանից, իմ «Հայկաբանութիւնը Եւրոպայում» (Etudes armeniennes en Europe, որ թարգմանւում է l'Arménie թերթից «Մուրճ» ամսագրում) արգէն պարտնակում է մի բաւականին լիակատար լօղւած ալս արեւելագէտ գիտնականի մասին. այլ լօղւածը՝ հէնց ինքն է վեր ստուգել (cet article a été revu par lui même):

Ինչ վերաբերում է իմ անձնական պատասխաններին, ես այս բողետին պատասխատւում եմ մի լօղւած հալ պատմադիրների մասին Լանդոնի «Royal Asiatic society» քննիչութեան ժուրնալի համար, և 13 մայիս ես պետք է կարդում Լանդոնի Լեզուագիտական քննիչութեան տւաջ մի փշատակագիր ալն տեղի մասին որ բռնում է հայերէնը համեմատական լեզագիտութեան մէջ: Բողի զբանից, ես ձեռնարկել եմ կաղմել մի գրախօսութիւն (bibliographie) ալն բողբի, ինչ գրւած է օտար լեզուներով Հայաստանի մասին. այլ աշխատութիւնը կը հրատարակւի Վիեննայի Միլիթարիանների ձեռքով և կսկսի իմ «Հայկաբանութիւնը Եւրոպայում» ուսումնասիրութեան գերաններէ թարգմանութիւնով (վերատուգւած և ուղղւած): Նալն այլ գործը լսել կը տեսնի նաև հայերէն լեզուով:

Գուք պետք է նկատած լինէք որ պ. Օպիւստ Կապրիէր, պրոֆեսորը Արեւելեան կենդանի (!) լեզուներէ զպրոցում, ալժմ պատասխանում է Սերէտի և Միլիթար Գօշի Գատատաճագրի մասին: Պրն. Կարրիէրը ինձ գրել է որ նա մատղիր է մօտ սարգսպտւած հրատարակել Արեւտի Փրանսերէն թարգմանութիւնը, որդէս նաև Ասողկի թարգմանութեան վերջը, որ սկսել էր Գիւլլորիէն: Պր. Կարրիէրը շատ զժաարութիւններ է կրում ծանօթութիւններ անելու ալն կտորի վերաբերեալ ուր խօսւում է Բողրատունիների մասին:

Նիժէ խօսելու լինիք զը Լադարդի մահւան մասին, գուք կարող էք տւելալնել որ նրանով անգարտանում է վերջին լուրջ ներկայացուցիչը հայերէնի էրանական ծագման (l'origine éranienne de l'arménien) որով

հետև միևս գիտնականները, որպէս հանգուցեալ Քերովրէ Պատկանեան և Վիեննայի պրոֆեսոր Ֆրիդրիխ Միլլեր, որոնք մի ժամանակ նոյն թէորիան էին պաշտպանում, ամենքը վատը կանգնեցին պրոֆ. Հ. Հիւբշմանի կողմը. մի խօսքով մեր ժամանակաշրջանը լուրջ լեզագէտները ընդունում են հայերէնը որպէս անանձին լեզու (une langue à part) որը էրանական չլինելով, անկի մօտ է եւրոպական լեզուներին, մանաւանդ սլավո-լիթովական (slavo-lithuanien) լեզուներին: Հայերէնի օրորոցը, ըստ Միլլերի պէտք է Թրակիան եղած լինի, ուստից հայկական ցեղերը (tribus) պէտք է ցրւած լինեն Փոքր-Ասիայում, որ Փրիշի թւականից 6-րդ դար առաջ գրաւել են Աւրարտու (Ur-artu) կամ տարատեան թագաւորութիւնը և նորա հարեան տեղերը:

Եւ միշտ ղժարութեան մէջ եմ երբ ինձ հարկաւորում է ձեռք բերել հայերէն մի գիրք օրինակ եւ վաղուց որոնում եմ Վարդ և Սոխակ (La Rose et le Rosignol) պոէմայի բնագիրը, որ թարմանած էր Լըւան դը Ֆլորիւալ. նորա ապագրութիւնը եղել է Զմիւրնիայում 1880 թւականին:

Շնորհաւորելով ձեր Նոր-Տարին և մտղթելով ձեր պատւական ամսագրի բարգաւաճումը, հաւատացեք ինձ, թանկագին պարոն, անձնէր Գ. Ա. Շուումպֆ:

ՆՄՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ԲՈՂՈՐ ԱՅՆ ԱՆՁԵՐԻՆ, որոնք, «Մուրճի» 4-րորդ տարեշրջանը մտնելու առիթով, մեզ շնորհաւորութիւններ են ուղարկել, չափաւոր եւ մեր շնորհակալութիւնը:

ՆԵՐԿԱՅ № 1-ից «ՄՈՒՐՃ»-ը սկսում է ապւել ՆՈՐ ԶՈՒՂԱԾ տառերով: Տառերի նորից ձուլելը երկու շաբաթով խառն կանգնացրեց «Մուրճ»-ի տպագրական գործը, որի պատճառով ներկա աւաջին համարը չկարողացանք աւելի վաղ դուրս բերել:

ՔԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ «Մուրճ»-ում երեք տարի առաջ, երբ «Մուրճը» դեռ եւ նոր էր սկսում հրատարակել, մենք չափանկեցինք որ «Մուրճ»-ում ինքնուրոյն վէպերը շատ աւելի մեծ տեղ պէտք է բռնեն, քան թարգմանականները: Դորանով աւելում էր որ հայկական ինքնուրոյն գրականութիւնը պէտք է «Մուրճը» աւելի խրախուսէր, քան թարգմանական գրականութիւնը: Մենք, որպէս ազգային, նորնապէս էլ առաջ, դէմ չէինք թարգմանական գրականութեան ծաղկելուն, առհասարակ, բայց թարգմանական գրականութեան մեծապէս նպաստելը մենք թողնում ենք աչ օրգաններին, որպիսիներն են Հրատարակչական ընկերութիւնը, մասնաւոր հրատարակիչները եւ թարգմանական պարբերական հրատարակութիւնները, որ կարելի է տեղեկել: Որպէս մինչ ազգային, նորնապէս եւ ապուհեալ տղն ինքնուրոյն վիպական գրեւծները, որոնք որոշ չափով հասարակական կամ գրական արժանաւորութիւն ունին, աւելի են նպաստուելու «Մուրճ»-ում, քան թէ գրական հաւասար կամ նորն իսկ աւելի մեծ արժանաւորութիւն ունեցող թարգմանական վէպերը: Որովհետեւ ինքնուրոյնները աւելի մեծ կապ ունեն «Մուրճ»-ին, հետաքրքրող հասարակական ու գրական կեանքի ինքնութիւնը հեա, քան թէ թարգմանականները:

Այդ հայեացքի շնորհիւն է որ «Մուրճ»-ում մինչեւ ազգային ինքնուրոյն վիպական գրեւծները գերակշիւ են եղել: Մենք շատապում ենք աւելցնել նորն հայեացքը ղեկավարելու է մեզ

նաև պատահան, չնայած որ թարգմանական վէպերը կամ պատմածքները գնալով աւելի ու աւելի մեծ տեղ են ընդունում «Մուրճ»-ում: Այսպէս, թարգմանականներից առաջին տարում «Մուճը» ոչ մի վէպ չուեց, երկրորդ տարին տուեց միայն մի-երկու փոքրիկ պատմածքներ, երրորդ տարին տուեց մի շարք փոքրիկ պատմածքներ և մի քիչ թէ շատ խոշոր վէպ կամ պատմածք՝ վրացի իշխ. Ղազարաձէի Ապրիլ-Ապրիլանի. իսկ ութմ, չորրորդ տարում, «Մուրճը» առաջին անգամ սաղու է մեծ թարգմանական վէպ՝ լեհացի գրող Հենրիկ Սենկևիչի «Առանց Գաւանանքի» գրած քը և մի շարք աւելի մանր վիպական գրածքներ մեր գրացի վրացի ազգի, ուսուցիչ կամ եւրոպական ազգերի բեղբայրասիրակալից: Զը նախած որ թարգմանական վէպերը աւելի ու աւելի տեղ են ընդունում «Մուրճ»-ում, մենք անուամենայնիւ պահպանում ենք մեր նախկին հաշտացքը և միշտ պատրաստ ենք ուշադրութեան արժանի ինքնուրոյն վէպերին, գրամաներին և ալլն նախապատիւ տեղը տալ «Մուրճ»-ում:

«ԲԱԶՄԱՎԼՊ» ամենամեծ հանգէսը, որ հրատարակում է Վենետիկի Միխիթարեան միաբանութիւնը, ալս տարի մանում է իւր լիտուն երրորդ տարեշրջանը: Մենք ուրախութեամբ տեղ կը տանք «Մուրճ»-ի էջերում մի լողածի, ուր դուրս բերած լինի «Բազմալէս»-ի ցինամեալ գործունէութիւնը:

ՍՍԱՅԱԲ «ԱՎԹԻԻՐ»-ի ՈՒ «ՏԱՐԱԶ»-ի խմբագրութիւնից երեք մեծագիր պատկերներ 1) Գրիգոր Լուսաւորիչը մկրտում է Տրդատ Թագաւորին, 2) Խրիմեան Հալիկ, 3) Պետրոս Աղամեան: Գոցարողորի նկարողն է մի ինքնու ըստ սաղանդով օծուած երկ-տասարդ, պ. Սողոմոնեան, որը արժանի է ձեռնտութեան կարող անձերի կողմից, գեղարւեստական բարձրագոյն դպրոցներում ուսանելու ու իւր ձեռքը զարգացնելու համար: Մեզ հասցրած երեք պատկերներից, տակաւն, համեմատապէս աւելի լաջողածը Պետրոս Աղամեանի պատկերն է:

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ: Որպէս մեզ հաղորդում են Մոսկուից, ալս տարւալ, օգոստոս ամսին լրանում է բանաստեղծ հրա. պարակախօսի 30-ամեալ մանկավարժական գործունէութիւնը, որը, մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, Մոսկույի հասարակութիւնը ուզում է տօնել Զատիկի տօներին: Կարող ենք աւելացնել որ պ. Շահապիզեանի առաջին բանաստեղծութիւնները տպւել են 1859 թականին:

«ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՍԻԱՄ» ունեցաւ լուս-ւորի 12-ին և 26-ին ընդհանուր ժողովի նիստեր, Կենտրոնի և

ճիւղերի նախահաշիւները հաստատելու և ընտրութիւններ կատարելու համար: Վաղանի քւէարկութեամբ ընտրւեցին, մասնակցութեամբ 48 ընտրողները:

Նախագահ՝ ընդհանուր ժողովի՝ բժ. Բազրտտ Նաւասարդեանց (45 սպիտակ և ոչ մի սև քար):

Կենտրոնի խորհրդի անդամներ՝

Մելիք-Աղաբեան, Ալեքսանդր . . . 41 ձայնով (վերջնորած)

Մանթաշեան, Ալեքսանդր . . . 40 » »

Քալանթար, Ալեքսանդր . . . 38 » »

Սունդուկեան, Վարդիէլ . . . 37 » »

Թամամշեան, Միքայէլ . . . 37 » (ոոր ընտրած):

Փոխանդամներ՝ մասնակցութեամբ 56 անդամները:

Ջալալեան, ? . . . 36 ձայնով

Նազարեան, Տիգրան . . . 26 »

Վերատու գող մասնավորովի անդամներ, մասնակցութեամբ 48 ընտրողների

Վարդապետեան, Աւետիք . . . 40 ձայնով

Փոշարեան, Յակոբ . . . 36 »

Վարդապետեան, Փիլիպպոս . . . 33 »

Բարտուղար ընդհանուր ժողովի, մասնակցութեամբ 37 ընտրողների, երկրորդ քւէարկութեամբ ընտրւեց Խ. Մալումեան 26 ձայնով:

«ՄԱՍԻՍ ԹԵՐԹ»-ը, որ լոյս է տեսնում Կ. Պոլսում, երեք շաբաթը մի անգամ, խմբագրութեամբ պ. Գրիգոր Զօհրապի և տնօրէնութեամբ պ. Նրանտ Ասատուրի իւր ալ տարւալ առաջին համարում պարունակում է պ. Զօհրապի մի ընդարձակ խոսքի մասին, թէ ինչ գործնական միջոցներով կարելի է դատ բացել Վենետիկի Մալթարեանների դէմ՝ Մուրադեանի կտակած մեծ գումարի մասին, որը այդ միաբանութիւնը ապօրինի կերպով իրան է սեպակահանացրել, չգործադրելով այդ գումարը կտակի տրամադրութեան համաձայն: Յօդածի հեղինակը քննում է գործին վերաբերող խնդիրներից ի միջի ապոց թէ որ երկրի դատատաններին պէտք է դիմել այդ գործի համար և գտնում է, որ խալ իպի և Թիւրքիպի դատարաններում միաժամանակ պէտք է սկսել դործը և ոչ թէ դիմել Անգլիալի դա՛ տարաններին, չնայած որ Մուրադեանը անգլիահպատակ էր. նա գտնում է որ այդգործը սկսել կարող են այդ երկիրների դատարանական դատախազները (պրոկուրոր) կամ որ և է մէկը, որը իրաւունք ունի այդ կտակի բարիքները վաճելու, բայց չի վաճելում Մալթարեան միաբանութեան շնորհիւ:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԻԱԶԱՐԵԱՆՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ.	Կ.
1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թվականի, երկու հատորով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
3. ՊԵՏԵՆՍՅԱՆ, ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» (վէպ)	1	—
4. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ('Աղլարցի') «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . .	—	05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկեների կեանքից	1	—
6. ԼԷՅ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ)	—	50
7. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅԱՆ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ» (Կեանքից պատկեր)	—	40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅԱՆ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՑ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . .	—	60
9. ՊԵՏԵՆՍՅԱՆ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԵ», վէպ	1	20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅԱՆ, Վ. — «ԽԱԹ-ՍԱԲԱ» (հայ բոշան. կեանքից . . .	—	15
11. ՍԱՐԳՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը . . .	—	50
12. » » » » բ. մասը . . .	—	75
12. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅԱՆ, Յ. — «ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.) . . .	—	15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵԲՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵԻԱՆՆԵՐ»	—	03
14. » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	—	03
15. » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	—	05
16. » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
17. » » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
18. » » «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	—	03
19. ՔԻՇՄԻՇԵԱՆՅԱՆ, ԱԼ. — «ԲՈՑՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	—	15
20. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՐԵՆԵՐԸ»	—	10
21. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԱՆ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ» . . .	—	10
22. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	—	15
23. ՎՐՈՅՐ, Մ. — «ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ»	—	20

Դիմել՝ ВЪ Редакцію журнала „МУРՃ“. Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Արաւիւսեանցի

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱԶԳԵՐԻ

ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Զարգարած Հին եղիպտական, փրնիկական և ասորական գրութիւններով և Արեւելքի Հին պետութիւնների քարտէզով):

281 երես, յտաշարան և նիւթերի ցանկ

Կաշիւ է 800 օրինակ, փայլուն Լ-Պէի վերայ

Գինն է ճանապարհածախսով միասին 1 րուբլի

Պէտք է զիմել կամ Հեղինակին՝ Тифлисъ, въ редакцію журнала „МУРЧЪ“, և կամ՝ Въ центральный книжный магазинъ. Աւտովանաներին անուամ է 20% զիջում:

Մ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԻՑ

Պատիւ ունինք յայտնելու, որ մօտ ապագայում ընդաճակելու ենք մեր տպարանը և այդ նպատակով տեղափոխել ենք ուրիշ բնակարան: Պատուէրները կը կատարեն աւելի շուտ և նոյն մաքրութեամբ, ինչպէս մինչև այժմ:

Նախահաշիւները ուղարկում են անցապաղ:

Խնդրում ենք այն պարոններին, որոնք մեզ հետ թղթակցութիւն ունին, թո՛ղ բարեհաճեն այսուհետև զիմել մեզ հետևեալ հասցեով. Москва. Мясницкая, д. Паслядниковъ Ананова, типографія М. Бархударяна.

X տարի „ԱՂԲԻԻՐ“ X տարի
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ

III տարի „ՏԱՐԱԶ“ III տարի
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱՐԱԹԱԹԵՐԹԻ

Այս տարի «Աղբիւր»-ը մտնում է իւր գոյութեան քառներորդ տարին:

Մենք տարաւ լերջը կը տանք «Աղբիւր»-ի տառնամանակի պատմութիւնը ու դրական տեղեկացւոյն առանձին գրքովի, որով կը տեսնի 1892 թ.-ի դեկտեմբերի 10-ին, երբ կը հրատարակի տառնորդ տարւոյ լերջին Ա.-ը, որով կը լրանայ «Աղբիւր»-ի առաջին տառնամանակը:

«Աղբիւր»-ի լրամանակութեան լիւրաց առանձին մեծ խնամք պիտի տանելի. առաջիկայ տունարից իւրաքանչիւր Ա.ում պիտի տպագրուին 1) Մանկական աշխարհից հէքիաթներ: 2) Մեծ մարդիկներ մանկական կեանքի պատկերներ: 3) Կենսագրութիւններ նշանաւոր գործիչներու: 4) Պատմական և ժամանակակից վէպիկներ: 5) Գիտութիւն և արեւոտ: 6) Տեղագրական նամակներ: 7) Բանաստեղծութիւններ: 8) Զարմալիք:

Ա.Ն.-ը կը վարդաւրէն պատշաճ նկարներով: «Աղբիւր»-է գրական ալքոմները այս տարի կը տպագրուին առանձին աւելի հաստ և ընտիր թղթի վրայ, որպէս զի տարւոյ լերջը այդ պատկերները կարելի լինի առանձին կազմել:

«ՏԱՐԱԶ»-է ՆԱԳԻԼԸ: Կեդարեւտ և գիտութիւն: Պատմական և ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրաւածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն և կենսագրութիւն: Կար, ձե, ձեւագործ և ամեն նորութիւն արհեստներ վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն և արկածք: Երաժշտութիւն և թատրոն: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդածներ և այլն: Ֆէյլետօն, ծաղր, աւամ, կտուակ: Շալմաթի և այլ խաղեր, սերուս, հարցեր, խորհուրդներ: Այլևայլք, պատուխաններ, յայտարարութիւններ:

Առաջիկայ տարին «Տարազ»-ում կը տպագրուին ի միջի այլոց պ. Պ. Պաշտանի «Սկզբն երկանց» վէպը: Բաֆիի ձեւագրութիւնները «Իշխիշ», Շարիաթ, չարեւ և այլն: Լէօն «Բաւառական հերոսներ»: Թարգմանական պատկերազարդ «Տեղեմաք»: Իգէալիտի խոստովանաւոր և այլն: Այս լերջին երկու վէպեր մասին երբ կը սկսենք նրանց տպագրութիւնը, համառօտ կը հրատարակենք և Կիւմայի քննադատութիւնը:

Պր. Առն իւրաքանչիւր շաբաթ թիւ երգիծաբանական և թիւ լուրջ յօդածներ կուենեայ «Տարազ»-ում: Կաթողիկոսական խնդիրը, որքան կը ներկեն արդի պայմանները, «Տարազ»-ի առաջին էջերում մեծ տեղ կը զուեն:

(Ապառիկ բաժանորդագրութիւն չի ընդունում):

«Աղբիւր»-ի տարեկան բաժանորդագինը 3 ր. 28 կ. (10 ֆր.), իսկ «ՏԱՐԱԶ»-ինը 6 ր. (20 ֆր.): «Աղբիւր» և «ՏԱՐԱԶ»-ին միեւնոյն հասցեով բաժանորդ գրողը ստանում է 51 պրէմիա, իսկ միայն «Աղբիւր»-ի բաժանորդը՝ 31 պրէմիա: «Տարազ»-ն առանձին պրէմիաներ չունի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакция журн. „Агбуръ“ կամ „Таразъ“, Արտասանմանից՝ Tiflis (Caucase) „Aghbur“ et „Taraz“.

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆՅ:

 открыта подписка на 1892 г. 

НА ЕЖЕМЕСЯЧНЫЙ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ

„ВѢСТНИКЪ ВИНОДѢЛІЯ“

Задача журнала „Вѣстникъ Винодѣлія“ - распространять среди винодѣльческаго населенія Россіи спеціальныя агрологическія свѣдѣнія и содѣйствовать тѣмъ развитію виноградарства, поднятію винодѣлія и правильной постановкѣ виноторговли. Для достиженія намѣченной цѣли редакція заручилась сотрудничествомъ выдающихся иностранныхъ и русскихъ ученыхъ, виноградарей и винодѣльцовъ.

Программа журнала: 1) виноградарство, 2) американскія лозы и гибриды, 3) болѣзни винограда и ихъ леченіе, 4) филлоксеры и борьба съ нею, 5) винодѣліе и погребное хозяйство, 6) побочные продукты винодѣлія и утилизація ихъ, 7) фальсификація вина, 8) обзоръ иностранной винодѣльческой литературы, 9) хроника (корреспонденціи, доклады, статистическія данныя и разныя другія свѣдѣнія, касающіяся виноградарства и винодѣлія въ Россіи и заграничю), 10) учебныя заведенія, опытныя станціи и курсы по виноградарству и винодѣлію, 11) плодое и ягодное винодѣліе, 12) правительственныя постановленія, касающіяся виноградарства, винодѣлія и виноторговли, 13) библіографія, 14) вопросы и отвѣты, и 15) объявленія.

Редакція проситъ лицъ, занимающихся культурою винограда и погребнымъ хозяйствомъ, сообщать ей результаты своихъ опытовъ и наблюденій, а также свѣдѣнія о положеніи и нуждахъ мѣстнаго виноградарства и винодѣлія.

„Вѣстникъ Винодѣлія“ будетъ выходить ежемѣсячно, безъ предварительной цензуры, книжками въ размѣрѣ четырехъ печатныхъ листовъ, съ рисунками въ текстѣ.

Подписная цѣна журнала „Вѣстникъ Винодѣлія“

	Безъ пересылки и доставки.	Съ пересылкою и доставкой.	Съ пересылкою за границу.
На годъ . . .	5 руб	6 руб. — коп.	7 руб.
На полгода . .	3 „	3 „ 50 „	4 „

Черезъ контору редакціи можно выписывать, по цѣнамъ книжныхъ магазиновъ, всякаго рода книги, какъ русскія, такъ и иностранныя. На пересылку слѣдуетъ прилагать 10% со стоимости заказа.

Иногородные адресуются: въ редакцію журнала „Вѣстникъ Винодѣлія“, С.-Петербургъ, Екатеринскій каналъ, № 71.

Редакторъ-издатель Василій Таировъ.

„Тифлисскій Листокъ“

подписка на 1892 годъ

Газета „Тифлисскій Листокъ“ будетъ выходить по прежнему ежедневно, исключая дней **послѣпраздничныхъ**.

Малый форматъ газеты лишалъ редакцію возможности не только періодически знакомить своихъ читателей съ выдающимися событіями русской и иностранной жизни, но она не могла даже помѣщать ежедневно весь матеріалъ, относящійся къ мѣстному отдѣлу.

Съ цѣлью дать больше матеріала для чтенія, газета съ начала декабря мѣсяца будетъ печататься на бумагѣ средняго листа, въ пять колоній.

Съ увеличеніемъ формата „Тифлисскій Листокъ“ ежедневно будетъ имѣть всѣ отдѣлы ежедневныхъ газетъ.

Редакція по прежнему направитъ всѣ усилія къ развитію отдѣла о мѣстныхъ злобахъ дня и о выдающихся событіяхъ общественной жизни Кавказа.

Подписная цѣна:

Съ доставкою въ Тифлисъ:	Съ пересылкой для иногородныхъ:
На годъ 5 р.	На годъ 6 р.
„ полгода . . . 3 .	„ полгода . . . 3 .. 50 к.
„ 3 мѣсяца . . 1 .. 75 к.	„ 3 мѣсяца . . 2 ..

Объявленія принимаются для Россіи и заграничныя исключительно въ центральной конторѣ объявленій быв. Метцль, въ Москвѣ.

Редакція и контора помѣщаются: въ Тифлисъ, на Головинскомъ проспектѣ, въ домѣ Ротанова.

Редакторъ-издатель **Х. Г. Хачатуровъ**.

Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութեան Վարչութիւնը
յայտնում է ի գիտութիւն, որ ընկերութեան հրատարակութիւն-
ներից կամմիսիայով կամ ապառիկ չեն ուղարկում գաւառները
ուշքին, իսկ կանխիկ վճարով (ու պակաս 5 ա. արժողութեամբ
գնողին) գիջումն է լինում 20⁰/0 և ճանապարհածախքը վճարումէ
վարչութիւնը:

Ընկերութեան հրատարակութեամբ մամուլի տակ են և շու-
տով լոյս կը տեսնեն:

1. Գաղափարական քաջանայ, Պոստպէնկօյի,
2. Արարատակու ինքնակենսագրութիւնը,
3. Ընտանիքի յոյսը, Աննէնակաչեա
4. Պարոնեանի յիշատակարանը:

Ընկ. օգոստին տւած պարահանգիցից գոյացան մուտք 517 ա. և
ծախք՝ 238 ա. 20 կ.: Մտխքը մուտքից հանելով մնում է 278 ա. 80 կ.
որից 20 ա. ապառիկ: Վարչութիւնս շնորհակալութիւն է յայտ-
նում իշխանուհի տ. Մ. Թումանեանին և բոլոր անձինքներին, որոնք
պարահանդէս կայտնաւուն նպաստեցին:

Վարչութիւնս խնդրում է ընկ. անդամ լինել ցանկացողներին
յայտնել վաղօրօք, որպէս զի ընդունէ տղպիսիներին. հին անդա-
մներից խնդրում է անդամավճարը հասցնել Վարչութեանս:

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ՎԱՐՉՈՒ-
ԹԻՒՆԸ, տրանով յայտարարում է, որ այսուհետև ընկերութեանս հետ
գործ ունեցողները կարող են գիմել ընկերութեանս գրասենեակը
(Բարոնակաչիա փողոց տուն Սահակեանի) որ բաց է ամէն օր առ.
12—2 ժամը:

1892 թ. յունւարից լոյս կը տեսնէ Մոսկւայում պ. Մ. Բարխուդա-
րեանի տպարանից

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ“

Բաժանորդագինն է երկու հատորին միասին 2 ռուբլի, իսկ իւրաքան-
չիւր հատորի գինն է 1 ռ. 50 կոպէկ:

Հրատարակիչ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԲԱՐՔՈՒԴԱՐԵԱՆՑ:

«Փիֆլիզի Բնկերութեան Հայոց գրքերի հրատարակութեան»
խմբագրական մասնաժողովը սրանով յայտարարում է, որ տպագրու-
թեան համար ընդունում են հետևեալ բովանդակութեան ինքնու-
րոյն և թարգմանական գրաւածքներ:

1. Գեղարւեստական:

2. Գիտնական. զուտ գիտնական գրաւածքներից կը տպագրեն
միայն այն զիսիները, որոնք վերաբերում են հայոց կեանքի հետա-
զօտութեան, իսկ գիտութեան միւս ճիւղերից միայն ժողովրդակա-
նացրած գրքեր:

3. Գասագրքեր, նամանաւանդ ընդհանուր դրականութեան,
ընդհանուր պատմութեան, հայոց գրականութեան, բնական պատ-
մութեան և ֆիզիկայի ձեռնարկներ, կազմած մեր թեմական զըպ-
րոցների համար:

4. Մանկական ընթերցանութեան համար:

5. Նիւթեր մեր ժողովրդի կեանքի ուսումնասիրութեան վե-
րաբերեալ (աւանդութիւններ, երգեր, սովորութիւններ և այլն):

Մանօթութիւն. մանրամասն ծրագիր վերոյիշեալ նիւթերի
ժողովելու համար կը տպագրուի յետոյ: Բնկերութեանս խմբ. մասնա-
ժողովը իրան է վերապահում ներկայացրած նիւթերից ընտրութիւն
և քաղաւածք անել, եթէ ուղարկողը նախօրօք որոշ պայմաններ չէ
դնում:

Տպագրած գրքերի համար վարձատրութիւն տրւում է մի
տպագրական թերթին՝ ինքնուրոյն գրաւածքների համար՝ 20 — 25 ս.,
իսկ թարգմանական գրաւածքի համար՝ 15 — 20 սուբլի:

Բացառիկ դէպքերում վարձատրութիւնը կարող է և աւելի
լինել խմբ. մասնաժողովի հաշեցողութեամբ:

Հասցէն՝ Тифлисъ, Правленію Тифлискаго Общества изданія ар-
мянскихъ книгъ.

Ա Ր Ա Ր Ա Տ

Կրօնական, բարոյական, պատմական, բանասիրական և ազգային ամսագիր. (25-երորդ տարի):

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 4 ՈՌԵԼԻ:

Հասցէ՝ Въ Редацію Журнала Араратъ, Эчмиадзинъ.

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ

(Յիններորդ տարի)

Տարեկան գինն է 10 Ֆրանկ կամ 4 ռուբլի:

Հասցէ՝ Rédaction de la Revue Bazmavep, S. Lazare, Venise (Italie).

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ

Բարոյական, ուսումնական, արւեստագիտական: Տարեկան՝ Տաճկաստան և այլուր 10 Ֆրանկ, Ռուսաստան 4 ռուբլի:

Հասցէ՝ Rédaction de la Revue „HANTESS“ au Couvent des RR. PP. Méchitaristes, á Vienne (Autriche) VII. Mechitaristengasse, 4.

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեմեքեաների բոլոր ցուցահանդէսներում

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Կարեւոր ընկերներ տան տիկիներին և աղջիկ օգնականներ
բոլոր արհեստավարների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԱՅՆ

Թե փլիսում, Զինդերի ընկերութեան կենդրոնական յաշիւտում, Գո-
լօփինսկի պրոսպեկտի վերայ, Միլիմանովի տան և երա թափանմունք-
ները մէջ:

Բազում: Մեքայէլեան փողոցում, Բաթումում: Պօլեյիական փողո-
ցում, Թէրզի օղլու ա.: ցում, Թէհրանում: Մարշ-Մէյդանի
Քուծայիսում: Բուլվարի դէմ, գէմ, բուլվարի վերայ:


և երանց ճանապարհորդող փոքրաւիշէք: Տօր

ՄԻՋԻՆ, ՆԻ ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ՆԵՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ԶԻՆԳԵՐԻ ՆԻ ԸՆԿԵՐ.
ԳԼԽԱԽՈՐ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՄՕՏ

Գ. ՆԵՅԳԻԼԻՆԳԵՐ

Գնողները կարող են, եթէ կամենում են, դրամը հետզհետէ վճարել սակաւ քանակութեամբ, ալն է՝ չաբախով կամ
ամսով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւականով դրամը վճարելու համար:

Յ. Գ. Զինդերի և ընկ. բոլոր պահեստներում գտնւում են մեքենաներին պատկանելի գործիքները, ինչպէս են.
ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղէններ ամենալաւագոր ցներով:




THE
PUBLISHED BY THE
THE



THE





„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ— ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Բ Ա Յ Ի Ա Մ Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար դիմել՝

ԽՐԵԱԳՐԱՏՈՒՆԸ { Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ.— Կենտրոնական գրադաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյանց, Սիօնի փողոց № 27:

ԲԱԲՈՒ.— պ. Աւետիս Դաւթեանց (Մարդաս. ընկ. ընթերցարան):

» պ. Ստեփան Սուլիսեանց („Надежда“ ընկ., Набережная,
домъ Шагерданова).

ԲԱԹՈՒՄ.— պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Մովսէսների):

ԵՐԵՒԱՆ.— պ. Սիրական Տէր-Մարտիրոսեանցի գրասենեակ:

ԱԳՈՒՎԻՍ.— պ. Ստեփան Արասխանեանց:

ՄՈՍԿՒԱ.— պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды, д. Тупицына,
գրասենեակ- Ս. Թումանեանց):

» պ. Ստեփան Վարդաղարեանց, (Б. Харитоньевскій, № 6):

ՕՂԵՍԱ.— պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. եղբ. Մովսէսների):

ԹԱԻՐԻԶ.— պ. Ասատուր-բէկ Միքայէլեանց:

ԶՄԻՐԵՆԻԱ.— պ. Յ. Տէր-Միրաքեանց (Մեսրոպ. վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ.— պ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՍԷՅԼ.— պ. Սիմէօն Միրզայեանց:

ԽՐԵԱԳՐԱՏՈՒՆԸ գտանուած է Թիֆլիս, Վեյեամլինեան փողոց, տուն № 8: